This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

HW 8RZE 4

ՊՈԵՏԻԿՈՍԻ

ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՎՆԻ

Մ Շ Ա Կ Ա Կ Ա Ն Ք

Gulbenkian

ՎԻՐԳԻԼԻՈՍ.

ՊՈԲԼԻՈՍԻ

ՎԻՐԳԻԼԵԱՆՑ ՄԱՐՈՆԻ

Մ Շ Ա Կ Ա Կ Ա Ն Ք

HARVARD UNIVERSITY LIBRARY
JUL 12 1991

ԹԱՐԳՄԱՆԵԱԼՔ Ի ՉԱՓՍ ՀԱՅԿԱԿԱՆՍ ԵՒ ՀԱՄԱՌՕՏ

ՄԵԿՆՈՒԹԵԱՄԲՔ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼՔ

Ի Հ. ԱՐՍԷՆԷ ԿՈՄԻՏԱՍԱՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՑ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1847

HARVARD UNIVERSITY
LIBRARY

JUL 12 1991

ԱՌ ՎՍԵՄԱԿԱՆ ՍԵՊՈՒՀՆ

ՅԱԿՈԲ ՏԻՒՔ

ՈՍՏԻԿԱՆ ԱՐՔՈՒՆԻ ԴՐԱՄԱՀԱՐՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՏԵԱՆՑ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԲՈՎՈՒՑ

ՏԱՐՓԵԼԻԴ զու յիմաստս և պատուեալսի այս հրաման,
Որ ընդ բնոյք ներշնչեալ 'ի փառս հնոց Ճակատագ 'ի պարան՝
Նայեամ խուկ ուշ և պարապոյ բերկրեալ 'ի Վինեն մշտաջիւր,
Նոյոր հանձանեալեալց նուաքք հանճարով գերութեանց,
Մինչ պետական սուր զինոզին ատենական ընտրեալ.
Վերո մեծ հզաւթեալք՝ խնձ հովանի Մեկենաս,
Այս բնութեամբ հեշտ հովանաւոր Պարթենոպեայ խոր ընդոյն
Հովասուն շրջել ակեք 'ի Սիկիլեան հողոյն յիւ.
Նաղ՝ ընդ հրաշալիքդ եկեալ երկրոյս խոր 'ի լոյս
Ջյաւերժ խրատուայես Վերել 'ի ձեռի աղքատանուէր,
Կակեթ մշտաման ունելին դիտեալին ընդդունեալաց դիւանին՝
Խոնդունեան կըպրեբնուղացաց զուգապարեալ 'ի հանդէս :

ԹԱՐԳՄԱՆԻՉՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՄԻՆՉԴԵՌ այլք այլք քերթուածք Հայաստանեայց ազգին իւրա-քանչիւր յիւրում կարգի զպէտս օգտակարութեանն ; այլ թերեւս առաւել քան զնոսին Խրատականին առակերգք նորա Ս արդարեւ-տականք, որոց է զգլխաւորութիւն ինչ կամ զարդարեալ ծուլ թիւ առաւել եւեթ տաղիցն՝ ոչ թէ տիրապէս 'ի խոր ուսուցանել զայն ուսմա-կան կարգաւորութեանց, այլ զգլխաւոր եւ զհամառօտն միայն զի-տելիսն համառօտ ուսանել, եւ զայն՝ մանկամտելոցն հեշտալուր ածել եւ ուսուցանել. եւ զամենայն որ թափել սովորեցեալ 'ի սրա ճանաչել զայնս բան տպաւորեալ եւ մայրենութեանն զանազանն բնական եւ բարոյականացն կենդանեաց նմանութեամբ եւ խնամովք եւ զեղեցիկ գե-ղեցիկ դիպուածք, որ յառաջիկայ ձեռնն յանդ իցեն եւ ոչ ամենեւին օտար եւ բան արտաքոյ ամենայն։ Զի թէպէտ եւ ամենայն բանա-ստեղծից պարտ է ընդ ուշ կալեալ զՀորատեայ զհռչակաւոր առածն

Զամենայն ընդու զհամբոյր որ զպիտանին խառնեաց 'նդ անոյշ,

'ի նմանութիւն կրթերով բնութեան, որ ամենայն ուրեք զօգուտ եւ զհեշտութիւն 'ի մի ծորդեալ ունի, առաւել եւս աստ 'ի քերթողաց երկրորդ ունին կարգաւ զպիտանութիւնն, առ խրատականն առաւ-ջին է այն։ Իսկ եթէ քերթածաց 'ի պիտանութենէն հեռի մերժե-նալ, զառաջինն ամենեցուն առնելը խրատականն։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՄՆԱՑԻՆ ազգի ազգի քերթուածք Հայաստանեայց անծանօթ իւրաքանչիւր յիւրում կարգի զայնս օտարազգութեանն, այլ թերեւս առաւել քան զնոսա Խրատականքն առասպելք կամ Վարդապետականք, որոց է զգիտութիւն ինչ կամ զարուեստ նուիրեալ առեալ եւեթ ստաղից՝ ոչ թէ տիրապէս ՚ի խորս ուսուցանել զայն ուսմունկան կարգաւորութեամբ, այլ զգլխաւոր եւ զհաստատուն միայն զիտելիսն համառօտս ամփոփել, եւ զայն՝ քանաստեղծական հեշտալսու ոճով եւ ասացուածօք. եւ զամենայն ուր թափել արժանահաւատ ՚ի պաճուճել զայնս բառ ասացուածոց եւ վայելչութեան զանազան բնական եւ բարոյագործական կենդանեաց նկարագիր եւ խնամոցն եւ զեղեցիկ զեղեցիկ դիպուածօք, որ յառաջինեաց ձայնին յանկ ելեալ եւ ոչ անծանօթ ստոր եւ բառ արտաքոյ ամենայն: Ոչ թէպէտ եւ ամենայն բանաստեղծից ստոյն է ընդ ուղի կալ զ[illegible] ազգ...

Ո՛ ամենայն ընդ զհանգոյն որ զայսպիսին խառնեալ՝ նոյ առնել,

՚ի նմանութիւն կրթելոյ ընթերցողն, որ ամենայն ուրեք զօգուտ եւ զհեշտութիւն ՚ի մի խառնեալ ունի, ուստի ուր այլք ՚ի քերթողաց երկրորդ ունին կարգաւ զպիտանութիւնս, առ խրատականսն առաջին է այն: Իսկ եթէ քերթուածոց ՚ի պիտանութեանն կշռել մեզանակ, զառաւելին ամենեցունց առնել զխրատականսն:

Յամենայն խրատական քերթուածս նախնեաց և արդեաց նախապատիւ առ ամենեսեան են Մշակականք Վիրգիլեայ։ Ըստ օգտակարութեան, զի նիւթ ունի զԵրկրագործութիւն՝ զառաջին արուեստ 'ի նախաստեղծ մարդոյն և այսր, զկերակրիչ և զարմանիչ մարդկան և անասնոց։ Ըստ զուարճութեան, զի զինչ քաղցր և ախորժական քան զդաշտորայս և զագարակս և զայգիս և զանտառս, և 'ի նոսա զընտանի և զհանճարաբանէր անասնոցն ջոկս, և զպարզամիտ և զխաղաղաւէտ շինական կենցաղ։ Իսկ ըստ զուարճութեան ճարտար յօրինուածոյն՝ անզուգական, գերազանցեալ քան զամենայն յիւրում կարգի՝ ոչ միայն քան զայլոց բանաստեղծիցն ստեղծուածս տաղից, այլ և քան զնորուն իսկ Վիրգիլեայ զայլ ամենայն յօրինուածս։ Մինչ զի, որպէս յայտ է, հրամանս տուեալ նորա կտակաւ 'ի հուր զատել և անհետ կորուսանել զհրաշակերտ Ենիականն՝ զանկատարն մնացեալ առ կանխելոյ օրհասին, բայց զսա սպահէր 'ի խնամս պատուհասէն՝ շատ հաւանեալ 'ի փառս իւր և հռովմէական զպրութեանց։

Յետ քաջահնչօղ փողոյ դիւցազնական նուագաց Իլիականին Հոմերոսի և Ենէականին Վիրգիլեայ՝ կամեցեալ մեր և ճաշակ ինչ տալ ազգիս զխրատական ստեղծաբանութեան, ոչ կարծեմ անճահ ինչ արարեալ մտածութիւն և ընտրութիւն 'ի թարգմանելս զայս անմահական քերթուած. ոչ միայն ըստ օգտի քերթողական ախորժակաց և առ 'ի տալ օրինակ կատարեալ զայսր ազգի քերթութեան, այլ և ըստ ենթակայիս իսկ պիտանութեան։ Զի եթէ, որպէս թուեցաւ ոմանց, ըստ աղաչելոյ Մեկենասայ ձեռնարկ Վիրգիլիոս յայս վաստակ առ 'ի դարձուցանել զհռովմայեցիս յարենէ և յընտանի պատերազմացն վրդովմանց 'ի սէր և 'ի փոյթ դաշտական և հաղաղաստակ կենաց, և յարծարծել 'ի նոսա զնուազեալ բազմաշահ արուեստս, յոր ոչինչ անօթ համարէին նախնիքն իւրեանց նուիրել զմնացուած ժամանակին յաշխարհին տեսչութեանց, որոց և ձեռք իւրեանց բազում անգամ բրտացեալք 'ի մաճոյն՝ զայլն առնուին զերասանակս կառավարութեան տիեզերաց, մեզ ևս ոչինչ ընդհատ պարտ լինել փոյթ ընձակերտս առնելոյ զայս արուեստ՝ յամենայն ժամ կենցաղօգուտ, և գրեթէ ոչ երբէք ըստ արժանի 'ի սէր և 'ի վարկ վայելեալ, մանաւանդ առ արևելեան ազգիս և յազգս մեր։ Իսկ առաւել ևս խրախուսելի է մեզ 'ի սոյն զայժմու

ժամանակաւս, յորում և Տէրութեանս առանձինն խնամովք հող-յանձին կալեալ, և առեալ խորհրդոյ ես սահմանեալ 'ի բարգա-ւաճել յաշխարհին մերում զնշակութեան ուսումն և զարդիւնս: Սրում ակն ունիմք նպաստ լինել աստիճանս քերթածիւս, ոչ եթէ՝ որպէս առաջարկն՝ զչքնաղ և զցանկալի գիտութեան արուեստին ուսուցա-նելով, այլ քերթողութեանց զուարճալի և ցանկալի ընծայել զերկրագործութեան պարապմունս և 'ի շահ օգտից նորին հայեցու-ցանել զմիտս:

Յայտնի է մեզ, եթէ և թարգմանութիւնս հանդերձ բնագրովն 'ի դոյն կէտ նպատակի հասեալ լինիցի: Զի բազում անգամ որ ինչ գեղեցիկն է և սքանչելի 'ի լեզուի միում, յայլ լեզու հանեալ՝ ոչ զնոյն տիպս չքնաղ կերպարանաց յանձին երևեցուցանէ, ոչ գիտեմ 'ի թարգմանութեանն յանցանաց, եթէ յազգին և 'ի բարբառոյն բնաւորութենէ: Այլ եթէ չէր մեզ յայս ազատ 'ի թշուառութե-նէ առաւել լինելոյ, և ոչ խոկ յանձն առնուաք մխել 'ի թարգմանու-թիւնս, թող թէ 'ի լոյս զայն ընծայել: Այս յոյսն մեր յայն ապաս-տան կայ, զի զուարճութիւն նիւթոյն և գերազանց ճարտարութիւն յօրինուածոյն ինքնին բաւական թուին 'ի կախարդել զմիտս և ըղ-ձիրս. որպէս և ամենայն իսկ այսպիսի բնօրինակս բնագիրք հնոցն ճարտարաց, եթէ միայն ուղիղ ածցին հաւատարմութեամբ 'ի մեր լեզու:

Այլ հաւատարմութիւն իմս ինձ ոչ զմեր 'ի վերոյ իմաստիցն ևեթ, թէ և առանց անողէպ յաւելուածոյ և պակասութեան, այլ և զկատարեալ ճշդութեան և անթերի ճշգրտութեան մտացն, զնրբութեան և փափկութեան ծածկեալ իմաստիցն և ազդմանց, և զվսեմութեան և պերճութեան՝ զուժգնութեան և ճոխութեան տաղիցն ըստ համեմատի բնագրին. որպէս զի ամենայնիւ այդուքիւք լիցի հանել զտիպս կերպարանաց բնագրին, և ոչ թէ թարգմանչին զիւրն: Զոր և զայդ ամենայն խնամոտ փութով ջան տարեալ է մեր ըստ մերում կարի և ըստ ներել հայկականս բարբառոյ և չա-փոց լի բովանդակ ընծայել 'ի թարգմանութեանս. այլ թէ և յա-ջողեալ, և որչափ, և թէ ոչ, զայն ընտրողք տեսցեն:

Թարգմանութեան է նոքանոր զանձս ճոխութեան բերել յաւե-լուլ յազգաց ազգաց օտարաց 'ի բնիկ փարթամութիւն հայրենի

լեզուին. ոչ զչքնաղ խօսայն միայն ասեմ, այլ և զհրապուրեալ ասա-
ցուածոց։ Այլ մերս լեզու ՚ի վերայ ամենայն հարստութեան իւրոյ
ոչ արհամարհէ, ոչ խոտէ ընդունել սփոփարար որ ինչ և մա-
տուցի նմա յազգաց նախանձուէ՝ ոչ յախուռն բարբառել կար-
ծեցելոյն, այլ ՚ի խոհական և ընտրող հայրենասիրութենէ ճար-
տարաց, որ ոչ եթէ զմնոյն գեղ ազգային բարբառոյն աղաւաղել,
այլ պճնել և աճեցուցանել զայն խնդրեցին։

Հայկեանս բարբառոյ ոչինչ կարծեմ պակասէ ՚ի յիշատակեալ
հանգամանացդ ՚ի լաւութիւն թարգմանութեան. ոչ բաւականու-
թիւն ՚ի բացատրել զամենայն ինչ ճշգրտորէն ճշդիւք և անսօր
փափկութեամբ իմաստից, ոչ պերճ վսեմախօսութիւն, ոչ հարթու-
թիւն զօրութեան և ոչ առատութիւն ճոխութեան, միայն թէ
՚ի գրիչ ճարտար դիպեսցի։ Եթէ պակասէ ինչ նմա առ հեշտեա-
կանաւն և համեմայեցուով, մանաւանդ առ առաջինսդ, ոչ այլ ինչ
է՝ բայց փափկութիւն և ողորկութիւն զգայի ձայնիցն, յորս ոչ ունի
հաւատարել քաղցրութեան նոցին. թէպէտ և քան զպատրում այլ
բարբառս փափկամնեալ գտանիցի։ Սակայն և յայսմ ոչ սակաւ ՚ի
ձեռս ճարտարին է իշխանութիւն պակասու կարգս ըստ կարի քաղ-
ցրութեան տաղիցն, զգուշացեալ յազգի ազգի անհարթութեանց՝
առանց կորուսանելոյ ՚ի պարտուպատշաճ վսեմութենէն և յաժ-
գնութենէն, և առանց զքերթողաց և զտաղաչափիցն արուեստ սա-
պաւելոյ։ Պարծ արտաքս ոչ դիւրին. և այս դժուարութիւն է,
կարծեմ, որ ընդուցեալ է և ընդացանէ զոգի և զձեռս հանճարեղագոյն
մերոց քերթողաց՝ չհամարձակել ՚ի տաղս դժուարալուրս։

Իսկ ՚ի չափով ասից թարգմանութիւն, որոց նուաղաւոյն դաշ-
նակութիւն մի է ՚ի կարևոր և յանհրաժեշտ պիտոյից հաւատարմու-
թեան քերթածաց, այդ ևս երկու ինչ է առանձինն խնամով նկա-
տել։ Մի, զի զոր ազգ չափոց և ՚ի ձեռն առնուցու թարգմանիչն,
չափաւորութիւն ընտանւոր՝ հարկ առնել նմա ուրեք ուրեք յաւելուլ
ինչ ՚ի բնագրին կամ զեղչել՝ առ ՚ի զտաղին ողորելոյ։ Ի յաւելու-
լոյ և ՚ի համառնելոյ կարի զգուշալի է, զի մի թերի և պակասաւոր
ցուցցէ զմիտս օրինակագրին ՚ի պիտանի ինչ և ՚ի կարևոր առ մի ինչ
՚ի նախասացեալ հանգամանաց հաւատարմութեան։ Իսկ ՚ի յաւե-
լուլ ինչ առ անհնարին հարկի՝ զգուշալի է մի օտարոտի ինչ կամ
անպէտ մուծանել իմաստից բնագրին կամ ճշգրտութեան, փափ-

կութեան, գեղեցկութեան, վսեմութեան և ազդողութեան նոցին, այլ յորժամ լինի և յանկարծոյն 'ի նոյնս՝ խորհ. անձամբ իմն նոցին, և ոչ թէ նոր լինի 'ի պատրաստ ընթերցանելեաց՝ զիւր իմաստն հօր բանին ընծայելոյ, կամ ոչ ումեք վստահ լինելոյ առնուլ ինչ 'ի միայնութեան 'ի թարգմանութենէ սնոտի: Այսկերպին պայմանքդ 'ի ճարտարութեան թարգմանչին հայրեն.

Այսկերպով այն է նկատելի 'ի չափս ոտից, զի թարգմանն զայն ազգ տաղից ընտրեսցէ, որ պատշաճագոյնն իցէ առաջի արկելոյ քերթուածին: Իսկ պատշաճագոյն այն է համարելի, որ ըստ կարի նուազն բանադատեսցէ 'ի յաւելուլ և 'ի զեղչել ինչ առ անխախտ պահելոյ չափոցն, կամ 'ի փոփոխումն ինչ առնել կարգի խնդրոց՝ մանաւանդ զերակատար և յառաջադրոյ բանաստեղծաց: Իսկ մանաւանդ այն, որ չափոց և դաշանց տեղեկագիր քերթողին համեմատն իցէ, որով և այնր ազգի քերթուածոյ՝ ըստ թեթևութեան և ծանրութեան ոտից կամ ըստ քաղցրանաց կամ ըստ մեծավայելչութեան պերճութեան, առաւել ոչ անհնար է լինել 'ի սորա քան զմնացեալսն և չկարասցանել խոկ զերանգացն հաւատարմութեան կարեւոր, առ որ և ընծէ և մուս առաւել որպէսեան,

Զպայմանեալ յեղանակս և զքերթուածոց պահել զերանգս
Ոչ չկարեմ կամ թէ չգիտեմ՝ ընդէ՞ր քերթող եւ ողջունիմ:

Իսկ արդ՝ զոր 'ի հայկական չափոց ընտրել արժան էր 'ի թարգմանութեան քերթածիս: Նախագիրն յօրինեալ է մեծատանի մեծագոյն չափովք ռիւթմականաւ չափական տաղից: Եւ զատանել ոտանաւոր հաւասար ամենևին նուազաւոր դաշնակութեան և բազմապիսի փոփոխմանց չափական մեծութեան Յունաց և Հռոմայեցւոց՝ յանհնարինսն է, մանաւանդ յարդեացս նորանոյն տաղաչափ առանձնաւորաց: Ընտրելի էր արդ ըստ կարի համեմատն, որ և ընդմեւս պահանջեալ յատկութիւնն առաւել ունիցի՝ նուազագոյն հարկ առնելոյ յաւելուածոց կամ զեղչմանց: Այս ուրեմն ընտրելի էր այնպիսի իմն առանձնաւոր, որ մեծագոյն և պերճագոյն իցէ 'ի չափս հայկականս, որ ոչ հարկ առնիցէ ճշգրիւ յամենայն տողս զնոյն թիւս վանկից պահել. այլ յարմարաւոր ներդաշնակութեամբ նոյնաթիւ և զուգաչափ մասանցն շարադրեալ, առ 'ի համանելոյ զնոյնաձայ-

նութեանն տաղտուկ՝ ազատութիւն շնորհեցէ 'ի թիւս վանկից տա-
ղիցն, օրինօք՝ և ոչ վարկպարազի անխտրութեամբ, զի մի եղիցի ըստ
պայմանն չափաբանութեան. որ և դարձեալ տաղտուկ առնիցէ զտաղսն
'ի ձայնական յանգից, որ աւելորդ իմն կապանք են 'ի մեծ տաղս և
հարկեցուցող ճարտարագունից անգամ յոյժ սակաւ այլայլութիւն
մնաց կամ կարգի իմաստից և դարձուածոց. մանաւանդ 'ի թարգ-
մանութիւնս:

Այլ ո՛ւր գտանիցի առ մեզ այդպիսի սքանչելի տաղաչափութիւն:
'Ի յետին դարուց ոտանաւորացս և առ մեզ յաճախելոց չիք ուրեք
և ոչ մի: Այլ եթէ որպէս 'ի հայերէնախօս լեզուագիտութեան
մասին յամենայնի նախանձախնդիր եմք հնագունի ոսկեղէն դարու
գրականութեանս մերում հետևօղս լինելոյ, զնոյն և յայսմ մասին
չափաբանութեան առնիցեմք, որպէս արժան իսկ էր, անդ գտանի-
ցեմք և զայդ չքնաղ տաղաչափութիւն: Այլ ոչ առ կարի հնագոյնս
եթէ տեսանիցեմք մնացեալ զայն, այլ և անդուստ 'ի սկզբանէ
կարգեալ եկեալ մինչև յերեքտասան դար և այսր ևս, և մինչև առ
յետինսն և առ մեզ անծանօթ իմն մնացեալ՝ 'ի տիրել վանկաչափ
և յանգաւոր ոտանաւորաց, որոց ձայնական յանգից հայր ճանա
չին՝ մանաւանդ առ մեզ՝ տաճիկք կամ արաբացիք, և սկզբնաւորող
Նարեկացին յաղօթագիրսն կամ Մաշտոցս, և ծաղկեցուցիչ
Ներսէս Շնորհալին, և բնաւ անծանօթ են առ նախնիս մեր, որ-
պէս և առ հինսն այլոց ազգաց բազմաց, հազիւ ուրեք երբեմն ե-
րևեալ յառաջ քան զիններորդ դարն, և յերկոտասաներին առհասա-
րակ տիրացեալ:

Շատ լիցի մեզ ուշիւ հայել և աւագ աչօք 'ի հնագոյն մեծա-
չափ տաղս նախնեաց մերոց, որպիսի յաճախ գտանիցին 'ի շարականս
և յերգս՝ 'ի Սահակայ Պարթևէն մինչև 'ի նոյն ինքն իսկ 'ի Շնոր-
հալին, և անդ ակն յայտնի տեսանիցեմք զկանոնեալ օրինակ յա-
տուկ ազգային ոտանաւորաց, է զի սպառ վարեալ, և է զի խառն
ընդ այլում քնարական մանր տաղի: (1) Այլ թէ գոյցէ ուրեք Զուգա

1. Այսպիսի են, օրինակ իմն, սակաւք 'ի բազմաց 'ի կարգ հնագունիցն, համաբարձին աւագ երկուշաբաթւոյն Ու յունէէյ գօյայօօյէր. մանկունքն աւագ երեքշաբաթւոյն Ահօօր էս Ռօգօօօր. օրհնութիւնն աւագ ուրբաթուն Աչծօնօյըօնէօմէը, և երկրորդ գրուածն 'ի Գինչելին յօրօօմ ծօփնէր. Ճրագալուցի մանկունքն Ծագօօմըն հրաշալի. հինգ-երորդ աւուր ծննդեան առէք յերկինիցն Ու սէփէօ օսէփըէին. հարիւրասխուաց Աշխարհ և համ

բանք Խորենացւոյն չինեն և 'ի Սահակ թարգմանչի, ոչինչ երկբայիմ թէ յայս ազգ տաղից իցեն: Նոյն ազգ ոտանաւորաց է և զոր Գրիգոր Մագիստրոս վարէ 'ի Մեծ են գործս և յայլ տաղս իւր, յաւելեալ միայն զյանգ ձայնական՝ չնորհուկս արտաքացւոց, կամ առ մասամբ պարծանս ինչ առ նորօք, որպէս թէ ոչ 'ի խոնարհ մնացեալ 'ի նոցանէ և 'յայնմ աւելորդ առաւելութեան: Նոյնպիսի են և այլք բազումք մինչև 'ի քերթողս յետին դարուց. զոր թէ ոչ աւելորդ,

բարձին Անձիւլէբն բանն [illegible]. խաչի երրորդ աւուր 'ի [illegible] Արտաշ. Վարա-գայ խաչին օրհնութիւնն Ներսէսի [illegible]. գիւտի խաչին տէր յերկնից [illegible]ցոյ 'ի խաչ [illegible]. [illegible] օրհնութիւնն Աւետ[illegible]. Կիրակէի և Յովհ[illegible] մանկունքն Վարդ[illegible]. [illegible] Սուրբ [illegible] Բ[illegible]. [illegible] շարականքն Ես [illegible] և Աստուծ[illegible]. երկրորդ [illegible] զի թէ բոլոր պատկերն Մեծ[illegible]: Եւ 'ի շարականաց Ներսէս կաթ Շնորհալւոյն, [illegible] Որ [illegible], [illegible] Որ [illegible] Բ[illegible], [illegible] Այսօր [illegible] 'ի [illegible], [illegible] տէր յերկնից Եղիայի [illegible], և մանկունքն Անձառ[illegible]. և 'ի տաղից նորին ոչ սակաւք, որպէս ծննդեան Նոր [illegible], մեծի [illegible] Շնորհօք [illegible], յարութեան Նոր ծաղիկ [illegible], [illegible] Առաք[illegible], 'ի սուրբ միայն Բան[illegible], հայրապետաց Եղիշէի [illegible]. Եւ 'ի Նարեկա-ցւոյն՝ երգն ծննդեան Յիսու [illegible], յայտնութեան Առ[illegible]: Եւ յայ-լուստ երգն պատարագի Ընծ[illegible]. և այլք բազումք:

Իսկ թէ չկամիցի ոք ընդունել զդոսա այդչափ երկայն տողս, և յերկուս հատանել յամեայնսի, ոչ նոքին զայն նման նախ՝ բազում առաւելին կիսատողից անհամեմատս և ան-նման կարծութիւնք, որպէս է տեսանել բազում ուրեք. և երկրորդ՝ ըթիւ վանկք յա-ճախեալք 'ի վերջ երկրորդ անդամոց և 'ի յառաջոյն անցեալք. որպէս,

'ի պատկեր աստուածութեանդ քոյ ստեղծեր մարդ 'ի հողոյ:
'ի յաւէժ կենդանութեանդն մահաբեր պտղովն մեռեալ:
Որ ըստ պարտեաց նախահօրն յանձն առեր յօժարութեամբ:
'ի միւսանգամ քո գալստեանդն յորժամ գաս դատել զերկիր:
Ժողովեալ Հրեշտակին կչռեսցին արծաթ բազում:
Զլուծանել նահապետացն մնացուցանէք 'ի յղնծայութեն:
Ցարազնաց երկրի յերկինս պարակցեալ ընդ անմարմնոցն:
Ընկալեալ ըզյորդայինսն յաղթանակ նահատակացն:

Եւ երկատողից ինչ նմանութիւնն ոչ ինչ սահմանէ տաղիցն. զի և 'ի չափականն զառա-ջին ըստ նոցա, և 'ի նոյն իսկ 'ի վերջատանեան: Զի թէպէտ և սովորաբար հատածովքն խափանեն զայդ նմանութիւն, սակայն և այնպէս՝ է որ 'ի գիրքեռնեան և 'ի վերջիկրա-ւեան հատանի, է որ 'ի փոխիւսկեան և յազգներան. մին յերկուս փերթէկրատեանս և միւս յերկուս ազգներանս. և սակայն ոչինչ փոյթ առնեն: Նոյնպէս և մեք. սոյս թէ ոչ զբաղում երկար տողս մեր և գրեթէ զբնաւսն՝ հարկ լինի տակաւին առնել ընդդէմ հա-սարակաց սովորութեան և ակնկալեաց իսկ:

ամենայն երկայն է մեզ տեղել աստանօր. որ կամի՝ կարօղ է խըն-դրել և տեսանել 'ի տաղս նոցա՝ ոչ յեղանակաւորս միայն, այլ և 'ի կարդալի քերթածս, և մինչև 'ի նամակս անգամ զարուցն յետ-նոց, որպիսի են և մագիստրոսին ասնկք, որպիսի և Մեծ էն գործքն արդ իսկ յիշատակեալ քերթուած նորա երկայն, ոչ կցկտուր խառ-նիւք տող առ տող բովանդակեալ, այլ ազգի ազգի խառնուրդ դարձուա-ծոց մանուածոյ հիւսիւք օղորեալ: Որովք յայտ է թէ այս ազգ տաղից ոչ 'ի կցկտուր տաղս և յեղանակաւոր երգս միայն վարէր 'ի նախ-նեաց. և հատանին ընդունայն պատճառաբանութիւնք այնոցիկ՝ որ զայդ կարծիցեն, և անյարմար 'ի շարամանութիւն և 'ի լուր ըն-թերցուածոյ զատուցին զչափս տաղից: Այլ բնաւ իսկ այդպիսի զանազանութիւն եղանակելի միայն և ոչ կարդալի տաղից՝ անտեղի է, և ոչ յազգի ուրեք երբէք երևեալ կամ լսելի լեալ:

Իսկ եթէ ոք ուրասցի զգոյս չլինել իսկ բնաւ ոտանաւորս, ա-ղաչեմք առ միմեանս եղեալ ընթեռնուլ զգոյս ընդ այլ վանկ և դաշնակաւոր շարականս և շարադիրս. եթէ և այնպէս չլուիցէ զզա-նազանութիւն դոցա, մեք ոչ կարեմք ականջս ստեղծանել, ոչ իբրև զԱրամազդ և ոչ իբրև զԱպողոն: Իսկ եթէ լուիցէ, աւելորդ է վի-ճել այնուհետև՝ թէ ընդէ՞ր այս ազգ ոտանաւոր կամ այս չափա-ւորք են, և ոչ այն՝ զոր իւրքն կամի բազմամեայ կանխակալոյ սովո-րութեամբն պաշարեալ: Թող ընդ հին նախնեաց վիճեսցի, որք քան զմեզ կարի հմտագոյնք գոլով բնաւորութեան և ախորժակաց և դաշնակութեան լեզուիս՝ զայս ազգ ընտրեալ են տաղից, և զայն բաւական համարեալ 'ի չափս բանից՝ յորոշումն արձակ շարադրա-ծաց: Այլ զինչ այլ առաւել խնդրիցի 'ի փափուկ և 'ի զգաստ լսե-լեաց, և զինչ այլ ինչ պահանջեսցի 'ի պէտս և յօրէնս տաղից:

Այլ ամենայնիւ ոչ եթէ բնաւ խոտել կամիցիմք զճիշդ զուգա-վանկ տաղս, և մերժել զձայնականս յանգս յոտանաւորաց մերոց. այլ 'ի մեծ չափս և յերկայն քերթածս, մանաւանդ 'ի թարգմանեալս, ոչ կարևոր ինչ համարիմք լինել՝ նախնեացն օրինաց հաւանեալ: Զի բաց 'ի տաղտուկ նոյնաձայնութենէ և 'ի տաղնապեցուցիչ հարկէ՝ զինչ օգուտ կամ զինչ առաւելութիւն դաշնակութեանն տաղից 'ի ճիշդ զուգավանկութենէ անդամոց և տողից, ուր անհնար է ամենայն վանկից զնոյն սղութիւն կամ երկարութիւն ունել, ուստի և ոչ անդա-մոց և տողից զնոյն չափս ամանակի և զհաւասարութիւն: Թող և զա-

զուարթուրէք անսխալաբանութիւնն ըստ իմաստից և կրից բանին և ըստ առոգանութեան ։ Իսկ ձայնաւորքն, որպէս ասացաք, աւելորդ կապանք և խոչ ըստ ոտն են քերթողին, և թեթեւ իմն և գրեթէ անգոյ հեշտութեանն՝ բազում փոխանց պատճառք, ոչ միայն հաւաստատութեան, այլ և վսեմութեան և շարժողութեան տաղից, մանաւանդ 'ի թարգմանութեան, թէ և ճարտարօրէն և յոյժ գեղեցկապէս ճշգրտեալ յօրինեսցին. իսկ եթէ և այդ շնորհ ոչ երեւեսցի 'ի նոսա, զի՞ լինիցին այնուհետև ։ Սակայն և այնպէս 'ի մանր քերթուածս ինչ, մանաւանդ քնարերգականս, ես առաւել 'ի նոյնավանկ անդամանիքս տաղս, յոյժ վայելուչ և գեղեցիկ զայն կարծեմք՝ եթէ ըստ պատշաճի 'ի ձեռն ճշգրտեսցին ։ Նա զայս այսպէս հարկանք խորհել՝ յետ միանգամ մեզ գտանելոյ և տիրանալոյ յազգի մերում զուգավանկ տաղից և նոյնաձայն յանգից ։ Ոչ ի՞ հնագոյն նախնիքն մեր և զմեր և զքնարերգական տաղս իսկ անյանգ 'ի ձայնից երգեալ են ։ Բազում ինչ գրեալ կայ յեւրոպէական իմաստնոց փոխանակ և ընդդէմ ձայնայանգից, 'ի նոցունց իսկ ազգաց՝ որ քան զյանգաւոր ոտանաւորս այլ ինչ ազգ ոչ ունին ։ Հինագոյնքն և քաղցրախօսք առաւել ոտնք գտանեն քան Լատինացիք. (Ձ) և 'ի վերայ այլոց փոխանց՝ գտանեն զայն և գիւտ լեալ ժամանակաց վայրենութեան կամ տգիտութեան այժմու ազգաց, և ցայսօր առ վայրենի և տղայաբարոյ ազինս զօրացեալ ։ Նա 'ի ծաղկեալ յարգի ազգաց Նախնեաց գերմանացիք ընկալան և զանյանգ ոտանաւորս. անգղիացւոց լաւագոյն քերթածքն անյանգ տաղիւք են շարեալ. և յիտալիացւոցն բերդ՝ քան զամենայն առողջս քերթողական, 'ի հնոց ես առաւել 'ի նորոց բազում քերթողք են՝ որ զնոծանօթ քերթածս անյանգ տաղիւք երգեն մինչև ցայսօր ժամանակի, տարակացեալք 'ի գերութենէ ընդունայն յանգից առաւելեացն և ընկեցեալք զլուծն ։ Որդ՝ եթէ նորա որ 'ի նախնեաց իւրեանց

Ձ. Տես յանգլիացւոց 'ի Պլէր, դասք հռետորականին և գեղեցիկ դպրութեանց, հատոր Գ. յաղագս բանաստեղծութեան, գլուխ Ա: 'ի գաղղիացւոց 'ի Փենելոն, Թուղթ առ ճեմարանն, Ե. առաջարկ. քերթողականին. — 'ի Տիւպոս, քննութիւնք 'ի վերայ քերթողութեան և նկարչութեան. մասն Ա, հատուած ԼԷ, յաղագս Յանգի. — 'ի Լաֆէ, բառգիրք զուգանշանութեանց գաղղիական լեզուի, 'ի բառն Յանգ ։ — Մառմոնթէլ Հատուածն իսկ յանգից՝ միահաւան գտանի, թէ 'ի վսեմ և 'ի մեծավայելուչ տաղս թեթեւ ինչ և սնոտի և ուսմնէտ են նոցին շնորհք. տարերք գրականութեան, Յանգ ։

գլանգաւորն ընկալեալք՝ փարձուցին զայն յանյանգ, մեզ քանիցն առաւել չկցեն նախանձելի իմաստնախոհ և բանիբուն մերոցն նախնեաց ազնուականազգոյն ախորժակք։

Բայց անյանգ զի ասացաք զբուն ազգային հին ոտանաւորս մեր, մի այնպէս կարծիցի որպէս թէ չգուցէ ինչ բնաւ նմանավերջութիւն յաւարտ տողից. զի առանց այդր ոչ որոշին վերջք և սպառուածք տողից իւրաքանչիւր, և ոչ հանգչին ականջք յունթեանք չափոցն. վասն որոյ և կարեւոր դատեալ է յամենայն ազգս, և 'ի նոյն իսկ չափական ոտանաւորսն։ Սակայն ոչ եթէ ձայնական յանգիւ ձայնաւորաց և բաղաձայն տառից վճարի այդ նմանավերջութիւն, այլ նման ոտս գրեթէ միշտ վարելով 'ի վերջին չափական տաղից, որպէս վեցոտանւոյն 'ի ստեղն և 'ի համբոյր աւարտեալ, և երբեմն ազատութեամբ յերկուս համբոյրս։ Այս այս բաւական է 'ի նմանութիւն ինչ յանգմանց և յորջումն տողից. զոր և մարթ է առել յանգումն քանակի կամ եղանակի, և ոչ տառից։ Այս օրէնք են և 'ի մերում նախնական ոտանաւորս. զի գլխաւորն երկու անդամն քառանդամ տաղից գրեթէ միշտ նոյնավանկ գնեն, և այն լինի նացին 'ի տեղի յանգի. որպէս տեսցի այժմ յաւանդելս համառօտիւ զօրէնս այսր բուն ազգային վաղեմի մեծ տաղաչափութեանս։ Այսպիսի նմանայանգութիւն իմա և զայլոց չափմանց։

Բայց այս ազգ ոտանաւորաց, որպէս ասացաք, ոչ զվանկից՝ այլ զանդամոցն թիւս միայն չափէ և հաստատուն պահէ, յորում և է իսկ ոտանաւորացս զուգայարմար չափակցութիւն կատարեալ, յայլում ամենայնի ազատօրէն վարեցեալ, սակայն օրինօք։ Քանզի մեր չէք չափ հաստատուն վանկից, և տաղքս չեն չափական իբրու ըզՅունացն և զՀռոմանց, այլ թուական և կշռական միայն, էական թիւ կամ կշիռ և ոտք և դաշինք և ձև և պայման ոտանաւորացս ոչ 'ի վանկսն եղեալ է 'ի հին նախնեաց, այլ 'ի յարդարուն համեմատութիւն և 'ի չափակցութիւն անդամոց։ Այս ընծայութիւն և հաւաստիք փորձոյն այն է, զի եթէ զնոյնավանկ տողս, զոր օրինակ զհնգետասան, յայլաթիւ անդամս հատանիցես, յերիս, 'ի չորս, 'ի հինգ, այն տողք ոչ երբէք միաբանին 'ի մի յարմարութիւն ընդ միմեանս։ Իսկ եթէ ընդ հակառակն զաննոյնավանկ տողս իսկ, որպէս զհնգետասան, զչորեքտասան, զերեքտասան, հատցես 'ի նոյ-

նաթիւ ոչ կարի անհամեմատ անդամս, օրինակ իմն 'ի քառանդամ, տաղքն այն՝ ուղիղ առոգանութեան օրինօք յարդարեալ յարմա- րեալ գան 'ի մի միաբանութիւն դաշնակութեան ընդ իւրեարս, և վանկի ինչ պակասութիւն յանդամս ուրեք՝ առ ոչինչ դրի ։ Զայսր զփորձ կարէ առնել և տեսանել ամենայն ունկն հայացի ։ Արդ ըստ այսմ տեսութեան՝ մեծ կամ դիւցազնական տաղն նախնեաց յամե- նայն 'ի տողսն քառեակ անդամովք ոլորի ։ (3) Առաջին անդամն ա- զատ գոլով 'ի միոյ ցչորս վանկս . երկրորդ անդամն քառավանկ, կամ եռավանկ՝ եթէ առաջինն չիցէ միավանկ . զի մի մին ընդ յաջորդ երիցն մի անդամ քառավանկ կարծեցեալ և 'ի մի խառնեալ՝ կորըն- չիցի քառանդամութիւնն, ուստի և չափք տաղին ։ Երրորդ և չոր- րորդ անդամքն յաճախ սովորաբար են քառավանկ, առ 'ի լինել ծանր և մեծավայելուչ յանգումն տողից իբրև զհամբոյրն չափա- կանին ։ Բայց ազատ է երբեմն զչորրորդն դնել եռավանկ, միայն թէ երկրորդն ևս չիցէ յայնժամ եռավանկ կամ առաջինն միա- վանկ . զի այնպիսի տողք՝ կամ ոչ դաշնակաւոր լսին ընդ այլ տողս, կամ յերկուս հաւասարս հատանին ըստ այսր ազգի ոտանաւորաց, և կամ ոչ լնուն զչափս երկոտասան երկար վանկից, թէ և մի եւեթ սուղ վանկ համարեսցի 'ի նոսա, որում անմարթ իսկ է չգտանել ։ Վասն որոյ թիւ վանկից տողիցն չպարտի նուազել քան զերեքտա- սան, որպէս և ոչ առաւելուլ քան զվեշտասան, ըստ որում տեսցի 'ի յաջորդ պատկերից ։ Սովին պարզ օրինօքդ եղանեն ինքնին տասն յեղանակք նոյնաչափ համարեալ տաղից՝ յաճախ վարեալք առ նախնիս խառն ընդ միմեանս, որպէս գոյ տեսանել 'ի նախայիշա- տակեալ օրինակսդ ։

Նկարագրեսցուք այժմ իբր 'ի պատկերի առաջի աչաց զտասն փոփոխ- մունսդ, համդերձ կշռովք սղութեան և երկարութեան վանկից իւ-

3. Կայ և քան զայն մեծագոյն տաղ առ մեզ, որպէս և առ Յոյնս և Հռովմայեցիս քան զվեցոտանին բայց սակաւ ուրեք վարեալ. որպէս ։

Զարթիք փառք իմ զարթիք և ես զարթեայց առաւօտուց [illegible] ։

Այսօր զանճառելի ծննդեան քոյ տէր ըղձապաստաւոր խորհրդոյ։

Այսօր զիմանալի լուսոյն ծագօղն 'ի խաւարի նստեալցս ։

Մարթի և զսոսա քառանդամս համարել, առաջին անդամն վեցավանկ, որ գուն ուրեք լսի 'ի տաղս մեր ։ Բայց սովորական քառանդամն՝ զոր աստ ցուցանեմք, բա- ւական է յոյժ առ մեծագոյն չափս դիւցազնականս ։

րաքանչիւր տողից, որ և գան զուգէն 'ի մի միաբանութիւն չափոյ, ըստ որում զի երկու սուղն մի երկար վանկ համարի։ Զախակողմեան թուանշանքդ զթիւս վանկից քառեակ անդամոցն ցուցանեն, աջակողմեանքդ զթիւս վանկից տողիցն՝ սուղ և երկար համարելոց ըստ պատշաճի տեղւոյն և երկայնութեան տողիցն։

4 – 4 – 4 – 4 յորում թէ իցեն սուղ վանկք	8, լինի	12	վանկ երկայն կամ չափ. (4)
3 – 4 – 4 – 4	6, —	12	. . . .
2 – 4 – 4 – 4	4, —	12	. . . .
1 – 4 – 4 – 4	2, —	12	. . . .
4 – 3 – 4 – 4	6, —	12	. . . .
3 – 3 – 4 – 4	4, —	12	. . . .
2 – 3 – 4 – 4	2, —	12	. . . .
4 – 4 – 4 – 3	6, —	12	. . . .
3 – 4 – 4 – 3	4, —	12	. . . .
2 – 4 – 4 – 3	2, —	12	. . . .

Սուղ վանկս իմա ինձ աստանօր ոչ ըստ հելլէն և հռոմ հաստատուն չափոց առոգանութեան, որ 'ի տաղս մեր չունին տեղի, այլ ըստ երագաշարժութեան և ծանրաքայլութեան բնական առոգանութեան բանին ըստ իմաստիցն և ըստ կրից, կամ թէ երբեմն և ըստ ազատութեան իսկ։

'Ի կշռութենէ այսր չափոյդ իմանայ հմուտն տաղաչափութեան, թէ զոր տողս 'ի սուղ և 'ի թեթև բանս, և զոր յերկար և 'ի դանդաղ բանս վարելի իցէ, եթէ ամենայն ճարտարութեամբ 'ի գործ ածցէն տաղքդ, զորմէ չէ տեղւոյս յերկարել, յոր և չեղաք իսկ մեք անվրէպ ժամանել։ Նա և այդու իսկ յայտ իմն առաւելութիւն ունի այս ազգ տաղաչափութեան քան զզուգավանկն. զի ոչ միայն ազատ է 'ի ճանճրալի նոյնաձայնութենէ տողից և անդամոց, այլ և զի ըստ պատշաճի երագընթաց սղութեան և ծանրադանդաղ երկարութեան բառիցն և բանին ունի յարմարել. ուր զուգավանկն նովին ոտիւք հարկի ասել օրինակ իմն զօդաթռիչ սլացս երիվարի 'ի դաշտ և զյամրաքայլ գնացս եզանց ծանրաբեռն սայլի ընդ զառ 'ի վեր, կամ զեռանդն բարկութեան և զվհատութիւն տրտմութեան։

4. Եւ որպէս յայտնի է, 'ի չափական տաղս երկու երկար վանկն կամ երկուչափն՝ մի ոտն համարի. իսկ ըստ արդի լեզուաց մէն մի չափ՝ մի ոտն։ Ըստ առաջնոյն հաշուի լինի մեր վեցոտանի, ըստ երկրորդին՝ երկոտասանոտանեան։

Յայնժամ իսկ անզուգական մեծավայելչութիւնքն Յունաց և Հռոմոց, թէպէտ և նոքին իսկ ոչ ամենայն ուրեք անվրէպ պահեն զոր կանոնն և զոր պայման բանին պահանջէ :

Ահա այդ են պարզ օրէնք ստանաւորացս այսոցիկ, որպէս մեք վարեցաք 'ի քերթուածի աստ անյանգ, և այլ ուրեք 'ի տաղս իմն մեր յանգիւ և անյանգ, ընտրանաւ առեալ 'ի բազում ազգի ազգի նոյնաչափ տաղից նախնեացն : Ոչ ի ուր նոքա անխտրաբար զիւրաքանչիւր անդամն իսկ եռավանկ, այլ և երկավանկ ևս զնեն ուրեք, և ուրեք հնգավանկ, մանաւանդ 'ի քնարերգական տաղս, և եղանակօք նուագացն սղեալ կամ երկարեալ ըստ զգայման, մեք յաճախագոյն և սովորաբար 'ի նոցանէ վարելոցն զհետ կրթեալ, և զբարեյարմար նուագաւորսն ընդ միմեանս ընտրեալ, ընկալաք զտասն և եւթ զանազանութիւնսդ . և տեսաք զի ինքնին ըստ պարզ օրինօք իսկ փակեալ զտաղսն, ըստ որում աւանդեցաք :

Եթէ ներէր տեղիս՝ ակն յայտնի ցուցանէաք և զկատարեալ զգալի նմանութիւն մանաւանդ թէ նոյնութիւն այսոցիկ բնիկ ազգային տաղիցս ընդ բազում տողս չափական վեցոտանւոյն Յունաց և Հռոմոց . ոչ ըստ չափոյ ոտիցն նկատեալ զնոսա, այլ ըստ շեշտիցն և ըստ երկայն հատածիցն կամ թէ ասել հանգստից նոցին, որ համեմատին շեշտից կամ հանգստից մերոց անդամոցս (5), և որովք իբր 'ի քառեակ անդամս հատանին ըստ մեզ : Տեղեակքն հելլէն և հռոմ լեզուի և տաղից ինքնին մարթեն տեսանել զայդ . իսկ այլոց աւելորդ են :

Յայս ազգ տաղից, զնոյն իմն և յայլսն, յաջորդ անդամոցն նուագութիւն լցեալ և բովանդակեալ լինի՝ ոչ եթէ երկարելով իւրեանց վերջին, որպէս կարծէր ոմանց մինչև ցայժմ, այլ յերկարութենէ ամանակի վերջին վանկից նախադաս անդամոց . որ և քանզի առաւել երկարին հարկաւ, և առաւել հանգիստ ունին 'ի յանգս

5 . Զի որպէս ցուցեալ է մեր այլուր, անդամք տաղից մերոց հատանին մերթ սաստիկ շեշտիւ, ուր յաջորդ բառն հարկաւ կապեալ է ընդ առաջնոյն . մերթ չափաւոր իմն շեշտիւ բնական արտասանութեան առաջնոյն ընդ յաջորդին . և մերթ սուղ իմն հանգստիւ իմաստից, որ մանաւանդ յաճախ պատահէ յետ երկրորդ անդամոյ քառանդամ տաղից : Եւ այս հանգիստ՝ սովորաբար երկայն հատածիւ պահանջի և գտանի օրինօք հաստատեալ 'ի չափական վեցոտանին 'ի կէս երրորդ ոտին կամ 'ի կէս երկրորդին և չորրորդին, այս է՝ միշտ մօտ 'ի կէսս տողից : Նոյնպէս գտանի և յայլ չափական տաղս :

տողից, (6) վասն որոյ և առաջին անդամոյն առաւել ազատութիւն շնորհեալ է փոքր քան զայլսն կարել լինելոյ։ Նմանապէս 'ի մէջ տողին կարճագոյն անդամն լրանայ երկարելով վերջի նախադաս անդամոյն։ Զի այն երկարութիւնք ամենևին ոչ նոցին ինքեանց այնմ վերջից համարին, այլ յաջորդ անդամոցն. և այսպէս յաջորդ եռավանկին համարի քառավանկ, և միավանկ առաջին անդամն համարի մինչև յեռավանկ և 'ի քառավանկ իսկ՝ յաջորդելոյն երկարայանգ վերջի կամ հանգստի նախադաս տողին։ Յայսմ ապացոյց են, բաց 'ի բնական առօգանութեանն օրինաց, և խաղք շարականացն երկարք՝ եղեալք յայսմ ազգի չափոց միայն 'ի վերջս անդամոյ եռ և քառավանկի՝ որում յաջորդէ կարճագոյն անդամ, և ոչ երբէք 'ի վերջս նուազագոյն անդամոյ՝ որում զհետ գայ լիավանկ անդամ. միայն թէ չիցէ եղանակաւոր ինչ խաղ առ ոլորել հարկաւ զձայնն 'ի պայմանեալ տեղիս ինչ նուագացն գեղգեղելոյ։ Զայս մարթ է դիտել ամենեցուն 'ի շարականս (7)։ Բայց յերկբառեան անդամի՝

6. Որպէս և 'ի շարականն ոտանաւորս իսկ համարէ մեզ. և ըստ այնմ օրինաց՝ թէ և բնութեամբ սուղ իցէ վերջին վանկ տողին, 'ի սեղն երկարի գծոյ, և անխտիր զոր և է սուղ վանկ փոխանակ երկարի առնուն քերթողք 'ի վերջս ամենայն տողից. և ոչ է այդ ցնորք, այլ առօգանութեան պայման։ Եւ թէ ցնորք իցեն, լաւ է ցնորել ընդ Հէլլէնս և ընդ Հոռոմս և ընդ մեր նախնիս։

7. Ցորոց շատ լիցին օրինակքս,

Իսկ պատրանօք բանսարկուին 'ի դրախտէն արտաքս անկեալ։
Ահա դու փրկիչ բարերար որ մարմնացար 'ի սուրբ կուսէն։ —
'Ի յերկինս 'ի յերկիր և յամենայն ժամանակի։
Ցորժամ ծագես 'ի յերկնից և նորոգես զքո զարարածս։ —
Ժողովեա՛լ Հրէիցըն կըշռեցին արծաթ բազում,
Առեալ տարան առ Պիղատոս, ասեն 'ի խա՛չ հան 'ի խաչ։ —
Բառնալով ըզդատակնիք անէծիցն առ 'ի մէնջ։
Դիմամարտ գօտւով սրբոցըն ընդ կռապաշտ պաշտամունսն։
'Ի մըրցմունըս գազանա՛ց սրոյ և հրոյ մենամարտեալք։ —
Ծագուածըն հրաշալի՛ որ անյայտն էր 'ի մէնջ։
Հուր փայլակնացեալ և 'ի մարմնի՛ բնակեցաւ։
Ծագուածըն հրաշագործ որ 'ի կուսէն ծագեցաւ։
Երկինըք ցընծայի՛ն և երկիրս ուրախանայր։ —
Բարձրեա՛լ թագաւոր որ վասն մեր եկեր 'ի խաչ։ —
Ցաւուր յայնմի՛կ մատնեցայ 'ի ձեռս ահեղ հրապարակին։
Հայեցայ՛յ 'ի բարձունս առ քեզ կարող ամենայնի։ —
Գեղեցկութիւնք մարմնաւոր պայծառութեա՛ն ձերոյ

և երկարութիւն վերջի՛ն առաջնոյ բառին կարէ ձուլ զչափն, ա-ռանց կարօտ լինելոյ 'ի նախադաս անդամոյն առնուլ : (8)

Ցնծարեցոյց ըղձադաւո՞րն և պսակեա՞ն հեթանոսք .
'Ի գեղ ըղձանչելի աստուածատո՞ւր կուսանացն
Ցարփացեա՞լ զուարթո՞ւնք ընդ մարդկա՞ն ածնեցին :
Դարձեա՞լ վերըստին արարչագո՞րծ զօրութիւն
Եւ դարձեա՞լ Ե՞դեմ աստուածատո՞ւնկ զարդարի . . .
Բերկրեա՞լ մեզ պըտուղ զերանելի՞ն Հախախանէ :
Երկունքը մահաբե՞րք անեծնձին լուծան
Եւ Ադամ վերըստին աստուածակե՞րպ ճոխանայ :
Ջօրրք հրեշտակա՞ց ընդ մարդկա՞ն ածնեցին :
Կուսութեամբ ընդ մանկու պատերազմամբ յաղթեցին :

Իսկ ուր նախադաս քառավանկի վերջին ոչ երկայնէ յառաջ քան զկարճագոյն անդամ՝ օրինակ իմն յառաջ քան զեռավանկ, նշանակէ՝ թէ այլով չափովք և դաշնակութեամբ յօրինեալ տաղ է, և մանաւանդ առաւել քնարերգական. թեթև և գեղանիկ ունելով զյետին անդամն՝ ուրախական պարուց և սթափական ոտից աշխոյժ կոյց համեմատ : Որով և թատերցն եռանդուն մանմախոսութեան պատշաճագոյն թուին այնպիսի քառանդամքն նոքին ընտրութեամբ և ազատութեան օրինօք վարեցեալք, որովք 'ի գեղեցանականերն ասացաք, մերոյն զյետին անդամն փոխանակ քառավանկի գնելով եռավանկ : Այսպիսի են բազումք 'ի շարականս, երկանդամ կամ քառանդամ առեալ . ուր և առացեալ վերջին առանց երկար խաղին գրին . որպէս ,

Ուրախացիր, պըրդուհի, Գաբրիէլի աւետեօք :
Օրհնեալ ըզգեղ, աստուածն, ընդ անմարմնոցն դասուց :
Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ :
Համբառնալով զաչքս մեր կարդամք առ քեզ մարդասէր :
Առաւօտեան աւուրք կանայքն հանդերձ իւղովք և խնկովք :
Ըզյարութիւն Քրիստոսի ամենեքեան օրհնեսցուք :
Վասն մերոյ փրկութեան խոնարհեցար 'ի յերկնից :
Այսօր աղբիւր գիտութեան բըղխեալ 'ի սուրբ վերնատանն :
'Ի հարաշարժ աղբերէն անհատահոսորդ վըտակ :
Էջ միածինն 'ի հօրէ և լոյս փառաց ընդ նըմա :
Որ յարմատոյ հարցըն սըրբոց մեզ գաւազան բըղխեցեր :
Աղբիւր կենաց բաշխող շնորհաց հոգիդ իջեալ 'ի բարձանց :

Այսպիսի է և Ընծու գաղջրութենան տաղօք Նարեկացւոյն, և 'ի տաղից ոմնից անթիւք :

8 . Զոր օրինակ 'ի հանդարձին Հախախամանց ,
Զենեցան զենմամբ որոյ 'ի քառասոր ողջակիզումն :

Այսպէս են և յայլաչափ տաղս, զոր օրինակ 'ի Շնորհալւոյն

Է՞ր միշտ՝ և է յաւիտեան :
Ցանծեալ գայ 'ի Յորդանան :
Մե՞րկ եկաք յորովայնէ
Եւ մերկ դնիցիք 'ի տապանին :

Այլ որպէս տեսանի ակներև 'ի պատկերիդ և յօրինաց չափոցդ, յայս ազգ տաղից ոչ ունին համարձակութիւն մտանելոյ հնգավանկ բառք. որպէս և 'ի բազում ազգս ոտանաւորաց մետրոյ՝ յորս աւելի քան զքառավանկ անգամ չունի տեղի։ Սակայն առ Նախնիս երևի և այդմ փոքու դժուարութեան դարման տարեալ, հատանելով յերկու զբազմավանկ բառն, և տալով զմի մասն 'ի մի անդամ և զմիւսն 'ի միւս։ Այլ գտանի այդ արարեալ ոչ միայն 'ի քան զչորս առաւել բազմավանկ բառս, այլ և 'ի քառավանկսն անգամ, թէ 'ի բարդս և թէ յածանցեալս, հատանելով անընդմիջաբար յառաջ քան զյօդաւոր տեղի բարդին և ածանցին, կամ 'ի նմին 'ի յօդին (9)։ Նոյն այդպիսիք կարի զգուշաբար և առ տագնապաւ հարկի ևեթ ներելի լինիցին դուն ուրեք երբեք վարեցեալք. զի և առ Նախնիս սակաւ յոյժ են այդոցիկ օրինակք։ Այլ յիրաւի փոքր ասեմ զդժուարութիւնդ. զի ահա մեծ կէս Հոմերի և գրեթէ բոլոր Վիրգիլիոս թարգմանեցաւ առ մեզ առանց կարօտ լինելոյ հնգավանկ բառի։

Ո՛վ կամաւ զանկապելին
Կապեալ ըղձեաւս արձակողին ։
Դո՛ւք որդիք Նոր Սիովնի Նորոյ ծննդեան ։
Նա՛ և լեառն իմանալի անհատական ։
Փա՛ռք քեզ աստուած փառաւորեալ յաւիտեան. Շար ։

9. Օրինակ իմն, զոր և շեշտիւդ յայս առնեմք.
Խորհրդոց ոչ խոտորումն և ոչ փոփոխագրութիւն բարուց ։
Յորմէ օրհնութիւնք նըմա 'ի փըրկելոցս արեամբ նորա ։
Արծաթսիրութեամբն մոլեալ Յուդա. Շար ։
Զագս ադամանդակերպս բերեալ թաթաւելով արեամբն իւրեանց ։
Արեգական նըման յաղթութեան լոյս հրամանին ։
Բարունաբար զիմաստս իմաստութեան հօր ընծայեալ. Շն. փող ։
Առ քեզ աղաչեմք ամենասըրբուհի ։
Եւ եղեր վերընկալ աստուածային բանին ։
Եւ զհաւատս ճըշմարիտս սուրբ երրորդութեան ։
Եւ բանըն հայրական անըմբռնելի.
Ճառագայթելով զարարածս ամենայն. Շար ։
Եւ յայլաչափ տաղս,
Սոսկալին փայլակնանմամն երևեալ լուսափայլ կերպիւ ։
Հռիփսիմէ գեղազարդեալ կուսից պարծանք. Շն. փող ։
ԶԳրիգորիոս սուրբ հայրապետն եկայք վերապատուեսցուք ։
Եւ ըզմեռեալ բընութիւնս 'ի կեանս վերափոխեցեր. Շար ։

Յայտ արարեալ ցայս վայր զհնագոյն ազգային տաղաչափութիւնն և զկարևոր հանգամանս նորա և զօրէնս, մնայ այժմ համառօտիւ 'ի հարցփորձ մատչել երկբայութեանց ինչ և ընդդիմադրութեանց, որ ծնանիցին թերևս 'ի կասկածոտ ինչ միտս ուրեք: Այլ զայս այնչափ ես ախորժելով մտադիւր կատարեմք, որչափ զի միանգամայն և այլ ևս ընտրութիւնք հնոյն 'ի վեր երևիցին:

Յետ զայսքան և զայսպիսի առաւելութիւնս այսր հնագոյն ազգի տաղից տեսանելոյ, թերևս գտանիցի ոք տակաւին որ կարծիցէ, թէ զուգավանկ և յանգաւոր տաղքն ստեղծեալք կամ ընկալեալք իցեն 'ի յետնոց իբրև կատարելութիւն հնոյ ոճոյն, և ոչ թէ զի յաւելուած ստացուածոց արարեալ զնորն, կամ խամութեամբ ընդ վայր զհինն հարեալ: Այլ որ զայսն ասիցէ, պարտի ցուցանել զբազմութիւն ընտիր ընտիր քերթողացն մերոց յետնոց և զազգի ազգի քերթուածացն, որոց ընտրութիւնն և չափքն յօրէնս ունիցին լինել այնուհետև կիրթ ախորժակաց 'ի հասարակ հաւանութենէ հաստատեալ: Այլ սակայն ընդ հակառակն տեսանեմք մեք, որպէս յիշեցաք վերագոյն, մինչև 'ի յետին դարս նախնեաց հնոյն մանաւանդ վարեցեալ զյոլովագոյնս, և նորոյն զկարի սակաւս, զՇնորհալին իմա և զոմանս հետևողս նորին. նա մանաւանդ և զՇնորհալին իսկ հնոյն՝ յեկեղեցական 'ի բազմագոյն տաղս իւր, որ առաւել ազգայինքն են համարելիք հռչակաւ 'ի ժողովս երգեցեալք:

Բայց եկ բեր ասէ, և ո՞ր այն արդեօք նորոյն իցէ շնորհ՝ առ նախամեծար քան զհինն լինելոյ: Չունի ինչ ոք ասել, բայց զզուգավանկութիւն և զձայնայանգս, որ նմա 'ի ներդաշնակութիւն համարիցին: Այլ կրկորդեմք և մեք զհամառօտ ասացեալն վերագոյն, թէ նիւթական անընդհատ զուգավանկութիւնն, թող զի և չմարթէ իսկ լինել միաչափ, ոչ միայն ներդաշնակութիւն չէ, այլ մանաւանդ աւելորդ ձևով ուսման և արուեստակութեամբ միակերպ նոյնաձայնութիւն, և ոչ այլ ինչ ամենևին: Այլ մի և նոյն եղանակն յարաձայնեալ՝ զինչ այլ ինչ է, բայց տաղտուկ ձանձրութիւն, քան զոր չիք ինչ ժանտ ապականարար յարուեստս զուարճութեան: Սոխակն չլինէր երաժշտագոյն 'ի հաւս, եթէ միշտ զնոյն դայլայլիկս յեղյեղէր. և ոչ նուագիչ արժանի լսելոյ ինչ է, որ միշտ զնոյն մասն հարկանիցէ: Իսկ արդ իցէ՞ ինչ հնար, թէ զձանձրալի և զարուեստակեալ [illegible]տեսակն նոյնաձայնութիւն՝ դաշնակութիւն

որք համարիցի 'ի տաղս, եթէ ոչ ընդ հակառակս ինչ մնաց և ունկան խորհելով դաշնակութիւն իմանայցէ կամ առիցէ զմիօրինակ եղանակն ազդեալ միանգամ յունկն իւր և 'ի մտաւորն թուեալ, և սովորութեամբ չգիտեմ որպէս սիրելի եղեալ. որ է առել զարձեալ զտաղտկալին ձանձրոյթ։ Այլ ունկն փափուկ և կիրթ 'ի չափս տաղի՝ որպէս չզգայցէ զբաւական դաշնակութիւն նուագաց հնագոյն տաղից, և առաւել զզալի նոյնաձայն բախմանց կարօտիցի։ Եւ որ այդչափ զգաստն է և աչալուրջ յիմանալ զպակասութիւն վանկի միոջ 'ի զուգավանկութեանցն, զիարդ չիմանայ և չզգայ զանփոփոխ և զանընդական նոյնաձայնութեան զուգավանկիցն զանսպառ և զանհանդուրժելի տաղտուկ յերկայն քերթածս, և զբազում ուրեք աննմանութիւն նոցին և անյարմարութիւն ընդ իմաստից և կրից բանին և սոցին պատշաճ առոգանութեան։ Համենայն տաղս զուգութիւն ինչ նմանութեան խնդրի ապաքէն, բայց առանց ձանձրութեան. մանաւանդ թէ տիրապէս խօսելով ոչ զուգութիւն սոսկ է պահանջելի յարուեստս զուարճութեան, այլ վայելուչ զուգախառնութիւն։ Արդ հինն անզուգավանկ է, բայց անդամովք և առոգանութեամբ զուգախառն զուգաչափ ըստ յունին և հռովմայեցւոյն. նորն՝ զուգավանկ 'ի ձանձրութիւն, բայց անզուգախառն անզուգաչափ առոգանութեամբ ըստ անդամոց և ըստ բոլոր տողին։ Արդ ո՞ քան զո ընտրելի իցէ զուգախառն դաշնակութեան խնդրողին։ Ամենեքեան վկայեն թէ յարդի ազգաց վանկաչափ ոտանաւորս իսկ՝ գերազանց քան զամենայն ըստ ճարտարութեան և գեղեցիկ՝ հեռի յամենայն ձանձրութենէ է մեծագոյն կամ դիւցազնական տաղն իտալացւոց։ Իսկ մեր արդեօք իցէ։ Ոչ վասն քաղցրութեան լեզուին. զի ահա և գաղղիացւոցն լեզու ոչ ինչ ընդհատ քաղցր է քան զայն, այլ դիւցազնական տաղ նոցա ձանձրալի, ըստ վկայելոյ նոցին իսկ ազգային բազմահմուտ և կիրթ գրագիտաց։ Այլ իտալացին առաւելու քան զայն և քան զայլս այնու՝ զի 'ի նմա, թէ յանգաւոր իցէ՝ թէ անյանգ, ինն ազգ տաղից կամ տողից 'ի մի խառն են, ըստ փոփոխութեան շեշտից կամ անդամատութեան տողիցն, և ըստ եռատեսակ աւարտից միոյ միոյ։ Եւ այս վերջեակ զանազանեալ տողք՝ ընկալեալ են յազգէն և իբրև մի ամենևին զուգախառնեալ 'ի մի գեղայարմար միաբանութիւն, առանց ինչ սահմանելոյ նոցա փոփոխմանցն, այլ մանաւանդ նպաստ լինելով 'ի հաս-

նել զձայնձրութիւն նոյնաձայնութեանն և 'ի յարմարութիւն ընդ իմաստից և կրից բանին, ըստ կարի և մարթելոյ նախանձ բերեալ այգաբերք ամենարուեստ փոփոխմանց դիւցազնականին Յունաց և Հռոմոց, որում ոչ ոք կարէ հաւասարել. զի քսան և չորք ազգ են նորա զուգաչափ զանազանեալ տաղից։

Իսկ զձայնայանգիցն արուեստակեալ և բռնազբօսեալ աւելորդութիւն և զխաս՝ վերագոյն ցուցեալ է բաւական, մանաւանդ 'ի նշանակեալ այլազգի մատենագրացն։ Յաւելումք աստանօր, թէ և այնք ոչինչ վճարեն 'ի ներդաշնակութեանն խնդիր։ Զի թէպէտ և եղանակաւոր յանգումն ինչ տողից կարևոր և քաղցր նուագումն ինչ իցէ ականջաց, սակայն ձայնայանգք չեն բնաւ ներդաշնակութիւն բուն իսկ յօրինուածոյ տաղին, որպէս և ոչ զուգավանկութիւնն։ Ապա թէ ոչ, հարկ լինիցի ընդունել, թէ ամենայն որ և է զինչպէտ ոտանաւոր, յորում նոյնավանկութիւնն ճիշդ պահեալ իցէ և ձայնայանգքն յարմարեալ մածուցեալ 'ի ծայրս տողիցն, զարմանալի դաշնակութիւն պարտիցին ունել. և որ ոչն այնպէս ինչ իցեն, աներաժիշտս գոլ։ Որում հակառակ վկայեն հասարակաց միտքս և ամենայն ականջք՝ յընթեռնուլն և 'ի լսել թէ զարտաքնուստ ոտանաւորս ինչ նորոց, և թէ զայսր զհնագոյն ազգի չափոց քաղցրանուագ տաղս նախնեաց։ Ապա ուրեմն, որպէս այլ է տաղաչափ լինել, և այլ՝ բանաստեղծ, այսպէս այլ է ճիշդ և արուեստակեալ համար վանկից և ձայնայանգ տողից, և այլ ամենևին բարեյարմար նուագաւոր և երաժշտական քաղցրաձայնութիւն տաղից։ Իսկ ուր սա մերձ իցէ, ձայնայանգք կամ ոչինչ և կամ խուն ինչ ևեթ օգնեն, թէ և ստէպ ստէպ փոփոխիցին, որպէս և աւելորդ պաճուճեալ զարդք գեղեցիկ։ Իսկ ճշդութիւն զուգավանկութեանն՝ մխաւէ մանաւանդ անզուգախառն տաղտկութեանն վտանգաւ։ Ոչ փոքր զարմանք են, զի զանփոփոխ նոյնայանգից ձանձրոյթ իմացեալ յապա եկեալ ականջք և փոխեցին, իսկ զնոյնավանկիցն ոչ, ուր զի և օրինակք հնոցն նախնեաց առ ձեռն կային։ Իսկ միւս ևս զարմանք այն, զի որ յարձակ շարագիրս ատելին է և տղայական և զզուշալի՝ յանգըն, նոյն 'ի բարձրագոյն 'ի քերթողական լեզուին փառս համարեցի և 'ի քաղցրութիւն։

Այլ աղէ տեսցուք, գուցէ իցէ ինչ հնագոյն տաղիցս մեծագոյն

վնաս և առաւել անբերելի, որ ՚զնա դատապարտ առնիցէ առ նո-րովն : Թերևս կարծեսցի ումեք, թէ հինքն զանաշխատ դիւրա-թիւն խնդրելով՝ զայնչափ ազատութիւն առեալ իցեն, որ նմա ան-արուեստ և յանդուգն իսկ համարձակութիւն թուիցի և օտարա-ցուցիչ ՚ի քաղցրաձայն ներդաշնակութենէ և մօտ յարձակ բան, և խոտան գրիցէ իբրև զզեղծումն քերականական ազատութեանց կամ ձևոց ՚ի շարագրութեան :

Այլ սակայն որ ընդ այսր փորձ ոք անցանիցէ միանգամ, տեսանի-ցէ անշուշտ՝ զի այս ազգ տաղից ոչ եթէ անաշխատ դիւրութիւն մատուցանէ տաղաչափին, այլ մանաւանդ՝ ազատութեամբն յըն-տրանս բառից և դարձուածոց և չափոց, և համարձակութեամբն տալով ՚ի փոփոխել ըստ կարի՝ առ խորշելոյ ՚ի նոյնաձև նմանութե-նէ, առաւել իմն կատարելութիւն և ողորկումն պահանջէ, և առա-ւել դժուարին գտանի քան զկապեալ կաշկանդեալ ոտս նորոյն, որ նովին իսկ շնորհէ բնաւ այնուհետև քերթողին այլ ինչ ածել զմը-տաւ. և մի անգամ տպաւորեցեալ ՚ի միտսն և յունկնն ընդելեալ, ա-ռանց երկանց և ջանից ինքնին ծնանի այնուհետև իբրև ՚ի կաղա-պարի ձուլեալ. մինչև բազում ուրեք չմարթել իսկ այլ ևս ինչ ա-նել : Վասն որոյ և ազատութիւնն այն հնոյն՝ ոչ եթէ անարուեստ և յանդուգն համարձակութիւն է առ յաշխատութենէ զերծանե-լոյ, այլ մանաւանդ խնամով և արուեստաւ սահմանեալ օրէնք տա-ղիցն, և խորհրդով յանձն առեալ տաժանելի աշխատութիւն՝ առ փոփոխմամբն ազատիլ ՚ի նոյնաձայնութեանն անտանելի ձանձրու-թենէ, և ըստ իմաստից և կրից բանին և առոգանութեանն պատ-շաճել չափս յարմարաւորս ՚ի մեծ ևս դաշնակութիւն և կատարելու-թիւն, և ոչ սակաւ ուրեք առ ՚ի զոճոյն պահելոյ զընտիր վայելչու-թիւն և զվեհութիւն, եթէ միայն ըստ արժանի յօրինեսցին : Իսկ եթէ նոյնավանկութիւնն և ձայնայանգք առաւել դժուարութիւն համարիցին, սակայն անշուշտ չեն առաւել գեղեցկութիւն և կատա-րելութիւն, նա մանաւանդ բազում և մեծաց գեղեցկութեանց և կա-տարելութեանց խափանարար՝ հանդերձ տաղապարտ դժուարու-թեամբքն : Լաւ իցէ թերևս գերիլ և կապիլ ՚ի բարի ինչ, այլ ոչ եթէ և ՚ի չար. լաւագունին խնդիր և զլաւն առ երբեմն կորուսա-նել. և ճշմարիտ է առակն, թէ Լաւագոյնն՝ լաւին թշնամի է : Այլ մի-թէ վտանգ ինչ և տագնապ անհնարին իցէ քերթողին, մանաւանդ

'ի ստեղծանելն յինքեանց զտաղսն իբրև զմերն Նախնիս՝ զհայրս չափոցս այսոցիկ, զատանել եռավանկ ինչ կամ քառավանկ, և ագուցանել 'ի տեղի երկավանկին կամ միավանկին, որպէս յայլ անթիւ տեղիս, և լինել այնպէս միօրինակ զնիւթական թիւ վանկիցն, և շնորհել ըն-թերցանելեաց զցանկալի տաղտուկ ձանձրութեանն պարգև: Այլ ուր իմաստք կամ կիրք բանին և կամ բնական ուղիղ առոգանութեանն եղանակ ինքնին լինէր բաւականապէս զչափսն առ ականջս լսելոյ, և տողն ինքնին դաշնակաւոր է թուաւոր յարմարութեամբ անդամոցն 'ի մի միաբանութիւն, չմարթի այնուհետև իրաւամբք պակաս տե-սանել անդ զչափսն, և զոտսն կաղ ասել, և զտողն թերի 'ի դաշնա-կութենէ, կամ երևակայութեամբ և խօլական ցնորիւք կարծել լինել: Այլ թէ զուցէ ևս ինչ 'ի նոսա անհաւասարութիւն, ոչ այնու մերձաւոր արձակ բանի իցէ տաղն. և յայտ անտի է, զի քնարական խառն չափք՝ անհամեմատ քան զամենայն են, սակայն և նուազաւոր քան զամենայն և օտար յարձակ խօսից: Աւերութիւնս այսպիսիս չտեսին 'ի տաղս յայտանիկ նախնեացն ականջք՝ հմուտք քան զմեզ դաշնաց և պայմանաց լեզուին՝ ընդ դարս յոլովս, մինչև եկն եմուտ 'ի Հայս այլազգի չափոցն ախորժակ, և տիրեաց կալաւ օրինակ քերթածաց ինչ Շնորհալւոյն: Այլ ցայսօր նոյն լսելիք են ազգիս. զի թերութիւն ինչ այսպիսի կարևոր՝ չտեսին և այժմու ականջք յոլովազգին մտերմացս, որք լուանն միանգամ զոտաքս մեր զայսո-րիկ ուղիղ առոգանութեամբ. և հազիւ թէ 'ի տասանց միոյն՝ երկ-բայութիւն ինչ յարուցց ընդդէմ. որով և մեզ քաջալերութիւն ե-ղև անվեհեր համարձակութեան, տեսանելով զմեծ հաճութիւն նոցա զանկեղծաւոր: Նաև եթէ ճշմարտիւ իցէ ինչ ուրեք այսպիսի, ոչ տաղիցն է վնասն, այլ անպատկանաւոր յօրինուածոյն կամ ան-արուեստ առոգանութեանն: Նա մանաւանդ ունկն ընդելեալ 'ի հնագոյն տաղսն՝ իրաւամբք զատանիցէ 'ի նոր արուեստակեալ զու-գավանկսն ձանձրութեամբն հանդերձ և բազում տողս առաւե-լեալս կամ թերացեալս համեմատաբար 'ի չափոցն, վասն անյար-մարութեան նոյնավանկիցն ընդ ամենևին այլասեռ իմաստն և կիրս և ընդ նոցին սեփական և բնիկ առոգանութեան: Նաև քերա-կանական ազատութեանցն օրինակ անյարմար է առ խնդիրս. զի յարձակ բանի ոչ կարևոր պիտոյ է ազատութիւն և փոփոխումն, և ոչ ներելի առանց հարկի. և դարձեալ՝ զի նոքին իսկ չափով և

համով վարեցեալք, 'ի մեծ գեղեցկութիւն են բանից և 'ի հեշտութիւն կիրթ լսելեաց. և զի բազում անգամ փոխանակ զնոյնս նովին ոճով յեղյեղելոյ, յարձակ բանի ևս ընտրելի է ճարտարաց և հարկ իսկ վարիլ ազատութեամբքն այնորիկ՝ առ խորշելոյ յանարուեստ և 'ի տաղտուկ միաձևութենէ: Իսկ զբոլորովին ազատասէր և զբօսասէր քերթողութիւն ո՞ գերեալ կապեալ կաշկանդիցէ, և ոչ տացէ ըմպահկել և կիցս ընկենուլ: Ո՛չ շատ իսկ իցեն նմա այնքան կապանք, որքան զի յարձակ շարագրածոյ զանազանիցի, առանց ատելի զնա առնելոյ բանի և ունկան և գեղեցիկ ախորժակաց: Կամակար ազատօրէն հպատակէ բանի և օրինաց հանճար, այլ զլուծ իշխանական բռնութեան զընկենու:

Բայց 'ի ներդաշնակութեան մասին՝ յամենայն լեզուս առհասարակ խոստովանեալ է, զի ոչ ամենայն ազգի ազգի տաղից նոյն դաշնակութիւն է, և ոչ յամենայն քերթածս նոյն պահանջի: Ո՛չ է, օրինակ իմն, այլ է քնարական կայթից և պարուց դաշնակութիւն ողղող և եռանդուն, և այլ՝ դիւցազնականին առից մեծավայելուչ և վեհափառ ձևմք. և 'ի դիւցազնականին զքնարականն պահանջել՝ անկիրթ է և ընդունայն խնդիր: Այս և ոչ յամենայն տողս միոյ ազգի քերթուածոյ զնոյն և զմի միշտ միօրինակ ներդաշնակութիւն պահանջելի է՝ ըստ ցայս վայր ասացելոցս. զի ոչ այլ ինչ պահանջել է այդ, բայց զնոյնաձայնութեանն ձանձիր ատելի հեշտութեան կրից, յորմէ և այնչափ իսկ խորշի և մերժի ազգ տաղից: Այլ 'ի վեցոտանին Յունաց և Հռոմոց և 'ի դիւցազնականն իտալացւոց միշտ նոյն չափք են յամենայն տողս, այլ ոչ և նոյն դաշնակութիւն. որում անհնար իսկ է կալ ընդ այնպէս փոփոխմանն, որպէս և ձանձրութեան անմարթ է փախչել յանփոփոխութենէ:

Խոստովանելի է դարձեալ, թէ ամենայն տաղք յինքեանս կամ 'ի գրին անկենդան են և մեռեալ. և քաջի առոգանութեան է կենդանացուցանել զնոսա՝ յարդել և յիմանալ զնուագաւոր դաշինս պայմանի չափոցն: Այս այս կարևոր պիտոյ է՝ ոչ միայն յայսմ ազգի հին տաղիցս, այլ և յայլոն ամենեսին, այլ և 'ի նորոն առհասարակ: Ո՛չ եթէ և զընտիրս անգամ 'ի զուգավանկ ճշդաչափ կարծեցեալ տաղիցն նորոց՝ ոչ բարւոք և ճարտար ըստ նոցին պայմանի ոք ընթեռնուցու, խանգարի բնաւ դաշնակութիւնն, և արձակ բան երևին, կամ այլ ընդ այլոյ չափք և նուագք լինին լսելի. զորոյ և

զփորձն տեսանեմք հանապազօր, և դիւրին է ամենայն ումեք առնել զնոյն ։

Բայց յայսմ իսկ կայ խտիր կարևոր ընդ նորն և ընդ հինն ։ 'Ի նորն՝ որչափ ոք ըստ ճիշդ պայմանի բաժանման անդամոցն ընթեռնուցու, նոյնչափ յայտնի ևս առնէ և առաւել զնոյնաձայն ձանձրոյթն, օտարացեալ և 'ի բնական առոգանութենէ ։ Իսկ 'ի չափոյն պայմանէ խոտորեալ՝ առ փոփոխումն ինչ մուծանելոյ և զբնիկ առոգանութիւն պահելոյ, բնաւ և յոտից իսկ անկանի և խանգարին օրէնքն, և դաշինքն լուծանին՝ խանգարելով միաձևութեանն որ հոգին է այնց տաղից ․ զի տաղտկալին այն ձանձիր՝ կարևոր հանգամանք և պէտք են կարծեալ ներդաշնակութեանն ․ որ զի չէ իսկ ինչ այլ՝ բայց ձանձրալի նոյնաձայնութիւն ։ Վասն որոյ կամ զչափսն և զկարծեալ ներդաշնակութիւնն պարտի կորուսանել և փոխել յարձակ բան, կամ զխնդրեալ փոփոխմունսն և զանազանութիւնս տողիցն և զբնական առոգանութիւնն չգտանել, և սիրով համբերել զսիրելին իւր զտաղտուկն տագնապող ձանձրոյթ ։ Իսկ 'ի հինն ոչ այսպէս, այլ ազատասէր չափովքն ազատ է և 'ի վտանգից այտի ․ զի թէպէտ ըստ իւրոց անդամատութեանցն ընթերցցի, թէպէտ ըստ բնական առոգանութեան, միայն թէ բարւոք ընթերցցի, միապէս նուագաւոր է յիւրում պայմանին, և ինքնին փոփոխմամբքն քաջ 'ի բաց հեռի 'ի դժպհի լսելեաց նոյնաձայնութեանն պատերազմէ, առանց հարկելոյ կամ զանդամոցն և զչափոցն պայման թողուլ՝ առ խորշելոյ 'ի տաղտուկ նոյնութենէ և փոփոխմունս հայթայթել, կամ զբնական առոգանութիւնն խանգարել՝ առ 'ի չափոցն սահմանի անստերիւր մնալոյ ։ Ահաւանիկ չափոցն և առոգանութեանն դաշինք անբաժանք են 'ի նմա, և պէսպէս փոփոխմամբքն հանդերձ 'ի մի գեղայարմար միաբանութիւն խառնեալ ըստ կարի, առանց մտի և վնասակար խղճմտութեան ։ Զի այսր ազգի տաղից միւս ևս այն շնորհ է և միանգամայն դժուարութիւն, զի առաւել քան զայլսն պահանջէ՝ ըստ բնական ուղիղ առոգանութեան լեզուին ունել զյօրինուած չափոցն ․ սակայն և առանց խափանելոյ զտաղաչափին յօրինաւոր քերթողական ազատութեանցն, որ յամենայն լեզուաց քերթութիւնս շնորհեալք են ։ Ուստի և ոչ միայն չերկնչի 'ի բնական ուղիղ առոգանութենէն, այլ մանաւանդ ըստ այնմ իսկ զընթերցումն խնդրէ ճարտար՝ առ

անվրէպ ազդեցուցանելոյ զչափոյն զուգախառն նուագաւոր յարմարութիւն։

Յուսամք թէ բաւականաբար լուծաք զերկբայութիւնս և զդժուարութիւնս, և միանգամայն առաւել ևս յայտ արարաք զշնորհս և զպարծանս կատարելութեան այսր ազգի հնագոյն տաղից, յոր և խոստովանիմք անշուշտ թէ մեք չկարացաք ժամանել. այլք լաւ ևս ջան տարեալ հասանիցեն. 'Ի մեծամեծս՝ և կամելն իսկ շատ է, որպէս ասաց ոմն 'ի հնոցն քաջաց քերթողաց։ (10)

10. 'Ի վախճան կարեւոր խնդրոյս, յորում զհին և զնոր ոտանաւորացս ընդ միմեանս հարեալ կշռեցաք զհանգամանս, թերեւս ոչ անախորժ իցէ ընթերցողաց տեսանել և զմի և նոյն բան երկոքումբք ոտանաւորօքն՝ առ համեմատելոյ ընդ միմեանս։ Վասն որոյ մատադիւր յօժարութեամբ կարգեմք աստանօր զսկիզբն առաջին գրոցս փոխեալ 'ի Նորն՝ 'ի Ճարտարէ ումեմնէ արդի տաղաչափիցս, որ և ինքն իսկ առ 'ի պէտս բաղդատութեան յօրինեալ է զիւրն յետ տեսանելոյ զմերս։ Եւ այս է աւասիկ.

Ի՛ւ հանճարք զուարթք առնիցեն, ո՜վ Մեկենաս,
Եւ ընդ որո՛վ աստեղբ հերկել զարտորայս
Եւ զուգել զորթ ընդ Նըշդարի իցէ անկ,
Առից երգել. զինչ արջառոց հեթեթանք,
Եւ զինչ խաշին հօտ, և քանի՛ իսկ հըմուտ
Սակաւապէտ մեղուին 'ի բոյծ խընդրի փոյթ։
Որք ըղսահունն ո՜վ դուք վարէք ընդ երկին,
Ջահք աշխարհի լուսապայծառք, ըղտարին.
Սպանդարամետ և Դեմետրէ կենսաձիր,
Եթէ շնորհիւ ձերով երբեմն երկիր
Ըղքաւոնեան գխաց տոռք ընդ հասկին
Ըղմայրենի փոխանակել ըղկաղինն,
Եւ ողկուզացն այն խնչ գտելոց 'ի կայլակ
Զաքելովեանն ուսաւ խառնել ըղբաժակ.
Եւ դուք խնամողք գեղջկին շինից շահապետք,
Փայք և պարիկք, յաւէրժհարսանց զուգահետք,
Ած իս մատիք, 'ի նուագ ընծայս ձեր առնում.
Եւ դու ևս ո՜վ Պիղպոնէ, որ 'ի քում
Կոփեալ երկիր յերեքարձէնդ 'ի յըստուար,
Հան նորաստեղծըն զամեհին երիվար.
Անտառարնակդ, ում ըղյուռթիս երինջք բիւրք
Ըղցուլարիս Կեայ ըղղեն ձիւնաթոյրք,
Ըղհայրենիդ քոյին 'ի բաց և դու ծն,
Թողեալ զանտառ և զծառախիտ Լիկէոն,
Մատիր հօտից տեղեացիդ պահապան,
Թէ հոգ ընդ քոյդ է ընդ Մենալքեզ ո՜վ Պան.

Այդ և այդպիսի է սաստիկ, կարճառօտիւք՝ այլ քաղաքականապէս տեսեալ նախնական Հայոցն տաղաչափութեանն տեսակ, որով վարեցաք մեք յայս քերթուած վիրգիլեան։ Այլ թէ ուղիղ և համաձայնեղ ինչ գործեցաք և հաճոյ ունկանն, զայն ընտրեսցեն անաչառ և քերթողական հմուտ լսելիք այդպիս։ Որ և, յետ փոքր մի ժամանակաւ ընդելանելոյ ընթերցուածն և 'ի լուր ազնուական չափոյս, և յետ հեշտութեան ականջացն վկայելոյ 'ի շնորհս տաղիցս այսոցիկ՝ որպէս ասէն ունիւք, և որպէս անհնարին է միաբանել զուարձութեան ընդ տաղս աներաժիշտս, սակս այնուհետև եթէ նախնեացն որդիք իցեն հարազատք, և նոցին ոսկեղէն դարու քանարարութեանն և կիրթ ախորժակացն սիրելիք և նախանձայոյզք, և ոչ կանխակալոյ սովորութեան ծառայք, ոչ կարծեմք թէ դատապարտ զմեզ առնիցեն, իբրու նորաձևս ինն արարեալ մտացածին ինքնահնար գիւտիւք, և տարապարտ հերձուած յարուցեալ 'ի հայկական Պառնասոս՝ վեր 'ի վայր խռովել զհայ Մուսայսն։ Զի մեք ոչ այլ ինչ արարաք 'ի սմա, քան թէ ընիկ հայրենականացն ընտրելագոյն տաղից նախանձու՝ նորոգել ևեթ և 'ի լոյս պայծառութեան հանել զ'ի մթան մնացեալ և գրեթէ խափանեալ յանիրաւի զլուն վաղնջուց հայկեան տաղաչափութիւնս. և այն ևս՝ ընտրանաւ, սակաւս 'ի բազմացն առնլով տողից նախնի տաղաչափիցն, զյաւէտ դաշնակաւորսն և զքաղցրավայելուչսն 'ի մի միաբանութիւն զուգաչափ գեղայարմար տաղից։ Որպէս և 'ի չափական վեցոտանի տանաւորսն Հելլենաց և Հռոմոց ընթեռնումք զգոյն արարեալ 'ի հնումն նոցին ճարտարացն. յանկերպաւոր տաղից պատշաճից դեռ-փական եռոտանւոյն ընտրեալ միայն զկասն, և օրինօք հաստատեալ։ Սոյնպէս և այլոց և այլոց ազգաց իւրաքանչիւր յիւրեանցն։

Իսկ արդ իբրև այսպիսի հայրենաւանդ արուեստի արգասիս, և

Եւ ձիթենւոյն դու Աթենաս հեղինակ,
Եւ կոր մաճոյն քերող 'ի լոյս պատանեակ,
Եւ որ զմատաղ նոճոյն ըղբուն կարճոմքին
Ըշհարունիւք բարձեալ բերես ըստ անձին,
Եւ ամենից ուսամնուհեաց զից երամ.
Ոյց հող 'ի պահ անդաստանաց է և խնամ,
Ըզնորոգոյս սածօղք անսերմին պտղոյիւնս,
Եւ որ անզդայք ցօղ յերկնէ յորդ 'ի սերմանս։

ոչ իբրու զմերոց ինչ գիւտից, նուիրեմք ահա և զայս վաստակ 'ի փառս Հայկազեան դպրութեանց ։ Փոխանակ բազում բանից՝ արդիւնք իւրացն այսուհետև 'ի մէջ անցեալ խօսեսցին զինքեանց առ անաչառատես միտս և առ վեհագունիցն ցանկացօղ կիրթ և փափուկ լսելիս Հայակոյտ քերթողական ոճերոյն՝ այսպիսեաց ախորժական արժանաւոր եղելոց ։ Այլ եթէ վարդ մի փոքու իմն զուարճութեան դոյզն ինչ վայրկենի արկանք սոլաւ 'ի շաւիղս փշալից կենաց իմաստնոց, համարեսցուք զանձինս ոչ ամենեւին անարդիւնս անցեալ ընդ առապար կենցաղոյս ։

ՊՈԲԼԻՈՍԻ

ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՆԻ

ՄՇԱԿԱԿԱՆՔ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԳՐՈՑ

Սկիզբն ունի զառաջարկութիւն բոլոր քերթուածոյն 'ի չորս առաջս, 'ի վար և 'ի ցան արմտեաց, 'ի տնկարկութիւն, յանդէորդութիւն և 'ի մեղուագործութիւն։ Այս կարդացեալ զդիս նպաստամատոյցս ամենայն մասանց քերթածին, ընդ որս և զՈկտաւիանոս Աւգոստոս Կայսր՝ զաստուածարեալն 'ի ժամանակին ըստ հեթանոսական կարգաց, մտանէ այնուհետև 'ի ճառս առաջին գրոցս, որոց են գլուխք վեց։

Ա. Այլ և այլ եղանակք վարոյ և ցանոյ ըստ պէսպէս բնութեան հողոյն և սերմանց։

Բ. Երկրագործութեան սկիզբն, և արուեստից գիւտք։

Գ. Անօթք և կահք և կազմածք մշակաց, և խրատք յոյժ զգուշութեան։

Դ. Նշանակք մշակութեան այլ և այլ սերմանց. բաժնից երկրի հմտութիւն և դիրից աստեղաց և շրջանաց. և թէ զինչ յանձրևի և 'ի ձմերան և 'ի տօնս վաստակք. և խտրանք աւուրց և ընտրութիւն տուընջեան և գիշերոյ։

Ե. Նշանք և գուշակութիւնք ժամուց և ժամանակաց յեղափոխութեան օդոց յանձրև կամ 'ի մրրիկ և 'ի ջեր, պատճառս առեալ նախ 'ի նկարագրութենէ ամառնային մրրկի։

Զ. Պրուագ վայելուչ զհրաշանշան սքանչելեաց՝ որ կարապետ եղեն սուսերահար սպանմանն Յուլիոսի Կայսեր, և որ զկնի գուշակ առնէին պատերազմացն հռովմայեցւոց։ Այս կատարի յաղօթս՝ վասն փրկութեան Աւգոստոս Կայսեր և հռովմէական ժողովրդեան։

ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՎՆԻ

ՄՇԱԿԱԿԱՆՔ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Ի՛ւ զուարթ աճիցեն՝ բոյսք արմտեաց, ով Մեկենաս,
Յի՛մ արփի վարել զերկիր, զայգիս զուգել ընդ նըշգարիս,
Զի՛ փոյթ 'ի դէպ անդէոյ, զի՛նչ հօտի պէտ 'ի հեթեթանս,
Տընօրէն մեղուին քանի՛ հըմուտ հանճար, ասից երգել։

1. Մեկենաս էր մի յառաջին իշխանաց Աւգոստոս կայսեր, խնամակալ ճարտարաց ժամանակին, մանաւանդ Վիրգիլեայ և Որատեայ: 'Ի խնդրոյ նորա սակ արարեալ Վիրգիլի զքերթուածս, որում և ընծայէ իսկ:

2. Յի՛մ արփի, յորում աստեղատան, յորում ժամանակի և ամսեան տարւոյն 'ի դէպ իցէ արօրադրել զերկիր, և զորթս կապել ընդ նշգարիս իբր 'ի զուգութիւն ամուսնութեան, որ աւանդել ըստ Իտալացւոց սովորութեան է, առ որս երկայնին որթք և պատատին զնշգարօք: Հանգոյն սմին բազում իմն է 'ի քերթուածս, որ ըստ Իտալական երկրին և սովորութեան պատշաճեալ են. զայս մի անգամ ծանուցանել շատ լիցի:

3. Հոգ 'ի հայթայթանս հօտի զոր ունիցի ոք և գարմանիցէ, կամ կամիցի ոք ունել և գարմանել:

4. Թէ քանի՛ հմտութիւն պիտոյ 'ի գարմանս մեղուաց, կամ թէ որքան է ճարտարութիւն մեղուաց 'ի գործս իւրեանց, որ զամենայն իմն բազում խոհեմութեամբ և իմաստութեամբ մատակարարել պընտեսեն 'ի յարկս իւրեանց:

Ո՛վ լուսապայծառ վեհ գերարփիք տիեզերաց,
Դուք՝ որ ընդ երկին սահուն զոլորտ վարէք տարւոյն,
Դեմետրէ կենդանատու, Սպանդարամետ ուրախարար,
Զերով եթէ շնորհիւ ըզքաոնեան վայրի կաղինս
Ընդ ատոք ոսկեփունջ հասկ երբեմն երկիր փոխանակեալ,
Ի բաժակս աքելովեան ըզնորագիւտ պարզեաց ողկոյզ.
Եւ դուք, վարսաւոր մայրեաց շինից հուպ շահապետք,
Հովասուն պայք և պարիկք և կուսագեղ յաւերժհարսունք,
Ո՛ն եկայք երամովին, ըզձեր պարգևսըն նուագեմ:
Դու ևս ով, որում 'ի մեծ երեքարձեն կոփեալ նախկին
Զամեհին բըխեաց երկիր ձի փռընչելով ընդոստուցեալ,
Պիսիդոն, և անտառաց պետ պահապան դու բնակաւոր՝
Ում բիւր զուարակ ձիւնաթոյր ըզդեղ զալար լըզեն Կէայ.
Զհայրենիդ և քո թողեալ թաւ դարևանդ լիկէական
Տեգեացիդ Պան հօտապետ, թէ սիրելի քեզ քոյդ Մենալ,
Հաշտ առ իս մատիր, և դու ձիթենւոյն կոյս արարչակերտ
Աթենաս, և կոր մաճոյն բերող 'ի լոյս պատանեկիկ,

7. Դեմետրէ աստուածուհի հնձոց, Սպանդարամետ դիք որթոյ և գինւոյ: Բայց ըստ կարծեաց հմտից՝ առաջինովդ ըզլուսին իմանեայ, երկրորդաւդ զարեգակն, զորս և վեհագոյն լուսաւորս կոչեաց նախ՝ վարիչս տարւոյն. զի երկոքումբք այնոքիւք չափին ժամանակք՝ որովք ածեն զտարին ընդ երկինս:

8—10. Քաոնդի առաջին մարդիկն վայրի կաղնովք և ջրով ևեթ պարենաւորէին. և 'ի կաղնաբեր անտառս նշանաւոր էր Դոդոնեանն 'ի Քաւոնիա կամ յԷպիրոս, որպէս և 'ի ջուրս գետոց՝ Աքելովոս յԷտոլիա, զորոյ ափամբք ասի արկեալ զառաջին այգիս Օինէոսի Էտոլացւոց արքայի, և նուիրեալ զինի Սպանդարամետին, և ընկալեալ 'ի նմանէ զարուեստ այգեգործութեան:

11. Շահապետք, պայք, պարիկք և յաւերժահարսունք՝ դիք իմն կամ դիցուհիք վայրաց և անտառաց համարէին առ նախնիս Հելլենաց և Հռոմայ, որպէս և առ մերս:

14. Նախկին բղխեաց երկիր, իմա 'ի նախնումն, նախ զառաջինն 'ի սկզբանէ. կամ նախկինն երկիր, նախաստեղծ, նորաստեղծ: Պիսիդոն կամ Պոսիդոն ծովական դիք՝ համարէր արարիչ ձիոյ: Չի 'ի միջնոյն ընդ Աթենասայ դիցուհւոյն թէ ո՛ յիւր անուն կոչեսցէ զնորակերտ քաղաքն աթենացւոց, պատգամ ելանէր յաւագամեծար ատենէ երկոտասան դիցն վեհագունից, զի որ օգտագոյն ինչ պարգևս շնորհեսցէ մարդկան, զիւր անուն տացէ քաղաքին: Յայնժամ Պիսիդոնի հարեալ զերեքարձենն ընդ երկիր, եհան զձի պատերազմական. Աթենաս նիզակաւն բուսուցեալ զձիթենի՝ զհաւատչեայ զնշանակն խաղաղութեան, և յաղթող եղեալ՝ ետ զանուն իւր 'ի վերայ քաղաքին:

16. Անտառաց պետ պահապան կոչէ զԱրիստէոս, զորդի Ապոլոնի և Կիւրենեայ, որոյ թողեալ զԹեբէ՝ եկն բնակեցաւ 'ի Կէա, որ մի է 'ի Կիկլադայց՝ 'ի Բոլոր կղզեաց. և համարի հնարագիւտ մեղուաց և մեղրագործութեան և մակարդելոյ կաթին:

19. Պան դիք էին անդէորդութեան և խաշնարածութեան, յԱրկադիա գաւառէ՝ յորում էր Տեգէա քաղաք: Լիկէոս և Մենալոս պարարտարօտ և անտառախիտ լերինք էին Արկադիոյ. զորս թէ սիրես, ասէ, առ իս մատիր. զի տուարածական տաղիւքս փառաւոր արարից զնոսա և նոքօք զքերթուածս:

21. Մաճոյ և արօրոյ ճարտարապետ համարեալ էր Ոսիրիս եգիպտացի, կամ

Եւ բարձող կարճոլլին մատաղ նոճոյն Շահարունի.
Դիք բոլոր և դիցանոյշք արթուն դեհապետք անդաստանաց,
Որ զինքնեկ ըղձեռաբոյս արդիւնս անսերմն սնուցանէք,
Եւ որ յորդ 'ի հարաւունս տեղայք յերկնէ ցօղ շառաչուկ:
Եւ դու ինքըն Կեսար, ում երկեան է տակաւին
Յոր կաճառ աստուածախումբ լեցի ուրեմն ակումբ արկեալ.
Աշխարհաց թէ ոստիկան և քաղաքաց սիրես կալ դէտ,
Եւ ըղձեր տիեզերաց ծիրն ընկալցի լայնակամար
Մըրգաբեր բարեաց ծընօղ, ժամանակաց իշխեցօղ տէր՝
Մըրտենեաւըդ մայրենի արտախուրեալ քեզ զքունս.
Թէ անհուն ծովուն ծագես աստուած և քեզ երես եւեթ

Տրիպտողեմոս Եղեւսինացի՝ 'ի Դեմետրեայ ուսեալ զերկրագործութիւն :

22 • Շահարունի կամ Սիլուանոս գիք էին անտառաց, որում սիրելի լեալ Կիպարիս մանուկ, որ նշանակէ նոճ. որ և իբրև հալէր և մաշէր առ գութ եղին իւրոյ՝ վերապատկաւ յիւրմէ սպանելոյ, փոխեաց զնա աստուածն 'ի նոճ. և զայն նկարէին 'ի ձեռս նորա՝ նշանակ սիրոյն կամ զքանչելեացն :

24 • Փոխանակ ինքնեկ և անսերմն ասելոյ՝ կէս օրինակք այսպէս ունին զտողդ.

Որ արդիւնըս նորաբոյս սերմամբ իւիք
սընուցանէք.

և իմանին՝ նորագիւտ և նորապարգև սերմամբ իւիք նոր արդիւնս ծնուցանէք, կամ զարկեալ ցանս գաղտնի իմն և ծածուկ զօրութեամբ ախտարակաց աճեցուցանէք : Բայց կիրթ ոչ թուի բազմաց, և ստուգագոյն գրչագիրք ունին որպէս եդաք :

26 • Հոկտաւիանոս Օգոստոս կայսր, թոռն Յուլեայքեռ Յուլիոսի Կեսարու և որդեգրեալ իսկ 'ի նմանէ : Այս անարժան մարդահաճութիւն եթէ ստգտանելի է 'ի Վիրգիլիոս, ոչ այնչափ նորա է մեղ, որչափ հեթանոսական անպատեհ սովորութեան հռովմայեցւոց, որով զաստուածական պատիւ ընծայեցին Յուլիոսի Կեսարու և ըստ նմանէ Օգոստեայ : Եւ թէպէտ չև էր տուեալ այն Հոկտաւիանոսի պատուիրանաւ ծերակուտին 'ի գրել Վիրգիլեայ զառաջին գիրս զայս, բայց զի որդի համարէր աստուածացելոյն Յուլիոսի Կեսարու և դիւցազն կամ աստուածազարմ և աստուածորդի կոչէր, և 'ի մեծամեծ յաղթանակացն նորա պակուցեալ առ հասարակ քաղաքք և գիւղք սկսեալ էին 'ի խնամակալ զիցն կարգի պաշտօն մատուցանել նմա, յայտնանէ և քերթողս համարձակէր յայս սուտ աստուածպաշտութիւն. ոչինչ դըժուարին գոլով նմա գուշակել 'ի հանգամանաց իրացն և ժամանակին՝ թէ առ յապա և վճռով իսկ և հրապարակաւ տացի նմա այն պատիւ. որ և եղև իսկ յետ իբր եօթն կամ ութից ամաց՝ յաւարտել Վիրգիլեայ զքերթուածս, տուեալ նմա և անուն Օգոստոս՝ որ է վեհափառ, պաշտելի, քաջ արանց : Եւ թերևս ամին իսկ իրի տակաւին անյայտ ասէ՝ թէ յոր կարգ աստուածոց դասեցի :

29 • Իմա մեծ պարունակն երկնից, կամ ստոյգ ևս՝ լայնատարր գունտ աշխարհիս, զի և նախ երկրի և քաղաքաց պետ և տեսուչ ասաց :

30 • Ժամանակաց • լատին բառն նշանակէ և զամպրոպս կամ զմըրրիկս, բայց ամենայն ողջամիտ մեկնիչք իմանան զեղանակս տարւոյն : Զի և կարի իմն առաւելազանց լինէին շողոմքն և պատերազմօղ լսելեաց՝ զամպրոպայնոյն իսկ զԱրամազդայ զգահն և զգաւազան հանել տալ Հոկտաւիանոսի :

31 • Մայրենեօք և որդեգրութեամբ Յուլիոսի Կեսարու յԷնիական սերնդոց գոլով Հոկտաւիանոս, կարև զնա նախամայր ունել համարէր զԱստղիկ՝ զմայրն Էնեայ : Վասն որոյ մայրենի մրտենեաւ պսակեալ ասէ յաշխարհէ զգլուխ նորա կամ զճակատ և զքունս. զի Աստղկան ձօնեալ էր մրտենին անուշահոտ և անթառամ՝ վասն անմահութեանն և վասն հեշտասէր և ծովածին գոլ դիցն այնմիկ, որպէս մուրտ ըղծովեզերս սիրէ. և մանաւանդ վասն այլոյ իրիք զգալի և մարմնաւոր պատճառի :

Պաշտեսցեն նաւաստիք, քեզ հարկեսցի վերջին Թուլէ,
Եւ Տեթիս բոլոր ալեօքն ըզքեզ փեսայ իւր վարձեսցի.
Եթէ նոր արդեօք նըշան 'ի յամր ամիսս յաւելցիս
Ի խորամն երկնից ընդ Կոյսն և ընդ յաջորդ Կարճին ճիրանս
Որ 'ի ձեզ փայլակնընթաց ըզբազուկս իւր յինքն ամփոփեալ՝
Քան զարդար բաժինն երկայն Թողու յերկինս քեզ ասպարէզ.
Որ զինչ և լինիցիս, զի դըժոխք մի կալցին քեզ ակն

33. Թուլէ կամ ըստ օրինակաց ինչ Թիւլէ, համարեալ ծագ աշխարհի: Եւ էր կողմն այն Նորվեգիոյ՝ որ Ցիլեմարքն կոչի, կամ մանաւանդ մի յԻսլանդայց, այս ինքն 'ի շեթլանդեան կղզեաց կալէդոնեան ովկիանոսաւ 'ի հիւսիսոյ բրիտանացւոց՝ Թիւլինսակէն կոչեցեալ: Են և որ զԻսլանդիա ասեն: 'Ի կողմանս յայսոսիկ դնէ և Խորենացին զԹուլիս կղզի, որ նոյն Թուի լինել. զի և ասէ իսկ Թէ Մեկնէ զհիւսիսականացն և ծանուցելոյ երկրի. և Թէ Որոյ հասարակին յանծանօԹ երկիր համարեալ է:

34. Տեթիս՝ Ուրանոսի և Երկրի կամ երկնի և երկրի դուստր, քոյր Զրուանայ կամ Կռոնոսի, կին Ովկիանոսաւ կամ ըստ այլոց Վկերգոնի, մայր ծովային յաւերժահարսանց: Այլ է Թետիս դուստր Ներեւսայ և Դորիսի, մի 'ի ծովային յաւերժահարսանց, կին Պեղէոսի և մայր Աքիլլեայ: Սակայն երկոքին յանձախ փոխանակ ծովու առեալ են: Վարձել և վարձանք սովորաբար փեսային անկ են ըստ հնոցն օրինաց. բայց առ Հոմերոսի յիշատակին և վարձանք կամ օժիտք ծնողաց հարսին առ փեսայն. և աստ Վիրգիլ զՏեԹեայ ասէ վարձել՝ մանաւանդ Թէ ըստ լատին բառին՝ գնել զՀռովմէական ամենայն ջուրքն ծովուն, զմեծ փոյԹ յօժարուԹեան նորա առ այնպիսի փեսայն յայս արարեալ:

35. Նոր նշան, նոր աստեղատուն 'ի յամր ամիսս, յամառնային ծանրաշարժ երկարատեւ ամիսս, 'ի տեղի Կշռոյ աստեղատան՝ ընդ Կարիճն և ընդ Կոյսն, որ էր Երիգոն դուստր Իկարոսի, կամ Աստրէա աստուածուհի արդարուԹեան զատուցեալ ընդ աստեղս և Կոյս կարգացեալ: Զի առ կարի հինսն անծանօԹ էր Կշիռն, և 'ի հին աստեղագիտաց չէր ընդ աստեղատունս համարեալ. Ճանաչէին զվայրն մէջակէտ երկնից հանդիպակաց Խոյին՝ զուգակշռող և հաւասարակօղ աւուրց, ըստ որում ապա կարգեցաւ անուն Կշիռն՝ զոր և Վիրգիլ ինքնին յիշէ զկնի 'ի 214: Բայց զի ոչ գոն 'ի տեղւոջ Կշռոյն աստեղք մեծամեծք և նշանաւորք իբրև յայլ աստեղատունս, գաղափարն և Թափուր Թուի վայրն. և չկայր եղեալ կենդանի մի 'ի կարգի այլոց կենդանակաց կամարին, այլ տակաւին յետ կարգելոյ Կշռոյն ևս ունէին զվայրն ճիրանք Կարճին. զորս և երկայնեալ մինչև ցԿոյսն՝ վաԹսուն աստիճանս համարէին նմա: Որ այժմ, ասէ, ամփոփեալ զԹևս իւր յերեսաց նորոյ աստուածոյդ՝ Թողու (կամ ըստ ոմանց օրինակաց՝ եԹող), առայ քեզ առ մեծարանացն տեղի անդորր առաւել քան զոր պարտն է. կամ Թողու քեզ զմասնն՝ զոր ցայժմ առաւել քան զարժանն և զիրաւ գրաւեալն էր, զբովանդակ միջոց Կշռոյն: Եւ այս տեղի ընծայի Հոկտաւիանոսի Օգոստեայ, զի 'ի սկիզբն Կշիռ աստեղատան ծնեալ էր 'ի 23 սեպտեմբերի, և օրինակ արդարուԹեան են կշիռք: Բայց արդեամբք անուն փառաւորուԹեան նորա եղաւ աւգոստոս կամ օգոստոս ամսոյ, որ յառաջին վեցերորդ կոչէր, յաղագս 'ի նմա յաղԹանակելոյ Հոկտաւիանոսի ամենայն Թշնամեացն և խաղաղաբար ունելոյ զիշխանուԹիւնն. որպէս Յուլիոսի Կեսարուն՝ յուլիս ամսեան, որ հինգերորդն անուանէր 'ի մարտէ առաջին եղելոյ ամսոյ տարւոյն վաղնջուց հռովմայեցւոց:

39. Յետ յիշատակելոյ զցամաքի, զծովու և զերկնից աստուածոցն գահս՝ ակնարկէ 'ի սանդարամետականս: Բայց անարժան համարեալ Կայսեր՝ բացէ 'ի բաց հրաժարեցուցանէ. մի նուաճի՛ն առ, կամ ըստ երկուց հին գրչագրաց՝ ոչ ունի՛ն առ. Թէ և հելլէնք զմայլեալ են յԷլիսեան դաշտսն՝ որ մերձ է 'ի սանդարամետս անդր, և Պերսեփոնէ դուստր Արամազդայ և Դեմետրեայ՝ յափշտակեալ 'ի սանդարապետէն՝ ոչ յօժարիցի Թողուլ 'ի սպառ զդըժոխս և զտիկնուԹիւն իւր, և այսպէս դաւանեալ կոչեցեալ 'ի մօրէն, որպէս զի ջըջեալ 'ի խոյզ և 'ի խնդիր դստերն՝ եգիտ զնա 'ի սանդարամետս. այլ նա խնդրեաց յԱրամազդայ գէԹ ամիս վեց առ մի առ անդնդաբնակ լինել:

Եւ հարցի մի այդ 'ի քեզ արքայութեան անձուկ դըժնեայ,
Թող ելիսեան Թէպէտ ընդ դաշտ հելլենաստան պանծասցի,
Եւ ոչ 'ի կոչ մօրն ելանել ըղձեսի փութայ Պրոսերփինէ,
Տուր դիւրին թեւթեւ ընթաց՝ ակն 'ի յանդուգն արկեալ ձեռնարկս,
Եւ 'ի գութ ընդ իս եկեալ անառաջնորդ երկրագործին՝
Եւ ընկալեալ այժմէն ուսիր զուխտս ընդունել խընդրուածոց ։

Նոր գարուն մինչ զաւեռ լերանց հալէ զպաղեալ ծաղանս,
Եւ փխրեալ ըզհողակոշտըն լուծանեն օդք քաղցրասունք,
Սկսցի հեծել լծոյ անդ ընդ խոպանուտ արօրով ցուլ
Եւ շփեալ խոփ ընդ ակօս լուսանըշոյլ շող արձակել ։
Նայլ ըղձակամըս մըշակին ագահութեան հերկ այն լըցցէ
Որ կըրկին հանդէպ տօթոյ և կըրկնակի սառամանեաց .
Որոյ ցոն իւր շեղջ անբաւ երդծուցին զըշտեմարանս ։
Բայց զերկիրն անծանօթ մինչ երկաթով չև պատառեալ,
Հողմոց նախ և զանազան բարուց երկնին զօղ խելամուտ
Եւ հայրենի կրօնից վայրացն և վարուց մեր փոյթ լիցի,
Եւ թէ զինչ իւրաքանչիւր բերէ գաւառ, զինչ զըլանայ ։
Աստ ցորեան գայ հասկաթուռ, անդ տաշտապէղ ողկոյզ որթոյ,
Այլ ուրեք ծառոց ծընունդք և անհրաման սէզք արձակին ։
Ո՞չ նայիս ըզքըրքըմահոտ որպէս բուրմունս յղէ Տմոլոս,
Ըզժանիս փըղաց Հընդիկք, զխունկ Սաբայեանք զիւրեանց կընդրուկ,
Օ՛ երկաթ Խաղտիկք մերկանդամք, Պոնտոս ըզգեշկ ազդու մըշկոյ,
Եպիրոս զյաղթօղ պըսակս մատակ ձիոց Ելիսուհեաց ։

51. Եթէ վարեսցի մեր յեւս աշնան, ապա դարձեալ 'ի գարնան, զինի միւսանգամ յամառայնի և ապա ձմերայնին յաշնայնի. և այնպէս ապա ընկալեալ զսերմն՝ 'ի յաջորդ ամառայնի արասցէ պտուղ, որով հերկն այն կրկին ձմեռն և կրկին ամառն տեսեալ լինի ։

55. Սեփական, յատուկ բնութեան երկրին, և հայրենաւանդ օրինաց մշակութեան ըստ իւրաքանչիւր տեղեաց ։

59. Տմոլոս գինեւէտ և քըքըմաւէտ լեառն 'ի սահմանագլուխս Փռիւգիոյ մեծին և Լիւդիոյ ։

60. Հնդիկք՝ ազգ արեւելեայ ասիական աշխարհի, որոյ փիղք մեծամեծք քան զաֆրիկեցիս, և փղոսկրն անուանի ։ Սաբայեցիք յայանի են ժողովուրդք երջանիկին Արաբիոյ՝ խնկաբեր աշխարհին ։

61. Խաղտիկք ազգ Պոնտոսի՝ առ Թերմոդոն գետով, կամ ազգ Սպանիոյ առ Քալիբս գետով. զի զերկաթն ազգաց Քալիբս կոչեն Յոյնք ։ Եւ մերկանդամ ասէ վասն երկաթագործ գարբնութեան նոցա ։

62. Եպիրոս կամ Եպիռոս գաւառ քաջաբեր ձիոց, որ պսակս յաղթանակի առնուին յողիմպիական մրցանս յԵլիս կամ յԵլէա գաւառի Պելոպոնեսոյ, յորում էին Ելիս քաղաք առ Պենէոս գետով, և Ողիմպիա առ Ալփէոսիւ՝ տաճարաւն Արամազդայ և մրցանացն համաժողովք հռչակաւոր ։ Եւ զմատակ երիվարսն յիշէ իբրև առաւել քաջընթացս ։

Զայս օրէնս և դաշինս յաւիտենից ուխտ անյեղլի
Սահման եդ տեղեաց տեղեաց իսկըզբանէ խնամոտ բնութիւն
Յորմէ հետէ Դեւկալիոն ցրնդեաց քարինս յունայն աշխարհ,
Ուստ 'ի վեր ելին մարդիկ՝ ազգ անհնարին և դըժընդակ:
Հապա եկ իսկ և խոկ զառաջաւոր ամսովք տարւոյն
Հերկս 'ի պարարտ դաշտագետին հարցեն հըզօր եզնամոլք,
Եւ որ անդ 'ի տապալեալ երես երկրին անկեալ կոշկոռք՝
Մըղեղեալ ամառն հասուն արեգակամբք եփեսցէ զայն:
Իսկ յուռթի և ապագաւանդ թէ հող չիցէ անդաստանիդ,
Խարխարել յակօս ծանծաղ շատ լիցի յելս Արջապանին:
Անդ զի մի բերկրեալ արդեանց ինչ մեղիցեն մոլախոտք,
Աստանօր՝ զի դոյզըն հիւթ զամուլ երեզըն մի լքցէ:
Նոյն տարցես փոխանակաւ փետեալ անդոց դուլ և դադար,
Եւ տարտամ արտն 'ի խոպան դիւր ընկալեալ կազդուրեսցի.
Կամ ցորեան չեկակարմիր յարփւոյն շըրջել ցան անդ հանցես՝
Ուստի նախ զըւարճ սերմանս 'ի սօսափել շըղշել պատճաց
Կամ սերունդ ժողովեցեր զվիկին մանրիկ և նըկնաձև,
Եւ զդիւրաբեկ խարշափուն շամբ և մայրի ժանտ գերմաստոյ:
Զի կտաւոյ ցօղուն այրէ, խանձէ զերկիրն ոճ վարսակի,
Կըզուն խաշխաշք թաթաւունք 'ի քուն Լեթեան ուշամոռաց:

65. Դեւկալիոն և կին նորա Պիւռռա կամ Պիւռա միայն ապրեալք 'ի համաշխարհական ջրհեղեղէ ըստ առասպելաց, և պատգամ ընկալեալ 'ի նորածնութիւն ազգի մարդկան զոսկերս մօրն մեծի ընկենուլ 'ի թիկունս կոյս, առին քարինս ընտիրս և ընկեցին. և 'ի Դեւկալիոնէ արկեալքն փոխեցան յարս, իսկ 'ի Պիւռռայն 'ի կանայս:

70. Հասուն արեգակունս իմա զզօրաւոր և հուժկու արև ջերմին աւուրց ամառնայնոյ, որով հողն մըղեղեալ փոշիանայ. կամ իմա 'ներգործաբար՝ հասուցանող, յոր միտս և եփել ասէ:

72. Այս է 'ի սեպտեմբերի ամսեանն, յորում աստեղք Արջապանին ելանեն ընդ առաւօտ՝ ըստ այնր ժամանակի. զի այժմ 'ի մուտս հոկտեմբերի ծագեն: Արջապանն կամ Եզող՝ այլ է 'ի Սայլ կամ սայլակիրաց աստեղաց. մերձ կայ 'ի ձեռ մեծի արջոյն կամ 'ի ծայր ատնուոյ Սայլին, և է նորա աստղ մի մեծ որ ջոյ ջեփ ասացեալ յունարէն Ἀρκτοῦρος: Արջապանն կամ Եզող, թէպէտ և հիւսիսայինն, սակայն մտանէ և ելանէ. իսկ Սայլն՝ որ է արջն մեծ, ոչ ունի բնաւ ելս և մուտս՝ վասն կարի խոր 'ի բեւեռն կոյս դոլոյ: Տես և 250: Արկտուրոսն՝ Սայլ թարգմանեալ է 'ի Յոբ, Թ. 9. ընդարձակ առմամբ. այլ մեզ չմարթէր ասել աստ Ճշգիւ, ուր մտից և ելից խնդիրք են:

73—74. Անդ 'ի պարարտ գետնին. առաւօտ՝ յամենջրագոյն:

75. Պատուիրէ փոփոխել զսերմանս անդաստանացն յամեն ամի, 'ի դառնալ տարւոյն: Իսկ եթէ անձուկ ինչ արտ իցէ, մի ամ զամի զնոյն ցորեան ցանել, այլ փոխանակաւ՝ մերթ զայն, մերթ զայլ թեթև ազմնիս. զոր օրինակ զպէտուղս՝ զվիկն մանրիկ կամ զգերմաստ դառնահամ. և զգուշանալ 'ի կտաւոյ, 'ի վարսակէ և 'ի խաշխաշէ, մանաւանդ յանդորդ հատ արկանելոյ զայնս. իսկ փոխանակաւ՝ կոյ և ննջել տեղի, եւ առաւել եթէ աղբով պարարտասցի գետինն: Քնաբեր ասէ խաշխաշն, զի անտի կազմի թմրադեղ ափիոն:

Նոյն սակայն 'ի կարգ անկեալ՝ դիւրին լինին երկք վաստակոց,
Թէ միայն զայծ արտորայս յաղբ պարարել մի խորշեսցիս,
Եւ մի զմրրձոտ մոխիր ընդ անծընունդ անդ արկանել:
Եւ այսպէս 'ի փոփոխել երկանդի առնու զետինն ոգի.
Համայն՝ կայ ինչ շահաւոր եւ անարօր անդաստանին:
Զանդ անբեր՝ բազում անգամ եւ հրոյ ճարակ 'ի դէպ է տալ,
Եւ 'ի բոց կայծակնացայտ ըզսին խոզանըն տոչորել.
Զի սընունդ անտի պարարտ առնու երկիր եւ ոյժ թաքուն,
Կամ կարիք նորա եւ ժահ հրածախ ցընդեալ մաշին բնաջինջ,
Եւ զխճինն անշայեկան ցամաքի հիւթ երաշտացեալ.
Կամ թէ տապն այն ծերպ յոլով եւ ըղկայք խինձորն փեւեկէ,
Ընդ որ թօնք խոնաւականք յորդոր գնայցեն 'ի բոյս դալար.
Եւ կամ կուռ սեղմեալ պնդէ, եւ զերակաց սեղմէ զպախուածն,
Զի տեղոյ ցուրտ մանրացօղք եւ սուր զայրուկք բարկ արեւու
Կամ զառնահոտ հիւսիսոյ շունչ թափանցիկ մի խամրեսցեն:
Մանաւանդ որ 'ի տըքնախըս փըշրէ զքոսնծըն թանձրահող
Եւ տանի ողորահիւս ցաքանս ընդ ունջ, օգնէ անդոց.
Ոչ նըմա զուր չէկ Դեմետրէ դէտակն ունի յերկնից բարձանց.
Եւ որ զեւր ըղջ յարուցեալ կոհակս 'ի դաշտ ակօսաբեկ
Ընդդէմ շըրջան մաճոյն տըւեալ խոտորնակի պատառէ,
Եւ երկրին շտապ տաղնապի ածեալ ըստէպ՝ տիրէ արտոց:
Հայցեցէք, արդիւնարարք, թօնաւոտ ամառն եւ պարզ ձըմեռն,
'Ի փոշի ձմերայնին խընդայ ցորեան, ցընծան անդուք.
Ոչ այլով ինչ Միւսիա պարծի այնչափ մըշակութեամբ,
Եւ ինքնին Գարգարոնիք ընդ իւրեանց հունձըս զարմանան:
Զինչ ասեմ, որ ետ ընդ ետ ընդ հանել սերմըն յարտավար՝
Զհետ պընդեալ փլուզանել փոյթ ըղհողակոշտըն թանձրախուռն,
Յորդաբուխ զգետուն վըտակս ըզկնի սողոսկ ածէ 'ի ցանս.
Եւ մինչ անդ արեւակէզ օրհասական տապի ծնընդովք,
Նուաղին 'ի գլուխ առուի առ 'ի թաւալ դարեւանդին

87. Այս է, եւ անվար երբեմն թողուլն զանդս՝ օգտակար է 'ի զօրացուցանել զնոսա հանգստեամբն:

100. Ոչ յումպէտս ինչ այցելու լինի, այլ տայ պտղաբերել եւ յորդենան հայեցեալ ցնծայ ակնկալութեամբ նոցիրաց:

106. Միւսիա՝ գաւառ փոքուն Ասիոյ զցամաքակողմամբն Տրովադայ. Գարգարոնիք՝ կողմն ինչ Իդա լերին եւ աւան Տրովադայ. երկոքին վայրք արգասաւորք՝ ոչ այնչափ այլով իւիք, քան թէ օգոյն բարեխառնութեամբ:

Այս շարժէ մրժակս ուղխից՝ որ թափ ընդ ջինջ գլեալ քարինս
Յորձանօք խոխոջաձայն շիջուցանեն զերկրին պապակ։
Զի՞ և զայն՝ որ զի մի ծիլքըն ծանր անկցին հասկօք տապաստ,
Ըզշռայլեալ բոյս բողբոջացն 'ի դեռափթիթ տիս ճարակէ,
Ըզայն ինչ ելեալ սերմանիք դիւրեն զակօսս հարթ հաւասար.
Եւ որ զմօրից կարակուտն ընդ ջրրակուռ քամէ 'նդ աւազ,
Մանաւանդ թէ 'ի յողդողդ ամիսս յառնէ գետ զայրագին,
Եւ մրրուր շուրջանակի արկեալ ծածկէ սիկ զընդհանուրս,
Ուստի խոր ճահիճք թորեն ըղջերմահոտ աւիշ քրտան։
Բայց թէպէտ զայս ամենայն՝ արանց հանդէս և արջառոց
Ջեռն 'ի գործ երկրին տուեալ մշակութեան դընիցեն գուն,
Ոչ սակաւ սագ անըզգամ և ստրիմոնեան խորդք կան վնաս։
Եւ եղէգըն դառնահամն, կամ թէ փռատեն ծըմակ ըստուերք։

Ինքն Հայր՝ ըզգործ երկրի ոչ կամեցեալ դիւրին լինել,
Նախ անդոյ հնարեցաւ վար, ըզմտսոտ մտաց հոգովք սրեալ
Եւ ափշել թանձր 'ի թըմբիր յանձն ոչ առեալ իւր տէրութեան։
Յառաջ քան զԱրամազդ ոչ շինական արտըս նուաճէր,
Ոչ նըշան կանգնել օրէն էր կամ սահման դաշտավայրի.
'Ի միջի դընէր վաստակս, և զըլխովին ինքն իսկ երկիր
Ընթախանձ յուռթեբէ առատաբուխ տայր զամենայն։
Նա 'ի փոր սեւաթոյրն օձից խառնեաց ըզչարաթոյն,
Ծուփս անդընդոց ետ հրաման, հրոսօղ գայլոց հէն և աւար,
Զեղծ ըզմեղր 'ի տերևոց և ծըրարեալ թաքոյց ըզհուր,
Եւ ըզգինեաց գետահեռեալ վըտակս առ ոտս՝ ընկըրկեաց.

119. Յողդողդ ամիսք են գարնայնոյ և աշնայնոյ՝ ընդ ջեր և ընդ խոնաւութեան. յորս պղտոր է զեկեալ լցեալ ջուրն քամել ընդ աւազս և կորուսանել յաւազին տեղիս։

121. Ուստի ճահիճք, լիճք գոյանան։

124. Սագք կոչեն զոր և գաղիեն 'ի մատաղ բանջարոց, և աղբ նոցա մնասակար է անդոց։ Ստրիմոնեան սաք կռունկ, զի բազում գտանի առ Ստրիմոն գետով Մակեդոնիոյ՝ առ երի սահմանացն Թրակիոյ։ Իսկ եղէգք կամ գաղնիճք և եղերդք գժոխատրմատ զաւակաբան տարածեալ մոլին, և տապաց ցանկալի են և այլոց բնաւին հաւուց։

126. Գարգարար հայր կոչի Արամազդ կամ աստուած։

131. Ամենայն ինչ 'ի միջի դնէր, հասարակաց էր, չգոյր իմ և քոյ՝ յառաջ քան զԱրամազդ, յանկեղէն դարու տէրութեանն Զրուանայ կամ Կռոնոսի։

138. Կամ զի ըստ բանաստեղծից յասկեղէն դարու անդ այնչափ առատ գործէին մեղք մեղուք 'ի փապարս կաղնեաց, մինչև առաւանել ընդ երկիր. կամ զի տերևք սղոցեալ մեղր բղխէին իբրև զխաւթիւս ցօղոյ կամ իբրև զքրտան կայլակս ոլոռնաձև մժժեալ. փոխանակ զի այժմ ստանձանեան հոյլ ինչ երեւի 'ի նոսա 'ի Վենետիկ մեղր կոչեցեալ։

Ո՛չ տակաւ երկնելով պէտք՝ համաձայնեցէ զարտաւետից հոյս,
Եւ յակօսս խմորեցէ ցորենաբեր բոյս հաստատչով,
Եւ յորձաքար երակաց նիրհեալ կայծակըն զարթուցէ։
Ընդ յայնժամ գետք ընկըսան գոգեալ բարտեաց առնուլ ընթարձ,
Նաւաստին աստեղաց թիւ և անուանս անդ իմացաւ,
Զպղեադըն, զՀ՝ալուսն և զԱ՝րջ պայծառ Լիկայոնեան.
Դրաւ ոստեղն անդէն 'ի գետս, յորս էրէոց հնարաւոր վարել,
Եռագագ տալ պատականն ուփակել պատել ընդարձ անտառս.
Այն անդուստ անդընդագնաց՝ կարթիւ թոպէ զջայն հեղեղատ,
Եւ այլ ոք ծովաթաց ցանցէ զուռկանս յահեղ խորոց.
Ընդ երկաթոյ կարծրակուռք և սղոցատուր սղոցի մաշար,
Բանզի հինք 'ի սեպ երիթ պատառէին ընդփայտ չերատեալ.
Ընդ ելին պէսպէս արհեստք, ամենայնի յաղթեաց ժիր ջան
Եւ անձուկ վիշտ վըտանգին 'ի տարակոյս հարկին տագնապ։
Մ՝ահկանացուաց նախ Դ՝եմետր ուսոյց ընհող քրքրել յերկաթ,
Նուիրական մինչ անտառին կաղինն անթուզ հատաւ 'ի սպառ,
Եւ ընդպարէն կենաց մարդկան առգել կարձեաց Դոդոնէի։
Հապ անկեալ ցաւք 'ի ցորեան՝ դըժնէ զալուկ յոձ ճարակէր,
Եւ պըղերգ սակայր ոքող քըստմընափուշ 'ի դաշտորայս.
Անրմանիքըն կորընչին, յաջորդէ թաւ մացառամոլ,
Դրադ դըժնիկ ընդ տատասկաց, համայն որոմն հէք և թըշուառ
Եւ վարսակք անբեղնաւոր զօռօզանեան 'ի պերճ արտորս։
Եւ թէ ոչ կաս ցանգ անդուլ տըրմնուխ 'ի ձեռս վանել զերկիր,

142. Մեծ արջն հուպ 'ի բեւեռական աստղն՝ ըստ առասպելին էր դուստր Լիկայոնի արքայի արկադացւոց Կալլիստով անուն, սիրեցեալ յԱրամազդայ, 'ի Հերայէ փոխեալ յարջ, այլ յԱրամազդայ դասակարգեալ յաստեղս երկնից։ Այսու զդիտաւորութիւն հիւսիսական բեւեռին կամի ասել, որով առաջնորդին նաւաւորք. որպէս և Բոյլքն կամ Բազմաստեղքն՝ եօթն կամ վեց աստեղք 'ի վզի Ցլուն կամ 'ի թիկունսն՝ վկերոց զուշակեն նոցա, և Ալաւսոնքն՝ այլ եօթն աստեղք 'ի ճակատ կամ 'ի գլուխ Ցլուն՝ զանձրեւածուաց յայտ առնեն։

149. Կէս օրինակք ունին ամենայնի յաղթէ. բայց այլք ընդ լաւագոյն գըրչագրաց յաղթեաց։

152. Որպէս յիշեցաք 'ի 8, անուանի էր կաղնուտն առ Դոդոնէի քաղաքաւ Եպիրոսի, և նուիրական ինքն և մեհեանն որ 'ի նմա Արամազդայ։ Ի պակասել կաղնոյ և այլոց վայրի մրգոց 'ի պէտս վայրենի մարդկանն, յայնժամ Դեմետր աստուածուհի ուսոյց նոցա զգործ մշակութեան երկրի։ Սակայն և այնպէս, ասէ, եղեան բազում բուսանի յարտորս, եթէ ոչ ցանգ խնամով պատրաստ կայցես զարմանս տանել։

158. Զվարսակ անբեղնաւոր կամ ամուլ իմա՝ ոչ զի անսերմն և անծնունդ է, զի առհաս 'ի վեր անդր (81) զդաւշացուցանէր 'ի սերմանելոյ, այլ զի ոչ գայ 'ի պէտս օգտակարութեան մարդկան։

159. Վաննէւ Չէրէրէ. օրինակք ինչ ընդ հնագոյն գրչագրի միում ասեն վաննէւ բէ-խոսքն։

Զհովանիս նըսեմաստուեր հերկոց քըշտել 'ի սուր մանգաղ,
Զհաւս 'ի խօշիւն խուճապել և աղօթիւք կարդալ զանձրև,
Ահ, ընդ վայր զօտարին նըկատեսցես ըզմեծ դաղիզ,
Եւ ըղձով քո սփոփեսցես թօթափելով կաղնի յանտառս:

Բեր տեսցուք զինչ և անօթք իցեն և զէնք այնոր մշակաց,
Յորոց վըրէպ՝ ոչ վար և ցան և ոչ հընձոց յառնեն հասաւնք:
Գաւառուն ծանր արօրոյ նախ և յառաջ կորով և խոփ,
Եւ սայլակք Ելեւսեան մօրն անուահոլով յամրընթացիկք,
Գահուկք և կամնասայլք և անհեղեդ բեռին տըրմուխք,
Նա և չերտանկու կեղեան նըւաստ կահ և կազման
Մաթղի տափան, և նըքոյր Ականդարմեածին խորհըրդաւոր.
Զոր ուշ 'ի կուրծս անկեալ կանուխ համդերձեսցես զամենայն,
Երկնաւէտ վիճակին եթէ պահին քեզ փառք հանդէպ:
Ընդէն և անդ 'ի մայրիս մեծաւ-ուժով թեքեալ յաւեղ
Կարտի նըշդարենի և գայ 'ի ձև կոր արօրոյ,
Յոր սամեն 'ի բընոյն ձիգ երկայնեալ յութ ոտնաչափ,
Զոյգ ունկունքըն պատշաճեալ և երկոտնի առատամանք:
Հարկանի փոյթ և թըմբլին թեթև 'ի լուծ ուերկայն փիճի,
Եւ մաճ, որ 'ի թիկանց զյետոյս սայլին տանի բերէ.
Եւ զնայրից յակութ 'ի կախ ծուխըն փորձէ խարուկածին:
Ես առ իս բազում պատուէրք հայրենատուրք աւանդել քեզ,
'Ի հողոց մանրակրկիտ թէ չես խուսափ ծանրատաղտուկ:

160· Հովանի բազում ուրեք փոխանակ ստուերաց առեալ է, գործ ընդ պատճառի, ծանօթ ձևով հասարակախօսութեան:

167· Ելեւսեան մայր նոյն ինքն Դեմետրի է ուսուցողն հողագործութեան, որ յԵլեւսիս քաղաքէ Ատտիկեայ՝ յորում նախ ուսոյց զարուեստ, Ելեւսեան ևս ասի: Իսկ սայլն նորա, որով և զգայակիր նորա յանդգատաանս շուրջ ածէին, անիւք էին ոչ խորփիւք և ճեցիւ կազմեալ, այլ կունդք թմբկաձևք որ լծուածին հետ դառնային, որպէս վարին ցարդ յարևելս 'ի Հայս, և անուանին ծկլիկք:

169· Կեղեան կազմած սաէ զզգալիքն. զի Տրիպտողեմոս՝ որ առաջին ուսոյց զերկրագործութիւն 'ի Դեմետրեայ, էր որդի Կելէոսի արքայի Ելեւսեան քաղաքի:

170· Նըքոյր կամ խորհրդաւոր 'ի տօնս և 'ի խորհուրդս Ականդարմեածին 'ի հանդէսի անցանէր. զի զինեղեքեալ անդամս նորա՝ 'ի մաղի ժողովեալ Իսիս, և ընտրեալ ըսզնե նուիրեցին նմա զերախայրս պտղոց, և զի օրինակ է մաղ ընտրութեան բարեաց և չարաց, որպէս ցորենոյ 'ի յարդէ:

172· Եթէ կամիս պատիւ և գովեստ գիւղից և վայելուչ գտանել յագարակէդ:

173· Բանաստեղծական նկարագրութիւն կազմածի արօրոյն. ուր աւել խմս զյետոյ կողմն նորա, զաւարաւն:

177· Թմբի է օխւմոր, tilia. և փիճի՝ ազգ կաղնեայ, fagus:

179· Զի փորձ և ընտիր համարին փայտք անցեալք 'ի ծուխ վառարանի:

Յառաջինս ընկալ հարթել 'ի դաշտին մեծ սոսկալիթխար,
Եւ զընթեալ ձեռամբքացի՝ կուռ և մածան բրել կաւով,
Զի մի բոյսք արձակեսցին կամ պախիցէ լուծեալ յաւձիւն։
Խաբթաքուր խաղան յանժամ ազգի ազգի անդ ժամանածուք.
Եղբ ըստէպ և մրթերոց եղ ընդ հողով մուկըն մանրիկ,
Կամ թէ կոյր խըլըրդաննին բըեցին խըշտի մըշտադիչէր.
Գնտաւ 'ի սոր և դոդոշ և որ ինչ այլ բերէ երկիր
Ճիւաղ բազմաձրձի խառնափընդոր 'ի ծոց իւրում.
Եւ աւար առնու մինայ զըեռնակարկառ թեղ ցորենոյ,
Եւ մրջիւն՝ ցանկանելոյ զաւամուլթեան կալկածաւոր։
Մինչ դեռ ևս՝ յործամ նըշխն 'ի զարասսի փունջ խառներամ
Յօրինեալ ծաղկազըրակ՝ զանուշահոտ ծըղին հակէ.
Ահա ողորկին են բազմաբիւր, առհմանկանոք զայցեն ցորեանք
Եւ ընդ մեծ սօթոյն 'ի հետ հասանիցէ մեծ կալոցայ.
Իսկ թէ շուայլեալ վարսիւք յորդէ սաղարթալեղ հովանի,
Զուր կասուցու կալոտին ըղյարդաւէտ թափուր օրան։
Ես բազում սերմանահանս տեսի թըռմեալ ըղձերմանիս
'Ի բորակ նախ և 'ի թուխ ռուսգելով մըրսուր ձիթոյ.
Զի արմըտիք յոյր ծընցին քան ըղպատեանսըն նենգաւորս,
Եւ 'ի հուր մեղմախառն ամենցիցին դիւրապատրաստ։
Երկայնամիտ տըքնութեամբ թէպէտ իցեն փորձք հաստընտիրք,
Տեսի սակայն զի խորթանան, թէ զպարարունս ամ ըստ ամէ
Մի առ մի ձեռօք իւրովք ոչ կըտուեսցէ մարդկեղէն ուշ։
Այսպէս համայնից՝ միշտ 'ի վատթար տապալել կոյս
Եւ յետս ընդ կըրուկ սահել՝ ճակատագրեալ 'ի հրամանաց։
Ոչ ընդհատ քան որ հաղիւ զէմ յորձանաց ըեկավարեալ
Մըղէ զլաստափայտն, եթէ երբէք ելից ըզթեւսն,
Այնժամ ըզնա զարավէժ յափըշտակէ սուր հեղեղատ։

Այլ և մեզ իսկ է զարփիս նըշմարելի զԱրջապանին,

188. Դոդոշ իմա զոստին գորտ մեծ և թունաւոր։

200. Զի բազում անգամ պատիճք ըն- դոց մեծամեծ երևեալք՝ ոսին զհատան ու- նին և ոչ ատոքս. զայս առէ նենգաւոր և խաբեբայ։ Դեղոմբք յօրինեալ սերմանք՝ կրկին օգուտ բերեն. զի առոքք գան, և զի դիւրաւ եփին մեղմ հրով։

210. Ոչինչ ընդհատ մեզ մշակաց քան նաւորդաց գիտել արժան է զելս և զմուտս վաղանգաւոր աստեղաց։ Զարջապանն տես 'ի 72. Ուլքն են աստեղք յաւս Կառավար-

Զ Ուլոցըն ժամանակ և զվիշապ Օձին շողշողուն,
Զերդ որ 'ի դաշտ մըրրկածուփ արշաւասայր 'ի գաւառ
Նըկըրտելոցն ընդ ծովախոր յաբիւդեան ծոց ծիրանածին ։
Այլ Կշիռն ըզտըւընջեան և քընոյ ժամն հաւասարակեալ
Լուսոյ և խաւարաց ըզտիեզերս հանէ 'ի կէս,
Լծէք, արք, զհարկիս 'ի գործ, ցան յարտորայս արկէք գարի,
Մինչև հուպ յանբերելի ձմերան վերջին տեղատարափ ։
Նա՛ և կըտաւոյ սերմն և խաշխաշ ըզդեմետրեան
Ժամ է 'նդ հողով ծածկելոյ և անկանել փոյթ 'ի յարօր,
Մինչ մարթումն է յերկիր չոր, մինչ ամպք 'ի թռիչս 'ի կախ կան դեռ ։
Գարնանի ոլոռանց ցան, և զքեզ յայնժամ մեղեանդ առուոյտ
Ընդունին փըխրան ակօսք, գայ կորեկան հոգ տարեւոր,
Յորժամ Ցուլ լուսապայծառ յեղջերս ոսկի բանայ զտարին,
Եւ Սկընդլին ընդդիմամարտից աստեղըն խոյս տալով թաքնու ։

րին, և Վիշապ են աստեղք հիւսիսայինք ։ Աբիւդեան ծոց է ծովն և Նեղուցն Հելլեսպոնտոսի, յորոյ առափնզմանն էր ամրոց Աբիւդոս, յեւրոպականզմանն Սեստոս ։ Բերէր ծովն այն բազում խեցեմորթս և խխունջս, թերևս և յայնժամ ազգ է՝ յորմէ զծիրանին առնուին հինք․ զի լաւոյն բառն երկդիմի է․ և գտանէր իսկ 'ի ծովեզերս ինչ և առ կղզեօք եգեան ծովուն և միջերկրականին ։ Ընտրելագոյն թուեցաւ մեզ յայս միտս առնուլ քան թէ զանարգ ոստրեաց, որ և ոչ այնմ ծովու միայն սեփական ինչ են ։

214․ Արեգակն 'ի Կշիռ աստեղատան գործէ հաւասարեալ տուընջեան և գիշերոյ․ և զաշխարհս հաւասարապէս հատանէ 'ի ցայգ և 'ի ցերեկ ։

218․ Դեմետրեան առել զխաշխաշ յայն անուանէ, զի նորա առն գիւտ, և խորհրդաւոր զարդ և նշանակ էր աստուածուհւոյն, և զի այնու հնարեցաւ երբեմն մոռացօնս ածել ցաւոց կորստեան դստեր իւրոյ Պերսեփոնեայ, և զի յաճախ բուսանի յանդաստանս ցորենոյ՝ որ 'ի խնամս դիցուհւոյն յանձն էին․ և դարձեալ զի սերմն ողկոյակ խաշխաշի ազանձեալ՝ յաղանդերս հնոց մեղու հանդերձ գայր 'ի սեղան, և խորև զարջնդեղ առ մեզ՝ համամեմ առեալ էր 'ի ոկեաս 'ի վերայ նկանակի ցանեալ, կամ ընդ այլոց՝ ընդ ալեր խառնեալ ։ Եւ ամենայն հացեղէն՝ դեմետրեան կոչի ։

219․ Սովորական օրէնակք ընդ երկուց հնագոյն գրչագրաց ասեն անկանել 'ի յարօր, որպէս եգարք․ իսկ ոմանք ընդ միում հնագունի ունին անկանել 'ի փըճաղս ։ Երկոքին յարմարին բանին․ զի առ 'ի ցանել պարտ է վարել, և յետ ցանելոյ արմուկք 'ի գործ անկանին ։

220․ Մինչ չև է ամպոց լուծեալ յանձրև և իջեալ յերկիր ։

221․ Զառուոյտ պարզաբար իսկ մեդեան կամ մարացի կոչէին․ զի 'ի Մարաց բերեալ էր 'ի յունաստան ։ Եւ միանգամ սերմանեալ՝ աճէ ամս տասն, ըստ Պլինիոսի մինչև ցերեսուն իսկ ։ Առ այսու երկայնակեցութեամբ տարեւոր ասէ զկորեկան ցանս, զի ամ ըստ ամէ սերմանելի է ։

223․ Ցուլ աստեղատունն լուսապայծառ ասի ոսկի եղջերօք, զի 'ի ծայրս եղջերացն և 'ի ճակատուն կան ճաճանչաւէտ աստեղք․ և զի արեւն ոսկի գարնային յայնմ աստեղատան գոլով՝ ոսկեզարդէ զնոսա, մանաւանդ ըստ մտաց հռովմայեցւոց, որ զեղջերս զուարակացն յաղթանակի՝ ոսկւով օծանէին ։ Իսկ բանալ ասէ Ցլուն զտարին, զի 'ի սկիզբն գարնան կալով յապրիլի ամսեան, մօտ 'ի գլուխ տարւոյն է՝ որ գարնային 'ի Խոյէն սկսանէր, և ցորդ եւս անտի սկսանի աստեղաբաշխականն տարին․ և զի յայնժամ բանայ մշակական տարին և ծաղկէք և բողբոջք երկրի, ըստ որում և ապրիլն իսկ կոչէր անուն ամսոյն առ հռովմայեցիս՝ 'ի բանալոյ առեալ ։

224․ Ցանցանել Ցլուն զհասարակա-

Նոյն զերկիր թէ ցորենոյ վարես 'ի հունձ ու 'ի յոյր աշորայ,
Հասկաթուռ որայից եղեալ եւեթ փոյթ 'ի միտի,
Թող մինչեւ առաւօտինք սուզանին քեզ Մայիանդուհիք
Եւ գնոսեան մերկնի արփի բոցանըշոյլ վառ Պըսակին,
Նախ թէ դու զսերմանիսդ 'ի պատրաստի հանցես յակօս,
Եւ մի զյոյս տարւոյն ձեռին դըժկամ երկրին տալ յերաշխի:
Բան ըղձուս Մայեադստերաց նախ ձեռն յօդուծոյ մըխեալ 'ի գործ,
Սըրուդ հասկօք ընծայեին յուսապատար դըրժեաց որայն:
Իսկ թէ զվիկըն սերմանես և զդդըմկուղըն դիւրագիւտ,
Եւ ոչ 'ի պեղուսեան ոսպան խնամոյ զանկն արկանես,
Եզողըն 'ի մայր զառնեալ տացէ նըշան քեզ անաղօտ.
Սա անտի մինչեւ 'ի սիրտ ցուրտ եղեմանց ըղցանըրդ տար:
Յայդ 'ի պէտ՝ յանըստերիւր չափեալ բաժնիս ըղտիեղերս
Արեւն ոսկի 'նդ երկոտասան վարէ արփիս աշխարհի:
Հինգ գօտիք ունին զերկին, որ մին 'ի շող արեգական
Յանգ հրաշէկ և շանդեռանդ և բոցակէզ մըշտատոչոր.
Շզնովին յաջմէ բոլոր և յահեկէ պատեն վերջինք
Կապուտակ սառամանեօք ձուլեալ ու 'ի լուրթ բըքաբերաց:
Ընդ սոսա և ընդ միջինն այլ եւս երկուք՝ դից պարգեօք
Շնորհեալ հէք մահկանացուաց, ու 'նդ երկոսին հորդեալ շաւիղ,
Ընդ որ պար՝ աստեղատանցն առնուցու կարգ խոտորնաձեւ:

ծառ երկնից կամ զմիջօրէիւ՝ Ընիկ աստղն 'ի հանդիպոյ նորա կացեալ և դէմ ընդ դէմ երեւոջ, որպէս նկարի 'ի գունդս, խոնարհեալ 'ի մուտս սուզանի. որպէս թէ 'ի սպառնալեաց եղջերց Ցլուն յետս յետս փախուցեալ: Այս է բնական իմաստ տողիդ՝ բանաստեղծօրէն անթեւեալ թեալ զաւաղն: Բայց առ Վերգիլեաւ յելս ապրիլի մտանէր Ընիկն, իսկ այժմ անագանի:

227. Բոյլքն կամ բազմաստեղք, զորս համարէին եօթն դստերք Ատլասայ կամ Ատլանդեայ փոխեցեալք 'ի գիս և փոխեալք յաստեղս: Իսկ գնոսեան պսակն յաջորդ տողիդ, է պսակն Արիադնեան՝ զոր Բագոսին պարգեւեալ էր Արիադնեայ դստեր Մինովսեայ արքային Կրետայ, յորում էր և Գնոսոս քաղաք: Զայն պսակ, կամ ըստ այլոց զինքն իսկ Արիադնէ հանդերձ պըսակաւն, ընդ աստեղս դասեցոյց Սպանդարամետ: Արդ առ 'ի ցանել ցորեան և աշորայ, որ է ձաւար, համբեր, ասէ, մինչեւ Բոյլքն մտցեն յառաւօտին պահու 'ի ծագել արեգականն, և արփագնեան պսակին անձկանեալ յարեգակնային ճառագայթից՝ ծագեսցէ մեզ ընդ առաւօտս: Եւ լինէր այս յայնժամ մտս յելս հոկտեմբերի, իսկ այժմ անագան եւս:

234. Գեղջուսեան ասել զոսպն՝ առեալ է 'ի Գեղջուսիոն աւանէ Եգիպտոսի, ուր առատ է: Զայս արմտիս, ասէ, սկսեալ 'ի սուզանելոյ Եզողին կամ Արջապահին ընդ արեւ, որ է 'ի նոյեմբերի, կարես սերմանել մինչեւ 'ի խոր ձմերանի:

238. Երկոտասան արփիք են երկոտասան աստեղատունք:

244. Շաւիղդ այդ է կենդանագրեալ կամարն երկնից, զորոյ պար առնու՝ պատի կարգ աստեղատանցն՝ կենդանակերպքն դասաւորեալք 'ի հիւսիսոյ 'ի հարաւ առ 'ի շեղ:

Իբր 'ի Սկիւթ և 'ի ռիփեան բարձունս աշխարհ կանգնի կուտակ,
Մետ թաւալ 'ի հարաւ կողմ Լիբիական կայ խոնարհայոյզ։
Զայս գագաթն 'ի վեր հանապազ վերեւմաբերձ նըկատեմք մեք,
Զայն'դ ոտիւք մըթին դըժոխք ստանդընդայնն սանդարամետք։
Աստ վիշապ Օձ կամակոր 'ի մեծ գալարըս սողի շուրջ
Գետօրէն զեռեալ պարոյր ոլորտապտոյտ ընդ Արջ կըրկին,
Կըրկին Արջ զարհուրեալք յովկիանու թանալ հոսանս.
Անդ յաւէժ, զերդ աւանդեն, լռէ գիշեր խաւարարգել,
Եւ 'ի ստուեր թաթաւեալ խոր՝ մութ ըզմըթով մածեալ պատի,
Կամ թէ զոտն առեալ 'ի մէնջ՝ տիւ ծագէ Այգ առաւօտեալ.
Եւ մեզ այն ինչ Արուսեակ շընչէ թասուն երիվարօք,
Զերեկորին լուցանէ ջահս անդ աստղաշէկ Գիշերավառ։
Գուշակել աստի ունիմք զօդս 'ի յերկնից տարակուսի,
Աստի՝ զաւուրս հընձոց և սերմանացըն ժամանակ.
Եթէ երբ 'ի դէպ թեւօք զյողդողդ անդաւնդըս պատառել,
Եւ երբ ըզպընդակազմ իջուցանել նաւատորմիլ,
Կամ 'ի ժամ բարեպատեհ 'ի թաւ մայրիս հարկանել սոճ.
Եւ ոչ զուր ինչ զաստեղաց հետազօտեմք զել և ըզմուտ
Եւ զտարին հանգէտ պէսպէս քառահոլով յեղանակօք։
Եթէ ցուրտ անձրեւ երբեք երկրագործին լինի խափան,
Ժամ է 'ի շատ ինչ ուշով այնուհետեւ բերել պարապ,
Որ ապա ճեպ 'ի ճեպոյ 'ի ջերս լցեն շութափելի։

246. Սկիւթիա և ռիփեան լերինքն Սարմատացւոյ կարկառեալք 'ի ծովէն սկիւթիական՝ զհիւսիս նշանակեն, կողմ Լիբէական՝ զհարաւ։ Որպէս հիւսիսային ծագ կամ բեւեռն բարձր է մեզ, նոյնպէս հարաւայինն սուզեալ աներեւոյթ։ Օրինակք ինչ ունին ռիֆէան, բայց ընտրելըն ռիփեան. և խորհեսցին Ռիփեանս դնէ 'ի սարմատացւոց աշխարհին։

250. Աստ, զհիւսիսիւ՝ ընդ վիշապին են և արջք կրկին, մեծ և փոքր արջքն, որ ոչ երբեք մտանեն մեզ. և մտանելըն ըստ քերթողաց բազում ուրեք 'ի ծով կամ յովկիանոն մերձնել ասի. և սոքա երկոքեան խրտու հալեալք 'ի ջուրսն և ստակացեալք գաւառում այսրեն։ Իւ Հոմեր զմեծ արջն՝ զոր և Սայլն կոչէին ասէ, նմանօրինակս բարբառով Իլ. ԺԸ. 489. ասէ,

Որ միայնն է անհաղորդ լոգարանացն ովկիանու։

253. Անդ, 'ի հարաւ կոյս, երկար գիշեր է 'ի մերում ամարայնի, կամ առաւօտն 'ի մէնջ առ նոսա դարձ արարեալ՝ տիւ գործէ նոցա. և յորժամ արեգակն քառաձի կառօքն՝ ըստ քերթողաց ասելն, ծանեալ՝ գայ հասանէ առ մեզ, անդ առ նոսա երեկոյ լինի։ Զայգասիկ յերկուանց ասէ ըստ անտիպոդութեան ժամանակին, որով և զդժոխս և զսանդարամետս յանդընդոցս խաւարոյ աներեւոյթ բեւեռին դընէին, որպէս տեսաք 'ի 249։

258. Աստի 'ի տարեւորական ընթացից արեգական ընդ կամար կենդանակերպերին և 'ի փոփոխմանց ամսոց և յեղանակաց ունիմք հանել զժամանակ զանազան գործոց. և ոչ անօգուտ ինչ է աստեղաց և ժամանակաց խորհուրդ։

263. Մաճիւք իմա զամենայն փայտս անտառի, զորս 'ի ժամու պարտ է հատանել։

267. Որ թէ ոչ պարապով գործեսցին

Կռող թեքէ զբութ և գուղ խոփոյն ատամն կարծրակուռ,
Փորէ 'ի ծառոց կուլըս խորեալ իւր գոգաձևս,
Կամ հօտի դրոշմ հարկանէ կամ 'ի մթեր թիւ և համար:
Սրեն այլք ցից և խեչակ և զերկմատնեան ճեղեալ եղան,
Կամ զամերեան հանդերձեն ճաղուկ որթոյն ողորակապս:
Մորենի բարունակօք արդ դիւրաթեք հիւսցին սակառք,
Արդ եղի յաղանձ 'ի մուրկ տաք, արդ 'ի քար խորտակեցէք:
Նա՛ւամնիկ և 'ի տօնուտ իսկ անդ աւուրս պարապոյ
Օարարովք ինչ անկանել թոյլ տան օրէնք և իրաւունք.
Խտրանք և ոչ մի՝ չըհրամայեն առուս հանել,
Ցանկապատ յօրինել զարտ, հաւերամբն նիւթել դարան,
Հարկանել հուր 'ի փուշ, և զխաշնարօտըն բառաչոտ
Առնուլ քըշել լուանալ 'ի կենսաւէտ ջուր վտակաց:
Վարիչ յամըր կըրմըրոյ յագգերս ըստէպ բառնայ թիկանց
Ձիթոյ կամ թէ մըրգոյ դուզնաքէի բեռն ինչ ըստուար,
Եւ յանդրէն դարձ միւսանգամ՝ առեալ բերէ 'ի քաղաքէն
Կոփածոյ քար զերկանի կամ քըծուար սեաւ կըպրաձիւթոյ:
Ինք լուսինն եդ զայլս այլով կարգաւ զաւուրս յաջող 'ի գործ.

յանձրեւային ժամանակս խափանարարս դաշտական վաստակոց, հարկ լինի առաջս շութափել և կատարել: Եւ թէ զինչ են գործելիքն 'ի պարապութեան, աստ կարճառօտիւք:

270. Զթիւն և զհամար գրով հաստատէ 'ի շեղջս արդեանցն կամ 'ի քուաս կամ 'ի քուրձս, զոր 'ի ներքս առեալ և մթերեալն է:

272. Ամերեան ողորակապք են ողորք ուռոյ 'ի կապել զորթս, յԱմերիա քաղաքէ Ումբրիոյ առացեալ, որ ոչ հեռի կայր 'ի Տիբեր գետոյ, և ուռքն առ նովաւ առատք:

274. Հինքն զերդ խանձեալ և մուրկ գործեալ ուտէին. իսկ աստ և զզարգացեալ աւուրց մարդկութեան իմանի, յորում փոքր մի խարակէին զցորեան առ 'ի դիւրաւ աղալ յերկանի կամ լեսուլ յանկանի, զոր քերթողաբար քարիւ խորտակել ասէ:

277. Առուս հանել իմա մաքրել, բանալ զագատեղեալ և զխցեալ առուամէջս, կամ զժահահոտն ցամաքել, որում ներէին օրէնք. այլ ոչ և նոր առուս հատանել կամ առոգանել զանդս համարձակէին կրօնք 'ի տօնական աւուրս: Զի 'ի մեռանելոց միայն պահել օրէն էր. վասն որոյ և զհաւուցն երամ զենուի յիշատակեալ՝ իմանալի է զյափշտակիչ և զաւարառու թռչնոց, և զխաշինս լուանալ 'ի գետ 'ի գեղ և 'ի զարման բրդոյ նոցա, և ոչ 'ի սպիտակացուցանել զգեղմն: Ցայս միտս խորհրդով կոչէ զջուրսն կենսաւէտս կամ փրկաւէտս:

285. Աւանդէ զլուսնախօսիս. զի մնապաշտութիւն հնոց՝ ընտրութիւն առնէր աւուրց ամսոյ ըստ ազգի ազգի խորանաց հարցն, զոմն ապաբախտարաց ասելով և զոմն տապախտարաց: Զհինգերորդն պղուշալի ասէ, վասն զի 'ի նմա ծնան անդնդեհպեան դժոխոց կամ սանդարապետն, երեքին ժանտքն Կատաղիք՝ սկզբնամարք լկանաց և գանհիճք պաշտօնեայք դիցն վրիժուց, մթածին դստերք Գիշերոյ և Աքերոն գետոյն դժոխոց, օձախաւլք հերովք և ջահ 'ի ձեռին. 'ի նմա և խոլ սկայքն անուանիք՝ որդիք Երկրի և Տիտանայ, յորոց զոմանս միայն զգլխաւորսն յանուանէ յիշատակէ: Որոց 'ի պատերազմ գումարեալ ընդ դիս 'ի Փլէգրա դաշտի Թեսալիոյ՝ ձգնեցան առնուլ կառուցանել 'ի վերայ միմեանց զլերինն Պելիոն, Ոսսա, Ողիմպոս, զի առաձանեալ ելցեն յերկինս

Բա՛ւ քեզ հինգն, 'ի նմա սերեալ խոժոռադէմ Մանդուարապետ
Եւ մոլիք դըժոխազնեայք, անդ սոսկալի երկամբք երկիր
Ըզխիոս ծընաւ՝ զՅապետ և ըզՏիփոն վայրենամիտ
Եւ զեղբարսըն կաշառեալս 'ի դըղորդել քանդել զերկին,
Որ եղին երիցըս գուն կանգնել զՕսսա 'ի Պելիոն
Եւ յՕսսա զանտառախիտըն թաւալել զՈլիմպոս.
Եօթնից անդ հայր շանթառաք զկարկառակոյտ հոսեաց լերինս:
Եօթներորդն ըզկնի տասին բարենըշան 'ի տունկ այգեաց,
Սամետիւք ցուլս ընդունել և հինելոյ ազգին յաւէջ.
Ինն 'ի դէպ գոլ փախըստեան, և դըժպըհի՝ գողօնեից:
Նա շատ ինչ զով գիշերի պատեհագոյն 'ի ճահ դիմէ,
Կամ մինչ այգ նոր արևով ցօղէ յերկիր լուսացընցուղ:
Գիշերի թեթև ծըղօտք՝ գիշերի չոր մարգագետինք
Լաւ են հընձին, գիշերաց ոչ պակասէ շաղ զովարար:
Եւ ուրեմն 'ի ձմերային անագանի հրատին ճաճանչ
Տըքնեալ սուր երկաթով շերտէ 'ի շեշտ ըղջահանին.
Մինչ ամուսնոյն ըսփոփեալ զերկայն վաստակն յերգոց մըրմունջ
Նուրբ 'ի քէճ 'ի սրաձայն սահեալ յոստայն երթևեկէ,
Կամ զանոյշ խաղմըրգոյ եռացով յեռանդն ածէ զծորանս
Եւ զփըրփուրըն տերևովք առնու յալեաց կայտառուն սանին:
Իսկ 'ի հունձ գայ կարմրորակ ցորեան 'ի տապ տօթաժամու
Եւ կամնէ զմըրկեալ արդիւնս 'ի միջօրէ տօթ կալորայ.
Մերկ վարեա, սերմանեա մերկ, երկրագործին ծոյլ է ձըմեռն:

և արկցեն զգխս յաթոռոց. բայց հայրն աստուածոց և մարդկան Արամազդ փայլակնահար տապալեաց զգործ նոցա և ըզյոյս: Հոմերոս զՊելիոն կոչէ εἰνοσίφυλλος զոր մերս Դաւիթ Անյաղթ 'ի գիրս Սահմանաց տերևաշարժ յեղու ըստ ձայնին. բայց Վիրգիլիոս ըստ մտացն անտառախիտ կամ տերևախիտ թարգմանէ զնոյն ձայնն հելլենական զՈլիմպոսէ ասացեալ:

293. Տարակուսեն քննիչք՝ արդեօք եօթնուտասներորդ օր իմանալի իցէ, եթէ եօթներորդն և առաւել քան զայն տասներորդն: Հեսիոդոս ուրոյն ուրոյն յիշատակէ զեօթներորդն և զտասներորդն ընդ ախտարս: Նոյնպէս իններորդն զկնի յիշատակեալ՝ երկբայելի է թէ պարզաբար իններորդ իմանայցի, եթէ իններորդ զկնի տասին կամ իննուտասներորդ: Որպէս զխարդ ինչ և իցէ, նախրահաւատ զաւանցանք են, զոր և ոչ Վիրգիլիոս 'ի հաւանութենէ մտաց տողէ զայգոսիկ, այլ 'ի զարդ տաղիցն, յոր միա ոչ խղճեն քերթողք զիջանել ըստ կարծեաց ռամկին:

295. Փախստեան ծառայից գնացականաց հաստուածելոց 'ի տերանց կամ ամենայն գաղթականութեան և ուղևորութեան դիպաւոր. իսկ գողութեան դըժպատեհ:

297. Նոր արև ասի ըստ քերթողաց արեգակն իւրաքանչիւր աւուր առաւօտեան, յորում ժամու և ցօղ մանրացօղ արկանէ երկինք և շաղն փայլեալ 'ի գալարիս գայ յերևան:

301. Ըերոս շերոտ հատանէ այգն ըզփայտ պատրաստեալ 'ի ճահ գիշերոյ. իսկ կինն կատու գործէ կամ եփէ գինի առ 'ի լինել ռուփ կամ մաթ:

308. Կանխաւ յաշնայնի, մինչչեռ օ-

'Ի ձմերուան՝ մրջակք սովոր 'ի համբարոց են վայելել
Պարապեալ զբուարթ կոչնոց այր ընդ ընկեր խրախճանակից,
Յորդորէ հեշտ և կամակ ձմեռուն ըզհոգւոյն փարատեալ.
Որ ակաղձուն լաստափայտք երբ ըմբռնեն զնաւահանգիստ
Խընդալից պըճնէ նաւաստ խելս ըզնաւին պըսակազարդ։
Նոյն յայնժամ և կըթոց կաղնի բալուտ դէպ ժամանակ,
Եւ ձիթոյ և եղերդոյ պըտուղ ընդ մուրտ արիւնաբուխ.
Կռընկանց անդ որոգայթ և եղջերուաց դամբս դընել,
Եւ նապաստակս ակընջեղ վանել, հարկ անդ այծեմնուս
Ճախր 'ի ճապան տըւեալ 'ի թոյ բալէարեան պարսատկաց,
Մինչդեռ ձիւն թանձր է դարեալ, մինչ գետք հատորս վարեն սառին։

Զինչ ապա զաշնայինն ոգեմ մըրրիկս և զարփից պար,
Եւ թէ զի փոյթ օրերոյն 'ի մեղմանալ ամառայնոյ
Յոր կարճատեալ կամ մինչ գարունն անձրևայոյզ անկանի.
Երբ 'ի դաշտ հունձ հասկագեղ վէտ վէտ ճօճի քըստմընադէզ,
Եւ ցորեան 'ի ծիլ դալար կաթնապարար մինչ ուռճանայ։
Յանդաստան խառնիշագեղ մինչ գերանդի տանէր մըշակ
Բարդ 'ի բարդ որայ զգարին 'ի դիւրաբեկ կապեալ ծըղօտ,
Տեսի ստէպ զայսոց զուպար 'ի մարտամբոխ գոռ ոստուցեալ,
Ընջուլին արմատաքի զկիւրաբերղուն օրանն յապշոպ
Դիր և տար ցընդեալ ընդ օդ վըրդովելով հիմն 'ի յարև.
Նոյնպէս 'ի թուխ փոթորիկ մըրըրկախառն յափըշտակէր
Տանէր բուքն ըզյարդ թեթև և զունդ թըռչուն սըրավար։
Եւ սաստիկ ջուրց 'ի յերկնուստ բազում անգամ դիմեն առհանք,
Եւ ամպք գունդագունդ գումարտակեալք 'ի յանդընդոց

գոցն ամբարխաւնութիւն ներէ գոգցես մերկանդամ գործել մշակին 'ի դաշտի. իսկ ձմեռն 'ի վերայ հասեալ՝ անդորր կացուցանէ զնա։

312. Նաւորդք զբարեյաջող դարձ իւրեանց 'ի հայրենիս յայտնի առնէին պսակելով զխելս նաւին, ուր և որբարանն իսկ էր, և կառուցեալ կային դիքն խնամակալք և պաշտպանք նաւին։

318. Բնակիչք բալէարեան կղզեաց՝ որ առ երի Սպանիոյ, անուանի պարսաւորք էին։ Եւ հինք ձգէին պարսիւ ոչ քարինս և եթ, այլ և գնդակ կապարեայ, որ ըստ վկայելոյ Ովիդիոսի՝ 'ի սրաթռիչ գնացիցն ջեռեալ հրանայր, երբեմն յայժմու հրացանիցս արձակեալ. և այնպէս կարող էր զայծեմնուկս անգամ առ 'ի մահ վիրաւորել։ Նա և 'ի մարտս պատերազմաց նմանապէս վարելոյ կայ այդմ օրինակ և յԷնէականին Վիրգիլեայ, Է, 687. Թ, 588։

320. Զի զպատճառս մըրկաց յերս և 'ի մուսս արփիցն հանէին. և մըրրիկք յաճախեն 'ի սկիզբն աշնայնոյ և 'ի կատարած կոյս գարնայնոյ։

333. 'Ի յանդընդոց խմա 'ի ծովէ, մանաւանդ 'ի շնչել հարաւոյ, որ ըստ խոայլա-

Թաւալին ահեղ մըրրիկ մառախլապատ հեղեղասաստ.
Տապալին երկինք բարձունք, և յանձրևաց ուխ յորդահոս
Ողողեալ քերեն զերփեն զերկս արջառոց և զանդ կայտառ.
Ձեղուն գուբք, և խորամոր զայրանան գետք դղրդելով,
Ծովածուփ յորձանք եռան խուռն 'ի խոխոջ կայտռել ալեաց:
Հայր ինքնին 'ի մռայլ գիշեր անդ ամպրոպաց աջով հրաշէկ
Թափէ շանթ որոտընդոստ, դողայ թընդմամբ երկիր անդորր,
Գազանք խուճապեցան, և զահրտ ազանց մահկանացուս
Կոր 'ի գլուխ արհաւիրք ընդ տիեզերս արկին տապաստ.
Բոցաթուիչ հարկանէ նա նետիւ զԱթովս կամ զՌոդոպէ
Կամ զերկնապերճ Ճանթայինս, յորդեն հարաւք թանձրատարափք,
Մերթ մայրիք մերթ ծովափունք 'ի դիւաշունչ հողմ մռընչեն:
Յայսմանէ զանգիտեալ՝ դէտ կաց յամիս յարփիս երկնի,
Յոր վայր՝ ցրրտասառոյց աստղըն կռոնեան մըտեալ ղօղէ,
Կիլլենեան բոց փայլածու յոր մոլորի կամարս երկնից:
Դից պաշտօն տար մանաւանդ և տարեոր հան պատարագս
Մեծին Դեմետրեայ 'ի զուարթափթիթ ձօն դալարիս
Յելանել հուսկ ձմերան և գարնայնոյն 'ի ջեր խայտալ.
Յայնժամ պարարտ որոջք, և անդ յայնժամ գինիք համեղ,

կան կողմանցն 'ի ծովէ գայ. ըստ որում և զնոյն ասէ յուրդէն հօրատ: Բայց լատին բառն ունի եւ նշանակել 'ի բուքյանց, զոր ոմն իմանայ 'ի հիւսիսոյ՝ որ բարձր բեւեռն է ըստ մեզ (246), և ոմն իմանայ 'ի վերին օդոյ: Եւ հօրատ 'ի բանաստեղծական լեզուի ոչ միշտ զհողմ հարաւոյ նշանակէ, այլ զյայտնին փոխանակ անյայտի առեալ՝ զոր և է հողմն և զփչմունս օդոյ. յոր միտս համարձակեցայք և մեք բազմաբար ասել հարաւք:

341. Խուճապեցան, և զնոյն արկին փաղուստ, կատարեալ ժամանակք բայից են փոխանակ ներկայի խուճապին, արկանէն. քերթողացն սովորութիւն է վասն աչառնես փութութեան գործուածոյ բանին և կենդանի նկարագրութեան:

343. Աթոս՝ լեառն է Մակեդոնիոյ կարկառեալ 'ի ծով եգէան, Ռոդոպէ կամ Հաւոդոպէ՝ Թրակիոյ լեառն. իսկ Ճանթայինք և հելլէն ձայնիւ բարձր կերաւնեանք կամ կերաւնեան բարձունք՝ են երկնաբերձ լերինք Եպիրոսի, յաճախ առ պահար եղեալք առ անհնարին բարձրութեանն: Բայց Խորենացին Ճանթային լերինս գնէ և 'ի սարմատացւոց աշխարհին:

347. Կարծէին հինքն և 'ի մոլորական աստեղացն գուշակութիւնս հանել անձրևաց և այլոց փոփոխմանց օդոց. ըստ որում յայտ նիշ կամ յայն ակզիս երկնից գտանիցին. յորոց զերկուս ևեթ յիշատակէ վիրգիլեան չափաւորութիւնն, զԿռոնոս կամ զՋրուան, որ է Երեակ, ցրտասառոյց ասացեալ վասն զառամ ծերութեանն ըստ առասպելին, իսկ ըստ ճըշմարտութեան՝ վասն կարի բացարձակ հեռաւորութեանն յարեգականէ. և զՓայլածու, զոր Կիլլենեան բոց կոչէ, զի ըստ առասպելին աստղն այն էր Հերմէս, Տիր կամ Տիւր գիր, դից գրիչ և Թարգման կամ պատգամաւոր և հրեշտակ կարծեցեալ, ծնեալ 'ի Կիլլենէ լերին Արկադիոյ:

351. Կրկին պաշտօն ցուցանէ Դեմետրեայ. մի յելս ձմերայնոյ և'ի մուտս գարնայնոյ, և միւս յառաջ քան զհունձս, զոր փոքր մի զնոյն գնէ 'ի 369 տողին: Եւ այն էին երրու օրհնութիւնք անդաստանաց, զորոնք 'ի Թափօր ելեալ հանդիսիւ շրջեցուցանէին զդաշտ:

Յայնժամ քուն քաղցր և անոյշ և թաւ 'ի բլուրս հովանիք ։
Արքուն շքնին մանկերամ ընդ Դեմետրէ պաշտեսցեն քեզ,
Որում դու խորխոխ 'ի կաթն և 'ի փափուկ պարզեա գինւոյ,
Եւ երիցս ընդ նոր բուսովք երամաւէտ պատեսցի զոհ ·
Պարաւոր գունդ ամենախախ դըրդեալ ընդ հետ յերգ ցընծութեան,
Եւ 'ի յարկս ընդ Դեմետրէ ձայն կարդասցեն մեծաբարբառ ·
Եւ հուպ որք հասանն հասկաց մանգաղ 'ի յաճ մատուցէ մի,
Մինչ կաղնի զիրամաւք բոլորելով հիւս՝ Դեմետրեայ
Եւ դոփեալ թինդ անյարդար և ըզլեզուն լուծեալ 'ի շաւինչ ։
Եւ զայդ 'ի ստուգագէտ նըշանակօք առնուլ 'ի միտ,
Ըզխորշակ՝ ըզթօնըննկէցս և զզաննահոտ օդոց փըչմունս,
Աքըն Հայր ետ ամսաւոր լուսնին պատուէր զինչ ազդիցէ,
Յիմ նըշմար լըռեն հարաւք, զի շինականք տեսեալ յաճախ
Ըզ դադարս հանգըրուանին զհօտ և զանդեայ մօտ արածեն ։
'Ի խըլըրտել մըրըրկաց՝ ծովու զբօսանք հարեալ վըրդով
Ուռնուլ առնուն անդէն 'ի մէտ 'ի մէտ սահուն կոհակս,
Եւ շեշտեալ ճարճատիւն ընդ երկնաձեմ ճայթէ լերինս,
Կամ ծովեզերք 'ի ծըփան խառնեալ յուզին ահեղագոչ,
Եւ մըռմըռեալ խուլ մըռընչիւն թանձրանայ թաւ անտառաց ։
Ընդ ուրեմն անսաստ ալիք 'ի կոր նաւաց չառնուն նահանջ,
Յորժամ 'ի խոր անդընդոց թեւս համբարձեալ սուր հողամաղք
Դառն թափին բերեն կարկաչաձայն կանչիւն յափունս,
Եւ ծովասէր մինչ ոռոզք խայտան պարեն 'ի ցամաքի,
Եւ ճայ զլուր եղտիւրոմ ընդէն՝ լըքանէ ընդ ամպս արփեգընաց ։

355 · Սովոր էին նուիրել շինականք դից կաթն, մեղր և գինի, և զոհ մի 'ի պատուաճակաց ։

358 · Մեծաձայն կարդասցեն զԴեմետր 'ի յարկս տանուտեաանն, օրհնել զտունն նորա և զարդիւնս երկրին ։ Թող զի և ցորեանն ինքնին 'ի գլխովին Դեմետրէ անուանի · որպէս թէ զառատութիւն ցորենոյ կոչել 'ի տուն անդր ։

359 · Եւ մի ոք մանգաղ 'ի հունձս արկանիցէ՝ մինչ չև 'ի պատիւ Դեմետրեայ պար առեալ գեղջկական կայթիւք, պսակ ունելով կաղնի 'ի գլուխ՝ 'ի յիշատակ վաղուեան կերակրանաց մարդկան, զկաղնոյ ասեմ, յորմէ շնորհիւ Դեմետրեայ փոխեցան 'ի ճաշակաւորութիւն ցորենոյ և հացի ։

364 · Կրկին օրինակս գուշակութեան օդոց ցուցանէ ։ Մի՝ աստեղաբաշխական, յամսահոլով լուսնոյն՝ յորում աստուած եդ զինչ ազդիցէ, և յիմ նշմար՝ յորմէ այլոյ նշանէ լինիցին փոփոխմունք ։ Եւ միւս՝ 'ի փորձոյ իրաց և 'ի հմտութենէ մարդկան, զոր նկատեալ շինականաց՝ ըստ այնմ և գուշակութիւնս առնեն ։ Սկսանի նախ 'ի գուշակութեանց փորձոյ և հմտութեան մինչև 'ի 436 · ապա այնուհետև զկնի բերէ զլուսնին և զարեգական ։

367 · Աստի մինչև 'ի 381 զնշանակս հողմոց և փոթորկաց պատմէ · ապա անտի յառաջ զանձրևաց մինչև 'ի 406 ։

Տեսցես զամու զամու 'ի մօտալուտ փոթորկի բօթ
Եւ թըռիչ աստեղս յերկնից թափեալ 'ի սող սաղապաճեմ
Եւ 'ի մըթան գիշերին բոց ծիր 'ի հիգ շողեալ ըզհետ,
Փըրթըռուռն ըստէպ թեւթեւ յարդ եւ սաղարթըս վայրահոս,
Կամ 'ի ջուրց մըկանունս փետուրս 'ի լիւղ խաղալ ծածան։
Իսկ մինչ այն ինչ 'ի մարզէ ժանտ հիւսիսոյ գոռան շանթիք,
Եւ յորժամ արեւելից եւ արեւմըտեանն որոտայ տուն,
'Ի բուն բոլոր արտորայք լուղին 'ի փոսըս ձորալիր,
Եւ նաւավն անդընդահերձ ամփոփէ զիւր թուրմ առագաստ։
Ոչ երբէք յանըզգաստից վըտանգաբեր եհաս տարափ.
'Ի յառնելն' 'ի հովտագոյն փախեան 'ի ձորս յիւր երեսացն
Օդային խորդապարք, կամ թէ դէտակն յերկինս երինջ
Լայնաքիթ փեռեկ ըռնգամբ սիք 'ի վերուստ ծըծեաց 'ի շունչ.
Կամ ծիծեռըն նըրբաճնի առ ըղճափամբ քերեալ թեւեց,
Եւ գորտեանն 'ի ճախին մըրմըռնջեցին ըզհին կեղերջ.
Յաճախ եւս եւ մըրջիւն յարկածածուկ սըրսկապանէն
Բարձ զըթովք տարաւ ըզձուս հարկանելով ըզնուրբ կածան.
Արբեցաւ կարակնաձեւ երկնից աղեղըն լայնալիճ,
Եւ հոյլ առ հոյլ տարմատարմ 'ի գիշամուխ ճաշոյն հրաժեշտ
Կերկերեալ ագռաւուց թուխ թեւակոռ հընչեաց բանակ։

378. Ոչ եթէ ճշմարիտ աստեղք անկանիցին, այլ ըստ կարծեաց եւ խօսից ռամկին, որ զգիշերային երեւոյթն զայն զդժուարաթարգմանելին բնագիտաց զասաւլ՝ կոչեն սահեալ կամ թափեալ աստըղ, թռիչ աստղ։ Եւ զառ եւս նշան մըրկի ասէ։

386. Այնչափ յայտնի եւ հաւաստի են նշանք անձրեւաց, զի ոչ երբէք յանկարծահաս եւ անակնկալ եկեալ վնասեն։ Եւ նշանք՝ բաց յասացելոց փայլատակմանց եւ որոտմանց հիւսիսոյ, արեւելից եւ արեւմտից, են եւ զորս յառաջիկայդ թուէ. այն զի 'ի յառնել նոցա՝ խորդք փախուցեալ պատըսպարին 'ի ներքին հովիտս, եւ այլն։ Որոյ թէպէտ 'ի լատինն երկդիմի է իմաստ, եւ յոմանց իմանի փախչել կռնկանց 'ի ձորոց, բայց Արիստոտէլի եւ Թէոփրաստեայ բանք առաւել հաւանեցուցանեն յոր եդաքս. զի ասեն, յօդապարել խորդոց՝ իմացեալ զմօտալուտ անձրեւածս, փախուցեալ 'ի վայր իջանեն. եւ թէ անդրէն չըդարձցին 'ի թռչնոցն, զջերոյ նշանակէ. զի թէ ոչ նախ տեսանիցեն զօդոյն յստակութիւն, ոչ ելանեն։

390. Նըրբենի իմա նըրբաձայն, սրաձայն, այլ եւ ըստ ձեւոյն նըրբին։

391. Թուի ակնարկել յառասպելն, զի երբեմն Լետով աստուածուհի բարձեալ զմանկունսն զԱրտեմիս եւ զԱպողոն գնայր 'ի լիճ ուրեք ըմպել ջուր, հայհոյեցին զնա գեղջուկք Լիւկիոյ, եւ աստուածասաստ պատուհասիւ փոխեցան 'ի գորտս։ Բայց ինքնին իսկ առանց առասպելիդ 'ի բնէ հին եւ միօրինակ է գորտոցն աղաղակ։

394. Ըռամկաց կարծիք էին եւ այս, թէ ծիածանն երկոքումբք ծայրիւքն ծծեալ խմիցէ զջուրս 'ի ժամանակս անձրեւաց։ Բազում են առ քերթողս բանք որ 'ի սոյն միտս հային։ Առ Պղաւտեայ լատին կատակերգակի տեսեալ ուրուք զպատուաւ մի կարկամեալ զի ըմպէ, ասէ.

Աւադիկ աղեղն ըմպէ, կարծեմ այսօր անձրեւ գայ։

Ընդ ծովային հաւուց երամ և որ ընդ մարգս ասիածին
Օրհնաբանք՝ շուրջ կըրկըտեն քաղցր ’ի ճահիճըս Կայխարի,
Ըզմիմեանք խուռն յելևել ցանել զուարճք ցօղ յորդառատ,
Մերթ ըզգլուխ մատնել յողողս՝ մերթ ընդ ալիս վարգել ’ի սոյր,
Այլ ’ի կիրթ լողարանացըն վայրապար տեսցես կայտռել.
Ընդ սակուռն չար՝ ձայն անձրևի կոկորդալիր տայ հագագաւ,
Միաւոր ինքն յինքեան ’ի ծարաւուտ ճեմեալ աւազ։
Նա և ոչ աղջկունք ոլքնեալք ’ի նիւթ սակին ցայգավառական
Տըգխտացան ըզտարափ՝ տեսեալ ’ի վառ ճըրագ ըզձէթ
Զի շաչէ կայծակնացայտ և զընդլի փուտ քոս ’ի պատրոյգ։
Ոչ ընդհատ ’ի մըրըրկէ զարև ու գջեր ջինջ պարզական
Նըշմարել կարասցես և հըմայիւք գիտել անշուշտ.
Զի յայնժամ ոչ աստեղաց անշամանդաղ բըլշակնին բիբք,
Ոչ լուսին ճառագայթից յառնէ եղջօրն աւանդատու,
Մանրակիզն ասպածըլէնք յօդ վեր ’ի վայր թափառին ոչ,
Զըկընկուլք Թետեայ սիրունք յարև ափանց մարմանդաշող
Չհոլանեն սաւառնաթևս, և ոչ զաղբր մախիզ խողեանն

397. Զամենայն ջրային հաւուց խմա, և առանձինն զկարապից, որ և փոր և ձկնաքաղ, յոտճախեալք յոյժ յափունս Կայխարր կամ Կայխարոս գետոյ Փռիւգիոյ և Լիւդիոյ։ Իսկ ասիածին աստանօր առեալ է յԱսիա անուանեալ վայրէն Լիւդիոյ առ Կայխարիւ՝ ուստի հեռի ’ի Տմոլոս լեռնէ, յորում և էր մարգ կամ եղանիւր ներք և երկայն, այլ և աւան մի համանուն, և ճահիճ ’ի նմին գետոյ զեղեալ։

404. Եւ աղջկունք որ հսկեն ’ի ընուլ զսակ ասուն մանելոյ՝ խմանան զկտնաւայոյզս, տեսեալ զի կայծակունք հատանեն ’ի ճրագէն, և գնտանայ քոս սպնգանման ’ի բուծին։ Զայս յիշատակէ և Մարս Եղնիկ (Էջ 187) ’ի Նշանակս անձրևի։

407. Ասոր ց436 զգուշակութիւնս ջերոյ և պարզի ’ի փորձոյ ուսուցանէ։

410. Այսինքն այնպէս պայծառ ջահաւորէ, զի ոչ ’ի փոխ առեալ թուիցի լոյս իւր յեղջօրէն յարեգականէ, այլ ինքնալոյս գոլ։ Ոմանց թուեցաւ առել, աստեղք այնպիսի լուսանշոյլ ծագեն, զի և ոչ լուսինն ճառագայթիւք եղջօրն ստնանել ինչ կարէ փայլման նոցա։ Ըստ այսքէն բառք բնագրին և ’ի սոյն միտս հարկանեն, սակայն ոչ կիրթ թուի հմտագունից։

411. Մանր գեղմանս ասու խմանան ոմանք մանրիկ ամպս ցիր և ցան թափառեալ ընդ երեսս երկնից, որ ասպս զգումարին յամպրոպս։ Բայց մարթի հասկանալ լինել վերադոյն ասացելոցն ’ի գուշակս մրրկաց, տող 380, 381։

412. Զկնկուլք որ և խոթք՝ հաւք ծովայինք, յոյն ձայնիւ ալկիոն ասացեալք, սիրելիք ասին Թետեայ (34), զի ’ի նստել նոցա ’ի թուխս՝ խորին խաղաղութեամբ հանդարտեն ծովք, որպէս թէ գթացեալ ’ի ծնունդս նոցա. յորմէ և յառակս էր ասել զաւուրց անհողմութեան՝ Ալկիոնեան աւուրք, կամ որպէս թարգմանիչն Վեցօրէից սրբոյն Բարսղի ասէ՝ Ալկիոնեան աւուրք։ Իսկ առասպելն զրուցէ, թէ Ալկիոնէ կին էր Կէիքսայ արքայի Տրաքինիոյ, զորոյ զնաւաբեկեալ մարմինն տեսեալ ’ի ծովեզերին՝ առ սիրոյն ընկեց և զինքն ’ի ծով անդր առ գիակն առն իւրոյ, և երկոքեան փոխեցան ’ի հաւս՝ յանուանէ կնոջն ալկիոն ասացեալք։ Եւ ’ի փոխարէնս այնքանոյ սիրոյն՝ յաւուրս ծննդոց նոցա խաղաղանան ծովք։ Իսկ մինչ թևատարած կան թռչունքդ ’ի ծովափունս, զօդոյն ամբոխումն գուշակեն. իսկ թէ ոչ, զջերոց յայտ առնեն։

'Ի ժըպիրհ օցտեալ կընճիթ ցըրուել խըրձունս ած ըզմըտաւ։
Պա՛ւագիկ ղըփեալ 'ի ստոր միգատարը ամպք նըստին 'ի դաշտ,
Եւ կասկամ բարձր 'ի գլխոց ընդ երեկ կոյս ակնարկելով
Բուքս երեկորինս ողբերգարկեալ եղանակէ։
Երեւեալ անօսր օդովք շողայ բազէ բարձրաթըռիչ
Եւ լուծանէ անդ արտիւտ ընդ ծիրանի ծամին վըրէժ.
Յոր կոյս սա հերձու թեւովք ըզսիք թեթեւ տըւեալ խուսափ,
Անդր ընդ հետ գոռ թըշնամին յահեղ կանչիւն հարեալ խոյախոյս
Խոյանայ բազէն ընդ օդ, եւ յոր ընդ օդ պընդի բազէն
Սա հապճեպ տըւեալ խուսափ հերձու թեւովք ըզսիք թեթեւ։
Անդ 'ի նեղ որկոր ագռաւք եռակ քառեակ վըճիտ բարբառ
Ի յեղյեղուկս արկանեն, եւ 'ի վըսեմ սենեակս ըստէպ
Եւ գիտեմ ինչ նորագիւտ խընդիւ յանձինքս զուարճացեալք
Խօշիւն հանեն սաղարթաց, քաղցր է նոցա թօնիցն 'ի դուլ
Ըզմանրիկ մանկըտեակն եւ զանուշակ բոյնսըն այցել։
Եւ կարծեմ 'ի նոսա ես աստուածատուր մըտաց հանճար,
Կամ էիցըս խելամուտ գերաքաստիկ իմաստութիւն.
Այլ յորժամ օդք եւ շարժուն հիւթ երկնըռթաց փոխեն շաւիղ,

414. Եւ այս ընդ բնածին ազդմունս կամ ընդարբոյս բարս խաղաց է, զի յորժամ խոնաւան օդոցն փոփոխմունս եւ զմըրկաց եղ՝ երթան քայքայեն եւ ցրուեն զխրձունս կապեալս մշակացն։

416. Կասկամ կամ հաւապաշտիր Թըռչունն՝ ազդ ինչ բուոյ, իբրեւ նստեալ 'ի գըլխակս ծառոց եւ գէտ ակն կալեալ 'ի մուտս արեւու եւ յելս գիշերոյ երգէ տխրագին, գուշակ է փոփոխութեան օդոց. ապա թէ չերգիցէ այնպէս, ջերոտ աւուրք ոչ փոփոխին։

418. Ըստ առասպելին բազէ էր Նիսոս արքայ Մեգարացւոց, իսկ արտուտ՝ դուստր նորա Սկիւլլա, որոյ հատեալ զծիրանեփթեան հրաշալի մազ գլխոյ հօր իւրոյ՝ յոր կախեալ կայր ամենայն բաղդ նորա, մատնեաց զնա 'ի ձեռս թշնամւոյ նորա Մինովայ իւրում սարփածուի, եւ երկոքին փոխեցան 'ի հաւս։ Վասն այսորիկ ասի հալածել բազէի զարտուտ առ 'ի խնդրել զվրէժ մահահրաբ հերոյն իւրոյ։ Ոմանք զՍամփիոնի եւ զԴամիլիլայ վէպսն իմանան յառասպելիդ։

424. Ագռաւուց ազգ, որպէս տեսաք 'ի վերդ 396. 402, յորժամ կերկերեալ եւ կոկորդալիր ձայնիւ յերկար աղաղակեն, նշան անձրեւի է. իսկ յորժամ սուր ձայնիւ եւ յստակ բարբառով երիցս կամ չորիցս միայն, զջերոյ տան նշանակս։

425. Վսեմ սենեակք ագռաւուց են բարձրակառոյց բոյնք նոցա յոստս ծառոց։

429. Ես ոչ կարծեմ, ասէ, ըստ պիթագորեից, պղատոնականաց եւ ստոյիկեանց՝ թէ իցէ յանբան կենդանիս յաստուածուստ հանճար կամ իմաստութիւն գերաքաստիկ, այսինքն գերագոյն քան զգօնութիւն 'ի բաղդէն բաշխեալ, կամ գերագոյն քան զբաղդն՝ մինչեւ կանխագէտ լինելոյ հանդերձելոց ժամանակացն. զի եւ խաղին բարքն յերկնային միտոց հարկանեն։

431. Յորժամ երկինք եւ օդք փոփոխեն զոճն՝ յեղափոխին, եւ խոնաւ օդք մերթ հօծին խտանան, մերթ անօսրին եւ անցայտանան յազդեցութենէ Արամազդայ՝ այսինքն է 'ի զօրութենէ բնութեան, փոփոխումն լինի յոգիս եւ 'ի բնաւորութիւնս հաւուցդ, եւ այլ ընդ այլոյ շարժմունք զարթնուն 'ի նոսա՝ յուրախութիւն կամ 'ի տրտմութիւն, 'ի հալածել կամ 'ի փախուստ։

Եւ տատանեալ շրջմանմբք ըղձթոյլ սեղմէ, մանէ զպինդ Նրամազդ,
Շըրջէին դիմանի դիմակս ոգիք, և այլ թընդինկք և մարմանջք
Նքժառնայս աղջկն 'ի սիրտ և այլ յամեայոց մէգ հողմնայոյզ.
Նքառաւոտ՝ հաւուցն 'ի դաշտ նըւագաւորն այն գայլայլիկք,
Եւ խայտառ անասնոց և ագռաւուց փողից կայտիռք:
Իսկ յարևըն բոլորեալ և 'ի լուսնի կարգեալ ծագմանս
Թէ զխօսես, ոչ ժամ վաղուի ըզգի եղբեք 'ի քէն զանխուլ,
Եւ ոչ յորդորայթ ըմբռնիցես պարզ գիշերոյ:
Մինչ լուսինն ըմբոսրապարձ այն մինչ ճաճանչսըն ժողովէ,
Թէ մըթարս 'ի մեզապատ պարտանակէ մահիկ եղջերան,
Նաւորդաց և մըշակաց շարժեն շատաւք հեղեղասաստ.
Իսկ կարմիր թէ կուսական սըփռէ զայտուքըն վարդագեղ,
Փուքք յառնեն, միշտ 'ի հողմոյ շիկնի լուսինն ոսկենըշող:
Նոյն թէ յելըն չորրորդ, և այս անվրէպ միշտ նըշանակ,
Պայծառ յանխառն մահիկս և յանըստուեր ճեմի 'նդ երկինս,
Նոյն օր 'ի գլուխ հասանէ և որ անդուստ անկցին 'ի կարգ
Մինչ յամսոյն բոլոր պլպջակ ըզգին անհողմ և անանձրև,
Եւ փըրծեալ նաւաւորք ուխտս 'ի ծովափըն հատուցեն
Գլաւկոսի և Պանոպէ և Ինովեան Մելիկերտեայ:
Եւ արեգն ընդ ելանել և 'ի զուգել յալեացն 'ի ծոց
Տացէ նըշան, անսխալիր պատրին նըշանք զարեգակական
Երևեսցէ ընդ առաւօտս և 'ի ծագել աստեղաց:
Երբ նա զնորանըշոյլ ծըննունդն 'ի խայտ զունէ պխսակ,
Նշմարեալ և առ միջովլ բոլորակին ցոլեալ թաքուն,
Աէթ 'ի թօնից զիր 'ի մնի, զի տագնապէ բուռն 'ի ծովէն
Ուսառոց և սերմանեաց և անասնոց վիրագ հարաւ:
Իսկ յորժամ ընդ աշալուշն 'ի թանձրախիտ ամպոց փապարս

437. Աստի յառաջ զատուեղապաշխաւկան նշանաց են բանքն, զորոց 'ի լուսնոյ և զորոց յարեգակնանէ:

440. Նորահասն լուսին եթէ մթին իցէ, զանձրևոց յայտ առնէ. եթէ շառագոյն, զհողմոց: Եթէ քառօրեայ լուսինն վճիտ իցէ, ընդ ամենայն ամսոյն ջեր լինիցի:

449. Յաջողակ ծովերթ նաւորդաց 'ի ցամաք ելեալ՝ կատարիցեն զուխտս խոբհրդոց ծովայինն դիցն՝ Գլաւկոսի, Պանոպեայ յաւերժահարսին և Մելիկերտեայ որդւոյն Ինովայ:

454. Արեգակն 'ի ծագելն եթէ բծաւոր և պխսակոտ իցէ, անձրևոյ մածեալ, յարաւողջին հողմոց հետ երևելի և 'ի միջին իբրու գոգացեալ խառուշաւոր, անձրևածս ցուցանէ՝ զոր վարէ բերէ հարաւ 'ի ծովէ: Տես 333, զի և ասատնօր նոյն լատինն բառ է:

458. Եթէ 'ի ծագել արևու լինցին նաւ-

Զայտոն ցոլք վայրավատինք, կամ Առաւօտն այլագունեալ
Ըզ Տիթոնի զքրքըմացան լըքեալ մահիճս յառնէ տըրմոյն,
Ահ, յայնժամ ուռ սաղարթուն ոչ փըրկեսցէ զփափկիկ ողկոյզս,
Այնչափ ընդոստ զոյթ ընդ տանիս տայ կուռ կարկուտ զռա
բարկաճայթ ։

Նա և զայն ես առաւել օգուտ բերէ արկանել յուշ,
Մինչդեռ այն ինչ զասպարէզն երկնից հատեալ անցեալ գնասցէ,
Զի զդէմսն ըստէպ տեսանեմք յերփն երփն հարեալ երանգ պէսպէս ։
Կըրթագոյնն ազդէ տարափ, բոցատեսիլն ըզհիւսիսակ.
Իսկ պիսակք թէ խայտափիտ անկանիցին 'ի բոց հրաշէկ,
Տեսցես զհանուրս անդ փոթորկեալ մըրըրկահողմունչ անձրևով ։
Մի ոք ինձ 'ի գիշերի անդ մատուսցէ յորդոր խորախոյս
Ընդ անդունդըս նաւ խառնել և ոչ յերկրէ առնուլ ըզլար ։
Իսկ 'ի գալ թէ տուընջենի և վերստին ծածկել անդրէն
Փայլակէ զունտ լուսաւոր, զուր զանգիտես 'ի տարափոյ.
Ըզմայրիս պարզ հիւսիսիւ ակնարկեսցես ճօճեալ 'ի ճեմ.
Նա հանկիրճ, զինչ ածիցէ Գիշերավարն երեկոյեայ,
Հողմ ուստի վարեսցէ զամպըս ջերին, զի զէճ հարաւ
Այս խորհի մըրտայոյզ, լիցի զուշակ քեզ արևակն.
Յարեգակն ո՛ ժըպըրհեսցի խաբէութեան շըփել եպեր.
Նա սպառնալիս խուլ մօտալուտ լուռմնալ խաղաղից ազդէ ստէպ ազդ,
Դաւաճիր նենգ և թաքուն մարտից այտուցին կուտակեալ ։

Նոյն և Կայսերն 'ի մահու յողորմ 'ի գութ հարեալ Հռովմայ

մացեալ՝ զճառագայթսն շուրջանակի 'ի կողմանց 'ի դուրս արձակիցէ, կամ լոյս առաւօտուն աժգոյն իցէ, սպառնալիք կարկտի են ։ Զառաւօտն դուստր ասէ առասպելըն Տիտանայ և Երկրի, և կին Տիթոնի որդւոյ Լաւոմեդոնի արքայի Տրովադայ. և այնքան սիրեալ զայր իւր, մինչ զի բժշկական արմատոց զօրութեամբ զանմահական ծերութիւն նորա 'ի մանկութիւն փոփոխել, ամենևին իսկ անապական առնել ոչ կարացեալ ։

463. Անցանէ 'ի նշանս որ երևին յարեգակնն 'ի մտանել նորա. զի 'ի այլապէս գոյնս երևի և յայնժամ, և ըստ այնմ այլ և այլ ինչ նշանակէ ։

471. Իսկ թէ յելանելն և 'ի մտանելն լուսապայծառ իցէ անիւ արեգական, ջերոյ և պարզոյ նշանք են՝ հանդերձ պարզօղ հիւսիսիւ ։

475. Զինչ արդեօք չարիս մեքենայիցէ Հարաւ՝ խոնաւ անձրևաւոր ողք ։

478. Արեգակն և զմօտալուտ զաղտնի աղմուկս և զդաւաճանութիւնս և զուռնալ և զաճել թաքուն պատերազմաց իսկ ազդ առնէ, ասէ, որով մտաւ տայ բանիւն 'ի դրուագ աղխից անակին պատերազմաց իւրեանց ։

480. Զ Յուլիոս Կեսար, որպէս յայտ է, սպանեալն 'ի տաճարին խորհրդոց, և ընդաճն աղջոյն ընդ այն՝ աղօտացեալ երևե-

Ըստուերածս արկեալ մըթին պղտորեաց ըղձղալուխըն սըրբափայլ,
Եւ անկաւ յամպարիշտ դարս ահ խաւարին յաւիտենից ։
Ողեպետ անդ ընդ այն աւուրս երկիր ինքնին և ծով ծաւալ,
Մատղեալք շունք և թռչունք իսկ չարաշուք՝ տային նըշան ։
Բազմիցս անգամ զԵթնէ 'ի Կիկլոպացց անդոց վըճակ
Հալոցացն 'ի պայթել տեսաք զեռեալ եռանդնապատոյտ,
Բոցեղէն շըրընչանոնս և հրահոսան հոլովեալ վէմս ։
Ընդ երկինս ողջոյն լըւաւ Գերմանիա շաչիւն զինուց,
Ահագնադղորդ երերմամբ Ալպք շարժեալ սասանեցան,
Եւ ըստէպ ընդ անխուլ անտառս հառեալ արեկ բարբառ,
Եւ երևոյթ կերպարանօք մեռելատիպ ուրուականք
Տեսեալ ընդ մութ գիշերայնոյ և, ո՛վ սոսկումն, երաւնք խօսեալ ·
Կան գետք ռամակառեալք և պատառին յատակք 'ի վէհ,
Տըրտմուն փըղոսկր 'ի մեհեանս արտօսր հոսէ, քըրտնին պըղնձիք ։
Մոլեգին յորձանօք շըրջեան առեալ պըտուտկելով
Զպուրակսն հեղեղեաց գետոց արքայն Էրիդանոս,
Եւ ընդ դաշտս աղխաղխելով գոմս և անդեայս եհար աւար ։

ցաւ արեգական ըստ վկայելոյ և Պլինեոսի և Պլուտարքեայ ։ Զայս առ ազգյն պղծել ասէ զգլուխն, պաշտօն իմն առնելոյ Հոկտաւիանոսի Աւգոստեայ՝ որ որդեգրեալն էր և ժառանգ կարգեալ Յուլիոսի և պայազատեալ իսկ զինքնակալութիւն նորա ։ յոր միոս ամպարիշտ եւս կոչէ զդարն, որ յայնպիսի ոճիր սպանութե յանդգնեցաւ ։

484 ։ Վատշուէր շունք են չարագուշակքն, որպէս և չարաշուք թռչունքն ։ Ապպիանոս աւանդէ զժամանակէն, թէ Շունք առհասարակ ոռնային իբրև զգայլս ։ և Պլուտարքոս զթռչնոց, թէ հաւք անապատաւորք գային անկանէին 'ի հրապարակն ։

485 ։ Յայտ ուրեմն է թէ զայն ամ երբեմն երբեմն բորբոքեալ և հուր շնչեալ է հրահոս լեռանն Եթնէ 'ի Սիկիլիա ։ և ո՛ գիտէ անուն էր միգամածր ճայրտութիւն արեգականն ։ Ալ լերամբք էր գարբնոց Կիկլոպայց պաշտօնէից Հեփեստեայ 'ի գործնել Արամազդայ շանթս ըստ առասպելին ։ զորս Դիոդորոս նախնի բնակիչս ասէ Սիկիլիոյ, իսկ առասպելքն՝ ուստերս Պեղիադնի և Ամփիտրիտեայ, և բոլորականեայս՝ զոր կիկլոպեան նշանակէ 'ի յոյն ։ որպէս թէ մի եւթ ակն բոլորշի 'ի ճակատուն ունել ։ Հալոցք նոցա են խառնելիք հրահոս լերինն այնմիկ, յորժամ հոսէ գունտս կամ անիւս հրեղէնս, և զխանձողն՝ որ է նիւթ հալածոյ և շանթացեալ, և ապա կարծրացեալ 'ի քար վիմատաւի ։

488 ։ Բազում ուրեք պատմին զէնք և շաչիւնք ընդ երկինս երևեալք և լսելի եղեալք ։ և աստանօր 'ի Գերմանիա, զոր և Ապպիանոս յիշատակէ ։ Կարծի ոմանց թէ հիւսիսայգն տասցեալ երևոյթ պատճառ իցէ առեալ այսպիսի կարծեաց ցնորից ։ Զայս և որ զկնի գան անհաւատ պատմութիւնք՝ յիշատակեն և այլ մատենագիրք ժամանակակիցք կամ որ փոքր մի կրտսեր ժամանակաւ ։ որպէս և զբարբառելոյ անասնոց այսպէս գրէ Ապպիանոս ։ Արջառ ձայն մարդկեղէն արձակեաց, և մանուկ գեռածին խօսեցաւ ։ Զնոյնս երգէ զժամանակէն և Տիբուլլոս քերթող համաժամանակից Վիրգիլեայ ։ Եղեր ։ Բ ։ Ե, 71–78 ։

489 ։ Ալպիք կամ Ալպեայք, Ալպեանք, են բարձրաբերձ լերինք Եւրոպայ, որ զՀիւսիսիւ Իտալիոյ ձգեալ ընդ արևելս և ընդ արևմուտս ։

494 ։ Փղոսկր և պղինձ իմա պատկերս փղոսկրեայս և պղնձիս ։

Նա և ոչ 'ի գուժաբեր յանժամ ընդերըս փողոտեաց
Զէնք և նետարդք ըսպառնականք դադարեցին 'ի հրձիգից,
Կամ 'ի խոր ջըրհորոց արեան վըտակք յորդ ապաժոյժ,
Եւ 'ի շինից՝ բարձր ոռնաձայն գիշերընթաց գայլոց հրոսակ։
Երբ այս խուռն հատան անկան 'ի պարզ երկնից փայլատակունք,
Կամ այսչափ ահեղ վարսաւք վառեալ 'ի քոյ բորբոքեցան։
Նման որոյ սպառազէն զօրք՝ հռովմէական կըրկին ճակատ
Փիլիպպէք տեսին միմեանց անդրէն ընդդէմ դուռեալ 'ի ռազմ.
Ոչ անդէպ թուեցեալ վերնոց՝ եթէ կըրկին մերով արեամբ
Լայնալիր դաշտք Հեմոսի ու Էմաթիա պարարտասցին։
Նա՛ւանիկ գայցէ և ժամ՝ զի առ վայրօքն արդիւնագործ
Զերկիրն 'ի կորափիտ առնելն արօր ակօսաբեկ
Ուտձահալ տէգ և նիզակս 'ի բիրտ խոժոռ գտցէ ժանգէն,
Կամ թէ թափուր սաղաւարտս ընդ անարի բախեալ տըրմուխ
Պակնուցու շիրմացն 'ի բիր ընդ ոսկերոտն ստոկափելթիւր։
Ովղիք հայրենաբանք և Հռոմուլէ, և Վեստա մայր

498. Ըստ լերդահմայութեան օրինաց՝ եթէ պակաս գտանէր ինչ յընդերաց զոհից կամ այլ ընդ այլոյ, չարի գուշակ էր. և այսպիսի ինչ երևեալ աւանդէ Պլինեոս առ նոյն ինքն իսկ Յուլիոսիւ Կայսերբ։

502. Ե՛րբ այսչափ փայլատակունք, ասէ, անկան 'ի պարզ և անամպ երկնից. զի 'ի պարզի որոտք և փայլատակունք հրաշանշանք համարեալ էին, է որ 'ի բարի և է որ 'ի չար. աստանօր ընդ այլ աղախտարս միաբանեին 'ի չարի գուշակ։ Ընդ այնչափ ասացեալ գիսաւորսդ Պլուտարքոս և Սուետոնիոս պատմեն երևեալ և զմեծ իմն և զահագին ընդ աւուրս եօթն յետ մահուն Յուլեայ Կեսարու. և խաժամուժն հռովմայեցւոց հաւատաց թէ հոգի նորա իցէ երկնաքաղաքացի եղեալ։

504. Զհետ նախասացեալ հրաշիցդ յարեաւ առաջին պատերազմն բրուտոսեանց։ Զորս սպառազէնս աստ՝ զայն նըշանակէ, զի երկոքեան կողմանքն նոյնպէս հռովմայեցիք էին հաւասար զինուք և զինուորութեամբ։ Իսկ կրկին ճակատ, ասէ, տեսին Փիլիպպէք, ոչ մի և նոյն քաղաք, այլ կրկին։ Մի 'ի Թեսալիա առ երի Մակեդոնիոյ՝ Փիլիպպոպոլիս կամ Փիլիպպէք ասացեալ յանուն Փիլիպպոսի որդւոյ Դեմետրի, մերձ 'ի Փարսաղ, ուր նախ Յուլիոս Կեսար յաղթեաց Պոմպէեանց։ Եւ միւս 'ի սահմանս Մակեդոնիոյ և Թրակիոյ յանուն Փիլիպպեայ մակեդոնացւոյ՝ առ Հեմոս լերամբ, ուր յետոյ ուրեմն Հոկտաւիանոս Աւգոստոս վանեաց զԲրուտոս և զԿասսիոս։ Բայց Մակեդոնիա ընդարձակագոյն առեալ առ հռովմայեցւոց տիրապետութեամբ՝ ձգէր երկայնէր 'ի Հեմոս լեռնէ մինչև 'ի Թեսալիա, որպէս և գօտի Հեմոս լերին. և մանաւանդ քերթողք նոյնպէս զամենայն երկիրն զայն կոչեն Էմաթիա, որ մասն է Մակեդոնիոյ։ Եւ տիրապէս ոչ Թեսալեան Փիլիպպէք կամ Փարսաղ և ոչ Թրակեան Փիլիպպէք յԷմաթիա անկանին. սակայն ընդարձակ առմամբ և մանաւանդ քերթողաբար երկոքեան քաղաքքդ և ճակատքն երկոքեան ասին յԷմաթիա և առ ստորոտովք Հեմոս լերին։ Ոչ պակասեն առ այսոսիկ հաւանութիւնք յայլ և այլ գրոց Յունաց և հռովմայեցւոց, զորովք զանց առնեմք։

510. Զզէնս խնա զհռովմայեցւոցն կոտորելոց 'ի անտական պատերազմին յեմաթեան դաշտս. զորոց և զմեծամեծ ոսկերսն, ասէ, տեսեալ 'ի բրել գերեզմանացն՝ ստուգացի վասն սկայաձև մեծութեան նախնի քաջացն մարտուցելոց և անկելոց։

513. Հայրենաբան դիք՝ են նախնի

Որ զտոսկեանսն Տիբերիս և զՀասմանեան պաշտես տաճարս ,
Այսըմ զէթ պատանեկի ձեռն 'ի կործան տալ յաւիտեան
Մի կայք ընդդէմ, շատ իսկ արդ լուծայք յարեան մեր ճապաղիս
Ըզվըրէժ խարդաւանաց Լաւմեդոնեանըն Տրովադայ ։
Արդ երկնից արքունիք ըզքեզ, Կեսար, խանդան 'ի մէնջ,
Եւ ըղձէտ մըրցանակի փառաց մարդկան բաղձեն 'ի քեզ.
Ուր իրաւն և անիրաւ զի արդ հարեալ կան վէր 'ի վայր ,
Այսքան մարտք ընդ տիեզերս , այսչափ անչափ եղեռանց դէմք ,
Ոչ շուք ինչ անկ արօրոյ , մերկ յեզողաց խորթնացեալ արտք ,
Լուսնաձև գերանդիք ձուլին 'ի սուր մարդախողող .
Պատերազմ աստի Եփրատ՝ անտի շարժէ Գերմանիա ,
Իւրերաց դըրժեալ դաշինս դըրացի քաղաքք 'ի զէն դիմեն ,
Եւ ամպարիշտ մոլի Արէս ծագաց 'ի ծագս աշխարհի ։
Ի գըլխոց ասպարիսին իբրու հոսեալ քառաձիոց

ընկել դիւցազունք երկրին առասպելաբանք, ընդ որս և Հռոմուլոս նախահայրն ազգին Հռոմայ և կանգնօղ քաղաքին և տէրութեանն ։ Իսկ Վեստա, և ըստ հելլենացւոց Եստիա կամ Հեստիա, կրակին էր․ մին մայր Կռոնոսի կամ Զրուանայ, որ և Կիւբելէ, և նշանակէր զերկիր․ իսկ միւսն՝ դուստր Կռոնոսի կամ Զրուանայ, և այն ինքն էր հուրն տարրական՝ մեծախնամով պաշտեցեալ առ Հռոմայս և 'ի կուսից սպասաւորեալ իբրև կոյս սէն և սրբական դիք ։ Բայց բազում ուրեք այլ ընդ այլոյ առեալ գտանին ։

514․ Տիբերիս գետն Հռովմայ տոսկեան ասէ, զի 'ի կողմանց Տոսկիոյ կամ Ետրուրիոյ յապենինեան լերանց ելեալ, և զանուն իւր առեալ 'ի Տիբերիս արքայէ Տոսկիոյ, երթայ թափի 'ի ծովն տոսկեան կամ ետրուրական, բաժանելով զաշխարհըն զայն 'ի Լատինէ ։ Կոչի և Տիբերինոս՝ յանուն արքայի ալբայեցւոց որ 'ի նմա հեղձաւ ։

516․ Պաղատինեայն Հոկտաւիանոսի Ագոստեայ, որ իբրև քսան և եօթն ամաց երիտասարդն էր, և գրեթէ զինքնակալութիւնն ունէր յետ սուսերահարն լինելոյ Յուլիոսի Կայսեր՝ Յուլիոս Կայսր Հոկտաւիանոս անուն առեալ և ինքն, կտակաւ որդեգրեալ 'ի նմանէ և ժառանգ կարգեալ ։

517․ Լաւոմեդոն կամ Լաւոմեդ արքայ Տրովադայ, հայր Պրիամու, զրկեաց զՊոսիդոն և զԱպոլոն զիս 'ի սակ արկեալ վարձուց շինութեան պարսպի քաղաքին ։ Այս սրածութեամբ և հեղեղօք պատժեալ, պատրաստ բաշխել էր ըստ պատգամաց զդուստր իւր Հեսիոնէ ծովական նհանգի․ յորմէ Հերակլի ազատեալ զնա, դրժեաց և նմա Լաւոմեդոն և ոչ ետ զխոստացեալ դիւցազարմ երիվարսն ։ Ընդ այս ուխտազանցութիւնս ցասեան բազումք յաստուածոց և ոխս պահեցին ընդ տրովադացիսն, յորոց էր և Իւնոն նախահայրն հռովմայեցւոց, վասն որոյ և սոցա եւս համարէին մեղանքն ։ Այս են լաւոմեդոնեան կամ լաւոմեդեան խարդաւանքն ։

518․ Երկինք կամին հանել զքեզ 'ի մէնջ՝ յաստուածութիւն վերասեալ, և չհաճին խնդրել քեզ զմարդկային փառս, յորում արդարութիւն և անիրաւութիւն աղմկեալ կան, և զմեզ յերկրայս արկանեն՝ թէ զուցէ դու ինքնին տաղտկացեալ 'ի սոցանէ, և երկնից խնայեալ զքեզ յայսքան տաղտկանութենէս՝ յափշտակեսցեն յաշխարհէ աստի չարէ ։ Ակնարկէ 'ի հանդերձեալն ակտիական պատերազմին Հոկտաւիանոսի ընդ Անտոնիոսի յարևելից և յարևմտից՝ զոր Եփրատ և Գերմանիա յայտ առնեն, որպէս և զինի 'ի կռիւս նորին իսկ Իտալիոյ քաղաքք ընդ քաղաքի․ որով Արէս աստուածն մարտի ընդ ամենայն երեսս երկրի երևէր մոլեալ ։

527․ Անսանձելի կործանական գնացից պետութեանն և ժամանակին օրինակ առ-

Արբածուիչ ապաստանկեն, և կառավար զօր կոծեալ սանձ
Յափրշտակէ երիվարօքն, երեւանաց անկուշեն կառք ։

Նու զապերասան արշաւանս քառաձի կառաց 'ի ձիարձակարանսն, որոց միանգամ արձակեալ 'ի թողարանէն՝ ոչ ևս այնուհետև գոյ հնար ընկրկել զնոսա ․ Նա և կառավարն ինքնին 'ի գլխովին վարի ընդ նոսա ։ Որով մեղմով իսկ մարգահաճելով արդարացուցանել թուի զհոլովառականս իբրև ակամայ և բռնի ձգեալ 'ի մարտան ։

ՊՕԲԼԻՕՍԻ

ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՕՎՆԻ

Մ Շ Ա Կ Ա Կ Ա Ն Ք

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԳՐՈՑ

ՅԱՅՑ արարեալ զառաջարկութիւն իրացն, որ այն ինքն է անկագործութիւն առհասարակ, և առանձինն այգեաց և ձիթենեաց, և կարգացեալ յօգնութիւն զԱպանդարամետ զլիս որթոյ՝ զլխաւորագոյնսն ՚ի տունկս մշակելիս, անցանէ ՚ի ձեռս երկրորդի գրոցս, որ յեօթն գլուխս հատանի.

Ա. Ամենայն ազգի ազգի օրինակք տնկագործութեան, որ ՚ի բնութենէ և յարուեստէ.

Բ. Զանազան տեսակք ծառոց, և իւրաքանչիւր ազգի դարման՝ որոց ինքնեկ ՚ի բնէ և որոց ձեռատունկ.

Գ. Զտեղեաց իւրաքանչիւր՝ յորս ծառք բարգաւաճին այլ քան զընկեր. յորում և գովեստ խորալական աշխարհին.

Դ. Արուեստ ընտրելոյ զբնութիւն ամենայնիւր հողոյ, և զիւրաքանչիւր զպէտսն.

Ե. Մշակութիւն որթոյ. յորում և յաղագս ժամանակին զարնայնոյ և զապանդարամետական խաղուց.

Զ. Մշակութիւն ձիթենւոյ և այլոց ևս ծառոց, հանդերձ նոցին օգտակարութեամբ.

Է. Վերջաբան ՚ի գովեստ երջանկութեան շինական կենաց.

ՊՈԲԼԻՈՍԻ

ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՆԻ

Մ Շ Ա Կ Ա Կ Ա Ն Ք

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՆՉԵՒ ցայս անդոցըն վար և երկնաճեմ աստեղց կաճառք.
Արդ ըզքեզ, Սպանդարամետ, և զթաւաթուփս անտառախիտ
Եւ զմեղմաբոյս ձիթենւոյն զարմ և զաւակ երգեմ ընդ քեզ։
Այսըր, ով Հընծանեան հայր, աստ ամենայն շնորհիւ քով լի,
Ուռուէտ քեզ աշնայնով ծանրաբեռնի ծաղկեն մարմանդք,
Եւ եռան այգեկութք 'ի փրփրադէզ տաշտս զեղուն,
Այսըր, ով Հընծանեան հայր, ըզմոյկսըդ հան աստի եկ մտ,
Եւ ընդ իս 'ի նոր գինի ներկեա զըլըռանսըդ բոկանիս։

Տընկոց խոկըզըլանէ կարգի սերունդ է այլաբուն.
Քանզի կէսք անբըռնադըբոս 'ի մարդկանէ գոլ ինքնաբոյս

2. Սպանդարամետ. խնա զարմ և ըզգինի, որոց գիք՝ այն էին, զոր և փոքր մի ըզկնի հնծանեան հայր կոչէ, զի հնծանաց խչեցող էր և նոքք ցնծայր։

3. Մեղմաբոյս ասէ զձիթենի, զի յամէ աճել անկոյզ յայսմի է ամենեցուն՝ եթէ սերմանեսցի հաստ նորա. և 'ի յամէ աճելոյ անուն ունի և զերկարակեցութիւն։

4. Այսր մատիր, հաս յաղթութիւն այսր՝ ուր ամենայն պարգեւք քո զեղուն, և աշնայինն ուռովք և պտղովք քեզ ծանրէ երկիր զուարճացեալ։ Եւ զխնդրելով օգնականութիւնն գեղեցիկ այլաբանէ 'ի հընծանահար ընդ իւր լինել, որ զայգեգործութիւն նուագելով և զգինեացն յօրինուած պատրաստէ։

10. Ծառոց կէսք ինքնեկ են առանց 'ի մարդկանէ սերմանելոյ, և ոմանք սերմանս արկելով 'ի խնամոց մարդկան։ Այս է առասցեալն, և ոչ թէ զի կէսք սերմն ունիցին և այլք անսերմն իցեն։ Բայց սերմն առ Վիրգիլեայ և առ այլս եւս նշանակէ ուրեք և զարմ և զշառաւիղս և զարմատս իսկ։

Զդաշտորայս ծածկեն ըսփիւռ և զգալարուն վըտականին.
Որպիսի գողտրիկ մօշի և ցորասին գիրգ և փափուկ,
Կաղամախ և ուռեստան լըմնակապոյտ սաղարթացեալ։
Իսկ ոմանք յառնեն կանգնին 'ի սերմանէն արկանելոյ,
Զերդ երկնուղէշ շագանակ, և 'ի մայրիս յաղթ վարսաւոր
Տերևեալն Արամազդայ շոճ և կաղնիք հելլէն դաբիր։
Այլոց շուրջ յարմատոյն թանձրամայրի բըխեն անտառք,
Կընձնեաց պէս և բալից, և պառնասեան սարդենւոյն ձետ
Զարգանայ մանուկ 'ի մօրն հովանի մեծ լայնածաւալ։
Զայդ օրէնս ետ նախ բնութիւն, ու 'ի դոյն պըրակք ազգի ազգի
Եւ թուփք և դիցանուէր դալարանեան թաւուտ մայրիք։
Են և այլք՝ զորս պէտք ինքնին հնարաւորեալ եկաց ճարտար.
Ոմն հատեալ մին շառաւիղս 'ի նորատունկ մօրցըն մարմնոյ
Եդ յաւանդ 'ի ծոց հողոյն, միւսն արմ և տակ ընդ ունջ վարէ,
Քառասայր ձեղքեալ հեծան և սըլաքեալ ցից հաստաբուն։
'Ի ծառոց կէսք կըքելոյ բարունակացն աղեղնաձև
Եւ կենդանւոյն 'ի բնիկ երկրին ակն ունին տունկ տաշտաւթաղ.
Այլք արմատոյ են անկարօտ, և ոչ յօտեալ ոք երկմըտէ
Ըզգլխակաւն ամբարձուղէշ մատուցանել անդրէն 'ի հող.
Եւ յստուարանոց կոճղեալ կոճեղս արմատաքըն ձիթենւոյ,
Զարմանք նորատեսանչ, 'ի չոր փայտէն ասեն շարժել։
Տեսանեմք և յայլ ըստէպ զայլոյ շըրջեալ ձիւղս անվըթար.
Զի տանձի փոխաբերեալ՝ խընձոր անտուն բերէ պատուաստ,

16. Ըռձի ծառ կաղնաբեր՝ Արամազդայ ասի, զի առաւել էր 'ի գոգոմելեան անտառին նմա նուիրելոյ. որպէս և կաղնիք նոյն անտառին, որ անուանի պատգամատեղին էր Հելլենացւոց։

17. Ձայլոց արմատան անկելով 'ի գետին՝ ելեալ ծառանան, զոր օրինակ կընձնիք, կեռասենիք և գափնիք, որ պառնասեան ասին, զի բազում էին 'ի Պառնասոս լերին Փովկիս գաւառի Աքայիոյ, կամ զի նուիրական էր Ապողոնի՝ որում սրբեալ էր և լեառն ինքնին Պառնասոս։

20. Այդ զոքիկ են բնական օրինակք աճման տնկոց. բայց են և այլք զորս պէտքն արուեստիւ հանձարեցին։ Զի ոմն անդ կամ շառաւիղս հատեալ արմատովքն տընկէ, և այլ ոք զձող բնոյն ձեղքեալ կամ սրեալ յերկիր հարկանէ արմատովքն։

26. Այլք տաշտաւթաղ լինելոյ կարօտին՝ շըջել զձիւղսն և կենդանւոյն առանց հատանելոյ թաղել անդրէն 'ի հողի խորում յարում և մայրն է։ Եւ այս առաւել որթոյ յատուկ է։

28. Այլք չկարօտին բնաւ արմատոց. զի հատեալ զծառոյս կամ զգլխաւորս ծառոյն՝ տնկեն 'ի հող և արմատանայ։ Նա ուռենի և կոճղն իսկ ձիթենւոյ քշտեալ յոստոց և յարմատոց և ծայրակատար եղեալ, և տնկեալ այնպէս, արձակէ արմատս 'ի չոր կարծեալ՝ այսինքն 'ի հատեալ տնկեալ փայտէ անտի։

32. Իսկ պատուաստելով, որպէս տանձին խնձոր բերէ, և զաւկաքոս կամ հոյն կոտղձուն և քարուսս վասն կարծր գիրգերն ունելոյ և յառաջագոյն ասէ բուսանելոյ՝ ազնուականացեալ բերէ տալար.

Եւ զամլարս ապառաժուտ 'ի կարմրորակ շիկնի շըլոր ։
Որք եկայք զազգի ազգի անձնիւր ղարիմնս, ով երկրագործք,
Ասարուք և զգաժան քերս ամբեցէք յանձանձելով.
Մ՚ի դերև կացցեն գետինք, անկ է յԻսման արկանել ուռ
Եւ ըղմեծըն Տաբուռնոս ձիթաստանեօք պըճնազարդել ։
Հաս և դու՝ զղզգ ընթացիր 'ի միջամուխ յայս ասպարէզ,
Մ՛վ պարծանք, ով հանճարոյս մեր բաժին մեծ արժանափառ,
Մեկենաս, և թռուցեալ առք զառագաստդ 'ի ծով անդորր ։
Ինձ 'ի տաղս իմ ոչ է կամ բովանդակել զամենայն, ոչ,
Թէ՛ և դոյր յիս հարիւր բերան՝ լեզու հարիւր ձայն երկաթի.
Հասիր մն և մօտ քերեաց՝ երկիր առ ձեռն՝ առ ծովափանցք.
Ոչ ես ըզքեզ առասանօր երգապաճոյճ առասպելեօք
Ոչ 'ի հիւս մանուածապատ յերկար նուագօք կալայց առ դուրս ։
Որ կանգնին կամ ինքնօրէն 'ի քաղցրասիք արև լուսոյ,
Անծընունդ ապաքէն՝ այլայն հըզօր յառնեն ուամեթ,
Զի ախտաբանք տարրին 'ի հողն. այլ և զսոսին թէ պատուաստէ
Կամ 'ի նոր տեղափոխեալ ոք արկանէ քրածոյ խոռոչ,
Մերկանան զհողին վայրագ, և անձանձրոյթ հոգով խնամոյ
Զոր արուեստ և կոչեսցես՝ գայցեն ըղհետ փոյթ ամենհեր ։
Եղնոյն՝ և որ 'ի խոր ստեղնին արմանց ամուլ և ստերջ
Ընիցեն, եթէ՛նդ արձակ անդոց երեա ջոկին 'ի կարգ.
Որդ մօրն ելեալ ջով առեալ՝ թանձրախիտ սաղք ածեն ծըմակ,

37. Իսմար լեառն էր այգեւէտ 'ի ծովեզերս Թրակիոյ. Տաբուռնոս կամ Տաբուռնոս՝ լեառն Կամպանիոյ 'ի սահմանս սամնիացւոց՝ ձիթենեօք նշանաւոր ։ Կամի ասել հասարակաբար զոր և է լեառն, և զայլ ամենայն վայրս ըստ իւրաքանչիւր յարմարութեան մշակել, և մի թնու տեղի ինչ դատարկ թողուլ ։

39. Ցեռ յորդորելոյ զմշակն 'ի գործ ժրութեան՝ հրաւէր կարդայ այժմ առաւանօք առ Մեկենաս ընդ իւր հասանել անցանել զայս եւ ասպարէզ, զայս ծով անդորր ։ Բայց ոչ 'ի խորս միսիմ, ասէ, և ոչ զբովանդակն առեմ. այլ զգլխաւոր մասունսն միայն, և զայն 'ի հարևանցի եւեթ, որչափ քերթուածեան 'ի դէպ. այս է ասելն մօտ քերել առ ծովափանցք՝ պահեցին հուպ առ ձեռն ունելով ։ Նա և ոչ առասպելօք և ոչ յերկար կանխաբանութեամբք յամեցուցից զքեզ առասանօր առ դուրս կալեալ. այլ անհա ասաէն և ասա միսիմ 'ի Ճառս ։

49. Ընդաևկից կան 'ի հողն ախտաբանք, բնական ոյժ և զօրութիւն սեփական և կարեւոր յաճուցման անկոց, որով ինքնեկքն վայրենիք հզօրեղապէս ջոկացեալ հաստահարուստ կանգնին ։ Եւ թէպէտ անպտուղք իցեն, բայց պատուաստելով 'ի նոսա զլաւսն կամ յայլ դուրս փոխադրելով եւեթ՝ զվայրենութիւնն մերկանան. և յոր աչէտս և մշակեսցես, հպատակեն և յաջողեսցիս ։

53. Նոյնպէս բնատնեան 'ի վայրենութենէն և շառաւիղք բուսեալք զարմատովք ծառոց, եթէ 'ի դաշտ արձակ և յարև փոխեսցին. զի անդ ընդ ստուերաւ մօրն 'ի ծմակի ոչ բարգաւաճեն, և անպտուղ մնան ։

Եւ 'ի զարգուն հասակին զունդն անձրեւեալ եւ զինք խամրեն։
Իսկ այն՝ որ 'ի սերմանց արկանելոյ համբառնայ ծառ,
Յամով գայ յերեկածին որդիս որդւոց տալ հովանի,
Եւ բերոցըն մոռացեալ զառաջին հիւթոցն խորթանան,
Եւ բերէ որթատունկ մրգուզ ողկոյզս հաւուց ապուռ։
Ահաւասիկ ամենեքին պահանջեն քիրտըն երկասէրս
Ընտաւք յակօս դաս խընդրեն եւ նըւաճուրդ յոգնավաստակ։
Այլ արմանց են ձիթենիք քաջադէպ, որթ 'ի տաշտաթաղ,
Մըրտենիք պափոսեան 'ի ստուարաքուն ձեշտեալ կըտրօն.
Կարծրատորը արքայկաղնիք սերին ստեղամբք եւ հացին մեծ
Եւ հերակլեան պըսակին հովանաւոր ծառ վարսագեղ,
Եւ կաղնիք՝ քաւոնեան հօր ուարմաւենի բարձրահասակ.
Ծընանի եւ եղեւին ճակատագրեալ ծովուց 'ի վտանգս։
Իսկ 'ի խոշոր մաթղենի պատկեն կեայ տոհմ ընդուզաքեր,
Եւ սօսոյք անզաւակք բարձեալ բերին առոյգ խընձորս,
Կասկենիք՝ փիճիս, ազատ հացին տանձւոյ սպիտակ ծաղկամբ

57. Կամ ըստ դիպաց անկեալ սերմն, կամ մշակի սերմանեալ, երկոքին եւս յամր աճեն. եւ պտղոցն փոխեալ յառաջին ընտանի բնութենէն, օրինակ իմն՝ որթն բերէ զածած եւ ծմրեալ խաղողս, ոչ յայլ ինչ պիտանացու՝ քան թէ յաւար լինել թռչնոց։ Վասն որոյ զամենեսին խնամով մշակելի է. յայլ գուբս գասելի, եւ բազում քրտամբ 'ի վայրենութենէն նուաճելի։

63. Զխուրաքանչիւր ծառոյ զօձ սերնդեանն ասէ ըստ նախ կարգելոյն։ Ձիթենիք յարմանց կամ 'ի կոճեղէ եւ 'ի մեծամեծ ոստոց յառաջ գան՝ տնկելով յերկիր. որթք տաշտաթաղիւ. մուրտն պափոսեան, այսինքն նուիրեալ Աստղկան (տ. 31) որ 'ի Պափոս կիպրացւոց աւագամեծար պատուեալ, 'ի ստուար բնոյ կամ յոստոյ ձողաձեւ մխելոյ յերկիր։ Իսկ շառաւիղք աճեն արքայկաղնին, հացին, կաղամախին՝ Հերակլի նուիրեալ եւ նմին պսակ եղեալ, կաղնի՝ քաւոնեան կամ դոդոնեան Արամազդայ նուիրական, արմաւենին, եղեւնափայտն կարգեալ 'ի լինել նաւ եւ վտանգել 'ի ծովս։

65. Արքայկաղնի իմա զայն ազգ կաղնւոյ, որ ոչ բաղուտս՝ վայրի կաղինս տայ, այլ կաղին բարի 'ի կերակուր իբրեւ արքայավայել։ Զայս երաշխաւորեացէ ԻԴ առակն Մխիթարայ Գօշի։

69. Եւ ամանք պատուաստ են ընդաւնակք. մաթղենին՝ ընդուզոյ, սօսին՝ խընձորոյ, կասկենին՝ փիճւոյ, ազատ հացին՝ որ եւ քարհացի ասի առ երկրագործս մեր, այսինքն՝ վայրի հացին՝ տանձի, եւ նշգարին կամ կնձնին՝ վայրի կաղնոյ, որ է բաղուտ ճարակ խոզից։ Զմաթղենին, այն ինքն է թուփն որ բերէ մաթուզ [illegible], ընդուզաքեր եղեալ ասէ հասարակ անուամբ՝ որ նշանակէ ընդոյզ, կաղին, նուշ եւ խոզակ շոճւոյ կամ թեղօշի, են։

71. Խորհեցեալ ոմանց 'ի մեկնչաց, թէ անտեղի է զանարգ ծառն փիճի պատուաստել 'ի կասկենին՝ զի կասկենին փիճի բերիցէ, զհայցականն բնագրին fagos հակառակ ամենայն գրչագրաց փոխեցին յուղղականն fagus, որով իմացի փիճին կասկենւոյ սպիտակ ծաղկամբն ձիւնացաւ, որպէս քարհացին տանձւոյ։ Թէպէտ եւ յայս միտս իսկ կարեմ չկայր ինչ հարկ փոխել զհայցական ընթերցուածն ամենայն գրչագրաց, այլ մարթ էր թողուլ իբրեւ os յանգիւ ուղղական, որպէս սովոր է ուրեք ուրեք առնել հռովմէականն լեզու՝ մանաւանդ 'ի հելլենական ձայնս, յորոց մի է եւ φηγός եւ ըստ դորացւոց φαγός, եւ Վիրգիլ ինքնին վարի այլ եւս ուրեք 'ի քերթուածի աստ նոյնաձեւ յանգիւ. բայց սակայն եւ զայն

Զինեցաւ, և խաղերամ ընդ նըշդարեօք երեկ բալլուտ։
 Այլ ոչ մի ակն արկանել է և պատուաստ 'ի ծառատունկ.
Օ՛ի ուստի զպարսակ մրգաման հերձեալ պըտակաց 'ի դուրս ցըցուեալ
Որձակին 'ի կեղևոյն՝ անդ 'ի ծընկին խիճն ամանի նեղ,
Ընդ յոտարածին ծառոյն ընձիւղ յեռեալ 'ի ներքս
Այլ 'ի տամուկ թաղանթին ուռուցանեն բարգաւաճել.
Կամ դարձեալ ողորկ մայրանք ձեղքին ու 'ի սիրտ խոր ճանապարհ
Սեպիւք պատառեալ՝ մորձ երիթ ուռ բերրի փայտի։
Այլ ոչ հարուստ ինչ ժամանակ՝ և ահա ծառ քաջարան
Կանգնեցաւ մինչև յերկինս ուստ ոստարձեալ զուարճալից,
Այլ զարմանայ սաղարթս 'ի նոր և ընդ ոչ իւր երախայրիս։

 Խող զայդ, այլ և հըզօր ձըշդարք ոչ ազգ են համասեր,
Ոչ ուռի և ոչ ներգիւն՝ ոչ իսկ նոճեարն իդայազարմ,
Այլ ոչ պարարտ ձիթենիք նոյնադիմի գան 'ի ծընունդ՝
Որորշին՝ բարաբենին և դառնահամ ճընշեալն 'ի ձէթ,

եւ պարտ էր զմսաւ ածել, թէ ծառքիկք շաղամանակի չեն սովորակ իբրև զատանձոյ, այլ զեղնաշորթ, որով ոչ յոյժ 'ի դէպ 'ի մի լծորդէին ընդ միմեանս։ Թող զայդ, և բառ չափոյ ոտիցն հարկ լինի զոսող վանկն ուղղականին ՈՅ կամ ՕՅ ապառողէն բանադատութեանք ձգանեալ երկարել հատածին։ Այլա լաւագոյն էր պահել զհարազատ ընթերցուածն հայցական, և ոչինչ անպատեհ համարել զփիճոյն պատուաստ 'ի կասկենին, 'ի Պլինեայ ուսեալ՝ զի համեմատեցից ոչ առ առնել պատուականս ինչ ունէին զշաղամանակ քան զպտուղ փիճւոյ, որով կերակրէին իսկ առաջին մարդիկն։ Զի ահա Վիրգիլոս զարմացեալ կայ, թէ առ ինչ բնութիւնն այնքան խնամով փշաղէն պատարաստեալ է զդուզնաքեայ միրգն շաղամանակ։ Եւ այլուր դարձեալ զնոզոսի փիճւոյն քաջդրաճաշակս ասէ, և զքնացին այնու կերակրեալ երբեմն 'ի բազմաժամանակեայ պաշարման։ Յարգոյ էր և փայտ նորա 'ի ստրատ պաշտաման հոռոմոց, մինչ զի և զդրհանոցս անդամ զեղց 'ի նմանէ կազմէին, և զպտուղ նորա առնուին 'ի պէտս գեղոց բժշկականութեան։

73. Օրինակ պատուաստելոյ ոչ նոյն և մի է, այլ զանազան, յորոց զերկուս եւեթ յիշատակէ. մի՝ ակն կամ պտուկ և բողբոջ արկանել, և միւս՝ բուն յատուկ պատուաստ։

74. Ակն արկանել է, յորժամ զմիջն անգուոյ բողբոջացն բացեալ, ծակ կամ խոց գործի անդ. և հանեալ անտի զպըտուկն կեղևովն հանդերձ, 'ի տեղի նորա արկանի 'ի ներքս ակն կամ պտուկ այլ՝ խառնել և միանալ ընդ բնիկ կեղևոյն։

78. Իսկ յատուկ պատուաստն լինի ձեղքելով զարմն ողորկ՝ ուր չգուցէ ինչ ծունր կամ ծնկակապ վարսակ. և 'ի ներքս վարելով 'ի սիրտ ծառոյն մի կամ յոլով մորձս կամ շառաւիղս։

81. Ասոս զուարճալիցս ասէ վասն նորոյ քաջաբերութեանն։

84. Ներգևին միրթ ասեալ է իբր խոտ վայրի անխորժելի անաանոց, միրթ իբրև ճախնայքին՝ յարգէ անտի որ հարանմանս կամ կոկոռն կոչին։ Իսկ լոտոսն ազգ ծառոյ է և քաղցրապտուղ, 'ի պէտս հացի և գինւոյ ասեալ առ ափրիկացիս, յորմէ և ներգևինակերքն կամ լոտոսակերք կոչեցան առ հոմերոսի։ Իդա լեառն կրկին է. մի 'ի Փռիւգիա, և միւս 'ի Կրետէ կղզւոջն՝ ուր ինքնեկք են նոճիք, որոց և բնիկ գաւառ ասէ զնա Վիրգիլոս։

86. Յանհամար տեսակաց ձիթենւոյ երիս եւեթ թուէ զբոլորակն, և զերկայնաձևս 'ի նմանութիւն բարարոյ կամ կկոցի՝

Այլ միայն սաբայեցւոց են ձաղկ ոստոց խընկաբերից։
Զի՞ քեզ յիմ վէպ՝ անուշահոտ փայտին ծաւալք քըրտնածորան,
Բալասամք, և անթառշամ մըշտափըթիթ ականթի հատք.
Զի՞ մայրիքն եթովպացւոց քընքուշ ասու սպիտակափառք,
Այլ զիարդ մանրիկ գեղմանս ՚ի սաղարթուց գըզիցեն Սերք.
Կամ անտառք հընդկաստանեայց ծովուն մերձ հուպ առընթեր,
Խորշ յափին տիեզերաց՝ ուր նետ և ոչ մի զօրացաւ
Անցանել յաղթական զվերին օդովք ծայրից ծառոց.
Այլ սակայն արք աղեղանց յառնուլն ՚ի գործ են կապարճից։
Բերեն Մարք ծանըր ճաշակս և օշարակըս տըտպահամ
Զերջանկաւէտ նարընջին՝ քան զոր ոչ ինչ ազդողագոյն,
Թէ երբէք դըժնեայ մօրու դեղեաց բաժակ ՚ի ժահ պըղտոր

բայեցւոց տես ա. 60. և զի խունկն հոյզ է ծառոց կամ թփոց, և այն յայտ իսկ է։

119. Աղրասամ կամ ապրասամ իմա ըզթուփն գեղեցիկ և անուշահոտ որթանման, բնիկ առաւել ՚ի հրէաստան աշխարհին, կամ զբղխեալն անտի զապրասագ. և զաւետոին՝ որ այն ինքն է բալասան, զի առ երկուսին իսկ հայի բնագիրն։ Իսկ ականթն, է որ բանջար վայրի է, երկայն և լայն՝ թանձր և ճապուկ՝ փափուկ և գեղեցիկ տերևովք և սպիտակածաղիկ, ՚ի պաճոյճս և ՚ի սեթևեթս պաշտաճել սէապէս յօրինուածոց և նկարուց ասղնէգործաց և քանդակաց. և է որ ծառ ճնաշխարհիկ մշտադալար, և թուի լինել ակակիա եգիպտական, որոյ են ծաղիկք վայելուչք, սպիտակք, և պարկուճք կամ պատեանք և ՚ի նոսա հատք սերմանց, և ՚ի նմանէ ծորէ ամձիկ կաւէզն ասացեալ խիժ։ Թէպէտ փշոտ է ՚ի վերին ծայրսն, բայց որում և յունականն անուանքդ ՚ի փշոյ առեալք են, սակայն չէ պարտ խառն ՚ի խուռն առնուլ զսա, եւ առաւել զգեղեցիկ բանջարն ընդ անարգ փշոյն ականի՝ որ և ոզոզ, որոյ ոչ այլ ինչ հաւաստութիւն է ընդ սմա բաց ՚ի պատահական գոյզն նմանութենէ ձայնին։

120. Զբամբակենւոյ և զբամբակէն ասէ, որ էր նիւթ բեհեզոյ։

121. Հասարակաց կարծիք էին մինչև յաւուրս Յուստինիանոսի կայսեր, թէ Սերք՝ ժողովուրդ հնդկաստանեայց մերձաւորք Չենաց՝ ՚ի ծառոց ժողովիցեն իբրև բերս նոցին զկերպասն գործեալ ՚ի շերամ զեռնոյ, որ յազգէ իսկ անտի ունել թուի ՚ի մեզ զանուն իւր։ Այլա առ նովին կայսերբ ասին շերամք ածեալք ՚ի Կոստանդինոպաւն քաղաքն։ Բայց Արիստոտէլ և Պլինիոս յիշատակեն զոստայնանկութիւն կերպասուց գիւտ լինել կնոջ միոյ Պամփիլեայ ՚ի Կով կղզւոջ եգէական ծովուն. յորմէ և առ քերթողսն գովելին հանդերձք կովայիք։

122. ՚ի ծովեզերեայս և ՚ի ծոցն Գանգէս գետոյ ակնարկէ առ արևելեան ովկիանոսիւ, որ հռովմայեցւոց վերջին ծագ երկրի համարեալ էին, և ՚ի նոսա ծառք երկնաբերձք՝ զորովք անհնար էր նետ անցուցանել։

126. Բնագիրն խնձոր մեդացի ասէ, որ և պարսիկ և ասորի խնձոր առի, որով հասարակաց անուամբ սովոր է լատին լեզուն յորջորջել զամենայն բոլորշի պտուղս ծառոց։ Չիք երկբայութիւն թէ ՚ի կիտրոնաբեր ծառ ինչ ակնարկէ Վիրգիլիոս. այլ թէ յոր ազգ, այն յերկբայս մնայ։ Հաւանելի թուի նարինջ լինել կամ թուրինջ. զորոյ և զհիւթն տտիպս և գխտորահամս ասել իմանի թթու և փոթոթահամ կամ դառնորակ։ Երջանիկ եւս ասէ, որ թէպէտ սովորաբար զբաջաբերութիւն ծառոց յայտ առնէ, այլ աստանօր զառողջաբարութիւն. զի և գեղթափ համարեալ էր առ հինսն, զոր քերթողաբար պաճուճէ Վիրգիլիոս՝ ջատուկ մօրուի գործ առնելով զգեղատուութիւն, զոր և յաճախ սովոր իսկ էին առնել մօրուք։ Զ129 տողն եկամուտ համարին ոմանք ասա՝ յերրորդ գրոցն 286. սակայն ունին ամենայն գրչագիրք։

Կապանեալ տագոս 'ի բուսոյ և ժամանակորդ յուռթից մրրանօքս,
Հասանել զալ զօրաւլիգ և զդժուարաթոյնս յանձնէ թափել։
Նոյնքն ծառ մեծ անտառին՝ կերպարանօք սաղարթենաւոր,
Եւ թէ ոչ շուրջանակի սփռէր բուրումն այլանման,
Դոյր սաղրդի, ոչ ծաղկնկէց և ոչ հողմանցն տերեւաթափ։
Նովին Մարք զոգի և շունչ և զպառաւահասու խղճեն բերանս,
Եւ հեւհեւեալ ծերոց բոյժ դարմանեն յօրինեն։
Սակայն ոչ Մարաց աշխարհ պտղաբերակալեր արգասաւոր,
Ոչ Գանգէս գեղեցիկ կամ թէ Հերմոս ոսկեթաւալ
Ոգեացն եղեւ ընդդարձանօք Իտալիոյ,
Ոչ Հնդիկք, Բակտրիացիք և կամ բոլոր Պանքայիա
Զարտորայս կնդրկաբերս առ հաւասարակ պարարտացեալ։
Զայս երկիր՝ ոչ ցլուարակք հրաշունչք 'ի քիթս հատին ակօս,
Եւ ոչ ժանիս դաժանի վիշապաց օձին սերմանեալ
Որոխեցին սաղաւարտաւոր նիզակախումբ արանց հասակք.
Այլ առնեցուն զեղան բերք ուխք մասիկեան Սաղանդարամետին,
Եւ կայտառ դաշտաք անդուոց և ձիթաստանք ծածկեն ըզսա։
Աստի ռազմիկ ձին գեղապատ 'ի դաշտ դիմէ բարձրաւլիզ,
Աստի հօտքըն լուսակիզն և զլուարակ պատարագ մեծ
Լուացեալք ըստէպ, Կլիտումնէ, 'ի քո վտակըս սրբաբանուէր

136. Արեաց աշխարհ ըստ մեզ խոս զնոյն իմացն զՄարաց կամ զՄարապարսցւոցն։ Գանգէս գետ ոսկեբեր է Հնդկաց, Հերմոս Լիւդիոյ՝ յոր բերեալ խառնէ Պակտող զոսկեխառն աւազ իւր։

139. Բակտրիացիք ազգ էին սահմանակից Պարթևաց և Հնդկաց, առ որս և Ոքսոս գետ ոսկեբեր առնի լեալ, և երկիրն հնդկերին բարերայս։ Խորենացին նոյնացուցանէ զԲակտրիացիս ընդ Մեդաց, և մեդացիք նոյն համարին ընդ Մարս։ Պանքայիա կամ Պանքէա է Արաբիա կամ Սաբա գաւառ երջանիկին Արաբիոյ, յորում բուսանի թուրին խնկաբեր։

141. Ընդ հենդն իմն ակնարկէ 'ի կոլքիսական կամ եգերական առասպելն, որ ցուլս իմն բոցաշունչս ասէ լծեալ 'ի Կողքիս կամ յՆգիր, և Յասոնի նուաճեալ զնոսա, և վարեալ զերկիրն, և ցանեալ զատամունս վիշապին՝ որ պահէր զգեղմն ոսկի կամ զոսկեգեղմն գեղմն, բուսանն եղեն 'ի նոցանէ նոյնչափ զօրականք։ Փզլր մի յառաջ քան զեգերական առասպելս՝ և Կադմեայ ցանեալ առի 'ի Բէովտիա զժանիս վիշապի միոյ յետ սպանանելոյ, և նոյնպէս սաղաւարտիւոց բուսեալ։ Կամի ասել, Իտալիա ոչ յառասպելս ճոխանայ, այլ 'ի ստոյգ բարիս, 'ի ցորեան, 'ի գինի, 'ի ձիթենիս, 'ի հօտս և յանդեայս։

144. Մասիկոս լեառն Կամպանիոյ այգեւէտ և գինեւէտ. վասն որոյ մասիկեան ուղխք Սաղանդարամետին՝ են մասիկեան գինեաց առատութիւն։

148. Կլիտումնոս գետ Իտալիոյ յՈւմբրիա գաւառին։ Ոչ գետոյն զօրհս կապիտոլեանն Արամազդայ 'ի յաղթանակս՝ մինչև լուացեալ զնոսա 'ի գետ անդր, և տատուածեալն իմն զօրութիւն 'ի ջուրսն համարէին՝ սպիտակ առնել զնոսա։ Եւ զօհն էր ցուլ, որ առաջի յաղթական կառացն ընթանալով ածել առ պյաղթանակացն 'ի տաճար։

Յաստուածոց ածէին տաճարս ըստ յաղթանակս հռովմէական։
Ուր զարուն յաւէժական և յօտարին ամիսս առեալ,
Հօտք երկիցս սաղմնաւորին, երկիցս ծառք պտղաբերք.
Իսկ մոլեգին վագերք քաւ և ամեհի ձագք առիւծուց,
Եւ ոչ խոտաքաղիկք խաբեն երբէք ըղհէք կթողս.
Ոչ անհուն քնթոռնոցս ընդ տող յերկիր յափրշաւէ
Ոչ յայնքան պարոյր առնու զիւրև որպէս օձ թեփափանօթ։
Յաւել զայնչափ հոյակապ քաղաքս և զերկրս վաստակոց,
Ուղղըղեակըս դաստակերտ կարկառակոյտ 'ի սեպ վիմաց,
Եւ որ քերեալ առ վաղեմի պարըսպօք գետք անցանեն։
Ուզծովն որ 'ի վերոյ և որ ներքուստ ողողանէ,
Եթէ զի՞նչ յիշեմ բազում, ըզքեզ ըղմեծըդ Լարիոս
Եւ ըզքեզ ծովակուտակ ալեօք գոչմամբ յոխորտ Բենակ.
Ո՞է զլաստից ղաղարս յիշեմ, ըզԼուկրինեայ եղեալ փակման
Եւ ըզծովըն խռժոռեալ մըռընչելով ցասմամբ մեծաւ,
Ուր յուլեան ծըփանք հընչեն 'ի յանդըմանոց յետս ընկըրկեալ,
Եւ յորձանք տիւռենականք ընդ աւեռնեան խաղան ներքուց։
Զարծաթոյ սա երակս ատուս և պղընձոյ բովս քրացից
Յերակունսըն ցուցանէ և յորդառատ ոսկւով զեղու։
Սա զարի արանց զըրոհ՝ զՄարսիկս եհան, զարքաման սաբելեան,

150. Յօտարին ամիսս, այս է յամիսս ձմերայնոյն։

159. Վերին ծով ադրիականն է՝ որ 'ի հիւսիսոյ կայ Իտալիոյ. ներքին՝ տիւռենականն որ 'ի հարաւոյ. երկոքին 'ի սուր և սաս մարդկան պատեհաւորք։

160. Յամենայնի չափաւորն Վերգիլիոս զերկուս եթ յիշատակէ 'ի ծովակացն Իտալիոյ. զԼարիոս՝ ընդ Ալպեօք 'ի միջավայրին Մեդիոլանու, զոր և մեծ ասէ վասն երկայնութեանն. Բ. զԲենակ 'ի սահմանին Վերոնայ, որ վասն լայնութեանն իբրև զծով հողմակոծի։

162. Լուկրինոս ասացեալ գոգն՝ որ 'ի պուտէոլեան մեծի ծոցին Կամպանիոյ, վաղուց նաւահանգիստ էր բայեան կոչեցեալ, և ամբարտակաւ մեծաւ պաշտպանեալ ընդդէմ տիւռենական ծովուն։ Կից նմին կայր 'ի ցամաքի աւեռնեան լիճն նուրբ առուիւ բերանացեալ 'ի նաւահանգիստ անդր։ Առ Հոկտաւիանոսիւ Օգոստեաւ խարխարեալ ամբարտակին, նորոգեալ ամրացոյց զայն կայսր՝ Ագրիպպայ խորհրդով, և զաւեռնեան լիճն խորացուցեալ և լայնեալ զբերանն նորա՝ խառնեաց միմեանց ընդ Լուկրինեայ, և նոր իմն անդորր և անքոյթ գաղտնի կազմեաց նաւաց իւրոց, որ և յուլեան նաւահանգիստ անուանեցաւ այնուհետև (տ. 515)։ Յայս ամենին գիտաւորութիւն ասացեալքդ. փականք են ամբարտակին և թումբ ընդդէմ ծովուն, ընդ որ իբր գժգմի և զայրանայ, և տարեալ յետս ընկրկիլ անտի՝ ուր յուլեան ամփոփեալ ալիքն ծփին, և ընդ այնս տիւռենականքն խորտակեալք՝ մեղմով գնան մտանեն մինչև յաւեռնեան երբեմն լիճն։

168. Այժմ զայդս Իտալիոյ և զմեծամեծ որդւոցն հռովմայեցի յիշատակէ։ Մարսիկք, սաբելեանք կամ սաբինեցիք, լիգուրացիք և վոլսկեանք՝ ազգք են զօրաւորք. իսկ դեկեանք՝ առհմ մի, Մարսիկաց երկու և կրկին Սեմնիտոնք՝ ազգք ասազք հռովմայեցիք։ Կամիլլոս մի եւեթ է 'ի պատմութեան անուանի, Թեկեկս և բնագիրն ասա բազմապատիկ ունի զանունն. Թեր-

Ըզ Լիգուրըն վըշտամաշեր և ըզՎոլսկեայս մըկընդաւոր .
Նա զԴեկիոսս և զՄարիոսս այլ և զմեծըն Կամիլլոս ,
Զանվեհերըն Սկիպիոնեանս և զքեզ , վեհազըն Կեսար ,
Որ զարդիս յաւիտենական ծաղկից պըսակս յաղթանակեալ
Զապազէն վանես զՀընդիկ 'ի Հռովմէական բերդաբերդից ։
Պըտղաբերաց ծընողըդ մեծ՝ մեծ և արանց , ողջոյն ընդ քեզ ,
Կռոնեան երկիր , քեզ 'ի հանդէս հին գովութեանց և արուեստի
Մըխիմ համարձակեալ ըզսըրբութեան բանալ զաղբերըն ,
Եւ զասկրէին պաշտեմ երգս ընդ շինանիստ Հռովմէական ։

Ժամ է արդ ախորժական արտոց , ասելք թէ զինչ անձնիւր ,
Որ երանգ և որ 'ի բնոյս իւրաքանչիւր են ախտաւորք ։

ևս 'ի պատիւ միոյն՝ զազգատոհմն բովանդակ պատուեալ , կամ որպէս սովորութիւն է երբեմն զբազմաւորականն փոխանակ եզականի առնուլ . զի և յԸնծայականին Գ. 842 , միաբար վարէ զԿամիլլոս . վասն որոյ և աստ միաբար եդաք մեք 'ի թարգմանութեանս ։

171. Կեսար աստ է Հոկտաւիանոս Օգոստոս կայսր ։ Իսկ թէ զոր յաղթութեանն նորա ասիցէ , չէ յայտ ։ Են որ կարծեն զթեթև յաղթութիւնս ինչ նորա նշանակել 'ի վերայ Կլէոպատրայ և եգիպտացւոց , որ յառաջ քան զակտիական պատերազմն ։ Եւ են որ զնոյն ինքն զակտիականն կամ որ յետ այնորիկ ալեքսանդրեան պատերազմն , յորս և Հնդիկք կային ընդ Անտոնիոսի ։ Կամ զի յԵգիպտոսէ ընդ Ասորիս յԱսիա անցեալ կայսեր , և ձմերեալ առ Եփրատաւ , յորժամ զիրս ասիացւոց Հնդիկս խռովեալ ըստ հնոյն ոճոյ զամենայն բնակիչս ատապատարբ աշխարհացն արևելից զթխամորթս , և քերթողաբար անձնցուցեալ զգոյզն իրսն ։ Եւ զի ակնածան կալեալ և որ յետ այնորիկ անցք կրկնակ համարին ժամանակաւ քան զգրութիւն այսր գրոց , յետոյ ուրեմն 'ի Վիրգիլեայ յաւելեալ թուին տանց տողք ։ Բայց ոչ ճշգիւ գտանաւ յայտնի ինչ են հաշիւք ժամանակացդ ։ Տես և Գ. 26 ։

173. Կռոնեան կամ սատուռնեան երկիր է Իտալիա , ուր Կռոնոսն՝ որ և Զրուանն և Սատուռնոս՝ հալածեալ յերկնից և փախուցեալ եկն ապաւինեցաւ . և առ իւրև ժամանակք՝ ոսկեղէն համարեցան դարք ։ Վասն զի , 'ի քո փառս , ասէ , միտիմ 'ի գործ գովելի առ նախնեան և 'ի վար արկեալ 'ի նոզանէ , առաջին գիւնելով 'ի մէջ հռովմայեցւոց 'ի բանալ զսուրբ աղբիւրսն այսր քերթողութեան ։ 'Ի Հելլենին լերին աղբիւր Ագանիպպէ կամ Հիպոկրենէ որպէս և կաստաղեանն առ Պառնասեաւ , համարէր բղխել ըմպելեացն զամենայն ծորանս բանաստեղծութեան ։ Աղբիւր այսպիսի 'ի մեզ խաղացուցեալ , ասէ , զասկրացւոյ տաղսն երգեմ , այս ինքն է Հեսիոդեան ըստ հասարակաց մեկնութեան . զի Հեսիոդոս կումացի , անեալ յԱսկրա գեղջ Բեովտիոյ առ Հելիկոնիւ և առ աղբերբքն , վաղնջական քերթող հելլենացի , արարեալ էր նախ քան զինքն քերթուած ինչ մշակական ։ Բայց ոչ եթէ 'ի Հեսիոդեայ առնու Վիրգիլիոս զտաղս իւր , այլ զմեր 'ի վերայ նմանութիւն միայն նիւթոյն իմանալի է , մանաւանդ ըստ այժմու առ մեզ հասեալ գրոցն Հեսիոդեայ՝ որ Գործք և աւուրք կամ Վաստակք և աւուրք մակագրեալ , ուր հազիւ թէ սուղ ինչ պատուէրք մշակութեան երևին խառն ընդ խրատս վարուց . մինչ զի կարծել ոմանց թէ այն քերթուած Հեսիոդեայ ոչ բովանդակ հասեալ իցէ առ մեզ , այլ կրճատ . և կամ թէ այլ ինչ գոյր նորա մշակական քերթուած՝ որ այժմ չէ 'ի միջի ։ Եւ այսր կարծեաց գտանեն նշմարանս ինչ հաւանութեան առ 'ի նախնեացն գրոց ։ Սակոյն մարթի ևս ասկրացի տաղս իմանալ որպէս աւանդեանս կամ կաստաղեանս , այս ինքն պարզաբար քերթողականս . յոր միտս և Պրոպերտիոս ասէ ճանաչել զասկրացի աղբերսն , բնակել յասկրայինն անտառին . (Եղեր. Բ. Ժ, 23. ԺԳ, 4) ։

Այլ խոշոր և առապար գետինք և բլուրք ժանտ և դըժնեայք
Ուր անօսր 'ի խաւան է կաւ և խիճ ընդ անդամացառուատն,
Պաղղասեան խայտան մայրեօք կենդանատուարձ ձիթաստանին.
Նըշանակ քեզ վայրենւոյն բոյս խուռնախիտ 'ի նոյն տեղիս
Եւ վայրի հատըքըն սըփռեալ թանձրատարած 'ի դաշտորայն:
Այլ պարարտ երկիր և քաղցր հիւթով յուռթի և բարգաւաճ
Եւ դաշտ խոտաւէտ առատաբուխ և արգաւանդ,
Զոր դիտեմք յաճախ լերանց 'ի խորաձորս և 'ի ծործորս
Ուր խաղացք ջուրց վըտակաց 'ի բարձրաբերձ ծայրեալ ժայռից
Տարեն զամ սիղ երջանիկ, և որ պարզեալ 'ի հարաւ կոյս
Զատեղին կոր արօրոյ մըռուցանէ զանգղ դըժոխարմատ.
Դա քեզ հըզօր գինեւէտ երբեմն այգեաց մատակարար,
Ողկուզից դա քաղցրաբեր, դա լինիցի քեզ միժակաց
Զոր դից ոսկի նուագօք դաշնաւորանօք հեղումք նուէր
Մինչդեռ յոյր տիւռենացին փըչէ զփըղոսկըր առ բագնաւ,
Եւ զոգեալ սկաւառակօք ըղձերամանջերմ հանեմք ընդերս:
Իսկ անդեոյ լծէ փոյթ յաւէտ է և որթուց զարմանելոյ,
Կամ զօղեաց ըզծընունդս և զփաղաղիչ հերկոց այծիս,
Զանտառս և զլայն Տարենտոնի զհեռաւորանեայս խնդրեսջիր,
Եւ գետին՝ զորպիսի կորոյս Մանտուա թըշուառական,
Ուր ձիւնաթոյր ճարակին կարապք 'ի գետ իւր լոռաւէտ,
Ոչ աղբիւրք սակաւակինք՝ ոչ դալարիք կարձին հօտից.

182. Պաղլաս է Աթենաս աստուածուհին՝ արարիչ ձիթենւոյ, որում և նուիրեալ իսկ էր. տես ա. 14. և երկարօրեայ կենդանութիւն ձիթենւոյ յայտնի է:

190. Սեղ ասելի առ արօրոյ, զի դժնդակ արմատովքն կառուցեալ ընդ խոփն արգելու զընթացս նորին, մանաւանդ որ կազմուածն կոչի 'ի մշակաց:

457. Դիոնիսեան կամ բաքոսական, որ է սպանդարամետական պարգևք որթոյ և գինեաց զինչ բերին իբրև զայսոսիկ արժանագով. Նա մանաւանդ ո՞չ ապաքէն մեղաց պատճառք են կամ ըստ մերոյ քերթողահօրն Հաւ չարեաց (Պիտ. Նեբր. ձիթ.) առ որ և օրինակ մատուցանէ 'ի յուշկապարկացն արբեցելոց, և 'ի Լապիթեայցն՝ ժողովոց թեսաղիոյ, որոց ընդ միմեանս 'ի կռիւ կալեալ 'ի հարսանիս Պիրիթեայ վասն հափափելն կամելոյ յուշկապարկաց զհարսնն Հիպպոդամէ և զայլ կանայս, հարին զմիմեանս. բայց վանեցան յուշկապարիկք, յորոց Վիրգիլիոս ըստ սովորութեանն զգլխաւորսն եթէ յիշատակէ, զՀռիտոս կամ Հռետոս և զՓոլոս, և զՀիւլէոս կամ Հիւլէս՝ զոր և առաջի առնէ իբրու ահագին իմն բաժակաւ յարձակեալ 'ի Լապիթայսն։ Իսկ յուշկապարիկք կամ ձիացուլք և իշացուլք՝ մարդձիախառն առասպելեացն, որպէս յայտ է, զառաջին ձիաւորեալ մարդիկն այսպէս այլաբանելով։

Եւ զՂապիթեայց ահագին խառնարանաւ սպառնողն Հիւլէս։

Ո՜հ երջանիկ մշակաց՝ զիւրեանց նոքա՛ թէ գիտիցեն,
Որոց խնդմնեն երկիր արդար 'ի մարտամբոխ զինուց փարատ
'Ի ծոցոյ հողոյն բղխէ դիւրապատրաստ պարէն կենաց։
Ապարանք բարձրաձեղունք աշխարհամուտ դրամբք հոյակապ
Ոչ հանեն ոչ 'ի գաւթաց զայգորեկեացն ուղխից կոհակս,
'Ի դրանդիս ոչ պակշոտին կամարաշէն պերճ նկարէնս,
Ոչ 'ի պղնձս եփիւրացիս և 'ի հանդերձս ոսկեճամուկս.
Եւ ոչ ասըր լուսանորկ յասորական դեղ շըղարի,
Ոչ ծորածոյ իւղոյն պարզուածք կասեաւ 'ի պէտս ապականին.
Այլ հանդիստ յապահով, կեանք անպատիր ճոխ ընչաւէտ,
Այլ անդորր 'ի գիւղ վիճակս, անձաւք և լիճք ջուրց կենդանի,
Այլ հովիտք հովանաւորք և անդէոց մեղմիկ բառաչիւնք,
Եւ ընդ ծառով հեշտալի քուն հանգըստեան ոչ պակասեն.
Անդ արօտք և անտառք և երէոց որջք և մորիք,
Եւ արբուն ժիր մանկութեան սակաւապէտ և երկասէր,
Աստուածոց պաշտամունք և սրբանուէր հարց ալեոյթք.
Արդարութիւն զվերջին հետս առ նոսին արկ մեկնեալ յերկրէ։
Զիս սակայն անոյշ՝ Մուսայք գեր 'ի վերոյ քան զամենայն,

462 • Երկիր արդար ասէ, զի զհաւատա-ցեալն 'ի նա զաւանդ սերմանեացն առկասեաք հատուցանէ, և զընկալեալն դարձուցանէ։

466 • Կամարաշէն • Լատինն բառն կարէ և նշանակել յօրինեալ նկարակերպ 'ի խե-ցեաց կրայից • մեք զայն ընկալաք որ հա-սարակաց ընդ ամենայն տեղիս և յամենայն ազգս մեծագործն է համարեալ։

467 • Պղինձ եփիւրացի է կորնթեան պղինձ, զի Կորնթոս կոչի և Եփիւրա կամ Եփիւրէ, ուր և պղինձն յարգի էր յոյժ։ Եւ աստ պղնձով իմանին անօթք և սպասք և գործեալք պղնձիք։

468 • Ասորական դեղ է ներկն ծիրա-նւոյ, որ Փիւնիկեցւոցն և Տիւրոս քա-ղաքի Ասորւոց գիւտ ասի լինել։

469 • Կասիա է աստ զարխենի կամ զարիճենիկ թաւփ նման կինամոմոնի • զո-րոյ զկեղևն մանր աղացեալ խառնէին ազ-նուականք յօծանելիս անոյշ իւղոց, զոր ա-պականել ասէ առ պարզ և անպաճոյճ իւղոյն՝ որով սովորին օծանէր։

470 • Կեանք անպատիր որ ոչ երբէք խաբէ յակնկալութիւնս իւր, ոչ վրիպի 'ի յուսոյ բարեաց, զորս և առ ձեռն ունի։

471 • Գիւղ վիճակ են գաւառք ընդար-ձակք և բլուրք հովասունք։

477 • Վաղուց հեռացեալ 'ի քաղաքաց, յարքունեաց և յապարանից մեծամեծաց, սակաւին գեղերէր առ շինականս, և հուսկ յետոյ 'ի նոցանէ մեկնեցաւ ել յեր-կինս • որ է ասել՝ ընդերկար ժամանակս զարդարութիւն պահեցին պարզամիտ շի-նականք քան զքաղաքացիսն։

478 • Մուսայք էին ինն դստերք Արա-մազդայ և Մնեմոսինեայ, կուսանք, աս-տուածուհիք ամենայն հանճարոյ և ճար-տարութեան և գիտութեան և իմաստա-սիրութեան, ընդ որս և քերթութեան։ Կամի ասել, քան զմշակութեան խաղա-ղական և երջանիկ կեանս՝ գիտնականն և իմաստասիրականն միայն է ինձ առաւել սիրելի, այլն ամենայն անարգ և խոտան առ նովաւ։

Որոց կամ պաշտօն տանիմ յանհընարինն 'ի սէր հարեալ,
Ընկալցին նախ և ցուցցեն զերկնից շաւիղս և զաստեղց սպառ,
Ըզպէսպէս զարեգական նուաղութիւն և զլուսնի կիրս.
Ով է ուստի դողումն երկրի, ծովք ըզթումբս իւ փշրեալ ուժով
Ուռնուն կուտակարէզ և յինքն անդրէն իջեալ նստին.
Զի այնպէս ձըմեռնական ձեռքին արեւք թանալ յանդունդս,
Եւ կամ ընդդէմ ինչ արգել զի յամրայքն կայ գիշերաց:
Իսկ թէ յայդ ոչ զօրեցից ժամանել ընութեան սահմանս,
Զի ցուրտ արիւն զառաջաւոր սըրտիս պատեալ անկցի կըրծիմ,
Գեղօրէք, գետք 'ի հովիտս ինձ քաղցրասցին վըտակահոսք,
Ըզխոխոջ ջուրց սիրեցից և ըզմայրիս՝ անփառունակ:
Օ՛հ, ուր դաշտք և ըՍպերք և Տայգետ գեղապարեալ
'Ի կուսից լակոնուհեաց, ո՛ւ 'ի հովտասուն ծործորս Հեմեայ
Ո՛վ տարցի զիս և ստուերք պաշտպանեսցէ մեծ հովանեաւ:
Երանելի ում պատճառաց էից գիտաց գոլ խելամուտ,
Եւ զարհաւիրս ամենայն և զանողոք ճակատագիր
Եւ զանյագ տարտարոսի շառինդ և շըշուկ առ ոտն եհար:
Նա և այնմ իսկ երանելի որ զդաշտայինն ծանեաւ ըզդիս,
ԸզՊան, ըզծեր Շահարիկ և զքոյր հարսունս յաւէրժականս:
Ոչ ըզնա խուրձ ամբոխին, ոչ թագաւորացն ծիրանիք
Եւ զըռուժան հարազատից ընկճեաց երբէք վըրդովիչ խազմ,

484. Ընդէր ձմեռնայինն արեւք փութով մտանեն, և կարճ է տիւն:

485. Ցայս տող՝ մեկնիչք խմբական տուեալ բազմար զպատճառս յամելոյ, յանկն հասանելոյ ամառնային գիշերաց վասն երկարութեան տուընջեանցն: Բայց բանն յերկուս մասս հարկանէ, զի և զերկար գանդաղանաց ձմեռնային գիշերացն մարթի իմանալ, որ երկարութեամբն յամեն լուսանալ: Զի թէպէտ և յամրին կամ գանդաղ բաղդում ուրեք յայսպիսիս զամառային նըշանակէ, այլ ինչ հարկ է միշտ 'ի նոյն միտս առնուլ, որպէս և մեկայլն ընդունակեալ յայլ տեղիս քերթածաց:

487. Զափշութիւն և զտարատամութիւն մտաց 'ի խելամտութիւն իրաց՝ 'ի ցրտութենէ արեան ներգործեալ համարի քերթողն ըստ ոմանց նախնի իմաստասիրաց:

490. Սպերքեիոս կամ Սպերքէ գետ է Թեսաղիոյ 'ի Պինդոս լերանէ իջեալ 'ի դաշտս աշխարհին: Տայգետոս կամ Տայգետ՝ գօտի լերանց յԱրկադիոյ ձգեալ ընդ ամենայն Լակոնիա, յորս օրիորդք լակոնացւոց պարուսոյք կատարէին զտօնս Սպանդարամետին, որոյ և մեհեանն իսկ կայր առ ստորոտ լերանցն:

497. ԶՊան տես տ. 19. զՇահարիկ կամ Շահարունի՝ տ. 22. զյաւերժահարսունս տ. 11:

498. Նուիրակք կամ պայիկք վարոցաւորք և սակրաւորք երթային առ բդեշխիւք հռովմայեցւոց՝ բարձեալ խուրձ մի գաւազանս և 'ի նմա վաղր կամ տապար 'ի նշանակ պատուոյ իշխանութեանն 'ի ժողովրդեանն տուեալ, այլ և 'ի սաստ և 'ի պատուհաս չարագործաց: Վասն որոյ խուրձն առ ըզհռովմէական պետութիւն և իշխանութիւնս նշանակէ, ծիրանին զարքայական փառս և զվեհութիւն այլոց ազգաց:

499. Թուի ակնարկել տագնապս 'ի յայտնի ինչ դէպս իւրոյ ժամանակին, որպէս և յամենայն ժամանակս ոչ պակասեն:

Ոչ Դակեանն հինախաղաց 'ի դաշնաւորն իջեալ Խաղեայ,
Կամ հռովմէական պերճութիւնք ու արքայութիւնք կորըստականք.
Ոչ 'ի գութ հեծեալց մաւրկին կամ մախացաւ ընդ գայաւոր:
Ոչ որ ուղէշք մըտադիւր և զոր բերին անդք Խիքնակամ
Ոչ արդիւնաւորն ժողովեալց, և ոչ օրէնս ինչ երկաթիս,
Ոչ զատեանն աղխատորոյգ կամ զաշխարհին եանես դիւան:
Նայք թիակօք ընկալը յորձանս յուղէն ու'ի զէնըս խիզախեն,
Արպըրդեն 'ի դահճին և 'ի տաճարս արքունականս:
Նա որ սուր ածէ շինից և չուառական եղդուամարդաց՝
Ըմպել ակամբք ու'ի ծուրացի նընջել 'ի քուն ծիրանիս:
Նայլ ոք ընդգանձարն խոցեալ և յոռջատոյգ ոսկին զըրգայ,
Որ յակձիւս 'ի բեւեռ է պէշ, որ 'ի թատեըս բերանաբաց
Ընդ կըրկին ծափս ընմայլեալ՝ ժողովըրդեան ուսուազանւոյն:
Կընդան թաթաւեալք 'ի ճապաղիս արեան եղբարց,
Եւ ընդուռնս և զանուշակ դղանդըս սեմոց փոխեալ յաքսորս՝
Ընդ այլով արեգակամբ ընհայրենին խընդրեն յառակ:
Մըշակն արդիւնարար կոր արօրով վարէ զերկիր.
Նըդուաս ամին արարք, անտի զթոռնեակս և զհայրենիս
Տածէ անտի զջոկ նախրաց և զըլւարակս արժանաւորս:
Եւ ոչ դուլ առնու երբէք՝ մինչև տարին մըրգովք զեղու
Կամ որդւովք խաշանց և կամ 'ի դեմետրեան հասկաց որայս,
Եւ ծանրէ տոհմականօք զակօսս՝ յաղթօղ լեալ համբարաց:

500. Դակեանք կամ Դակէք էին ազգ 'ի մէջ կարպաթեան լերանց և Խատրոս գետոյ, որ այն ինքն է Դանուբ գետ, որոյ 'ի ծով մերձեալ և ընդ Դակիա անցեալ՝ Խատրոս կոչի անդ մանաւանդ: Սոցա բազում անգամ միաբանեալ ընդ շըջակայ բնակիչս գետոյն՝ նեղէին պատերազմաւ զհռովմայեցիս:

503. Ոչ թէ անգթութեամբ չհեծել տէ ընդ տառապանս աղքատին, այլ զի 'ի գեղս և յագարակս մնացեալ՝ յամենայն վշտաց տնանկին և 'ի նախանձուէ մեծատանց ազատացեալ է ազգ նորա և սիրան:

504. Օրէնք երկաթիք վասն խստութեանն և անաչառ սաստկութեանն, որ ոչ ողոքանաց ինչ երեսս առնեն, և ոչ յերկիւղէ իմիքէ սասանին:

505. Զատեան աղմկայոյզ դատաստանաց, զդիւան հարկաց և տրոց, մաքսից, բաժից և կապալաց:

506. Կոյր յորձանք ծովուց վասն անյայտ թաքնութեանն կամ վասն վտանգին:

509. Ակամբք ըմպել է ականակուռ բաժակաւ, կամ որ 'ի միապաղաղ քարէ պատուականէ: Իսկ Ծուր է Տիւրոս, յորմէ ելեալ առ ընտիր ծիրանին. տես 468:

511. Ոմն հրապարակախօս ատենաբանութեան յանկայ, ոմն զգուեստ 'ի թատեր խնդրէ՝ որոյ նշանակ էր ծափ զծափի կայթս հարկանել ռամկին և իշխանացն:

515. Ընդ այլով բաժնիւ երկնի խնդրէ զհայրենիս երկիր իւր. այսինքն կարօտ, տառապի և յանկայ, այլ ոչ գտանէ:

517. Հնագոյն գըշադիր մի ունի՝ անդի զորթանի և զհայրենիս:

520. Դեմետրեան, ցորենոյ և այլոց ուտելի արդեանց արմտեաց:

521. Առաւելեալ և զեղեալ քան զմեծութիւն ամբարանոցացն:

Եկըն ձըմեռն, 'ի մամուլս՝ հատքըն լեռան սիկիոնեանք,
Խոզք դառնան կաղնով բերկրեալ, անտառք մաժԹուզ մատուցանեն,
Եւ աշունն առաջի զազգ ազգ պտղոց հատուցանէ,
Եւ 'ի մարմանդըս բըլըրոց եփին անոյշ բարձր այգեկուԹք ։
Անդ քաղցրիկ մանկըտեակք շուրջ 'ի համբոյր կախին շըրԹանց,
Պարկեշտ և ծըննդասէր պահէ տընակն ըզսըրբուԹիւն ։
ԿաԹնաբուխ տարածեն ըստինս երինջք, և գէր ուլիկք
'Ի գըւարԹ մարգագետնին կամ ոգորեալ խեԹկիչ եղջերըք ։
Նա զտօնուտ խըմբէ զաւուրս և զանձն հեղեալ 'ի դալարիս,
Ուր հըրատ անդ 'ի միջի, լընուն ընկերք տաշտ ԹաԹաղուն,
՚Քեզ, Սպանդարամետ, ձօնեալ նըւէր՝ ըզքեզ կարդայ,
Եւ հովուաց սուր սըլաքաց դընէ հանդէս 'ի նըշդարին,
Եւ զխըրտ անդամն հոլանէ 'ի շինական ըմբըշամարտս ։
Զայս երբեմըն վարեցին կենցաղ նախնի սաբինեցիք,
Զայս Հռեմոս և եղբայրն, այսպէս աճեաց քաջն Ետրուրէ,
Եւ Հռովմ քան զամենայն գեղեցկագոյն էից ցուցեալ՝
ԵօԹնաԹիւ 'ի մի բըլուրս յինքըն պատեաց շուրջ պարըսպաւ ։
Եւ յառաջ քան զգաւազան դիկտէական Թագաւորին,
Մինչ չև ազգ ամպարիշտ 'ի զուարակաց շուայտեալ ըսպանող,
Զայս ոսկեղէնըն Զըրուան անցուցանէր ըզկեանս յերկրի ․

523 · Սիկիոն քաղաք Աքայիոյ էր, որոյ ձէԹն նշանաւոր . սիկիոնեան հատք են հատք ձիԹենւոյ որ ճնշին 'ի մամուլս 'ի մզել զձէԹ ։

527 · Տնակ խմա ասա զմանարար և զեր-գաշէն կինն ։

530 · Նա՝ մշակն յաւուրս պարապոյ խրախունս կատարէ 'ի վայրի դալարուռջ, ուր կայ 'ի միջի անդ սեղան վառեալ առ 'ի զոհ և 'ի պատարագատուուԹիւն կերակրոց, և ըմպէ զեղուն բաժակաւ՝ զոր մատուցա-նեն նմա ընկերքն իւր ամոխաւիք և Թայրա-Թօռք, և նուէր հեղլով 'ի գինւոյ անուն՝ կարդայ զՍպանդարամետ դիս խրախու-Թեան, Ի՛հ, Իհէ ձայն արկեալ ցնծու-Թեան աստուածարբելոց 'ի գեղջ անուն ։

533 · Խաղս նետաձգուԹեան և ըմբշա-մարտուԹեան տայ առնել հովուաց իւ-րոց ։

534 · Այլ օրինակք ընԹեռնուն հովո-ւէն ։

535 · Սաբինացիք նախնի ժողովուրդք Իտալիոյ ։ Հռեմոս և եղբայր նորա Հռո-մուլոս նահապետք ազգին հռովմայեցւոց ։ Ետրուրիա, որ և Տոսկիա, այսպէս բար-գաւաճեցաւ 'ի մեծուԹիւն և 'ի հարըս-տուԹիւն . և նոյն ինքն Հռոմ այսու եղև գերապանծ քան զամենայն քաղաքս և զԹա-գաւորուԹիւն, և պարսպաւ փակեաց 'ի միում յինքեան եօԹն լերինս ։ Եւ արգա-րև իսկ մինչև ցայսօր եօԹնեակ բլրովք պարունակի Հռոմ ։

539 · Դիկտէական Թագաւոր է Արա-մազդ՝ ծնեալ 'ի Դիկտէ կամ Դիկտէոն լե-րին կամ 'ի Դիկտոսս այրի Իդա լերին Կրե-տէ կղզւոյն ։ Ժամանակք որ յառաջ քան զնա՝ դարն է ոսկեղէն, դար Կռոնոսի կամ Զրուանայ, մինչ չև էր տակաւին սովո-րեալ մարդկան 'ի շաղղակերուԹիւն, այլ յարգեանց երկրի կերակրէին, և չև էր լեալ լսելի բարբառ փողոց պատերազմի, և չև կազմեալ զէնք 'ի սուր երկաԹագոր-ծաց ։

Այլ 'ի լուր չեւ էր եկեալ փքացուցանողաց փողոց գոչիւն,
Այլ յանտոտ սալըս դարբնաց կայծակնացայտ շաչել սուսերց ։
Այլ անեզր և անպարագիր հաստաք անցաք մեք ասպարէզ,
Ժամ է արդ զերիվարաց մրրկաշաւնչ վզից լուծանել ։

ՇԽԲ. Ժամ է վախճան տանել գրոյս ։ տաղաչափականն ։ Օրհնութիւնք ինչ անձին ընթեր-
Այլաբանութիւն առեալ 'ի ձիընթացից էրաշէս ինչ լուծանել ։

ՊՈԲԼԻՈՍԻ

ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՎՆԻ

ՄՇԱԿԱԿԱՆՔ

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐՐՈՐԴ ԳՐՈՑ

ԻՍԿԶԲԱՆ անդ գրոցս կարդալով զգիս հովուութեան և զարօտի անասնոց՝ նովին իսկ յայտ առնէ զիւրացն առաջարկութիւն։ Այլ նորութեամբ նիւթոյն խրախուսեալ նոր պարծանս անձին առնուլ 'ի փառս հայրենեաց և բարերարին իւրում Հոկտաւիանոսի Մեգոստեայ, պաշտօն առնէ նմա աստուածավայելուչ հանդիսիւք։ Մեա զՄեկենայն հայցեալ պաշտպանութիւն՝ որ պատճառն եկաց քերթուածոյս, մինչ 'ի ձեռսն զոր առաջի եդ զանասնոցն դարմանս՝ բովանդակեալ 'ի գլուխս հինգ։

Ա. Յաղագս սերնդեան և սննդեան արջառոց և ձիոց. յորում և ձիոց մրցանք, բոլոյ նկարագիր, ցլուց քինացելոց ոգորումն և տափանաց մոլեկնութիւն։

Բ. Յաղագս ոչխարաց և այծեաց. ուր և սկիւթայինն ձմերայնոյն նկարագիր։

Գ. Յաղագս շանց։

Դ. Յաղագս օձից զգուշութեան 'ի փարախսն և արտաքոյ։

Ե. Յաղագս որ լինչ անասնոց ախտք մնաստակարք, որպէս քոս, տենդ, և ժանտախտ տարաժամ խաշնամահու, որոյ ձոխագոյն նկարագրութեամբ աւարտէ զգիրսն։

ՊՈԲԼԻՈՍԻ

ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՆԻ

Մ Շ Ա Կ Ա Կ Ա Ն Ք

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ԶՔԵԶ իսկ մեծըդ Պալէս և զքեզ յԱմփրիս հռչակելըդ
Զհովիւդ երգեսցուք, ըզձեզ անտառք և գետք Լիկեայ։
Որ ինչ այլ ըզպարապորդ գերիցեն միտս երգոց մըրմունջք՝
Աշխարհահռչակ կամ բընաւք. ո՞ զդըժպըրհին Եւրիսթէոս
Կամ զանգիտս ըզչարաշուքըն Բուսիրեայ գիտիցէ ոչ։
Ո՞ւմ չհընչեաց Հիղաս մանուկ, Լեւոնեան Դեղոս, Հիպպոդամէ,

1. Պալէս էր աստուածուհի հովուաց և արօտից։ Իսկ հովիւն անուանի յԱմփրիս գետ Թեսաղիոյ՝ է Ապողոն, որում պարտանեալ երբեմն Արամազդ յաղագս սպանանելոյ նորա զԿիկլոպսն զգործիչս շանթից իւրոց՝ մնացեալ զնա 'ի ծառայութիւն Ադմետայ արքայի, և նա արածէր զանդեայս նորա։ Բայց Կալլիմաքոս քերթող առ սէր Ադմետայ ասէ զայն արարեալ Ապողոնի։

2. Լիկէոս պարապատոս լեառն յԱրկադիա 'ի գաւառս խաշնաւէտ և առատարածականօք հանդարտաւոր։

4. Եւրիսթէոս էր թագաւոր Միկենայց, որոյ գործակից լեալ անէլութեանն Հերայ՝ վարեաց զՀերակլէս 'ի բազում մեծամեծ վտանգաւոր նախահատակութիւնս. յորս և ոչնչացեալ կամ Եւրիսթեայ յետ նուաճեալ հնազանդութեամբն։

5. Բուսիրիս էր բռնաւոր Եգիպտոսի, որ 'ի սեղանս գիտ իւրոց զոհէր զհիւրս. և 'ի Հերակլէ սպանաւ անդ 'ի նոյն սեղանն մինչդեռ և նմա նիւթէր նոյնպիսի մահ։

6. Հիղաս էր մանուկ կամ պատանեակ մի գեղեցիկ, սիրելի Հերակլի և ուղեկից նորա ընդ Արգոնաւորդս. որոյ երթեալ ուրեք զջրոյ՝ ընկղմեցաւ յաւազան աղբերն կամ 'ի գետն Ասկանիոս. և համբաւեցաւ 'ի յաւերժահարսանց յափշտակեալ առ գեղեցկութեանն։ Եւ լսակինն իբրու զհնչումն Ո՞ւմ չհընչեաց երկդիմի է, առ ո՞ կամ յումէ՞ չհնչեաց։ — Դեղոս մի է 'ի Բոլոր կղզեաց յեգէականն ծովուն, զորմէ ասէ առասպելն թէ յառաջն երերեալ տատանէր յերեսս ջուրց, մինչև Լատոնէ աստուածուհի ծնեալ ուրեք իւր տեղի՝ ծնաւ 'ի նմա զԱպողոն և զԱրտեմիս կամ զԱրտեմիս, և փոխարէն այսր հաւրամեծարութեան և մար-

Եւ ուսով փղոսկրեիւ պայծառ Պեղոփսըն ձիավարողտ ։
Ճանապարհ նոր հորդեցից՝ վերաբերել յերկրէ և ինձ
Եւ 'ի լեզուս ձախրել ազանց յաղթանակաւ պարաւոր ։
«Նախկին ես 'ի հայրենիս, եթէ միայն բաւեսցեն կեանք,
Յաւոնեան 'ի գագաթանց իջեալ ածից ընդ իս զՄուսայս.
«Նախկին քեզ բերից, Մանտուա, զիդումական արմաւենիս,
Եւ 'ի դաշտ կանաչագեղ կանգնեցից վեհ կըճեայ տաճար
Առ ուխիւք, ուր Մինկիոս մոլորի մեծն 'ի յամբ ոլորս
Եւ յամուրս առոյգ շամբից ըղզեստեղերս պարածածկէ ։
'Ի միջի անդ Կայսրըն ինձ արձանացեալ կացցի զտաճարն.
Նա յաղթող և տիրացի ձոխ ծիրանեօք երևելի՝

դասիրութեան կառուցեալ առկայացաւ կղզին. յայս սակս Նէսոէան կոչէ զնա ։ — Հիպպոդամէ կամ Հիպպոդամիա դուստր էր Ինոմայոսի արքայի Եղիսացւոց և Պիսացւոց. որոյ պատգամ ընկալեալ՝ թէ որ փեսայացի ըզ նմա սպանանելոց է զինքն, պայմանեաց տարփաւորաց դստերն՝ զի որ յաղթեսցէ ինքեան 'ի կառարշաւ մրցանս, նա փեսայասցի իւր, և պարտեալն սպանցի. զի յուսացեալ էր յերագութիւն երիվարաց իւրոց ։ Յետ բազմաց պարտելոց և սպանելոց, յաղթեաց Պեղոփս և կաշառեալ զՄիրտիղ կառավարն Ինոմայոսի՝ ետ խորտակել զկառսն և ընկենուլ զԻնոմայոս. յորմէ և մեռաւ իսկ. և այսպէս յաղթանակ տարեալ էառ զմրցանակն զՀիպպոդամէ. և զՄիրտիղ 'ի վարձ նենգութեանն ետ ընկենուլ 'ի ծովն եգեան, յորմէ և անուն այն ծովուն միրտովական յորջորջեցաւ ծով ։ Ըստ ոմանց հնախօսաց Հիպպոդամիա էր և բուն իսկ անուն Բրիսանուշայ աղջկանն Աքիլլեայ, որոյ վասն քինացեալ սորա ընդ Ագամեմնոնի՝ պատճառ եղև մեծագոյն աղիտից Յունական մարտին ։ — Իսկ Պեղոպայ առասպելն այսպիսի ինչ է ։ Հայր նորա Տանտաղոս հիւրընկալեալ երբեմն զդիսն՝ 'ի փորձել զաստուածութիւն նոցա զենեալ զորդին զՊեղոփս և խորովեալ եդ խորտիկ առաջի նոցա. յորմէ Դեմետր միայն եկեր զուսն յանգէտս ։ Իսկ Արամազդայ ընդ այլ դիսն խրատելի եղեալ՝ կենդանացոյց զՊեղոփս, և 'ի տեղի կերեալ ուսոյն՝ փղոսկրեայ շինեաց նմա ուս. և զՏանտաղոս դատապարտեաց 'ի դժոխս՝ 'ի լճութեան կերակրոց և ջուրց սովալլուկ և ծարաւի տանջեալ ։

11. 'Ի Հելիկեան լեռնէ Բիոտիոյ յառաջըն Աւոնիա կոչեցելոյ ։ Եւ Հելիկեան լեռանն էր նուիրական Ապողոնի դից քերթողութեան և Մուսայից, զորոց տես Ձ. 478 ։

13. Մանտուա քաղաք Իտալիոյ առ Մինկիոս գետով, երկիր ծննդեան Վիրգիլեայ. որում առաջին փառս հիւթել ասէ բերելովն նմա զիդումական կամ զեդովմական արմաւենիս. զի չէր նախ քան զինքն այլ քերթող մանտուացի ։ Իդումէ կամ Եդովմ է գաւառ Ասորւոց՝ յԵդովմայ որդւոյն Եսաւայ անուանակոչեալ, և արմաւենեօք երկրին ազնիւք ։ Եւ արմաւենին էր առ Հելլէնս մրցանակ երաժշտական հանդիսից ։

16. Կայսրն Հոկտաւիանոս Օգոստոս, յորոյ 'ի փառս նուիրել ասէ տաճար կամ մեհեան, որպէս սովոր էին յաղթողքն 'ի հանդէսս հանճարոյ և քերթութեան յիշատակ կանգնել յաղթութեանն. առ որ յաւելու և խաղս ողոմպիականս և նեմեանս ըստ Հելլենական հանդիսից, պայքարանս և զոհս, խաղս թատերականս, տեսլեանս յաղթանակի, պատկերս և դրօշեալս ։ Են որ տաճարաւդ զԷնիականն քերթածն իմանան՝ զոր 'ի փառս յաւիտեան ցեղին Օգոստեայ և Հռոմայ ազգին կանգնեալ է Վիրգիլի յիշատակ յաւերժական ։

17. Յաղթող անուանին քերթողացն Հելլենաց ։ Եւ զյաղթանակին ձևացուցանէ ըստ օրէնս Հռովմայեցւոց և Հելլենացւոց. ըստ որում զի առ Հռովմայեցիս հանդիսադիր մրցանացն զգեստոյր պատմուճան ծիրանի վերջաւորօք պաճուճեալ. և ինքն իսկ այսպիսի նախագահագիր՝ հարկաւոր կառս ասէ առնել շարժել, այսինքն բազմաձիս ։ Եւ ըստ Հելլենաց պսակ ունել ասէ 'ի գլուխ իւր, և 'ի ձեռան բերել արմաւենիս՝ զորս 'ի վերդ յիշատակեաց ։

Քառաձիս հարիւր նըման շարժեցից կառս առ հոսանօքն ։
Եւ բոլոր թողեալ զԱլփեւս և ըզմայրիօքն Մոլորքեայ
Յարշաւ՝ ՚ի խիստ կռուփամարտս ինձ մըրցեսցի Հելլէնաստան ։
Ես սաղարթուն ձիթենեաց պըսակեալ ճակատ ՚ի սուրբ ուսոց
Պարգևըս բաշխեցից. արդէն յոյժ ուրախ զհանդիսին ձեմս
՚Ի մեհեանըս հոլովական տանել և զկաշտ զենուլ ցըլուց,
Կամ թէ տեսանել ՚ի շըրջել դրուագս տեղի տայ տաղաւարն,
Եւ զիարդ նըկարակերպ բարձցեն Բրիտանք ըզվարագոյրս ։
՚Ի դըրանդիսն ըզպատերազմ դըրուագեցից ըզԳանգարեանց

19. Զորս էին խաղս Հելլենաց. ոլոմպիականք կամ ոլիմպիականք, պիթեանք, իսթմեանք և նեմէականք ։ Ալփէոսիւ գետով Եղիսեայ որ մօտ յՈլոմպիա կամ Ոլիմպիա քաղաք՝ անուանէ յոլոմպիական մրցանանս յորում յաղթօղք ձիթենեաւ պսակէին. և անտառօքն Մոլորքեայ՝ ՚ի նեմէականս ։ Զի Մոլորքոս հովիւ առասպելական եղև Հերակլէի ՚ի գնալ սորա ՚ի նահատակութիւն նեմէական առիւծուն. և ՚ի յիշատակ այնր քաջութեան խաղքն հաստատեցան ։ Զայլ երկուս մրցանան ընդ երկուք պատքեր լուելեայն խմանայ Վիրգիլիոս. յորս և յամենեսին ՚ի նոսա յաղթօղքն բաւանդակին ՚ի ձեռս արմաւենիս ։ Եւ կամի ասել, թէ բովանդակ Հելլենաստան թողեալ զիւր խաղսն ՚ի նորայոյս իւրբեւ ՚ի փառաւորագոյն եկեսցէ. առ որ երկուս ևեթ յիշատակէ, զարշաւ և զբռնամարտութիւն յորում ձեռնէս իմն և գաւազանս ագուցեալ ՚ի բազուկս՝ այնպէս կռուէին մարտիկք զմիմեանս կափելով ։

21. Սուրբ ուսոց խնս ինձ ասասանօր՝ որ ոչ թուի յեջէ և թանձրախինո ոստամքս վարակեալ, այլ հարթ, ողորկ և մաք յարդարուն, կամ սրբեալ, հարթեալ, ըստ որում և սրբել ասեմք զծառս, զհերս, զմօրուս ։ Եւ որ զհատին բուռն խմանայ պարզապար իբրև հատեալ ևեթ ՚ի ծառոյ. բայց ոչ կիրթ թուի և ոչ ՚ի դէպ Վիրգիլեան ընտրութեան, զի աւելորդ իմն վերադիր լինէր ։

22. Փոխանակ պարգևս բաշխելոյն յաղթականաց՝ է որ խմանայ պատարագս կամ զոհս և զենլիս բերել իբրև թէ ՚ի մեհեանն ։ Սակայն ոչ ՚ի դէպ թուի մինչ չէ տարեալ զհանդէսն ՚ի տաճար. զոր զկնի բերէ՝ ըզձական զբանն առնելով, զկապս ընծելիսն այժմէն յանկացեալ տեսանել, կամ թուեցեալ քերթողին զցանկութիւն սրտին արդէն իսկ տեսանել յարգիւնս եկեալ. յորում և նկատել իսկ ասէ զզենմունս ցլուցն, որ այն ինքն են պատարագքն և զոհքն մատուցեալք ։

24. Զթատերական խաղսն խնս զոր հանդիսացուցանել կամի ՚ի պատիւ յաղթանակին. յորս ՚ի դառնալ եւանիկինեածն նկարուց խաղերեղին՝ փոփոխմանն տեղի տալ թուի բոլոր տաղաւարաձև խորանայարկին թատեր, և այլ պատկեր և տեսարան ՚ի տեղին փոխանորդել ։

25. Վարագոյրն անջրպետս արկեալ ընդ խաղերեղն և ընդ հանդիսատեսս՝ ՚ի սկսանել գուսանացն ՚ի վեր կոյս ամբարձեալ լինէր. և յամեն յայնտակ առ Վիրգիլեաւ նկարակերպեալ կայթն ՚ի վարագոյրն առնէ նեգորն կամ անկուածոյ բրիտանացիք՝ ՚ի յիշատակ յաղթութեանցն Յուլիոսի Կեսարու. և թուէր տեսանելեացն ՚ի վերանալ վարագուրին՝ որպէս թէ նոքին ինքեանք յաղթանդամ բրիտանացիքն բառնայցեն զնոսա ՚ի վեր ։ Ոմանք համարին թէ բաց ՚ի նկարէն բրիտանացւոց վարագուրին՝ էին իսկ և ոմանք ճշմարիտ բրիտանացիք ՚ի գերեացն ածելոց, որ զպաշտոն ծառայութեանն այնորիկ հարկանէին յայնժամ արգեամբք ՚ի թատերսն Հռովմայ ։

26. Գանգարեանց պատերազմ է Հնդկացն որ առ Գանգէս գետով, զորս ընդ Պարթևաց պարտեալս համարին Հոկտաւիանոսի, կամ մարգարէանալով յուսացուցանելն, կամ զի յաղթելոյն Անտոնիոսի յակտիական և յաղեքսանդրեան մարտին՝ յաղթել համարիցի և Հնդկաց որ ընդ նմա ՚ի թիկունս օգնականութեան գումարեալ էին ։ Որ զյետին կարծիս ունին՝ յետոյ յաւելուած համարին զտաղս. տես ̅թ. 171 ։ Եւ կամ զի արգելք իբրև Արեաց և Պարթևաց յաղթօղք Հռովմայեցիք յաղթել համարիցին և Հնդկաց նուաճելոյն երբեմն ընդ նոքօք. բայց որպէս զիարդ ինչ և համարիցի, քերթողաբար աճեցուցանել է զիրսն ՚ի պաշտօն կայսեր. զի ոչ երբեք

Յոսկւոյ ու՚ի տերս փրփրալերոյ և զյաղթողին Կողքիդեայ զէնս .
Ընդ և ըզՆիլն կուտակաղեղ ալեօք ՚ի մարտ յորդախաղաց ,
Եւ ըզխուռնաղն յարուցեալս ՚ի նաւական կուռ պըղընձոյ :
Յաւելցին ասիական ապաստք նըկուն, ՚Ալպաստ վանեալ ,
Եւ Պարթեւն ՚ի փախուստ՝ ՚ի յետս ընդ կըռունկ նետս ապաստան ,
Եւ յայլ և յայլ Թըշնամեաց բազկաւ Թափեալ կըրկին նըշանք ,
Եւ կըրկին ձաղեալ ազինք յերկաքանչիւր ծագաց երկրի :
Պարոսեան կացցեն և վէմք կենդանակիր տիպք շընչաւորք ,

մինչև ՚ի Գանգէս Հզեցին Հռովմայեցիք զաշխարհակալութիւնն . այլ միայն հրեշտակութիւն խօսեցեալ Հնդկաց ՚ի ձեռն Աւգոստեայ ընդ Հռովմ՝ զաշխես կուեցին և ուխտ խաղաղութեան հաստատեցին , ածեալ և պարգևս և պատարագս կայսեր : Սակայն չէ այս պատերազմ . և խոկ ընդ յետ բազում ամաց կատարման քերթածիս եղեն : Վասն որոյ և աստ դարձեալ զայսոսիկ յետոյ ուղղեալ ՚ի սոյն միտս յաւելեալ կարծեն ոմանք ՚ի Վիրգիլեայ : Բայց գիտացք ժամանակաց մեւայլ բազում ունին , որպէս ասացաք և ՚ի յ. 171 :

27 . Կողքիդեաս յորջորջէր Արէս գիք մարտի և Հռոմայեցւոց մեծ նախահայրեան Հռոմոսոյ : Նոյին անուամբ մեծարէ աստ զՀոկտաւիանոս , որում և անենչայր նա , զոր և արգեամբք իսկ յետ ամաց երից խորհեցաւ տալ նմա ծերակոյտն . կամ թէ և յետ այնորիկ գրեաց զայսոսիկ Վիրգիլիոս : Զորոյ և զդէմն զրուագեալ ասէ ՚ի գրուածս անդ տաճարին , զէնս խմացեալ զնոյն ինքն զհայրն սրտառաքինութեանն , կամ զդենութիւնն նորա և զմարտս և զյաղթութիւնս :

28 . Նեղոս կամ Նիլ գետ է եգիպտացւոց՝ աղաւաղանօք Նեղոս անուանեալ . որպէս յայտ է : Բայց կայ ՚ի գիրս նախնեաց և ուղիղ գրութիւնն Նիղոս կամ Նիլոս , յորմէ ղեղչեալ զյունականն յանգն ոս որպէս յայլ բազում անուանս , ըստ արևելեայց ասի Նիլ : Եւ այնու զանկերանդրեան յաղթութիւնն Հոկտաւիանոսի զեկուցանէ ՚ի վերայ Անտոնի և Կղէոպատրայ , որոց տերեաց Եգիպտոսի :

29 . Աւգոստոս տիրապետեալ Եգիպտոսի . ՚ի պղնձոյ նաւացակացն գերելոց եա ձուլել սիւնս չորս , և նուիրեալ կանգնեաց զնոսա ՚ի տաճարի : Դնէ զայդ խորհրդական նշան յաղթութեան կայսերն :

30 . Յաւելցի, ասէ, ՚ի գրուածս դրանցն և զքաղաքս Ասիոյ ՚ի պարտութեան մատնեալս , և զոր զննի : Նիփատէս լերանցն հայաստանեայց զպարտութիւն Հայոց նշանակէ ընդ Անտոնի ՚ի Հոկտաւիանոսէ , և զՊարթեւացն նոյնպէս անկանելն , կամ խոստանայ զուշակաբար ըղձապատում լինելով , որ յետոյ կատարեցաւ : Զպարտեալ և զնուաճեալ ազգս հռոմայեցւոց առ հասարակ յիշատակէ , և ոչ թէ զի անձամբ յաղթեալ իցէ նոցա Հոկտաւիանոս . որ և չէ իսկ ինչ հարկ ՚ի ճշմարտութիւն բանիցն . զի որ յաղթեաց Անտոնիոսի և միահեծան միապետութեանն տէր եղեւ էր աշխարհի , և նոցա ամենեցուն յաղթօղ համարէր :

31 . Պարթևք ՚ի պարտելն յուսային ՚ի սրտաւոր փախուստ ձիոցն , և ՚ի նետս աղեղանցն՝ զոր ՚ի փախչելն անդ յետս ընդ դէմ դարձեալ արձակէին :

32 . Կրկին նշանք յաղթութեան , ախոյեանք , յաղթանակք յայլ և այլ թշնամեաց՝ ըստ պէս խմանին ՚ի միկնչաց : Կամ են կրկին յաղթութիւնք կայսեր ՚ի վերայ արևելից և արևմտից առ հասարակ , կամ որ ՚ի վերայ ափոյեցւոց և ափրիկեցւոց պարտութեամբն Անտոնիոսի և Կղէոպատրայ յերկուս ճակատամարտս՝ յակտիականն և յաղեքսանդրեանն , կամ որ յաւելն ՚ի վերայ Բրուտոսի և Կասսիոսի և որ առ յապա ՚ի վերայ պարթևաց՝ գերեդարձ առնելով հռովմէական դրօշուցն : Միով բանիւ՝ զպարտութիւն տիեզերաց ասէ առաջի կայսեր : Եւ բազկաւ թափեալ ասէ կամ յափշտակեալ , զի զզօրութիւն և զքաջութիւն յաղթողին և զերագութիւն յաղթութեանցն ցուցանիցէ . և զի կայր ՚ի ճակատուն զոր եա՝ անձամբ նահատակեցաւ և յաղթեաց , և ոչ ՚ի ձեռն զօրավարաց իւրոց :

33 . Վասն կրկին յաղթութեանցն կրկին և հանդէս տարաւ յաղթանակի . ելեալ ՚ի ճեմելիս և ձաղեալ առաջի իւր զպարտեալ ազինս երկաքանչիւր կողմանց թշնամեացն : Թող զայլ յաղթանակս :

34 . Պարոսեան վէմք են ապիտակ կիճք ազնիւք ՚ի Պարոս կղզւոյ , որ մի է ՚ի Բո-

Զաւակն աստուածեան և իշխողն յԱրամազդայ
Զարմին անուանք, հայրըն Տրովս և Տրովադայ հաւակ Կիւնթեանն։
Նախանձն 'ի Ճիւաղաց զարհուրեսցի վատախտարակ,
'Ի գետոյն դըժոխական 'ի կարկաջուն կականաւոր,
Եւ 'ի Ճապուկ մանուածապատ իքսիոնեան վիշապաց,
Յահագին Ճախրեալ անուոյն ու'ի խարակէն անպարտելի։
Այլ զարդիս՝ դեռ յանկատոյց անտառս 'ի վայրս յաւէրժհարսանց
'Ի քումմէդ, Մեկենաս, անցցուք 'ի ծանր 'ի հրամանէ։
Առանց քո վըսեմական ինչ և ոչ մի ձեռնարկեն միտք.
Ո՛ն առեալ մի յապաղեր, ձայն Կիթերոն տայ մեծագոչ
Եւ բարակք Տայիգետեայ և ձիավարժն Եպիդաւրոս,
Եւ'ի միաշունչ մայրեաց ըստէպ կըրկնեալ բարբառըն մըռընչէ։
Այլ ուրեմն ըզբռնցաշունչ մարտըս Կայսեր համդերձեցայց

րոր կղզեաց եգէական ծովուն։ Յայսմ աղխիւ կճոյ կանգնել ասէ 'ի տաճարին պատկերս կամ արձանս իբրև կենդանիս, որ յանդիման անկցեն զզաւակն աստուածեան, այսինքն զէնիական, և այնու զյուլեանն։ Զի Էնիայ տրովադացւոյ նախահաւ էր Ասսարակոս, և սորա հաւուն հաւ էր Արամազդ, և հայր՝ Տրովս. ամենեքեան նախահարք յուլեան ազգատոհմին որ յէնիական ծննդոց համարեալքն էին։ 'Ի նոցանէ իշխանէր և հոկտաւիանոսն Աւգոստոս 'ի մօրէն կողմանէ՝ յԱտտիայ դստերէն Յուլեայ քեռ Յուլիոսի կեսարու։ Թող զի և որդեգրեալ ևս էր 'ի Յուլիոսէ կայսերէ, և յետ մահուան նորա՝ Յուլիոս կայսր հոկտաւիանոս անուանեալ։ Իսկ կիւնթեան հաւակ Տրովադայ՝ է Ապոլոն ծնեալն 'ի Դելոս՝ ուր է կիւնթոս լեառն. զի նա էր շինիչ Տրովադայ և պաշտպան տրովադացւոց, և 'ի հոկտաւիանոսէ առանձին խնամով պաշտեցեալ, մինչև ռամկին որդի Ապոլոնի զնա առաձայնել։

37. Նախանձն կարկեալ սասանեսցի, ասէ, յերևսաց կայսեր. յայլում կողման տաճարին ձևացեալ և այս, յայտ արարեալ թէ ոչինչ զօրեսցէ սանձանել կայսեր. դմտաւ ածեալ որ ինչ յաշաղկոտաց մախացելոց պահեին պատուհասք 'ի դժոխս, այսինքն են Ճիւաղքն ժանտք և կատաղիք՝ դաւհիճք մեղաւորաց (տ. 288), և գետ կարկաջուն կականաւոր՝ զոր հելլէն բառիւ Կոկիտոս կամ Կոկիւտոս ասեն, և զողս և զհեծութիւնս դատապարտելոց յայտ առնէ. վիշապ օձքն որովք Իքսիոն կապեալ կայ յանիւ մեծ 'ի սանդարամետս և ընդ նմին հոլովեալ տանջի վասն նենգաւորութեան և պղծագործութեանց իւրոց և ամբարհաւաճ պարծանաց. դարձեալ և ապառաժ վէմն անընկճելի, որով մարդադաւ հուզկահար աւազակն Սիսիփոս տառապեալ տագնապի 'ի դժոխսն՝ պարտաւորեալ թաւալել հանել զայն 'ի գլուխ լերին, այլ նորա միշտ անդրէն վերստին 'ի վայր գլորեալ։

41. Զայսոսիկ յիւրում ժամանակին, ասէ, արասցուք. բայց այժմ, ով Մեկենաս, երթիցուք քով դժուարին հրամանաւ յանմատոյց անտառս յոր չև ուրուք քերթողի ոտն հասեալ է. որով 'ի նորութիւն տաղիցն ակնարկէ։

44. Կիթերոն լեառն Բիովտիոյ անուանի անդէովք. Տայիգետ կամ Տայգետ լեառն Լակոնիոյ նշանաւոր յորսոցն և 'ի շանց։ Եպիդաւրոս քաղաք Պելոպոնիսոյ յԱրգոլիս ձիաւէտ գաւառի։ Այդքս ամենեքեան, ասէ, աղգի աղգի բարբառովք անտառոցն ձայն բարձեալ հրաւէր կարդան առ իս երգել զնոցանէ։

47. Յետոյ ուրեմն այլուր լիցի ինձ երգել զպատերազմունս կայսեր, և ընդ այնչափ ամս զկնի եկելոցն հռչակել զանուն նորա՝ որչափ կայսրն հեռի է այժմ յառաջին ծագմանէն արուսեկի, այսինքն 'ի սկզբանէ աշխարհի։ Ոմանք արուսեակ կամ ըստ բնագրին Տիթոն (տ. 488) խնամեան զորդի Լաւոմեդոնի՝ որդւոյ Իլոսի՝ որդւոյ Տրովսայ նախահօր յուլեան տոհմին.

Նուագել, և զհռչակ անուանն ընդ ամս հանել այնչափ,
Որչափ 'ի նախ ծագմանէն ընդհատ է Կայսր Տիթոնեկի:

Որ խրացեալ ընդ մրցանակս ոլոմպական յաղթանակին
Եզինս ոք թէ սնուցանէ, թէ ոք յարօր ըզպինդ եզինս,
Ի վեր քան զամենայն զմանձն և զիրանն ընտրեսցէ մարց:
Լաւագոյն են կերպարանք խոժոռագեղ թանձրըր կովու.
Գլուխ անձոռնի անհեղեղ և պարանոց սոնք և ըստուար,
Նաև մորթ 'ի կըզակէն երեօքըն չափ անկեալ 'ի կախ,
Ոչ բաւ ինչ երկայն կողից և ամենայն ինչ յաղթանդամ,
Նաև պըճղունք ու՛նդ կորափիտ եղջերբք ականջքըն թաւամազ:
Ոչ անհաճոյ ինձ լիցի սպիտակախայտ նըշանաւոր,
Կամ ըմբոստ 'ի սամետից և մերթ արի վըիժակօք խեռ,
Նաև տեսիլ համգոյն ցըլու, ինքըն բոլոր լեռնաբերձ,
Նաև ստորոտք ագւոյն ընդ քարշ՝ 'ի քայլսն ածէն հետոցն աւել:
Ծընաւոր հարսանեաց և հըպատակ երկանց հասակ
Յետ չորրորդ ամի սկըսեալ՝ նախ քան ըզտասըն դադարէ.
Այլն ամէն ոչ 'ի ծընունդ 'ի դէպ և ոչ յարօր զօրեղ:
Մինդէն իսկ մինչ անդէոց յորդէ զըւարթ առոյգ արբունս,
Լոյծ զարուս և փոյթ ըզհօտն յամուսնութեան 'ի խառնըս արկ,
Նաև այլ յայլմէ սերընդեամբ զաւակ 'ի լոյս ընծայեսջիր:
Սայելուչ աւուրք տխեղ հէք մահացուաց փախչին վաղվաղ,
Եզկըրնի գան մըտանեն ցաւք և ծերոյթ ծանրաթախիծ,
Նաև տաժանք և խիստ մահուն յափըշտակէ անգըթութիւն:
Եցին միշտ զորոց մարմինս ախորժեսցես փոխանորդել.
Սանս որոյ միշտ նորոգեա, և զի մի զտոյժ յետոյ խընդըրես,
Կանխեսջիր ամի ամի ածել նախըրդ մանուկ 'ի գոյ:
Նոյն նըման և ընտրութիւն է ձիականըն պաճարի:

բայց ոչ յոյժ 'ի դէպ: Զի Տիթոնոս այդ եղբայր Պրիամու՝ հազար ամօք ևեթ յառաջ էր քան զՀռոմուլոսեան. իսկ քերթողն՝ յաւիտենական յիշատակ յապայս կանգնել խոստանայ նմա: Այլս ըստ կարգի եա է իմանալ արև կամ արուսեակ՝ որոյ ակիզբն ծագմանն ընդ տաւուսոս անյայտ. և զայն իսկ նշանակէ երբեմն Տիթոնն անուն:

50. Ոլոմպական կամ ոլոմպիական յաղթանակ է ձիընթացիկ արշաւանացն մրցանաց որ յՈլոմպիա կամ յՈլիմպիա կատարէին (19):

65. Մինդէն իսկ 'ի հնդկահան ժամանակին, զոր 'ի դէպ ասաց յամուսնութիւն:

71. Զի հետ զհետ ծերանան կամ տըկարանան, զորոց զտեղին պարտ է լնուլ. զի մի անապան կարօտեսցիս պակասելոցն և կորուսելոց:

Զոր զամ մի զատուցանես 'ի յոյս ազգին քո պայազատս ,
Ընդըստին 'ի տղայ տիոց հոգ մեծաջան խնամոյ տարջիր ։
Նախուստ իսկ մրտրուկ քաջազն երիվարի ելեալ 'ի դաշտ
Ուղղաբերձ սօս ընթանայ , զպքսըն թեթևս առնու դրնէ .
Ձեռներէց 'ի ճանապարհ և սպառնալից ուղխից 'ի փորձ
Պխմագրաւ նահատակի և յանծանօթ դիպեալ կամուրջ .
'Ի խըրտուիլ սուտ սօսաւիւն' ոչ սոսկալի ահիւ շըրթնու .
Բարձրավիզ և գըլուխ նուրբ , սուղ որովայն , զաւակ առոյգ ,
Այլ արի կուրծք քաջալանջ 'ի թանձրամիս թամբ յօրանայ ։
Գոյն ընտիր' շէկ և պիսակ , իսկ յոռեգոյն' գորշ և աշխէտ ։
Իսկ և իսկ եթէ երբէք շաչիւն զինուց հընչէ հեռուստ ,
Ոչ գիտէ հանդարտել , ականջք կանգուն , անդամք 'ի դող ,
Այլ ընդ քիթս ըզմըրթերեալըն փունչելով մըրըրկէ բոց ։
Բաշքըն թաւ և զաջ ուսոյն իւր աղբախուռք անկեալ խաղան ,
Այլ կըրկին ընդ թիկնամէջս ողունք ելեալ սըփռին 'ի վայր ,
Այլ թաթուլ սալասըմբակ դոփեալ թընդայ դաշտ հաստանէ ։
Նոյնպիսի էր յամիկլեան Պոլիդևկեայ նուաճեալն 'ի սանձ .
Կիլլարոս և զորս հելլենքն յիշատակեն երգաբանիչք .
Այլ ամոլք երիվարացն Արեայ և կառք մեծն Աքիլլի .
'Ի սոյն տիպ և ինքն ըզբաշն 'ի ձիակերպ արկ ուլանէն
Զըրուանըն տուր 'ի փախուստ 'ի հասանել զալ ամուսնին ,
Այլ 'ի խոխոզ խըրխընջիւն ելից ըզբարձրըն Պելիոն ։

80. Կէս գրչագիրք ընդ միում հնագունի ընթեռնուն և յանծանօթ ծովուն անդունդս ։

81. Զքաջազգի ձին անխիրտ և անհարթ չէլի առնէ . իսկ զվատազգւոյն զհակառակն վկայէ Խորենացին ('ի գիրս պիտ . պարսաւ ձիոյ . ժա) ։

84. Լաւագոյն ձիոյ գոյնք են , ասէ , շէկըն կամ կարմիր , փոսոս . պիսակն կամ ճարտուկ ճանճկէն , մըրճան գլուխ . իսկ յոռին' գորշն կամ մողոշիկ , ղընձաղ . և աշխէտըն կամ երաշխ որ և խարտեաշ' ալ և գոալ ։

87. Կէտ օրինակի զխանչելըն ունին հարկըշէոլ ։

89. Կրկին ողունք են , յորժամ առոյգազաւակ և թանձրամիս ձիոյ թիկնամէջքն ունքացեալ զկրուխեամբն' յերկաքանչիւր կողմանց ողնաշարին բարձրացեալ կրկնակնեցին ողունք թուին տարածեալք մանաւանդ 'ի զաւակն կոյս . և ակօսաձև խորութիւն 'ի միջի անդ երևեցուցանեն ։

91. Կաստոր և Պոլիդևկէս եղբարք հաւմամարք' ձիավարժք , ծնեալ և սնեալ յԱմիկլայս 'ի քաղաքի Լակոնիոյ . սոցա առի լեալ երիվար մի գեղեցիկ Կիլլարոս անուն ։

93. Արէս աստուած պատերազմի յորժամ հեծանէր 'ի մարտ' ածէր երիվարս ամեհիս . որոց և անուանք յիշատակին ։ Իսկ Աքիլլեայ կառքն և երիվարքն զքանչելի պատմեալ կան յԻլիականին Հոմերի . ԺԶ . 148 ։

98. Այսպիսի ձի եղև և Զրուանն կամ Կռոնոս ըստ առասպելին , որ իբրև այն ինչ յըմբռնիլ էր 'ի դաւաճանագործութեանն ընդ Փիլիրայ դստերն Ովկիանոսի 'ի կնոջէն իւրմէ 'ի Ռեայ կամ Ոպեայ , փոխեցաւ 'ի ձի և փախեաւ 'ի Պելիոն լեառն Թեսաղիոյ ։

Եւ ընդդէմ՝ թէ յախտ տարտամ կամ մեղկ անձք կընտանեսցի,
Արգել ՚ի տան և մի ներբեր անաւագեալ ծերութեան։
Յուրտ է ծեր ՚ի զուգութիւն, զուր տառապի յամուլ վաստակ,
Եւ թէ երբէք ՚ի հանդէս այնմ արութեանց ելանիցէ,
Որպէս հուր ՚ի յարդի մեծ, այլ ապիկար, ընդ վայր մոլի։
Այսուհետև ըզհոգիսն և ըզհասակ տեսցես յաւէտ,
Եւ ապա զայլս ևս արուեստն և ըզսերունդըն հայրենեաց,
Եւ թէ զինչ ցաւ պարտելում, փառաց զի տենչ գաւապարայաղթ։
Եթէ ոչ նըշմարիցես յարշաւասոյր մըրցարանին,
Մինչ ոստուցեալք ՚ի գըլխոց ասպատակեն կառք ՚ի կըրկէս,
Մանկըտւոյն մինչ յոյս խիզախ՝ ահ սըրտաթունդ թափէ զոգիս,
՚Ի կարկամ մըտրակ ըստէպ կան կորովի հարեալ խրախոյս,
Եւ թոյլ տըւեալ ըզպախուցս՝ անիւք թըռչին եռանդնապատոյտ.
Մերթ ՚ի ստոր, մերթ ՚ի վեր բարձր օդաչու թըւին վարեալ
Եւ սլացեալ ՚ի թևս հողմոց, չիք ինչ հանգիստ ոչ դուլ դադար.
Իսկ մըրըրիկ խառնեալ փոշւոյն փոթորկելով ամպ ցալանայ.
Տամկանան ՚ի փըրփուր և ՚ի շընչոյ խուռն հասելոց.
Այսչափ սէր է պըսակի, այսչափ խընամ ՚ի յաղթանակ։
Երիքթոն նախ զառաջին կառըս լըծել և քառաձիս
Սըզախեաց և քաջայաղթ աշտանակել ՚ի սուր անիւս.
Պեղեթրոնեան Լապիթեայք ելեալք ՚ի նիւս երիվարաց
Ստեղծին սանձ և ձախրանս և ուսուցին վերելակի
Սպառազէն տրոփել ՚ի դաշտ և ոլորել ըզխրոխտ ընթացս։
Երկոքին ջան հաւասարակ, նոյն և ճարտարք մանր որոնեն

97. Բայց, ասէ, և զայգպալիք քաջ և ընտիր երիվարս՝ յախտանալն կամ ՚ի տկարանալն հասակաւ՝ արգել ՚ի խառնից, և մի տար թոյլ։

103. Ցեա ոգւոյն աշխուժից և առոյգ հասակին՝ գիտասցես զայլս ևս արուեստն, այսինքն զօրութիւնս, քաջութիւնս յոժանակին, և զայլ ծնունդս ծնողաց նորա, թէ որպիսի իցէ բարուք և ուժով, և թէ որչափ տրտմիցի ՚ի պարտելն ՚ի մրցանս ընթացից, և որպէս ցանկանայցէ փառաց։ Եւ զի մի զարմանայցես ընդ այսպիսի իմաստս ունել ասելոյ անբանից ձիոց, հայեաց և ահս յառաջարկես ձիընթացիցն։

110. Ի զի ՚ի զիջանգոյն տեղւոյն սաւորիջեալք՝ և է զի ՚ի վեր երևեալք ընդ գարակն՝ ըստ գար և փոս վայրացն կոհակաձև փոփոխմանց։

115. Երիքթոն փռիւգացի որդի Դարդանայ ասի նախ հնարեալ զկրկձի կառսն, և միւս ոմն Երիքթոն թագաւոր աթենացւոց՝ զքառաձիսն։

116. Կէս օրինակք այսպէս ունին, [illegible]

117. Պեղեթրոն էր անուն կամ քաղաք ՚ի Պենէոն լերին Թեսաղիոյ, յորմէ յորջորջէ զԼապիթեայսն՝ զթեսաղականն ժողովուրդս, և նոցա ընծայէ զգիւտ հեծելութեան և սանձից և այլ ևս արուեստից ձիավարութեան։ Այլք այլոց համարին։

120. Երկոքին ջանքդ՝ հեծելութեան և կառավարութեան, և զորս յառաջին եդ՝

Զառոյգանձն և ջերմնոցի աժխոյժ 'ի վազս և եռանդոսն,
Թէ և ըստէպ 'ի փախուստ ըղձերջանիկ լցէ տարեալ
Եւ իւր տուն պատմեսցէ զարի Միկէնս և զԼոյկոս,
Եւ ըղձեալսն խնդասցէ իւր՝ 'ի սերմանեացն ախոյեանսն։
Նայեսցին միտ եղեալ՝ ըստ պարս առնեն հասեալ ժամուն,
Եւ զոր իշխանն ընտրեցին և եղին այր աստուածակայն,
Ըստէպ կան անմնեխմբ թանձրաթաղանթ պատարագք.
Հընձեն խոտըս ծաղկաւէտ, պաշտեն ցորեան ջուրց հոսանօք,
Զի մի անօսր անստակ 'ի հեշտալի մնասցէ ձրգունս,
Եւ վըտխտ ծընդոտ ծընունդք զհարցըն բերցեն ծածկեալ տուայտանս։
Նայլ սակայն ըզձանտակաց ազգ մըտադիր հիւծմամբ ծիւրեն,
Եւ յորժամ խըստղանաց հասքն դըրդեն 'ի նոր խառնից ճաշակ,
Նշնըւաղ 'ի սերկից թողեալ մերժեն և յաղեղաց,
Եւ ըստէպ լըկեն յաղշաւ և 'ի տօթի առնեն աշխատ՝
Եթէ ընդ ծանըր թուլամամբ կաւեալ տըգեանց կալբըն հեծեն
Եւ 'ի շունչըս Զեփիւռին հասեալ ցընդին ունդք յըղքասի։
Զայս առնեն, զի անկըսցեալ մի ծնընդական անդին վըտաւ
Նա 'ի պէտսըն բըլթեսցի և խընուցան սըրքըն անգործ,
Նայլ պարզօղ զուխս հեշտանաց ծըծեալ 'ի խորս ամփոփեսցէ։
Մերուտին հարցըն հագոց անկեալ մորցըն յանձնողեն։
'Ի լընուլ աւուրցն ամսոց մինչ սաղմնաւորիկ ծանըր շըքըն,
Մ'ի գնոսս 'ի խըստաբեան 'ի լուծ սայլից ոք մըտանել
Մ'ի վաղիւք ոտամամբ ընդ հետ խինչ անցանել տացէ երկիրք,
Կամ քուռն 'ի մարգս ըշտապաւ դիմել, խուղել 'ի սուր հեղեղ։
Յամասի ձիարակեցին արօտ և յեղբ յորդ վըտակաց,

զուակատերութեան և սատարիտական մըցանաց, հաւասարապէս գժուարին են և գովելի, և հաւասարապէս ձիարարքն առ երկոսին իսկ խնդրեն զառոյգահասակըն և զեռանդնոտն։ Որ թէ չիցէ այնպէս, ոչինչ օգնէ այնուհետև, թէպէտ և քաջութեամբ գերազանցեալ գտանիցի, և հայրենեօք 'ի Միկէնից և յԵպիրոսէ՝ յաշխարհէ քաջընտիր երիվարաց, և թէ և զկարգ իւր ձգիցէ 'ի նախասաւեղծ ձիոյն Պոսիդոնի (տ. 14), կամ իմա 'ի նմին իսկ 'ի Պոսիդոնէ, յորմէ և 'ի Դեմետրեայ 'ի ձի փոխելոց ծնաւ առասպելեալն Արիոն երիվար։ Նայս ամենայն կամի ասել, թէ յորմէ ամենայն զօրէ և լիցէ, ոչինչ օգնէ՝ եթէ առոյգ հասակ և եռանդնոտ ոգիք մերձ ոչ լիցեն։

128. Հասեալ ժամու խառնիցն ամուսնութեան. և պարարեն զհասարակ երիվարն հայր սահմանեալ սերնդեան ազգաց։

136. 'Ի խոր ամառայնի, յորժամ 'ի կալս կասուն ցորեան և հոսեն առաւելք հողմոյ։

137. Զայս առնեն զի մի անգք արգանդին փակեսցի գիրութեամբ, այլ գիրապատրաստ գտանիցի 'ի սաղմնաւորութիւն։

Իւր մամուռք և 'ի դալար կանաչաբոյս փրթթեալ ափունք,
Ապաւէն անձաւք փցլին և հովանի վիմացն անկցի ։
Ըզ Սիլարեայ պուրակօք և 'ի սղոցիւք Ալբուռն անթեթ
Ասիտ Թըրթռէն զոր բոռն ասեմք մեք, Յոյնք յՈստրոս ձայն փոխեցին,
Դըժընդակ, Ճիւաղ շառաչ՝ յորմէ բոլոր աշխ սարսեալ
Խուճապին ջոկք 'ի մայրեաց, և 'ի մռընչիւնն առեալ դըղըրդ
Արկինք զոռան և մնտաւք և ափն ոստինըն Տանագրի ։
Զայդ հրէշ 'ի ձեռն առեալ զոխսըն թափեաց զահագնացայտ
Ինաքեան երինջոյն ժանտ նիւթելով երբեմն Հերայ ։
Եւ ըզդա զմոլեգնախանձն 'ի միջօրեայ տօթ տապախառըշ
'Ի յըղի երամակէն փարատեսցես՝ զհօտն արածեալ
'Ի զուարթ արեւածայրս կամ յաստեղաց ըզցայգն ածել ։
Ամենայն յետ ծընընդոց 'ի պէտս որթուց երթայ խնամ.
Եւ անդէն զանուանս ազգին և ըզկընիքս հարկեալ դըրոշմեն,
Եւ թէ զոյս 'ի սերունդ ածմամն հօտին հանցեն յընտիրս,
Կամ բագնաց սըրբանըւէր, կամ ակօսից 'ի կտտրել
Եւ ըզդաշտըն կուտակեալ կոշտիցն 'ի գէզ՝ ցըրուել 'ի հարթ ։
Այլ ջոկերըն արածին յարօտ դալար զարմանազեղ ։
Զորս 'ի փոյթ և 'ի հրահանգըս շինական կըրթես վարուց,
Դու զընջուզս յորդորեսջիր և կաց ըստէպ նըւաճելոյ,
Մինչ ոգիք մանկանց հըլու և մինչ հասակ է դիւրամէտ ։
Եւ նախ թոյլս 'ի նուրբ ուռոց մանեակս 'ի վիզն արկանիցես.
Եւ երբ ազատ պարանոցք մըղէն 'ի հարկ ծառայութեան,
Յայնմհետէ յանոյց անտի ամոլս 'ի զոյգ կապեալ լծեա,
Եւ զզուարակս հարկեսցես զուգաց խաղալ յառիցն 'ի ձեռն ։
Եւ ըստէպ դատարկ անիւք 'ի նոցանէն ածցին 'ի քարշ
Ընդ երեսըս փոշւոյն հազիւ գըծեալ զհետսըն թեթև ։
Ծանրաբեռն ապա ձըգնեալ սռնըն փիճի ճըռընչեսցի

148. Սիլարոս գետ է Կամպանիոյ յԻտալիա, յոր մտանէ վտակն կամ հեղեղատն Տանագրոս յԱլբուռնոս լեռնէ իջեալ, բայց 'ի տապոյ ամառայնի ցամաքի ։

151. Ինաքեան երինջ է Յով դուստր Ինաքայ արքային Արգոսացւոց, զոր Արամազդ առ 'ի թաքուցանել զստափանս իւր ընդ նմա 'ի Հերայ կնոջէն իւրմէ՝ փոխակերպեաց զնա 'ի կով. բայց Հերայ իրազգաց եղեւ՝ և 'ի ձեռն բոռոյ մոլեցուցեալ հալածեաց զնա և փախոյց մինչև յԵգիպտոս, ուր և փոխեցաւ նա յիսիս աստուածուհի եգիպտական ։

157. Աստեղք ածել ասին զգիշերն, զի 'ի ծագել նոցա լինի գիշեր ։

171. Դատարկ անիւք են դատարկ սայլք. այնպէս թեթև էին սայլքն, զի հազիւ թողուցուն նշմարանս հետոց ։ Եւ ապա յետոյ իբրև զարգացեալ զօրացին, ձըգեսցեն սայլս ծանունս ։

Եւ զագուցիկ շըրջանակըն ձըգեսցէ պըղընձի առեղ.
Ընդ տըրմուղ համբակացն ոչ դեղ դալար միայն եւեթ,
Այլ զուռեաց ոսկին սաղարթ եւ կամ ըղլօռըն ջըրասուն,
Նայն ցորեան դեռաբուսիկ քոյով ձեռօքըդ քաղեսցես.
Եւ զձիւնաթոյր դդմըրդ զօրէն հարց մանտաղորթ պառակամարք
Մի լընուցուն, այլ զըստինս ողջ ջամբեսցեն քաղցր որդեկաց:
Իսկ թէ փոյթ մարտից յաւէտ եւ ձիախորոխտ իցէ սպայից,
Կամ յանիւս առ Ալփէիւ զՊիսեայ սահել գնացիւք գետոց,
Եւ թռուցիկ կառս յանտառին տարաբերել Արամազդայ,
Նախ ջին ջան՝ ըղմարտկաց տեսանել զոռս եւ զառնազէնս,
Հանդուրժել զաղաղփողոց եւ 'ի շարժուն կառաց շաչիւն.
Սանձուց եւ շըռուշակաց յասպաստանին շկահիւն լըսել,
Վեր 'ի վեր 'ի վարժողին հեշտ փաղաքուշ խայտալ դըրուատ,
Եւ սիրել ըղծափաձայն շօշափ ուլանն ուժգնահըրնչակ:
Յայդոսիկ՝ այն ինչ 'ի ստեանց մօրն հատուցեալ՝ խրախուսեսցէ.
Ընդ նըմին տացէ զկըրզակն եւ 'ի փափուկ դանդամանաւանդ,
Դեռ եւս անզօր դեդեւկոտ, անփորձ դեռ եւս աստեացն ուժի:
Սակայն յելս երրորդաց՝ 'ի մուտ չորիր ամարայնոյ
Սկիզբն տացէ ձախր 'ի ձեմել, ձեմքն 'ի կըշիռ թընդել դըրնդիւն,
Եւ զկարթիցն 'ի ձօձ. կըրկնեալ տացէ թողցէ ձապուկ մանուած
Տագնապելոյ իմն հանգոյն, ձայն յասպարէզ այնուհետեւ
Արընթացիւք տացէ հողմոց, եւ իբր արձակ յերեսանաց
'Ի հարթարդակ թռուցեալ 'ի դաշտ՝ հազիւ դիցէ հետս յաւազին:
Որպէս ինչ 'ի սառնասեր ծագաց յորժամ բարկ հիւսիսակ
Խոյացեալ՝ զըսկիւթական ցըրուէ ձմեռունս եւ զերաշտ ամպս.

177. Ցորեան իմա զառաջին խոտ բուսոյ ցորենոյն, զոր եւ դեռաբուսիկն եւ ձեռօք քաղելն յայտ առնէ:

178. Եւ մի ըստ հնոցն օրինի կթեսցես զստինս մարցն, այլ թողացո դիեել որթուցն:

181. Պիսա նահանգ էր մասն Եղիսի կամ Եղէայ 'ի Պելոպոնէս, յորում էր Ողոմպիա քաղաք եւ Ալփէոս գետ, եւ մեհեան եւ անտառ Արամազդայ եւ նուիրեալ տեղիք մեհենին, առ որովք կատարէին ողոմպիական մրցութիւնք տապարխաձեմ արշաւանաց կառաց: Եթէ 'ի մարտս կամ 'ի կառարշաւս կամիս կրթել զերիվարդ, ասէ, առաջին փոյթդ լիցի զի տեսցեն զզէնս եւ զխրախուսանս մարտուցելոց, այլոցքն հանդերձ:

192. Սկսցի շըջեան առնուլ. հիռ գալ. եւ քայլքն թուով եւ կշռով 'ի դաշնակաւոր եւեւէջս բախեսցեն զգետինն:

197. Սառնասեր ծագքն հիւսիսական ձմեռնացեալ աշխարհք, յորոց շնչեալ հողմ հիւսիսի հալածէ զձմեռունս՝ զըրուքս, եւ զանջրդի ամպս Սկիւթիոյ որ ոչ լուծանին յանձրեւ յերեսաց չոր ցրտոյն: Եւ Սկիւթիա ըստ նախնեաց իմանին յաճախ ամենայն ցրտային աշխարհքն որ 'ի Դանուբ կամ Խոտորոս գետոյ եւ անդր մինչեւ 'ի հիւսիս եւ յարեւելս հիւսիսոյ:

Ո՛րք հունձք բարձրադէզք և արտորայք քըստմնածածան
Մարսափեն ՚ի մեղմ շընչոյն վէտ վէտ ծօծեալ կոհակաւէտ,
Ի՛նչէն մայրիք երկնածայրք, երկայն ալիք կոծին յափունս.
Նա սլանայ զանդ և զանդաստանս համայն ՚ի թափ փոթորկելով։
Նոյնպիսիդ յեղեան դաշտին ՚ի կէտ՝ ՚ի լայն մեծ հրապարակ
Ո՛նդ քիրտն հարցի, ու՛նդ փըրփուր գայցեն երախքն ընդ ապաժոյժ,
Կամ կակուղ պարանոցաւ լաւ ևս ածցէ զբելգացի կառս։
Ո՛նդ ապա զգօնացելոցն յաշտիպ ատոք զիրանն աճուն
Թո՛յլ տուր պարարել, որ զի յառաջ մինչ չև են մուղ՝
Մեծամեծըս սըրտմըտեալ և փռընկայցեն չառցեն ՚ի յանձն
Ըզճապուկ մըտրակ ՚ի կուշտ և հեստեսցեն կարծըր ճըմաց։
Նայլ ոչինչ ըզկորովմն այնպէս գիտէ պընդել հանճար,
Որպէս մերժել զԱ՛ստըղկան և զկոյր տարփիցըն խըտըղտանս,
Թէ անդեայց և թէ ձիոց իցեն ումեք ըսպասք հաճոյ։
Վասն որոյ հեռի ուրեք վարեն ըզցուլս յարօտ ՚ի զերծ
Յետ կուսէ լերին և յայն կոյս յորդահոս ծաւալ գետոց,
Կամ ՚ի ներքս արգելեալ առ պատարուն պահեն մըսուրս։
Զի հաշէ մաշէ զոգիսն էգն ՚ի տեսիլ և տոչորէ,
Ոչ պուրակս ընդ միտ ածել ներէ և ոչ ըզզեղ դալար.
Նա աղու հրապուրանօքն ըստէպ դըրդէ զգոռոզ տըռփողս
՚Ի գուպար գոռալ միմեանց և ոգորել բուռն եղջերօք։
Կայ երինջ գեղեցիկ ճարակաւոր ՚ի մեծ մայրիս,
Նոքա գազանաբար ճակատ տըւեալ խառնին ՚ի կռիւ
Կուռ կոփմամբ խեթկելով, մարմինք ներկեալ յարիւն ՚ի թուխ,
Նա վըժակք յոտոխս հանդէպ մըղեալ վարսին լայն թառանչմամբ,
Ընտառք անդըրէն մըռընչեն և որոտայ մեծն Ողիմպոս։

203. ՚Ի դաշտին Եղէայ կամ Եղիսի, յասպարէզ ողոմպիական ձիընթացից։

205. Բելգացի կառք էին կառք ինչ պատերազմիկ, որով վարէին բելգացիք և բրիտանացիք. իմա որ և է կառս։

206. Իբրև այսպէս մղեալ և վարեալ զգօնանան ՚ի տրմըղութենէն, մատուցեալ նոցա զօրաւոր կերակուր. զի յառաջ խրոխտեն, ըմբոստանան և խեռեալ ընդվզեալ ըմպահկեն, և խատերախ լինեալ չառնուն յանձն զճիման ճմլիչս և ճնշիչս կըղակացն։

211. Աստղիկ, որ և Ափրոդիտէ, էր աստուածուհի սիրոյ և տարփանաց և խառնից և հեշտութեանց. և բազում անգամ փոխանակ այսորիկ առեալ է։

220. Փոխանակ բառից բնագրին in magna silva, ՚ի մեծ մայրիս՝ հնագոյն գրչագիր մի եեթ գրեալ ունի silva և ապա քերեալ զv առնէ in magna Sila, ՚ի մեծն Սիլա. Թերևս յԵնէականէն առեալ որ ՚ի ԺԲ. 715։ Եւ է Սիլա լեառն և անտառ մեծ ՚ի մէջ ապենինեան լերանց Իտալիոյ ՚ի սահմանս կալաբրացւոց։

224. Ողիմպոս լեառն Թեսալիոյ, դիցն կայեան, Դիւցազնկէց ևս կարգացեալ ՚ի մե-

’Ի վըսեր եկելոցն ոչ ևս օրէն կալ երդակից,
Այլ պարտեալն ’ի բաց գընայ վըտարանդի յօտար սահմանս
Յոգոց.եըեալ դառնապէս ընդ հարուածոց սէգ յաղթողին,
Ընդ կորանսն, ընդ սիրուհւոյն՝ յորմէ առանց վրիժուց անկեալ
Եւ ’ի գոմին ակընկառոյց լքէ զհայրենին արքայութիւն։
Արդ ամենայն պընդութեամբ թեքեալ սըրէ զոյժն և ըզջիլս,
Եւ ընդ խիտս քարինս ’ի տօկ անկեալ դըժնի գետնախըշտի,
Խաւարծի տերևովք ըզքաղցն հարեալ ու ’ի սուր կընիւն
Եւ կըշռեալ զանձն ’ի հանդէս և ընդ ծառոց մըրցեալ կոճեղս
Ուսանի ամեհել եղջերբք և զհողմըս կոծելով
Ազդի և հող հանէ յառհաւատչեայ մարտին ’ի փորձ։
Եւ այսպէս առեալ ըզզօրն՝ ’ի ծոց զաղիս իւր ժողովեալ
Խաղայ շտապաւ անկանի յանակընկալ ’ի թըշնամին.
Որպէս ալի փըրփրադէզ սպիտակացեալ ծովուն ’ի խորս
’Ի հեռուստ և յանդընդոց գոգ առեալ գայ թաւալգըլոր,
Յափըն կոյս ահեղ գոչէ վայրենացեալ ընդ քարաժայռս,
Եւ ոչ ընդհատ լեռնակուտակ փնքօք առաւել կործանի,
Իսկ խորոց ուխք յորձնեռանդն ’ի վեր ժայթքեն ըզսեաւ աւազ։
Ամենայն երկրակենցաղ ազինք մարդկան և գազանաց
Եւ ազգ ծովայնուղակ, պաճարք և հաւք երփնանըկարք
’Ի կըտղանս ու ’ի հուր գըլին, յամենեսին նոյն են տըռփք։
Ոչ յայլում ժամանակի կորեանցն անյուշ մատակ առիւծ
Շըրջեցաւ ամեհագոյն ’ի դաշտ, և ոչ այնչափ յաճախ
Արջք անտիպք մահուամբ յանտառս և ճոխ նախճիրըս գործեցին.
Յայնժամ վարազ կատաղի, յայնժամ և վագր է դըժընդակ.
Ահ, եղուկ որ թափառին յայնժամ յամայս լիբէական։
Ոչ տեսանես ընդ ձիոց առ հասարակ զիմըրդ սարսուռ
Գընայ’նդ անդամս՝ եթէ սիք ըզհոտն ևեթ բերէ զծանօթ.

րոց նախանձուց, ուր ընկեցան գլքն զերծա-նել և սարբել ’ի ձեռաց սկայեցն, և ուր կեցին և սնեալ զարգացան և կալան բնակութիւն։ Բանգոսմ ուրեք, որպէս և սատանօր, փոխանակ երկնից առեալ է, կամ փոխանակ մերձակայ լերանց. զի և գըրչագիր մի ունի Երկնոյնն Ոլիմբ։

231. ’Ի տօկ, այսինքն մինչև ’ի սպառ յամառեալ պնդեալ, pernix. այսպէս ընթեռնուն ամենայն գրչագիրք։ Իսկ pernox, փոխան, անփոյթ հոլովուն գիշերին, որ ’ի տպագիրս ինչ երևեալ, գիւտ է Սկալիգերեանց՝ որ այնպէս ուղղեցին գտանեցան ըզբնագիրն, այլ ոչ հաճոյ եղև հմտագունից։

250. Ամայք լիբէական են անապատքն Ափրիկէի։

252. Եթէ օդն կամ հողմն բերէ նոցա զծանօթ հոտ մատակացն։

Ոչ քաղջաց վարապանք և ոչ մըտրակք դաժանագոյնք,
Ոչ ժայռք, ոչ քարանձաւք ըզդէմ ունին յայնժամ նոցա,
Եւ ոչ ուխք յափըշտակեալ լերինս յալիսն հոլովելով:
Այնձ՝ ինքնին սաբելացի դիմեալ ժանիս զիւր յեսանէ,
Վըրդովէ զերկիր ոտամբ, և զկողըս իւր շըփեալ ընդ ծառ՝
Եւ աստի և անտի զուսն 'ի հարուած պընդէ վիրաց:
Օ՜ ինչ ապա երիտասարդ յոյր ոսկերս հուր բոցածաւալ
Բորբոքէ գութ անհնրուէր. ընդ փոթորկաց հրոսող խաւժան
'Ի խոր 'ի կոյր գիշերի նա 'նդ ծով լիւղի մըրըրկածուփ.
'Ի վերուստ որոտընդոստ ճայթէ երկնից դուռն ահագին,
Եւ 'ի խութսըն խորտակեալ մռընչեն ալիքըն բարկացայտ.
Ոչ ծընօղք թըշուառական կարեն ըզնա յետ նահանջել,
Եւ ոչ՝ կուսին անգամ յողորմ օրհաս մահ մօտալուտ:
Օ՜ի քաւթարք լուսակունք Սպանդարամետին խայտախարիւք,
Եւ գայլոց քանասարիկ վոհմակ և շանց ճետ ամեհի.
Անարի թէպէտ և ազգ եղջերուաց զինչ տան պատերազմ:
Այլ ճայկաց մոլեգնութեան աւիւն գըլէ քան զամենայն.
Եւ զայդ միտս Աստղիկ ինքնին էարկ՝ յորժամ պոտնեան զամբիկք
ԸզԳլաւկեայ մարմինս առին ատամանցի գէշ գէշ ձըրձեալ:
Սէր ըստ Գարգար տանի զնոսա և ըստ Ասկան կարկաչուն,
Ըզսարօք խորոխտեալ վազեն և հատանեն ըզգետս 'ի լիւղ.
Եւ անդէն իբրև յուղեղսըն անձկայրեացս հարկանի բոց,

256. Վարազ լեռանցն Սաբինեցւոց յԻտալիա, որ ասին և սաբելացիք:

258. Օրինակք ինչ ընթեռնուն շըփեալ ընդ ծառ Աստի և անտի, զուսան 'ի հարուած պընդէ վիրաց. այլ ոչ կիրթ թուի քաջ քննողաց:

260. Ակնարկէ 'ի կերպ Լէանդրի երիտասարդին, որոյ սիրեալ զՀերոյ կոյս՝ որ յայնմ կողմանէ կըրծի Հելլէսպոնտոս ծովուն բնակէր 'ի Սեստոս աւանի Թրակիոյ, յԱբիւդոս աւանէ առփնակողմանն ուր ինքն էր՝ 'ի լիւղ անցանէր գիշերի ընդ ծովն առ տարփածուն: Եւ յաւուր միում 'ի մրրկէ ըմբռնեալ և պարտասեալ՝ հեղձաւ 'ի ջուրսն. զորոյ տեսեալ կուսին զդիակնն վարեալ յափն Թրակեան՝ առ աղետիցն արկ զինքն 'ի վայր 'ի բերդէ անտի և մեռաւ:

262. Դուռն երկնից է նոյն ինքն երկինք, որոյ արքունիք և տաճար գոլով Արամազդայ՝ հարկաւ և դուռն իւր իմն իմանալին նմա, ընդ որ և զփայլատակունս իւր առաքէր աստուածն սրտմտեալ:

266. Քաւթարքն ազգ են գայլոց կամ կատուի սրատես յոյժ, յորմէ և լուսակն, լուսակունք ասացեալ են: Զսոսա որպէս և զվագերս 'ի կառս իւր լծեաց Սպանդարամետ կամ Դիոնիսոս Բագոս:

270. Զայդ բնութիւն և զբարս կատաղութեան Աստղիկ կամ Ափրոդիտէ ետ նոցա, յորժամ Գլաւկոս՝ որ 'ի Պոտնիա գեղջէ Բիովտիոյ՝ արգել 'ի խառնից զձիս իւր մատակս. և Աստղիկն չարացուցեալ ընդ այն՝ արկ մոլեգնութիւն 'ի նոսա մինչև գէշ գէշ ցըցել զանէրն իւրեանց:

272. Գարգար մի է 'ի գագաթանց Իդայ լերին Տրովադայ. Ասկան կամ Ասկանիոս գետ Բիւթանիոյ. քերթողաբար առեալք փոխանակ որ և է լերին և գետոյ:

Գարնայնի մանաւանդ, զի 'ի գարնան տապ դառնայ յոսկերս,
Բացեալ առ հասարակ նոցա բերան 'ի զեփիւռ կոյս՝
Կանգնին բարձր 'ի պարեխս և սիք ծըծեն նուրբ և թեթև,
Եւ յաճախ առանց իմիք ամուսնութեան յօդոյ յղացեալ,
Ո՜վ զարմանք, ընդ վէմս ընդ վախս և զխշադոյն սրահսն հովիտս,
Ոչ, ծըմակ, առ ելըս քո և ոչ առ դըրունս արեգական,
'Ի հիւսիս և 'ի խըրըթնիս, և մըթագինն ուստի հարաւ
Յարուցեալ ցօղագին հողմով զերկինըս խոժոռէ:
Աստ ապա ստուգագէտ յորջորջանօք կոչեցեալն հովուաց
Ձիամոլըն մսկարդուն ընդ ցայլս ընդ հանըն կաթէ ժահ,
Ձիամոլըն զոր ըստէպ 'ի պէտս առին ջատուկ մօրուք
Խառնեալ տոգորս 'ի բուսոց և ժանտագործ յուռթից մըրմընջս:
Այլ փախչի արդ աւասիկ փախչի անդիւտըն ժամանակ,
Մեր և մեք սիրով վարեալ կամք դեգերեալ զամենեքումբք:

Այսչափ լինչ շատ անդէոց, վաստակոց մասն այլ կայ մընայ,
Զաւարաբեր հօտըն զընկնել և զթաւագէս այծից հօրանս.
Աստ է գործ, աստի ծրագրեալս մըշակք առէք յոյս պարծանաց:
Գիտեմ քաջ՝ մեծ քանիօն իցէ դոցա յաղթել բանիւք
Եւ զիրացդ անօրութիւն 'ի սոյն պըճնել շուք և պատիւ:
Սակայն զիս սէր անուշակ ընդ պառնասեանն յափըշտակէ

276. Կարծիք էին հնոցն անվաւերականք՝ 'ի զեփիւռէ կամ 'ի հողմոյ յղանալ ձիոց մատակաց. և այն բաւական էր քերթողին 'ի պաճուճանս տաղիցն: Զնոյն և զթռչնոց ամանց ընկալաւ կարծել մեծն Բասիլիոս 'ի վեցօրեայ արարչութեան ճառսն. յէջ 171:

280. Իբրև այսպէս յղանան, ասէ, 'ի զեփիւռէ, այսուհետև ոչ յարևելս կոյս դիմեն, այլ 'ի հիւսիսի և յարևմուտս և 'ի հարաւ: Մեկին ևս Արիստոտէլ. Ընթանան, ասէ, ոչ յարևելս և ոչ յարևմուտս, այլ 'ի հիւսիս և 'ի հարաւ. ուր Հայնը՝ քաջ մեկնիչն Վիրգիլեայ ասէ. Յայսմ եթէ չմիաբանի իմաստասէրն ընդ քերթողին, գէթ և զարևմուտս 'ի բաց տանի:

283. 'Ի ջեռնուլ այսպէս մատակացն և 'ի յղենալն ընդ ծննդանոցսն թորէ, ասէ, հիւթն այն զոր հովիւք հաւաստի անուամբ ձիամոլ կամ ձիաւիւն կոչեն. և դեղատուք 'ի պէտս սիրելական դեղոյ պաշտէին առ տարփածուս սիրելեաց 'ի կախարդել զերել զնոսա: Զայս անուն հաւաստի այսմ նիւթոյ համարի, զի պիտակաբար 'ի նոյն անուն կոչէր երբեմն և միս ինչ սպնդանման բուսեալ 'ի ճակատու և 'ի լեզուի յովանակի այն ինչ ծնելոյ, զոր և կարծէին թէ առժամայն կլանիցէ մայրն ծննդական. և դեղատուաց աճապարեալ շորթէին վարել 'ի նոյն պէտս յուռթից և բժժանաց: Զայս տիրապէս սէր մոլորութեան կամ պարզաբար խոկ սէր կոչէին, որպէս և Վիրգիլիոս ինքնին յԷնիականին, Դ. 516:

288. Մինչդեռ և մեք 'ի սիրոյ նորա զհետ վարիմք ամենայնի մանրամասնաբար:

294. Գիտեմ զդժուարութիւն քերթողաբար զարդարելոյ խրատդ, սակայն սէր դոցա կամ տաղից առնու վարէ զիս յանմարդի և յառապար անապատս Պառնասոս լերին բանաստեղծութեան, ուր ոչ միոյ ուրուք հետք յառաջ քան զիս երևին ընդ հեշտալին զառ 'ի վայրն դիմեալ 'ի Կաստա-

Ընդ անկոխ ափափայս , քաղցր է ճնմել զգահաւանդօք
Ուր ոչ մի հետք առաջնոց ընդ դար դիւրին գնայ 'ի Կաստաղ ։
Այժմ, ով Պաղէս նազելի , այժմ է հրնչել վեհ բերանով ։
Սկիզբն առեալ դընեմ պատուէր՝ օդեաց 'ի հեշտ մանկաղատեղս
Ուտել խառ մինչեւ այսրէն սաղարթազեղ դարձցի ամառն ,
Եւ բազում յարդ եւ սիզոյ բարդըս սըփռել կարծր 'ի խըշտիս ,
Զի մի ցուրտ սառամանիք մեղանչիցեն քընքուշ հօտին
Եւ քօսիւ հարկանիցեն եւ դըժպատեհ խոչառութեանք ։
Հրաման այնուհետեւ տամ ըզմանթուզ տերեւախիտ
Այծից մատուցանել ուականակիտ ջամբել վըտակս ,
Եւ զփարախն 'ի հողմոց 'ի միջօրեայ կոյս դարձուցեալ
Արկանել 'ի ձմերային ակն արեւու , մինչեւ անկցի
Ջըրհոս սառամանեաւ եւ զտարւոյն վերջս ոռոգեսցէ ։
Եւ դոցին յանձանձանք՝ չեն մեզ թեթեւ ոչ դոյզըն պէտք ,
Միլետեան թէ եւ գըզաթք 'ի տիւրացի ներկեալ կարմիր
Մեծագնի վաճառիցին , աստ սերմըն ճոխ , կաթն յորդաբուխ .
Ըստ քամել ըստեանց ստգուն եւ կըթոցացն եռալ փըրփուր
Այնչափ պըտկանցն 'ի ճըմլել զըւարթառատ գնայցեն վիժակք ։
Այս 'ւանիկ աստանօր եւ զկինիփեանըն նոխազի
Ըզմօրուս եւ զալեւոր կըզակ փողրեն եւ զկէս վարսից
Որ 'ի պէտըս ճամբարաց եւ 'ի ծածկոյթ հէք նաւազին ։
Իսկ ճարակ՝ ծայրից Լիկեայ զըլխակս անտառն եւ ըզթըփուտս ,
Ըզմորենիս քըստմնափուշ եւ ըզմացառըսըն լեռնասէր .

կամ Կաստալիա եւ կաստաղեան աղբիւր՝ որ զստորոտով Պառնասոս լերին՝ Ապողոնի եւ Մուսայից նուիրեալ , որոյ եւ ջուրք բարեհամք՝ քերթողս յորդորէին որք ըմպէին ։

297 . Ի Պաղէս դիցն հովուաց հայցէ զօրութիւն մեծավայելուչ ոճով ճառելոյ զնուաստն ։

307 . Մինչեւ մօտ յելս փետրուարի , առ որով անկանի կամ մտանէ Ջրհոսն աստեղատունն ձմեռնային եւ ցուրտ ջրոյ հոսող , որով իբրեւ թէ առոգանէ զկատարած ամին , որ 'ի փետրուարի վախճանէր եւ 'ի մարտի սկսանէր առ հին հռովմայեցիս ։

308 . Դոցին այծիցդ զոր 'ի յետոյն տեղւոջ յիշատակեաց փոքր մի 'ի վերոյ ։

309 . Միլետոս քաղաք էր 'ի սահմանակցութեան Յոնիոյ եւ Կարիոյ՝ առատաբեր ազնիւ ասու . բայց աստ հասարակաբար զբուրդս կամի նշանակել ։ Թէ եւ , ասէ , բուրդք ոչխարաց ներկեալք 'ի ծիրանի՝ ծանրագին իցեն , ոչ այնու այծիք քան զօգտիս անարգ իցեն կամ անշահ ինչ . զի սոցա սերունդն առաւել է , եւ այլն ։

313 . Կինիփեան է լիբիական կամ ափրիկեան . զի Կինիփս կամ Կինիփոս է գետ Լիբիոյ 'ի սահմանս Տրիպոլսի առ Գարամանտօք , ուր գիսաւոր յոյժ են քաղք , որոց խմս զայծիս առ հասարակ . յորոց մազիցն գործէին յայնժամ խարազն եւ քուրձ եւ չուանս ։

316 . Զ Լիկէոս տես ա . 19 . եւ խմս փոխանակ որոյ եւ է լերին ։

Եւ ինքնին ուշիմ մտօք դառնամ 'ի տուն՝ և զհուրմն ածեալ,
Եւ ըստեւամբ ծանու բեռին հազիւ ընդ սեամըն անցանեն։
Արդ զանքոյթս 'ի հողոց մահկանացու կարօտանայ՝
'Ի ցըրտոյ և 'ի հողմոց բըքաբերաց պինդ պահեսցես,
Եւ ռոճիկ բերցես 'ի բուտ և թուփ դալար զուարթամիտ,
Եւ մի զձըմեռն ողջոյն՝ փակեսցիս քեզ մարագք համբուն։
Իսկ զարուն երբ հըրճուալից 'ի քաղցրասիք օդոց հրաւէր
Յարօտ զերկաքանչիւր հօտն և 'ի մարգս արձակեսցէ,
Ընդ կանուխ արուսեկի աստեղն հասցուք յանդ ցօղազին՝
'Ի զուարթ առաւօտուն 'ի ճաճանչել դալար սիզոյ,
Մինչդեռ շաղ 'ի բոյս փափկիկ անուշահամ է պաճարի։
Իսկ ժամ չորրորդ երկնաճեմ մինչ ծարաւոյն հոծէ զփափաք
Եւ ճիպռունք ճռռուողականք հնչեն երգով ըզթաւալթուփս,
Ի ջըրհորս կամ խոր ճահիճըս տուր հրաման երամակիդ
'Ի սղոցի խողովակս ըմպել ալիս կարկաջասահ,
Եւ 'ի տապ տօթաժամու հովանաւոր խընդրել հովիտ՝
Ուր հինաւուրց զօրութեամբ յաղթ ինչ կաղնի Արամազդայ
Մեծամեծ ձըգէ բազուկս, կամ ուր մայրի նըսեմաստուեր
Յանտառախիտ սըղոցեաց ըզհովանին սըփռէ իւր սուրբ.
Ապա կըրկին 'ի փափուկ տանել վըտակս, յարօտ կըրկին,
Ընդ արեմուտս ուր զովացին գիշերավար զօդս ածքէ,
Եւ լուսին ցօղատարափ կենագործէ զմայրեաց թաւուտ,
Ծովափունք 'ի խոթս հընչեն և մացառուտք 'ի ցախ սարեկս։
Ո՜վ քեզ տաղիւք ըզտուարածսըն Լիբական նըւագեցից,
Ո՜վ զարօտս և զցան և ցիր հանդըրուանաց բնակեալ վանկունս.
Բազում այն է զի զամիսն ողջոյն 'ի գըլուխ տիւ և գիշեր

318. Ընդ երեկս դառնամ 'ի տուն ածեալ 'ի մօտ պահելով զճանապարհն և զանդեան. և ընդ ինքեանս բերեն և զհուրեանցսն, այսինքն զհուրեանցայինան՝ զորդիս, զորս մարք տանին և բերեն։

320. Արդ քանզի այսպէս սակաւ հող և աշխատութիւն հասուցանեն այծք վասն այլոց այծոյից, պարտ ամենայն խնամով փոյթ կալջիր գէթ բաւուք պահպանել 'ի ցրտոյ և 'ի հողմոց. և առատաբար կերակրեսջիր, և մի զլասցիս նոցա խոտ և խոտ զձմեռն ողջոյն։

329. Չորրորդ ժամ է երկու ժամու յառաջ քան զօր հասարակ։

334. Կաղնին Արամազդայ ասի իբրև նմա նուիրեալ։

337. Ապա հրաման տուր տանել վերըստին յարօտս և արածել միւսանգամ։

341. Զծովեզերեայ ափրիկեցւոց զնումիդացւոց կենցաղն ասէ, որ հովուական առապաճարականն կենօք արօտական ճարակաւոր շրջէին հօտիւքն հանդերձ զամառն ողջոյն՝ առանց բնաւ ընդ յարկաւ ուրեք մտանելոյ, և Նոմադքն վասն այնր անուանին հելլէնաբար։

Շըրջի արօտական խաշն ընդ երկայնս անապատաց .
Այնչափ դաշտք ընդարձակք և ոչ ուրեք ինչ վանատուր ։
Անդէորդ ափրիկեցին ընդ իւր վարէ զամենայն ինչ ,
Յարկ , Թերափ , կազմած զինուց , շուն ամիկլեան , կրետեան կապարճս ,
Իբր արի հռովմայեցին վառեալ 'ի զէնսըն հայրենի
Ըստ անձին յորժամ բարձեալ բեռն անարժիւ խաղայ 'ի չու ,
Եւ յանկարծ հարեալ բանակ 'ի ճակատու կայ Թըշնամւոյն ։
Այլ այսպէս' ուր սկիւթացւոց ազինք , ալիք մէովտական
Եւ Իստրոս յորձանահոս պըղտոր յաւազ շիկակարմիր ,
Եւ ուր դառնայ Ռոդոպէ կարկառելով 'ի սեւըն կոյս ։
Ըզպառակս անդ 'ի ջերմնեակ փակեն մակաղս ամրապահեստ ,
Այլ խոտ 'ի դաշտ երեւեալ' ոչ մի տերեւ 'ի ծառատունկ .
Այլ անարդ դընի երկիր 'ի ձիւնեղէն կարկառակոյտս
Եւ 'ի պաղ թանձրախոր յեօթըն կանգուն շուրջ դիզացեալ ,
Միշտ ձըմեռըն սառնային , ցանգ ցըրտաշունչ հողմ հիւսիսի ։
Եւ ոչ երբէք արեգակն 'ի լըրթագոյն թափի ստուերաց ,
Այլ յորժամ ձիավարեալ բարձր 'ի յերկին ասպատակէ ,
Այլ յորժամ զվայրաբեր կառս 'ի շառագոյն լուանայ 'ի ծով ։
Կեղեւանք յական քըրթթել ձուլեալ հոծին յուխս 'ի գնայուն ,
Եւ ալիք 'ի մըկանունս երկաթապատ բառնան անիւս ,

347 . ՅԱմիկլայս 'ի Լակոնական քաղաքին նշանաւոր և անուանի էին բարակք որսականք և ասպականիք յորսս ականաւորք ։ Եւ կրետացիք' աղեղնաւորք կորովիք և հատաձիգք էին . վասն որոյ 'ի նոցանէ առնու զվերագիր կապարճիցն , և ոչ թէ արգեամբք կրետականօքն վարեցեալք ։

349 . Զօրականք Հռոմոց , անհնարին բեռն 'ի յուս' կահի և կարասւոյ և կազմածի , խաղային 'ի պատերազմ . իբրու վաթսուն լտերաց չափ ։

351 . Ընդ հակառակս Նոմադացւոց , որ վայրաբնակք վայրագք և բացօթեացքն են , հիւսիսական ձմեռնացեալ ազինք միշտ ընդ յարկաւ պահեն զանասունսն ։ Սկիւթացիս կոչեն հինք ոտրապէս զամենայն հիւսիսական ազգս Ասիոյ , որոց ինչք և ստացուածք էին միայն հօտք և անդեայք , և վաչկատուն սայլատուն շրջէին կանամբք և մանկաւով ։ Մէովտական ալիք նշանակեն զՄէովտիս ծովակն 'ի հիւսիսակողմն Սեաւ ծովուն , յոր մտանէ Տանայիս կամ Տօնաւիս գետ ։

352 . Իստրոս է գետն Դանուբ կամ Դանոբ , մանաւանդ ծովակողմանք նորա , որպէս և յաւազն ասացաք ։

353 . Ռոդոպէ լեառն Թրակիոյ երկայնեալ յարևելս կոյս կցի ընդ Հեմոս լերին , և անտի առաջ զհիւսիսեաւ դառնայ 'ի բևեռըն կոյս ։ Զնկարագրեալ սաստկութիւն ձմերայնոյդ' զխոր հիւսիսոյ իմանալի է , և թերևս քերթողական առաւելազանցութեամբ փոքր մի անցեալ ըստ չափ ըստ աւելեաց ։

359 . Ոչ երբէք փարատ է արեգակն 'ի ստուերացուցիչ ամպոյ և 'ի մառախլոյ , ոչ յառաւօտէ մինչև ցմիջօրեայ յոր բարձրանայ , և ոչ անտի 'ի մուտս իւր' յորում թուի ողողանել զկառս իւր 'ի ծովն արեւմտեան կարմրացեալ յերեկորին ճառագայթից նորա ։ Քերթողք ըստ դիցաբանութեան կառս իմն քառաձիս ընծայեն Արեգական ։

Պնդեալ լաստից այնք երբեմն՝ այժմ սայլից ասպընջական .
Հերձոտին պղնձիք ըստէպ և ձորձք զուտովք մածնուն 'ի պաղ ,
Եւ նամէտ գինեաց հատանիք յօչին հատմամբ տապարաւ .
Լճակք առ հասարակ փոխին 'ի սառըն միաձոյլ ,
Եւ կարծրակուռ պաղլորակ ընդ խըռուացեալ կախի մօրուս ։
Եւ սակայն ոչ ինչ ընդհատ երկնիք բոլոր բուք յորդորեն .
Աչխարակք մեռանին , կան թանձրակոյտ եզանց հասակք
Պատուցեալ եղեմնապատ , և եղջերուք 'ի մի ջոկի
Նոր բեռամբ թըմբրեալ դըմնին՝ ծայրիւք եղջերց հազիւ յայտնեալ ։
Զսոյս և ոչ պատանիւք արձակելով , ոչ զահողովք
Կամ յակընհար կարմրափայլ փետրոյն զերկչոտսըն խուճապեն .
Այլ 'ի զուր մըրցել նոցա լանջօք ընդ լեառըն դիմակաց՝
Մօտ հասեալ սրով սատակեն յաղխողորմ նոցին պոչքեն ,
Եւ զուարթագին խընճոյիւք հընչման ձայնից առեալ տանին ։
Ինքեանք յայրըս գետնափորս հանգչին անքոյթ յալուցս երկրի
Զկաղնեաց չեղջակոյտ և զնըրչաքարեաց բունս ողջանդամ
Թաւալեալ 'ի կըակարանն՝ արկեալ 'ի բոց հրոյ խարուկին .
Ընդ ըղձայգն 'ի խաղս հանեն , և ըղխոյմբ և զկին թըթու
Յայգեբուխ բաժակս հիւթոյ ձևակերպեալ զըւարճանան ։
Այսպիսակ յեօթնարփի հիւսիսաձեռն 'ի Սայլըն կոյս
Ռիփեան բըքովք կոծի ապերասան արանց գըրոհ՝
Ընդաւմքն յերէոց ծածկեալ 'ի սաւ խարտեաշագոյն ։
Թէ կըտրոց է քեզ փոյթ , մացառ մայրիք փուշք և տատասկք

370 . Եւ զիմիդ այս , եթէ յամենայն ժամ 'ի գոմս փակեալ պահին հօտք նոցա և անդեայք ։ Զայս՝ գյանկարծահաս բքոց և սառամանեաց խմանալ է յաւուրսն՝ յորս փոքր մի մեղմացեալ զառնութեան ձմեռնայնոյն , յարոտ ելանեն և յանկարծ 'ի բուք ըմբռնին ։

372 . Նոր խմա անսովոր , անակընկալ յանկարծագէտ , և հետզհետէ նորանոր զեղմամբք կուտակեալ ։

374 . Անհնար էր խըռուել չուանեաւ կարմիր փետրովք 'ի միասին անկեալ, որով ընդոստուցանէին զերէս երթալ անկանել 'ի վարմին կամ յերազաղաւան ։

378 . Լեառն դիմակաց է լեռնաձև կուտակումն ձեանն առաջի նոցա ։

381 . Խմոր առա խմանեան մեկնիչք զխմո-րուն գարեջուրն կամ զկաակաջուրն , և 'ի սենն՝ խմեռեան ղայլ եւ թթուահամ պտուղս, յորոց յօրինեալ ազգ ինչ օղւոյ՝ ըմպէին փոխանակ մերոյս գինեաց ։

383 . Զսայլն և զախպեան սառնամած լերինս տես ա . 72 , 250 , 246 ։ Զեօթն աստեղս Սայլին լատինն ասէ տրիոնս , և անտի սոմպրաբար զհիւսիս՝ եօթնտրիոն. զոր Վարրոն ըստ հին լեզուի իւրեանց եօթն տէրիոնս այսինքն եզինս սայլին մեկնէ ։ Սակայն , թող զփոքր մի անպատեհութիւն եօթն եզինս այնպէս 'ի մի սայլ լծելոյ , եթէ եօթնեկին երևելի աստեղքն եօթն եզինք են , իսկ ապա սայլն մեր ճնոյ ։ Զգիտեմ ընդէր չկամիցի հանել 'ի τείρεα տէրիոն կամ τέρεα տէրէոն հեղինէն ձայնէն , որ է աստեղք , արփիք կամ արփիք ։

Հեռի լիցին նախ, խոյս 'ի յատոք տուր ճարակաց.
Ընտրեսջիր փութանակի փափկիկ գեղմամբք հօտ ըսպիտակ։
Իսկ որ թէպէտ լուսակիզն խոյն համակ խոյ բարեփառ,
Բայց լեզու լոկ սեւաթոյր ընդ խոնաւուտ քիմօքն կայցէ,
Հան 'ի բաց, թուխ պիսակօք մի խայտ արկցէ յորդւոց գըղաթ,
Այլ զայլ ոք նըկատեա 'ի բազմամբոխ հրապարակին։
Այսպէս 'ի ձիւնափայլ աստն ընծայ, թէ ստոյգ են վէպք,
Ըմբռնեալ ըղձեղ, Լուսնեակ, խաբեաց Պան գիք արկադական՝
Կոչելով 'ի խոր անտառս և քո զհրաւէրն ոչ անտեսեալ։
Իսկ ում կաթին են տենչանք՝ առնձ և նէրզիւն առատապէս
Այլ աղի բանջարս [illegible] բերցէ ձեռամբ 'ի մըսուրս,
Արով յաւէտ փափաքեն յաղբերս, յաւէտ ձըկտեն զըստինս,
Ներելով 'ի կաթին զթաքուն աղին համեղ ճաշակս։
Նոզմաց հատուցեալ 'ի բաց քեցեն զուլս առ 'ի մարց
Այրախճան երկաթագամ արկեալ նոցա շուրջ ըզքըթով.
Այլ զոր ընդ այգըս այգուն և 'ի տուընջեան կըթեցին ժամն՝
Մակարդեն գիշերի, զոր ընդ երեկս և նըսեմաւ՝
Ընդ աշաղուշաղն տանին, զմայ հովիւ կայթիւք 'ի շէնս.
Կամ 'ի ձմեռըն մըթերեն փոքրն ինչ աղիւ համեմելով։

Մի և շանց 'ի քէն խընամք յետնեալ ապաժամ ինչ եղիցին,
Համայն և ժիր Սպարտայ բարակս և զամեհի հուժկու մոլոսեան

387. Ի պարարտ ճարակէ զգուշացուցանել առէ զհօտն, զի հիւթն ամենայն 'ի ճարոց փոխի և ոչ յատոր։

388. Զի սպիտակ ասրն առաւել յարգի և պատուական է։

394. Պան գիք 'ի խոյ փոխեալ երբեմն ըստ առասպելին, ձիւնափայլ գեղմամբն ախտակութեամբ հրապուրեալ ձգեաց զԼուսին զհետ իւր 'ի խորս մայրեաց առ 'ի կատարել խոյզ [illegible]. կամ որպէս այլք զրուցեն, առ ակն նորա զինքն [illegible] հեռալ 'ի պարգևս, և նորա զասլխատական առեալ և խաբեցաւ։

403. Զմակարդեալս՝ զխթաղ պանիրս միայն խմելեան միհինեք. [illegible] ինչ անուանեն խմելեալ և զմածնոյ։

404. Ամենայն գրչագիրք միաբան այսպէս ունին զտողս, զոր Սկալիգեր հաւանական և ասէ, չգիտեմ յինչ պէտս, կամի թէ ուղղել ըստ քմաց իւրոց 'ի հասարակ ատացուած փոխելով,
Ընդ աշաղուշաղն կայթիւք առեալ զընայ 'ի շէնս հովիւ։
Եւ սովորական ապագայքդ միաբանեալ ընդ նմա՝ ընկալեալ են զսորա պարզ փոփոխութիւնդ. բայց զրազդում զայգաբաց տարապարզ փոփոխութիւնս Սկալիգերի 'ի գիրս նախնեաց՝ գտանիցեն առնեն արդի բազմահմուտ քննիչք։ Իսկ կայթն է կոզով կամ սակառաւ տանել հիւղեէն։

405. Ամառն փառն ձմերայնոյ՝ պանիր գործելով։

407. Սպարտայ կամ Լակեդեմոնի շունք առաւել յարգեն բարակաց եկն. ըզգաստք և սուր հոտոտելիք, բայց աղուէսանապաստ. իսկ մոլոսացիքն, որ 'ի գաւառէ իմիքէ Եպիրական, թէ յորսս պատուականք և թէ 'ի պահպանութիւն հօտի։

'Ի շիձուկ օձոտ պալարս, և ընդ նոցին պահպանութեամբ
Ոչ դող երբէք ըղձաւթոք՝ գայլոց հինի ոչ ասպատակ
Կամ 'ի Թիկանց ահացուցէ զքեզ խաղմտարան Իբերոնի :
Այլ յարշաւ բազում անգամ տաղձառապեացն զերկչոտ ըղձիս,
Այլ շամբք նապաստակս որսայցես շամբք յամբըր և վիթ,
Կինճս յաճախս 'ի մայրաստս Թաւալոցաց ընդոստուցեալ
Խուճապեցես 'ի հաչիւն, և 'ի վերայ լերանց բարձանց
Եղջերու վիթխարի գոռմամբ 'ի վարմս վարեսցես :

Ունիր վառել 'ի փարախս և եղեւնս ընդհատեան,
Այլ զպիշապարն ծանուցս 'ի քաղաքամեջան փանել ձեռնձեր :
Բազում այն է զի 'նդ անշարժ մրրկօք գործարէ հով հարկանօղ
Դառամեալ՝ և զարհուրեալ յերկնից լուսոյն գնայ 'ի կորուստ,
Կամ Թէ սովոր մըտանել օձ ընդ յարկաւ և ըստուերաւ,
Ընդէոյ ժանտ ժըպիրհ, և 'ի Թափել Թոյնս 'ի հօտին,
Ընդ հողով բունէ, բուռն հար, հովիւ, 'ի վէմս, հար բուռն 'ի քար,
Ըզխորոխոտըն բարձրաձայնեալ և զփքացեալ շնչօղ ուռածին
Հալածեա, զգլուխն ահաբեկ 'ի խոտս ահա Թաքեայ 'ի խոյս,
Մինչ աղիք ողին և զսաւառնաւոր ոլորատալասս վէշս վէշս տըստան
Յուծանելն, և զյամր տորս ընդ քարշ ածէ յետին պարոյր :
Է և այն որ 'ի մայրիս կալաբրացւոցն չար վիշապ
Ուղղաբերձ կանգուն ընդ մէջքն հողմկեալ Թեփոտ Թիկամբ
Այլ երկայն փոր խայտաբղետ 'ի մեծամեծ նիշ նըկարէն .
Որ յորժամ գետք յաղբերաց բըխեալ յորդին, և մինչ երկիր
'Ի տամուկ Թանայ գարնան և հարաւոյք խոնաւական,
Բնակէ 'ի լիճս և նըստեալ անկարըշտին անդ առ եզեր
Չըկամբք և շաղակրատ գորտովք լնու զըրժոխս որկորն .
Իսկ իբրև խաղըն կիզեալ և 'ի տօԹոյ սկայք գետինն,

410 . Իբերոնի կամ Իբերացի՝ աղանձխա- ցին է, որք գաղաւԹեամբ և յենլաւ- Թեամբ անուանի էին, մանաւանդ մինչ չև նուաճեալ էր և ապաւինեալ և ընդելու- կըրԹեալ . սոյր ճրոյն և խաղմնարան իսկ կոչէ : Բայց Աղաճնեան ասա ասելով է ջա- խանակ ամենայն գուղդ :

417 . Քանզի կամ անզգամ հոյզ է իբրև զինչ կամ զկասնեկ, զոր սոյ նարգիս վայրենի, և 'ի հասոյ նոքա և 'ի ծխոյ հա- լածին օձք : Իսկ զօձն ծանուցս ոմանք ըստ գաղշահասուԹեան խնման, և կէսք ըստ վնասակարուԹեան :

427 . Կալաբրիա յայտնի է զաւառ 'ի հարաւային ծագս Իտալիոյ, ուր յաճախ է սյս օձ երկակենցաղ նման խժի և քարբի կամ Թզաքարբի և աղքայիկ օձին :

՚Ի ցամաք վաղեալ կայտառ և աչս ածեալ շուրջ բոցավառս
Յանդըգն մոլի պապակով դըժնեայ և ՚ի տապոյն գազանացեալ։
Քաւ լիցի նիրհել յայնժամ ինձ ընդ երկնաւ քուն քաղցրանինջ,
Քաւ յորսայս յոգն անկանել ընդխոտաւէտ թիկամբ մայրեաց,
Մ՛ինչ նա զխորխն ընկեցեալ՝ նոր մանկութեամբ պայծառափայլ
Ման առնու, կամ ըզկորիւնսն ՚ի տան թողեալ և կամ ըզձուս,
Բարձրավիզ՝ և եռատայր լեզուք ՚ի շուրթն յարև շողայ։

Եւ զախտիցն ուսուցից ըզքեզ պատճառս և զնըշանակս։
Քոս չարակեզ հարկանէ զհօտն՝ ուր ցուրտ անձրև խառնամուռ
՚Ի մարմինս անցանէ թափ և կարաձմեռն սառնասայց,
Կամ յետ կըտրոց ըզնոքօք եթէ մածնու քիրտն անլուայ,
Եւ ցրտեն նոցա զանդամսն խայթահարք քըստմընափուշք։
Վասն որոյ քաղցր ՚ի վըտակս հովիւք զամուլ խաշն ողողեն,
Եւ խոյն զըզաթուն թուրմ ՚ի գետ անդըր մըխըրճի
Եւ ընդ հոսանս յորձանաց թողեալ խաղայ ըզնայ ՚ի լուղ.
Կամ զխըրամնաքն խըզեալս ՚ի ժանտ ներկեն մըրուր ձիթոյ՝
Զարծաթոյ խառնեալ փըրփուրս և ըզծըծումբս կենդանիս,
Եւ ձիւթ իդակեան և իւղայլն մոմ ճարպալիր,
Մ՛ըկնատակս և վըրացի կոճըս ծանունս և կուպր սև։
Սակայն չիք ինչ առաւել ցաւոցըն դիւր երագահաս
Որպէս զի ոք երկաթով պատառիցէ զխոցոյն զըլուխ.
Զի անթափ արկածքն ՚ի ներքըս ճարակեալ կան կենդանի,
Թէ ՚ի վէրսըն խաշնարած ձեռն արկանել բըժըշկական
Հրաժարեալ՝ և զամենայն ՚ի դից նըստեալ հայցէ զաւրէնս։

437. Ընդ երկնաւ, ՚ի բացի, բացօթեայ։

438. Թիկունք՝ տարածէս լերանց ստորին և բլրոց. այլ անտառք և մայրիք որ ՚ի լերինս և ՚ի բլուրս իցեն, տափ և նոցա են։

440. Ձուս կամ զկորիւնսն յիշատակէ, զի ամենայն գազան ՚ի ժամանակս ծննդոց ամեհագոյն է։

441. Լեզուք օձից ըստ Արիստոտելի խակ երկճիւղ են. իսկ քերթողք եռատայր կամ երեքարձեն տեսեն զայնս. կամ զի արագեամբք այնպիսի են, կամ զի ՚ի սաստիկ արագութենէ շարժմանն այնպէս երևին։

450. Բաց ՚ի լուալեաց և այլ ինչ ցուցանէ դեղ կամ սպեղանի քոսոյ, յորոյ ՚ի կազմութիւն մտանեն զատն մրուր ձիթոյ, քարմրցանակ՝ զոր փրփուր արծաթոյ կոչէ, և այն է որ ՚ի զտելն արծաթոյ ՚ի բովս՝ յերեսան գիզանայ. բայց ոմանք մեղիկ խմանան. գարձեալ և զուտ և մաքուր ծըծումբ հանածոյ, և ձիւթ կամ կպրաձիւթ Իդայ լերին Փռիւգիոյ կամ Կրետէայ՝ այսինքն աղնիւ, և մոմ և մկնատակս կամ սոխ ծովային, և կոճ վրացի կամ մրտակ ծանրահոտ, և սաստ խմա զալխտուենի, և կուպր կամ նաւթ։

488. Օրինակք ինչ ունին Հրաժարէ, կամ նստեալ ՚ի դից հայցէ բազդ բարեգէտ. զomnia որ է ամենայն՝ ընթերցեալ omina։

Իսկ իբրև ցանն 'ի ներքին ոսկերս հօտին անկեալ մնի,
Եւ տենդ տապախտան առնէ զանդամսն հալ և մաշ,
Լաւ իցէ փարատել ընդարմացեալ հիւանդին եռանդն
Երակ արիւնաբուխ արձակման 'ի ծագս հատանելով,
Զոր օրինակ Բիսալտայք սովորեցին և դուժ Գելոն
Մինչ փախուցեալ 'ի Ռոդոպէ և յանապատս գետացւոց
Ըզկաթըն մակարդեալ երիվարին ընդ արեան։
Զոր օգտեալ և ընդ ախորժ մրտեալ ըստէպ ընդ հովանեաւ
Կամ ըղծայրըս հեզգաբար զխոտոց կրծել անհաճելիցես,
Եւ վերջատեալ կամ դաշտին ընդ արածելն անկեալ 'ի մէջ,
Եւ տեղի տալ միայնակ անագանի գիշերայնոյն,
Երկաթով զեղեռն 'ի բաց վաղվաղակի հատ պատուհասեա՝
Զի ընդ ամբոխն անզգոյշ ճարակ գրտեալ ախտին չարի։
Ոչ այնչափ կուռ փոթորիկք անկրոպայոցք խաղան 'ի ծով,
Որչափ խուռն ախտանոց ժանտք, և ոչ մի մի զոք առանձինն
Հարուածքն ընթրանեն, այլ զհանգրրուանն ողջոյն յանկարծ
Զյոյս և զհօտ համայնաշինն զխակըզբանէ զարմ և զաւակ։
Յայնժամ զայդ 'ի միտ առցէ՝ թէ զԱլպիս ոք գողակառոյց,
Զնորիկեան ամրոցս 'ի բլուրս, զանդս յապիդեանըն Տիմաւեայ
Այժմ իսկ տեսցէ յետ ամաց՝ ըղտաւարածացըն զարքունիս
Ամայի և զանտառս յայսկոյս յայնկոյս 'ի սպառ թափուր։
Անդ երկնից ախտիւ յարեաւ ողորմ երբեմըն ժամանակ
Տօթագին աշնայնոյն խորշակայերգ բոցով հրաշէկ,

Բայց բաղդուածք և սոսուդադայինք ունէին որպէս եղաւքս զամենայն բարիս ։

459․ Քոսն արտաքին ախտ է մորթոյ, իսկ տենդն ներքին անդամոց և արեան, և աստ զանազան են ուրոյն բանք ։

463․ Այս սովորութիւն երակ հատանելոյ ձիոց և ըմպելոյ զարիւն նոցա ընդ կաթին՝ ոչ էր միայն Բիսալտացւոց ազգաց Թրակիոյ կամ Մակեդոնիոյ, և ոչ միայն Գելոնաց սկիւթական կամ Թրակացի ժողովրդոց, այլ առհասարակ ամենայն սկիւթական ազանց, սարմատացւոց, գետացւոց և Մասքթաց ։

464․ Զռոդոպէ տես ա․ 343․ դ․ 383 ։ Իսկ գետացիք կամ Գետք ազգ են 'ի գաւառաց, սահմանակիցք Սկիւթիոյ և Թրակիոյ առ բերանովք Դանուբ կամ Իստրոս գետոյ․ զգաւկեանս տես բ․ 300

470․ Իբրև զայդ նշանս ախտին տեսանիցես, բարձ 'ի միջոյ զխաշնասակարն ազանդամամբ սրոյ ։

475․ Զհօտն ամենայն հանդերձ մայրովք և որդւովք որ յոյսն են հօտին և հովուին ։

476․ Զայս յայնժամ հաւատալի գիտասցէ ոք, եթէ տեսցէ յետ այնքան ամաց զտակուին երևեալ ամայութիւն հովուականացն և անտառացն, որ երբեմն չէնն էին յԱլպեայս՝ 'ի բարձրակառոյց լերինսն եգերականս Իտալիոյ, և 'ի Նորիկեան բարձրաւանդականն՝ որ են մասն ինչ Բաւարիոյ և Աւստրիոյ հանդերձ Կարինթեաւ և Ստիրեաւ որ 'ի հիւսիսոյ Ալպեանց, և 'ի միջնակողմ Տիմաւոս գետոյ Վենետաց՝ զոր յարիւծեան ասէ վասն երբեմն անդէն բնակելոյ կամ դրացի գոլոյ յապիդեանց, որ են խորուաթացիք յազգացն Իլլիրիկեցւոց ։

'Ի ցամաք վաղեալ կայտառ և աչս ածեալ շուրջ բոցավառս
Յանդըրս մոլի պապաքով դըժնեայ և 'ի տապոյն գազամնացեալ :
Ո՛չ աւ լիցի նիրհել յայնժամ ինձ ընդ երկնաւ քուն քաղցրանձինջ ,
Ո՛չ աւ յորսայս յոգն անկանել ըղխոտաւէտ թփկամբ մայրեաց ,
Մինչ նա զխորխն ընկեցեալ՝ նոր մանկութեամբ պայծառափայլ
Մանն առնու , կամ ըզկորիւնսն 'ի տան թողեալ և կամ ըզձուս ,
Բարձրավիզ՝ և եռատայր լեզուք 'ի շուրթն յարև շողայ :

Եւ զախտիցն ուսուցից ըզքեզ պատճառս և զնըշանակս :
Ո՛րս չարակեզ հարկանէ զհօտն՝ ուր ցուրտ անձրև խորամուտ
'Ի մարմինսն անցանէ թափ և կարածմեռըն սառնասոյզ ,
Կամ յետ կըտրոց ըզնոքօք եթէ մածնու քիրտն անլուայ ,
Եւ ցըտեն նոցա զանդամըսն խայթահարք քըստմընափուշք :
Վասն որոյ քաղցր 'ի վըտակս հովիւք զամուր խաշն ողողեն ,
Եւ խոյն զըղաթուռն թուրմ 'ի գետ անդըր մըխըրձի
Եւ ընդ հոսանս յորձանաց թողեալ խաղայ զընայ 'ի լիւղ .
Կամ զիրանսըն խըզեալս 'ի ժանտ նեըրկեն մըրուր ձիթոյ՝
Զարծաթոյ խառնեալ փըրփուրս և ըզծըծումբըս կենդանիս ,
Եւ ձիւթ իդական և իւղայինն մոմ ճարպալիր ,
Մըղխատախ և վըրացի կոճըս ծանուծս և կուպր սեաւ :
Սակայն չիք ինչ առաւել ցաւոցըն դիւր երագահաս
Որպէս զի ոք երկաթով պատառիցէ զխոցոյն գըլուխ .
Զի անթափ արկածքն 'ի ներքըս ճարակեալ կան կենդանի ,
Թէ 'ի վէրըսըն խաշնարած ձեռն արկանել բըժըշկական
Հրաժարեալ՝ և զամենայն 'ի դից նըստեալ հայցէ զբարիս :

437 . Ընդ երկնաւ , 'ի բացի , բացօթեայ :

438 . Թփկունք՝ տերատեղս լերանց ասէն և բլրոց . այլ անտառք և մայրիք որ 'ի լերինս և 'ի բլուրս իցեն , առի և նոցա եւ :

440 . Ձձուս կամ զկորիւնսն յիշատակէ , զի ամենայն գազան 'ի ժամանակս ծննդոց ամեհագոյն է :

441 . Լեզուք օձից ըստ Արիստոտելի եւս երկճիղ են . իսկ քերթողք եռատայր կամ երեքարձկեն ասեն զայնս . կամ զի որդեամբք այնպիսի են , կամ զի 'ի սաստիկ արագութենէ շարժմանն այնպէս երեւին :

450 . Բաց 'ի լուալեացս և այլ իմն ցուցանէ դեղ կամ սպեղանի քսայ , յորոյ 'ի կազմութիւն մտանեն դառն մրուր ձիթոյ , քարմրցանակ՝ զոր փրփուր արծաթոյ կոչէ , և այն է որ 'ի զտելն արծաթոյ 'ի բովս՝ յերեւան գիզանայ . բայց ոմանք սնգնիմանան . դարձեալ և զուտ և մաքուր ծըծումբ հանածոյ , և ձիւթ կամ կպրաձիւթ իդայ լերին փռիւգիոյ կամ կրետեայ՝ այսինքն աղնիւ , և մոմ և մղխատախ կամ սոխ ծովային , և կոճ վրացի կամ մըտախառակ ծանրահոտ , և սեաւ խեժ զալխոանին , և կուպր կամ նաւթ :

458 . Օրինակք ինչ ունին Հրաժարէ , կամ նըստեալ 'ի դից հայցէ բաղդ բարեդէպ .
զomnia որ է ամենայն՝ ընթերցեալ omina :

Նաև իբրև ցաւն 'ի ներքին ոսկերս հօտին անկեալ մնի,
Եւ տենդ տապախառն առնէ զանդամոցն հալ և մաշ,
Սաւ իցէ փարատել ըղձաբորբեալ հրատին եռանդն
Նորակ արխնաբուխ աղբերանն 'ի ծարս հասանելով,
Զոր օրինակ Բնակալեայք տոչորեցին և դուժ Պեռլոսն
Մինչ փախուցեալ 'ի Խողոպէ և յանապատըս գետացւոց
Բզկաթըն մնկալուածեալ երիվարին ըմպէ արեան ։
Զոր օգտեալ և ընդ ախորժ մըտեալ բաւէլ ընդ հովանեաւ
Կամ բըծայըրս հեղգաբար զլուսոյ կըրծել ակնարկեցեր,
Եւ վերջանեալ կամ դաշտին ընդ աղածելն անկեալ 'ի մէջ,
Եւ տեղի տալ մեռանուկ անապանի գիշերայնոյն,
Երկաթով զեղեան 'ի բաց վաղվաղակի հատ պարարեաւ՝
Զև ընդ ամբոխն անըզգոյշ ձարակ գըտեալ ախտին չարի ։
Աչ այնչափ կուա փոթորիկք անկըրապայոյգք խաղան 'ի ծով,
Որչափ խուռն անասնոց ժամուք, և ոչ մի մի զոք առանձինն
Հարուածքն ըմբըռնեն, այլ զհանգըրուանն ողջոյն յանկարծ
Զօրս և զհօտ համայնականին զխակըղզանէ զարմ և զաւակ ։
Յայնժամ զայդ 'ի միտ առցէ՝ թէ զԼապիս ոք զօդակառոյց,
Զնորիկեան ամրոցս 'ի բլուրս, զանդս յաբխուեանսըն Տիմաւայ
Եպժմ իսկ տեսցէ յետ ամաց՝ ըզտուտպածայըն զարքունիս
Նմայր և զանտառս յայսկոյս յայնկոյս 'ի սպառ թափուր ։
Զնդ երկնից ախտիւ յարեաւ ողորմ երբեմըն ժամանակ
Տօթաղին աշնայնոյն խորշակայերգ բոցով հրաշէկ,

Բայց բաղդուածք և տասուգադոյնք ունին որ- դէս եգարս զամենայն բարիս ։

459. Քուռն արտաքին ախտ է մորթոյ, իսկ տենդն ներքին ախտնգամնոյ և արեան, և ատա զամանէ են ուրոյն բանք ։

463. Այս տմկարութիւն երբեմն հա- տանելոյ ձիոց և ըմպելոյ զարիւն նոցա ընդ կաթին՝ ոչ էր միայն Բիստոնեայց ազ- գաց Թրակիոյ կամ Մակեդոնիոյ, և ոչ միայն Գելոնաց սկիւթական կամ Թրակացի ժողովրդոց, այլ առհասարակ ամենայն սկիւթական ազանց, սարմատացւոց, գե- տացւոց և Մասքեթաց ։

464. ԶԲոդոպէ տես տ. 343. ք. 383. Իսկ գետացիք կամ Գետք ազգ են 'ի գա- ղեանց, սահմանակիցք Սկիւթիոյ և Թրա- կիոյ առ բերանովք Դանուբ կամ Իստրոս գետոյ. զգամկեանս տես ճ. 500

470. Իբրև զայդ նշանս ախտին տեսա- նիցես, բարձ 'ի միջոյ զվնասակարն ապա- մանք որոյ ։

475. Զհօտն ամենայն հանդերձ մաքրոք և որդւովք որ յոյսն են հօտին և հովուին ։

476. Զայս յայնժամ հաւատասցէ գիտասցէ ոք, եթէ տեսցէ յետ այնքան ամաց զառա- կաւէին երևեալ ամայութիւն հովուականա- ցըն և անասնոցն, որ երբեմն չէին էին յԱլպեայս՝ 'ի բարձրակառոյց լերինսն ե- զերականս Իտալիոյ, և 'ի Նորիկեան բար- ձրաւանդակսն՝ որ են մասն ինչ Բաւարիոյ և Աւստրիոյ հանդերձ Կարինթեաւ և Յաբ- րեաւ որ 'ի հիւսիսոյ Ալպեանց ; և 'ի վիճա- կըս Յիմաւոս գետոյ Վենետաց՝ զոր յարի- տեան առէ վասն երբեմն անդէն բնակելոյ կամ դրոյց դոլոյ յարխուեանց, որ են խա- ղալեացիք յազգացն Իւլրիկեցւոց ։

Որ սպառնագոռ սատակեաց ըղձազանաց՝ զմնամնոց ձեռ,
Եւ ըղլիճըս և զարօտս ապականեաց 'ի ժահ թունից։
Եւ մահուն ճանապարհ չէր օրինակ հասարակաց.
Այլ հրատապ մինչդեռ ծարաւ ընդ երակունս անկեալ բոլոր
Փաղաղէր ըղհէք անդամս, յորդէր անդրէն զինձին թարախ
Եւ ուտէր տակաւ զոսկերսըն խըղխայթեալ առ հասարակ։
Յաճախ 'ի դից դահամունս հաւպ առ բագնին զոհըն կացեալ,
Լուսանիւթ ժապաւինեաւ մինչ ապարօշ սաւուի պատի,
Դանդաղկոտ պաշտօնէիցն առ սոս անկեալ թափէ զոգիս.
Կամ թէ զոք կանխեալ քըրմին և սրախողխող փողոտեալ,
Ոչ անտի նուիրելով ընդերբք այրին սեղանք երբէք,
Ոչ հրամանն պատասխանւոյ տալ ինչ զօրէ զուշակ հարցեալ.
Հազիւ ներկանէին սուրբ՝ մըխեալք յարեան թոռոթաբուխ,
Եւ 'ի հիւծ նըւաղ շարաւ թուխ թաթաւին երկրին երեսք։
Նստուստ 'ի զուարթ դալարխոտըն խիտ առ խիտ սատակին որթք,
Եւ զոգխարըն զանուշակ անդ առ զեղուն մըսուրօք փըչեն։
Նստի քըծնի շանց կատաղումն, և հազ թասօղ դըղըրդեալ
Զհիւանդ խողեանն ընդ փողն այտոյցս անհէ հեղձամըղձուկ։
Ընկանի վաստակաբեկոտորիկ զօռ երիվարըն քաջայաղթ
Ըղխոտ և զախորժակըն մոռացեալ, յաղբերց յուրաստ,
Եւ ոտիւքն հարկ ըստէպ դամբր հատանէ, ականջքըն 'ի կախ,
Եւ անդ քըրտնըն յեղյեղուկ՝ և այն ցըրտին յորհասականս.
Մորթ խըռուեալ երկթացեալ բիրտ 'ի զըննին ձեռին խաղմունս։
Զայսոսիկ տան նըշանս 'ի սկիզբն աւուրց նախ քան ըղմահ.
Իսկ եթէ այնուհետև սկըսանի ախտըն զայրանալ,
Ընդ աչք բոցագոյն և հառակըլեալ մըրթ 'ի խորոց
Ռունչ հեծունչ հառաչակուղ, երկարաձիգ հեծեծանօք
'Ի վերջին կուշտք ձըգեալ պըրկին, արիւն ընդ քիթս ընթանայ թուխ,
Եւ լեզուն խիստ և հոծեալ՝ կըցեալ 'ի քիմս հազագին նուրբ։
Օգնեցին Ապամնդարմետին մատրուակեալ ծորանք եղջերբ,

489. Զի և զգլխով զոհին վարսակալ սաւուի ածէին ժապաւինաւ կապեալ, և զծայրսն սոսկ անտի 'ի վայր արձակեալ։

492. Ոչ նուիրին 'ի հուր սեղանոյ երբէք անդամաբեկք. և ոչ մարգարէ կամ գուշակ կարէ պատասխանի ինչ տալ կամ հմայս հմայեալ. այնու զի մահն ինչ ընդերացն պակաս գոսանի կամ ապականեալ։

498. Զփայքայլ խողացն և զծծակ չուափողից նոցա նկարագրէ կենդանի։

500. Անդ՝ զականջքն քերան անհաստատ, որ հազալ գայ և մերթ գնայ։

511. Ասէ թէ 'ի սկզբան ախտին օգնէ զենի՝ եղջերեայ փողով կամ խողովակաւ ար-

Այդ եւեթ երեւեալ 'ի հոգեվարութեան փրփրկանաւ .
Այդ իսկ առաս հաս եղեան , եւ արծարծեալք 'ի մոլութիւն
Բորբոքէին , եւ կիզանէին , դառն օրհասին առ դուրս հասեալք ,
(Յարդարոց քաւ , մեզ դիք , եւ ատելեաց այն զառամանք ,)
Խածատեալ մերկ ատամամբ կեղեքէին զանդամս իւրեանց :
Իսկ զլուարակ աւանիկ կարծր ընդ խոփիւքն ծըխաշաւեղ
Տապալի , ժայթքէ 'նդ բերանն փրփրախառն ապաժոյժ
Ըզյետին հանեալ թառանչ . գնայ տրտմեալ հողավարատակ
Ըզթախծեալն արձակելով միահաւանն եղբօրն ամոլակից ,
Եւ կիսագործ 'ի հերկին ցցեալ թողու զմաճն եւ զարօր :
Ոչ հովանիք խոր մայրեաց՝ ոչ մարգք կարեն զարթնացուցանել
Շարժել ըզզգայութն , ոչ քան զելեկտր ջինջ ընդ քարինս որոր վտակ
Որ դէմ 'ի դիւր գնայցէ , այլ 'ի ներքուստ կողք լուծանին ,
Զաչսն առեալ կրկնոցեալքն պաշարէ արգահ թմբիր ,
Եւ հակեալ մէտ ծանրութեամբ ուլն 'ի յերկիր հոսի առապար :
Զինչ երկին օգնէ կամ օճանք , զի՞ կորդ 'ի խոփ դաշտս պատառեալ .
Եւ սակայն ոչ մասսիկեան Աստուածպաշտեանին տուրք պարգեւաց ,
Ոչ ճաշք ըզճաշելոյ մթերեալք համագամագ մեղան նոցա .
Տերեւովք եւ յանպաճոյճ ճարակ խոտոյ պարենաւորք ,
Բաժակ գետ քաղցրաճաշակք են եւ աղբիւրք ակնաւորք ,
Եւ ոչ զըմպաղ ցնորիչ զառողջարար քունս հատանէ :
Ոչ յայլում ժամանակի վկայեն երբէք ընդ այն նահանգս
Երինջուց եղեալ խնդրիլ առ 'ի հանդէս տօնին Հերայ
Եւ յանզոյգ գոմշոց ածեալ կառս 'ի վերնամ նուիրանոցս :
Արդ զերկիրըն տրմունօք առ 'ի ձըլել յոյժ աշխատանօք ,
Անդնդամբք իւրեանց թաղեն սերմանս ու 'նդ բարձըր լեռնակողմս

կեալ ընդ բերանն . բայց առաս այդ իսկ մոլեգնակար լինի , եւ կատաղեն 'ի զօրութե- նէ զինւոյն :

516 . Ատամամբք մերկացելովք եւ 'ի գուրս ցցուելովք առ ծխրութեան եւ հիւ- ծութեան բերանոյ եւ քանկլոց ընդ որս 'ի ժանտ ախտն :

527 . Զինչ օգնեն նմա 'ի յետին տագնապին անդ աշխատանքն իւր եւ երախտիք եւ ախտապատեր 'ի նմանէ եղեալ գործքն . մեղանչի եղելոցն : Եւ սակայն ոչ կերակ զնեղ 'ի գինւոյ Մասսիկոս լերին կամպանիոյ (Բ . 114) ճերմակ նոցա զախտն , կամ յայլ եւ այլ խորտիկաց մի ըմպեալ մեղայ յանցըր- գեալոց . զի անդ եւ խոտ ուտէին եւ ջուր ըմպէին եւ անհոգ ննջէին :

533 . Ցեռ այսր հարուածոց երկիրն , եւ ոչ յայլում երբէք ժամանակի , պատմեն զայ- հատուածոյ եղեալ երինջուց 'ի ձգել զկառս- զինուոր կառս կամ զգետապատ տանել առ- աստուածուհւոյն Հերայ՝ յոր կային աղխատակս միայն օրէն էր լծել . վասն որոյ եւ հարկե- ցան անզոյգ անասնաւոր՝ այսինքն մին մեծ մինսն փոքր կամ այլազգի եւ անպա- տեհ գոմշովք ածել զկառսն 'ի տաճարն :

536 . Առ 'ի չգոյէ արջառոց :

Ուժգնապիրկ պարանոցք ճըռընչաձայն ձըգեն ըզսայլս ։
Ոչ գայլ դարանամուտ հետազօտէ շուրջ ըզգաւթօք ,
Ոչ զհօտիւ գիշերընթաց պատի , յանձուկ կայ տագնապի .
Վատասիրտ այծեամնիք և եղջերուքըն խուսափուք
Արդ ընդ շունս և զմարդախիտ յարկօք անցեալ դեգերին շուրջ ։
Զանոլորտ ծովուն զաւակ և զհամօրէն ազգ լուղական
Արդ 'ի ծայրըս ծովափանց որպէս իբրև ինչ նաւաբեկս
Սահանքն ողողանեն , փախչին 'ի գետս անսովոր փոկք ։
Սատակի և իժ 'ի թիւր սոյզս 'ի նանիր ապաւինեալ ,
Եւ հիդրայք ընդարմացեալք խոզանացեալ 'ի ցից թեփովք .
Նոցին իսկ հաւուց տարմին ոչ տեղք օդոց են բարեբար ,
Թօթափեալք ընդ երկնաճեմ ամպով զոգիսըն լըքանեն ։
Արդ սոքօք ոչ և զճարակսն փոփոխել ինչ օգնեցէ .
Վնասեն գիւտք արուեստից և ձեռընթափ եղեն ճարտարք
Փիլիրեանըն Քիրոնն և Մելամպոս ամիթաւնեան ։
Յանդընդային աղջամըղջէն ելեալ 'ի լոյս մոլեգնի
Մահադէմ Տիսիփոնէ զախտս յառաջոյ վարեալ և զահ ,
Եւ օր քան զօր խրոխտացեալ ամբառնայ զգլուխ իւր անյագուրդ ։
'Ի բառաչ ղուարաց , 'ի թանձրախիտ անդեայց գոչիւն
Գետք ափունք խոտաշակահատք և կոհակեալ հընչեն լեռնակք ։
Եւ ահա շեղջաշեղջ կոտորէ նա նախճիրս յամբոյր
'Ի նոյն 'ի գոմս իսկ կուտեալ շարաւահոտ ծորեալ շաղիւք ,
Մինչև հողոյ տալ ուսանին և 'ի նըկուղս սուզանել ։
Զի ոչ պէտք ինչ էր կաշւոյն և ոչ զընդերսն է որ կարող
Ջնջել ջուրց վիրատիզք և կամ պարտել 'ի բոց հըրոյ .
Ոչ կըտրել զասր ախտաբիծ և զառ 'ի պիղծ ժահից ժանգառ ,

539 . Ուր և տիրէ ախտս այս ժանտ և խաշնամահ ։

551 . Զպարտութիւն խոստովանեցին բժիշկք ճարտարք իբրև զՔիրոնն որդի Կռոնոսի և Փիլիրայ ծովային յաւերժահարսին , որ վարժապետ եղև Աքիլլեայ . և իբրև զՄելամպոս կամ Մելամպուս՝ ուստր Ամիթաւոնի և Դորիպպեայ ։ Քիրոնն 'ի յուշ կապարկաց էր , և աստուածացեալ փոխեցաւ յերկինս յաստեղատունն Աղեղնաւորին . և Մելամպոս մեհենիւ և տօնիւք և զոհիւք պատուեցաւ ։

554 . Տիսիփոնէ մի 'ի ժանտից և 'ի կատաղեցոյն ճիւաղաց դժոխոց , տանելով առաջի երեսաց իւրոց կարապետս իւր զախտս և զարհաւիրս ։

561 . Յոչինչ էր պիտանացու մորթ անասնոցն եղծեալ յախտէն . և ոչ զընդերսն հնար էր սրբել ջրով կամ հրով ։

563 . Ոչ կարել զբուրդն և ոչ իսկ ձեռն 'ի նոսա մերձեցուցանել համարձակել էր վասն դիւրափոփոխ դիւրամուտ և դիւրատարածելի բնութեան ախտին . զի ահա ով որ և ագանէր հանդերձ յասուէն յայնմանէ , խոկոյն յախտէ անտի յաղթահարեալ ըմբռնեալ լինէր ։

Այլ ոչ ձեռն իշխեն տանել 'ի յերր 'ի մէջ հարեալ գեղմանս։
Նա՛ւանիկ պատմուճանացն 'ի փորձ թէ ոք մատչէր ժամուց,
Բոցակիծ խազաւարտք և քիրտն ըղհեա զազրաթորմի
Օձնեխահոտ մարմնովքն եռայր, և 'ի վայրիկ մի ևս յամել
Մողոսկեալ հուր Ներգոմեցն ուտէր զանդամս համաձարակ։

868. Սուրբ հուր տանն զայգ և Լուկրետիոս քերթող և Վիրգիլիոս, որ և սեփական անուն համարի ախտին այնորիկ չարի։ Որպէս գիտրք և էջէ, սուրբն տատանոր յայն միոս կ՚ յոր միոս Վիրգիլիոս այլուր ևս զգրունս գժոխոց և զգայց ոսկւոյ կոչէ սուրբս, այսինքն նզովեալ, ժանտ, ամպարիշտ. Նա զի տատանոր և 'ի զժնեայ գէցն գժոխականաց առ քորրոքեալ 'ի Տիսիփոնեայ։ Մի գրչագիր ևեթ ունի հուրն առփին, փծնոպուն հուրն։

ՊՈԲԼԻՈՍԻ

ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՎՆԻ

Մ Շ Ա Կ Ա Կ Ա Ն Ք

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՉՈՐՐՈՐԴ ԳՐՈՑ

Յետ համառօտ իրացն առաջարկութեան, որ է մեղու և մեղուացն ճառք, 'ի փոքունս մեծամեծս խոստանալով հրաշակերտս և ցանկալիս՝ հեշտալուր և յօժարամիտ արարեալ զլսելիս Մեկենասայ, ձեռն 'ի գործ առնէ անդէն քանիցն խոստացելոց 'ի գիրս յայսմ, որոյ գտանին գլուխք ինն։

Ա. Յաղագս պատկանաւոր և վայելչական բնակարանի մեղուաց։

Բ. Յաղագս ճարակի նոցին և գնդաց և մարտից։

Գ. Յաղագս կրկին ազգաց նոցին։

Դ. Յաղագս թէ զինչ զգուշութիւն 'ի ցնորական թափառելն մեղուաց։

Ե. Յաղագս քաղաքական իմն իմաստութեան նոցա և հասարակաց իրաց տնտեսութեան։

Զ. Յաղագս ժամանակաց մեղերն հաւաքելոյ։

Է. Թէ զինչ ախտք մեղուաց, և զինչ նշանք այնոցիկ և դեղք։

Ը. Թէ 'ի բնաջինջ սատակելն զիարդ իցէ միւսանգամ վերստին հայթայթել։

Թ. Թէ ո առաջին հնարագէտ այսր հայթայթանաց. և առեալ կամեցեալ թէ Արիստէոս, զնորա առասպելսն խառն ընդ Եւրիդիկեայն և ընդ Որփէոսին յերկարագոյն նուագօք գեղգեղէ։

Այլ հակիրճ վերջաբանիւ կնքէ զքերթածն ողջոյն։

ՊՈԲԼԻՈՍԻ

ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՆԻ

Մ Շ Ա Կ Ա Կ Ա Ն Ք

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ՕԴԱՅԻՆ մեղու զպարգեւսն զերկնաւորս այսուհետեւ
Հատուցից, մի եւ ’ի սոյն մասն ակնարկեա Մեկենաս։
Սքանչելի քեզ տեսարանօք հանդիսից եւց մանունց,
Զքաջեասրն մեծամեծինս, ըզհամօրեամ ազգին կրօնս,
Զջհրահանգս, ըզժողովուրդս եւ զպատերազմունս ասելոց։
Աշխատակ ’ի փոքու, բայց ոչ փոքր ինչ փառք պարծանաց,
Դիք թէ նորին ահեղքնք եւ Ապողոն լուաւ կոչեցեալ։

Մեղուաց՝ տեղի նախ եւ բնակարան է խնդրելի
Ուր ոչ հողմոց իցէ մուտ, քանզի խափան լինին հողմունք

1. Օդային մեղուն երկնաւոր պարգեւ, վասն զի ըստ կարծեաց հնոցն ’ի ցօղոյ օդոյ եւ երկնից զծաղկանցն եւ զտերեւոցն իջելոյ յօրինեն մեղուք զմեղրն։ Երբեմն եւ վասն անօսր անուն եւ վշտին եւ երեւելի Թագաւորչըն բնութեանն հանդոյն աստերին օդոյ, եւ զի երկնածին աստուածատուր պարգեւք են։

7. Ահեակ ’ի հմայս հեթանոսաց եւ այլոց ազգաց՝ ձախողդ, անյաջող եւ չարագուշակ նշանակէ, իսկ ’ի հռովմայեցւոցն՝ յաջող եւ բարենշան։ Պատճառք աջակողմեան համարեալ էին արեւելք, եւ ապակողմեան՝ արեւմուտք. եւ զի հեթանոսք ’ի հմայելն զերեսս ’ի հիւսիս կողմն դարձուցանէին եւ հռովմէք ’ի հարաւ կոյս, նոցա ահեակին յարեւմուտս կոյս անկեալ եւ յապախտաւորս համարէր, իսկ սոցայն յարեւելս կողմն՝ եւ յախտաւորս հաշուէր։ Բայց հռովմայ քերթողք են զի խորեանցն օրինօք վարին, եւ է զի հելլենականսն։ Ձախորդ եւ աջն աստանօր՝ խմաստիցն ինչ ոչ ստանանէ. ըստ առաջին մասոյ իմանի, եթէ չարահասակ դիք կամ հմայք Թոյլ տացեն եւ ոչ ընդդէմ կայցեն. ըստ երկրորդին, եթէ բարերար աստուածոցն զօրութիւն յաջողեսցէ, որպէս սովոր է ներողամիտ լինել հայցողաց։ Բայց ներքին սակ՝ թուի թէ առաւել յառաջինն իմաստն հայեցուցանէ։ — Իսկ եթէ Ապողոն դիք քերթութեան, այլ եւ հոլուութեան ես, յօգնութիւն կարգացեալ լսիցէ։

Իզձարակս 'ի տուն տանել, և ոչ ոչխարք և ուլք լովլոջք
Կայտռեսցեն ըզծաղկամբ, կամ թափառոտ երինջ 'ի դաշտ
Թափեսցէ 'ի ցօղոյն և կոխեսցէ զգողդոջ բուսոց։
Այլ խայտաբղէտ մողէզաց 'ի բաց լիցին խոժոռ ազգերք
Յակաղձուն շտեմարանացն, երաշտահաւք ուայլ օդապարք,
Այլ Պրոկնէ՝ արիւնըռուշտ բըռամբքն 'ի լանջսն դրոշմաւոր.
Զի զըմնան յաւեր դընեն շուրջ և զնոսին 'ի թըռչանս
Հոպեալ տանին կըտցօք՝ անգութ բունոցն համեղ ճաշակ։
Այլ աղբիւրք ականակիտք ուեղտիւրք լիցին անդ լճաւէտք
Այլ ընդ մարգ դալարագեղ առու բարակ մեղմընթացիկ,
Դալթին արմաւ կամ վայրի հովանասցի մեծ ձիթենին.
Զի երբ նոր արքայք հանցեն նախընծայ պարս յիւրեանց գարուն
Այլ սաւառնեալ 'ի գըբոցըն խաղայցէ գունդ մանկըտւոյն,
'Ի տօթոյն խոյս առնուլ հրաւիրեսցէ գետեզըրն հուպ
Այլ յոստախիտ օթևանս առ ոտս անդ ծառն ընկալցի հիւր։
'Ի միջի անդ անխաղաց և թէ զնայուն իցեն ալիք,
Արկ ուռիս խոտորնաձևս և մեծամեծ վիմաց հատոր,
Զի ունիցին 'ի խիտ առ խիտ կամուրջս անդ կալ հովաթևել
Յորև ամառնայնին՝ զապատամանս եթէ յանկարծ
Թափ անկեալ ցըրուեսցէ հողմ և կամ 'ի ջուրսն ընկըղմեսցէ։
Նարդոսք մըշտափըթիթք և շուրջ 'ի սփիռս անուշահոտ
Ծաղկեսցեն անդ ծաթորք և սասոնկարգք թաւուտ կորդիւն,
Այլ հոյլ 'ի հոյլ մանիշակք առոգանօղ արբցեն վըտակս։
Իսկ Կողեանք՝ 'ի զօգաձև թէ կեղևոց քեղ կարկատունք

15. Պրոկնէ ծիծառն է. որ ըստ առասպելին դուստր էր Պանդիոնի աթենացւոց արքայի և կին Տերէոսի արքայի Թրակիոյ, յորմէ եղև նմա ուստր մի Իտիս անուն, զոր առ քինել ընդ առն իւրում՝ սպանանեալ ընդ քեռ իւրոյ Փիլոմելայ և սպանեալ զնա ջամբեաց հօրն 'ի կերակուր: Իսկ և 'ի վերայ հասեալ Տերէոսի՝ սուր հանեալ զհետ դստերացն կամէր առնուլ, նոցին փախուցեալ 'ի յապաւ, Իտիս 'ի փասիան, Փիլոմելա 'ի սոխակ կամ ասպուճակ և Պրոկնէ 'ի ծիծառն. որ 'ի զեղջն գալ և կոծել զկուրծսն ընդ ատարապարտ խողխողումն որդւոյն անմեղի, արիւնոտ ձևոցն ներկեալ է զլանջսն, կամ թէ 'ի խողխողելն անդ՝ ցայտեալ է 'ի նա յարեանէ որդւոյն. այսպէսապատ այլաբանելով զարիւնհերանգ նիշս և խայտուցս կրծից հաւուն: Են որ զՓիլոմելա 'ի ծիծառն և զՊրոկնէ 'ի սոխակ ասեն դարձեալ. բայց առաջինդ հաւաստի է:

18. Լօտաւէսոս իմա զքարինս աղբերացն կամ զեզերս եղանիւրացն:

21. Այժմ յայտնի է ամենեցուն, զի մեղուաց ոչ արքայ է կամ թագաւոր, այլ թագուհի՝ զոր և պարամայրն ասեմք. բայց հինքն արու զնա գիտէին կամ չէզոք. վասն որոյ և ընդ սերունդս նոցա զարմանալ վիրգիլեան 'ի սորա (196): Իսկ իւրէանց գորոն իմա քաղաքս և հաճոյականն նոցա և պատշաճաւոր, կամ յորում ծնանին և սնանին և 'ի թուիչս մարգաց սկսանի թևածել:

Այլ թէ գողտրիկ ուռենեաւ տղորաճիւղք խլեն փեթակք,
Մուստ անձուկս ունիցին, զի ձմեռն հատեալ սառնամանեօք
Պնդէ զմեղր և տապ տօթոյն լուծեալ լքեալ հալէ ՚ի ծոր։
Զօրութիւն երկաքանչիւր՝ մեղուաց ՚ի զգոյշ երկիւղալի.
Այլ ոչ յունայն ինչ նոքա մոմով ՚ի յարկսն ժիրաժիր
Ըզծերպսն նուրբ՝ ծեփեն, լնուն ծաղկունս յեզերսն և շրջապար,
Այլ ՚ի դոյն յայդոսիկ պէտքս մըթերեալ պահեն սոսինձ
Քան զտաւղ թանձրամած և քան ըզձիւթ փռիւգեանն Իդայ։
Այլ յաճախ որջս հատեալ, թէ հաւաստի համբաւքն իցեն,
Ընդ հողով տուն տածեցին, նա և գտան իսկ աւանիկ
Մինչ ՚ի խոռոչս անդ քարանց և ՚ի փտապար փտից ծառոց։
Դու սակայն կակուղ կաւով ըզծակոտկէն նոցին խըշտիս
Շուրջ օծ պաշտպանելով մանր ՚ի վերայ տերևս արկեալ։
Մի թողուր ցերդ առ յարկօքն, ըզկարմրերփեանն մի զխեցեփառս
՚Ի հուր խորովեցես, և խոր ճահճի մի հաւատար,
Կամ ուր հոտ մօրից է գարշ, և կամ ուր վէմք անձաւախոռք
Դանգիւն հանեն ՚ի թընդմանց, զաման ձայնին դիպեալ պատկեր։

Բայց սակայն մինչ արևակն ոսկի զձըմեռն հալածական
Ընդ երկրաւ տարամերժեալ բանայ զերկինս ջերին ամփիւ,
Իսկ և իսկ ելեալ նոքա թևապարկն յարօտս, յանտառս,
Հըմձել ծաղիկ ծիրանիս և ճաշակել թեթևակի
՚Ի ծայրից հոսանաց, և քաղցրութեամբ ոչ գիտեմ ինչ

38. Մոմ իմա զակնամոմն կամ գեղին մոմ, որ չէ մոմ, այլ խիժ ինչ մածուցիկ ՚ի մեղուաց պատրաստեալ։

39. Շրթունքն մեղուաց է հիւթ ծաղկանց. և փոխանակ այսպէս ասելոյ՝ ծաղիկս և շրթունս ասէ։

41. Զձիւթ կամ կպրաձիւթ Իդայ տես Գ. 450։ Եւ սոսինձն այն թանձրամած՝ է նոյն ինքն ակնամոմն։

43. Օրինակք ինչ՝ փոսն փորեցին։

45. Թէպէտ և մեղուք ՚ի ներքուստ անձնոյն զգուշութեամբ ամփոփակեն, սակայն դու և արտաքուստ ծեփեա կաւով։

47. Զի հիւթ ցրդւոյն յոռի է, և գտան մեղր տայ, և հոտ խորովոյ խեցեփառին մեռանէ մեղուաց։ Եւ զմեղուսդ մի հաւատար ճահճային ջուրց խորոց, զի ըմպեցեալ մեռանել են ջուրքն, և զի խորութեամբն չմերթեն կալ ՚ի նմա վէմք իբր կամուրջք և ապաւէնք. և կարմրութեան մօրից ժահահոտութեամբն մեռանէ. և ապառաժ քարինք զոգաւորք արձագանգօքն խռովեցեալ ահարեկ առնեն և զանգիտող։ Այս ամենայն յաւէտ ըստ կարծեաց ժամանակին գալով։

52. Ընդ երկրաւ իմա ՚ի կէսն ստորակէն և յանտարկան բոլորն հակարջոյն բևեռին որ ՚ի ներքոյ մեր. զի իբրև մեզ անտեսն գոյ, նոցա ձմեռն հասանէ։ Եւ արեգակն բանեալ ասէ զերկինս փարատելովն զամպս ըզպարբերս և զբալանձեալ զմեգ և զմառախուղ։

54. Քաղել զաղնուագոյն մասունս գեղեցիկ և պայծառ գունագոյն ծաղկանց։

Զմայլեալք դառնան 'ի տուն անդր բունոյն և սերնդոց
Մոմ նորագործ արուեստել և յօրինել մեղըր մածեալ։
Իսկ ապա յորժամ յասուերս երկնից ելեալ 'ի ներքնատանց
Եւ ընդ լոյծ օդս ամառան ըզգանոյն 'ի լուղ զանկանիցես
Եւ հողմով պարզեալ նըսեմ ամպ ընդ երկին զարմանալի,
Տես ուշիւ, քաղցըր վըտակս և տաղարթուն խընդրեն միշտ յարկ.
Արփիւեսջիր առ եսեղ զօրինաւոր ճաշակս համոց
Պատրինճըս մանր աղացեալ և զանարգ բոյսըն կորընդան,
Եւ զարթո դու թրմբիւն և շուրջ շարժեա զՄօրըն ծընծղայս.
Նոյն ինքեանք 'ի հնարաւոր կայեանսն նըստեալ ակըմբեսցին,
Եւ յինքնին բունոյ բարոյ տուաղեսցին յարրանսն 'ի ներքս։
Իսկ թէ 'ի մէգ ելանեն, զի խաղմ ըստէպ բաղմամբոխորդով
Խանձ առեալ ցոլանայ 'ի մէջ երկուց թագաւորաց,
Զանբանին սըրտմըտութիւն և զըբրտութիւն լանջս 'ի կըռիւ
Կոյ գուշակել 'ի հեռուստ, զի զայլս կըռփեալ դըրդէ յորդոր
Երկերեալ պղնձաձոյն գոչիւն մարտի պատերազմի,
Եւ լըսել լինին ձայնք՝ տիպ բեկբեկեալ փողոց բարբառ։
Ընդ տագնապաւ խուռն առեալ ձախորեն շողան սաւառնաթև,
Սըրեն սըրսկս 'ի կընձիթս և ըզծըղիս մարզեն 'ի վեր,
Զարքայիւ, զապարանօքըն եռան փեռան աշխարհակայտ
Եւ յոխորտ խրախուսանօք ընդ ոսոխին դէմ խիզախեն։
Արդ ըղտեալ ջերոտ գարուն և զերկնից դաշտսըն բացարձակ՝
Խուժեն 'ի դուրս, ռազմըն բախի, ձայթէ բոմբիւն 'ի բարձունս,
Զխռարեալք խառնեալք 'ի մի գումարտակին գունդ ահագին,
Եւ անկանին դիթաւալ. ոչ թանձրախուռն ընդ օդ կարկուտ,
Ոչ այնչափ 'ի թօթափել սըրոցւոյ կաղին տեղայ տարափ։

60. Զնոյն գունդն նորածին ձագուց, կամ 'ի պատճառէ խեղճ հատուածելոց և գաղթելոց, սփռեալ երթեալ առեալ ընդ երեսս երկնից։

62. Օրինաւոր ճաշակք են զորս օրէն է սփռել յայնպիսի դէպս և զորս ես պատուիրեմ, յոր և սովորեալ իսկ են մեղուք, և յայն յանկուցեալ մնան և ոչ ցրուին վտարանդի վարատեալ։

64. Որպէս յայտ է, մեղուք 'ի ձայն պղնձեաց բախելոց 'ի մի վայր եկեալ ժողովին առ հեշտութեանն, կամ առ երկիւղին՝ իբրու յորդամանէ փախուցեալք։ Մօրն ծնծղայք են ծանօթ ծնծղայքն որ հարկանէին 'ի տօնս դիցամօրն Կիւբելեայ, որ և Մայր մեծ և Ռէա և Ոպս անուանի։

65. 'Ի հնարիւք գեղոց պատրաստեալ նոցա կայեանսն։

67. Այս պատերազմ լինի յորժամ 'ի ծնանել նորոց ձագուց բազում էգք պարսմանք գտանին 'ի նոսա, զորս սպանանեն և քան զմի ոչ ապրեցուցանեն։ Բայց եւ սաստկագոյն հատանէ պատերազմ, յորժամ օտար ոք պարամայր առեալ զգունդն իւր յանդգնաբար կամ խօլաբար անկանի յօտարին փեթակս։

Ի խուռն բանակաց՝ անդ թագաւորքն ակրճաթեւք
Մեծամեծ յուզեալ հոգիս յանձուկ 'ի սկրտոյն մարմինս,
Յամառեալ՝ մի տալ տեղի, չեւ ամեհի զօրապարտայաղթն
Ի փախուստ զայս կամ զայն կողմնէն վըտանգեալ շըրջել թիկունս։
Այս մրրկեալ զայրացուկք և այս այնքան Ճակատամարտք
Ի ցանել չիթ ինչ փոշւոյ զադարեսցեն լռեալ 'ի սպառ։

Իսկ իբրև զերկոսեան պետս 'ի Ճակատուցն դարձուցես,
Յուեզայն թուեցելոյ, զի մի շռայլեալ արկցէ 'ի տոյժ,
Հատ զչարն, թո՛յլ տուր լաւին յանդորրաւէտ տիրել ապարանս։
Մին իցէ ոսկեհուռն ոսկեՃաճանչ բազմանշոյլ,
Զի կըրկին ազգ են նոցա, սա լաւագոյն երեւոյթ
Եւ կարմիր թեփուկք պայծառ, միւսն այն պղերգ ահռագնակերպ
Եւ լայնափոր սողալով ընդ քարշ տանի անփառունակ։
Որպէս կրկին դէմն արքայից՝ նոյն և մարմինք բազմանմանականքն.
Զի կէսք տգեղք սոսկալիք, զերդ ուղևոր երիթացեալ
Ծարաւուռ թքնու չորթանքն ընդ հող՝ եկեալ թանձր 'ի փոշւոյ.
Այլք փառ 'ի փառ փողփողեալ ոսկեՃաճանչ փայլատակեն
Ընդ իրանսն նշանագունակ խայտախայտիւ նկարակերպ։
Այս է զարմ ազնուագոյն, ուստի յանչուշտ երկնիցեն 'ի կէտ
Մեղր անոյշ մըզեսցես, և քան որչափ անուշաբոյր՝
Նուաճել ծարաւոյ և տրտմութեան զգինւոյն յաղթօղ։

Եւ իբրև պարք ընդ երկին զբօսեալ թեւեն թափառական
Ըզկարկեալ արհամարհեալ և ըղձամտական թողեալ ցուրտ,
Զոգիսն յոզդոզդունս արգելուցուս յունայն խաղոյն.
Եւ չէ բանըրդ մեծ ինչ իր, թագաւորաց թափես դու զթեւս,

89. Զի զեկեփն յուսալ և ծախել սաստից գործելոյ։

97. Զխորթին տգեղութիւն յուռայն նմանեցուցանէ փոշեաթաւալ ուղևորի, կամ փոշեխառն և չոր թքոյ պատուքեալ և պապակեալ ուղևորի։ Բայց ըստ աշխարհս այս զանազանութիւն գունոց 'ի հասակացն է, ոչ 'ի ցեղիցն։

100. 'Ի սահմանեալ ժամանակի քաղելոյ զմեղրն, որ է 'ի գարնան և յաշնան։

102. Ծարաւոյ խմս յստակ և անմրուր, ոչ աղտոտ և մրրախառն թանձրացեալ. և ոչ թէ լոյծ և հեղհեղուկ, որ ոչ ընտիր համարի։ Իսկ գինւոյ անուշէց, վասն զի հինք մեղրախառն եւ ըմպէին զգինիս, մանաւանդ զխարական և զթոկայս։

104. Ցուցք Բաղձից, խմս անմարզի, անբնակ, հեռանալոյն անտի և յոզան թափառելով։

Ի նոցին յամենայն՝ ոչ 'ի բարձանց որ Ճանապարհ
Զեռն յանձին հարցէ դիմել կամ ծն առնուլ բանակ 'ի չու։
Բուրաստանք բըրբռենաեղին ծաղկօք տացեն նոցա հրաւէր,
Այլ գողոց դէտն և հաւուց 'ի շերտ ուռի գերանդաղէն
Հելլեսպոնտեան Պրիապայ պահպանեսցէ թև հովանի։
Որում փոյթ են այսոքիկ՝ 'ի բարձրայն բերեալ լերանց
Տընկեսցէ շուրջանակի ծոնթոր զյարկօքըն և թեղօշ.
Ինքն ըզձեռսըն մաշելով կարծր 'ի վաստակ՝ ընձիւղս 'ի հող
Վարսեսցէ տունկ բարեբեր և զյանկարծ ջօղս արբուսցէ։
Ապաքէն աշխատութեանս եթէ լրման մերձեալ 'ի կէտ,
Առագաստ ամփոփեալ՝ չէր փոյթ շըրջել զնաւս 'ի ցամաք,
Այլ զյուղթի դրախտից թերևս զարդարիչ խնամոց զարման
Երգէի և զերկաբեր ըզվարդենիսըն Պեստոնի.
Թէ զիարդ ուրախասցին եղերդք յարբուսմն անդր առուաց,
Ի լախուր փըլթթեալ ամոլք, և ծամածուռ վարունգ ընդ բոյս
Ի փոր մեծ աճիցէ, և զանազան վարսաւորեալն
Ըզնարգէս կամ ըզգոտորիկ ականթի ուշ ոչ լըռէի,
Այլ ըզգունատ բաղեղունս և զմըրտենիսըն ծովասէր։
Զի յիշեմ ես զՕբաղեայ բարձրապարիսպ աշտարակօք,
Ուր մըթինըն Գալեսոս առոգանէ զանդըս խարտեաշ,
Զալևոր տեսեալ Կորիկ, որում սակաւ թէւ արտավար

107. Ճանապարհ բարձանց է օդն, երկինքն։

111. Պրիապոս որդի Աստղկան և Սպանդարամետին, 'ի Լամփսակ քաղաքի ծովեզերեայ փոքուն Միւսիոյ առ Հելլեսպոնտոսիւ ծնեալ և նախամեծար պաշտեալ, դիք համարեալ էր պահապան պարտիզաց, յորս և խրտուիլ կանգնէին զպատկեր նորա անպարկեշտ և այլանդակ՝ անձոռնի և ահաւոր, գերանդի 'ի ձեռին՝ խրտուցանել զգողս և զթռչունս։

113. Զի և Թեղօշ կամ շոճի անտորժելի համարեալ է մեղուաց։

117. Այլաբանութիւն մերձ 'ի կատար հասանելոյ ընթացից քերթուածոյս և դադարելոյ։

119. Պեստոն կամ Պոսիդոնիա քաղաք էր Լուկանիոյ կողմանց իտալացւոց, ուստի մինչ կարի հեռի 'ի Միջերկրեայ, վարդենիք համբաւաւոր առ բանաստեղծս, որ երկիցս ծաղկէին յամին՝ 'ի մայիսի և 'ի սեպտեմբերի։

123. Ականթն աստ ոչ ծառն է, այլ գեղեցիկ խոտն վայրի. տես ք̃. 119։

125. Տպագիրք ինչ ունին՝ sub Œbaliæ turribus arcis. բայց ամենայն գրչագիրք միաբան ունին որպէս եդաք։ Էբաղիա է Տարենտոն քաղաք 'ի հարաւային խորշ մի Իտալիոյ՝ կառուցեալ յՓաղանթոսէ որդւոյ Լակեդեմոնի, որոյ գաղութ մի ածեալ 'ի գաւառ անդր արգաւանդահող՝ շինեաց զՏարենտոն։ — Գալեսոս է գետ Կալաբրիոյ, որ հոսէ 'ի ծոցն տարենտեան, ծառովք հովանացեալ և խոտութեամբն մթասեաւ։ — Իսկ Կորիկ, կամ սեփհական անուն է ծերոյն՝ զոր 'ի մէջ բերէ կամ ստեղծանէ Վիրգիլիոս, և կամ հայրենական յորջորջմամբ, իբրու 'ի Կորիկ աւանէ և լեռնէ Կիլիկիոյ եղեալ, զոր 'ի հարկի ծառայութեան կացուցեալ Պոմպէի՝ ած բնակեցոյց զոմանս 'ի Կալաբրիա և 'ի սահմանս Տարենտոնի։

Կայր 'ի խոպանին ագարակ, ոչ արգաւանդ եզանց անդ,
Ոչ խաշանց բարեպատեհ եւ ոչ 'ի տունկ այգեաց 'ի դէպ:
Այլ սակայն ցիր անդ 'ի փուշս արկեալ բանջար եւ շուրջ 'ի ծիր
Սպիտակ շուշան, աղաւնիքն եւ ընդարձակաշ մանրահատիկ,
'Ի սրտին զուգաւորէր ընդ արքայից փարթամութիւնս,
Եւ մտեալ տարաժամու՝ կուտէր անգին խորտկօք սեղան:
Նախ քան զամենեսին վարդ 'ի գարնան եւ աշնայնի քաղէր խնձորս,
Եւ մինչ դառնըն դեռ ձմեռն ընդ եղեան հերձոյր սառնամանեօք
Եւ 'ի պաղ ձուլեալ զընթացս սառնակապէր ջուրց խոխոջից,
Նա զգեղզգաւոն յակինթի հատանէր յաճախ ընդ խոտաղաւնի՝
Նշկահեալ ընդհեղգ ամառն եւ զյապաղեալ սէգ քաղցրաշունչս:
Նոյն նախ լինէր յաճախաբերդ եւ զանձնագորով մեղուաց պարարբ
Նման ընդմիշտ էր բարգաւաճ, ներսն թօթափէր տատասկ շաղի,
Եւ 'ի ձմերել խորշրդեաց մեղր կրթէր նա փրփրալից:
Եւ որչափ 'ի նոր ծաղկեն ծառն ընդ պտղի պճնէր մրգովք,
Նոյն եւ աշնայնի հասունս յանձին պարծեալ բերէր:
Նորն եւ զատամ ներշնչելոյ տողեաց 'ի շար գեղեցկապէտ,
Եւ ընկալոյր աւանձի, զսալորաբեր կոկոնոտեկս,
Եւ ընսօսին զենորատաւաց զուարթացելոց հովանաւոր:
Այլ ես սակայն զայսոսիկ, առս յապառնում վարեալ սահմանս,
Օտարաց առնեմ՝ այլոց թողեալ առ 'ի յապայս յիշատակի:

Այժմ արդ բեր ընդմեղուաց նախադասուր յԱրամազդայ
Բնութիւնս ասից ոգէլ, որում փոխան նոքա շնորհին

133. Ոչ գնածոյ կերակրովք, այլ որ անվարձ եւ անծախ 'ի պարտիզէն իւրմէ մատակարարէր:

137. Կէս օրինակք փոխանակ յակինթի ունին ականթի. այլք ընդ հնագոյն օրինակի եւ զգուշագոյն տպագրիչք՝ որպէս եդաք յակինթի:

138. Ուշոս ընկեցեալ եւ քամահանս արարեալ յամառն եւ 'ի մեղմ օդս գարնանային՝ իբրեւ 'ի գանդաղելոյ. զի ինքն յառաջ քան զհասանել նոցա՝ ծաղկէր մողորէր: Իսկ թէ որպէս, թերեւս չէր ոչ ինչ ունէր անկոյն, կամ թէ չէր բանհողէր մի. ճակին էր:

140. Դմբրեայ եւ շամբէք ծիրեղէք մեղուաց եւ 'ի գործ նոցին պիտանացուք: Եւ առաւել խմա քան բազմութեանն, կամ քան յորդութեան խորակացն եւ հուզոյ:

142. Ոչ ծաղկընկէց եղեալ պտղաբերոյս լինէր, զի 'ի ծաղկի անդ է եւ պտուղն. այլ որչափ ծաղկիս երեւեցուցանէր 'ի գարնան, նոյնչափ եւ պտուղս հասուցանէր յաշնան:

144. Չհետօրեայ եւ զզարգանալոյ ծառս փոխելոյ եւ անկելոյ 'ի նոր կարգ գեղեցիկ, իւրով երկրագործական հմտութեամբն անվնաս պահելոյ:

147. Յանձնուկ եւ 'ի հարկապահանջ առհմանն քերթածին, որ չներէ քան առաւել ելանել:

150. Մեղուքս հրաւիրեալք 'ի ձայն ծնծղայից Կուրետեանց կամ Կուրետաց քրմաց

Նուագաւոր հընչմանց Կուրետանց և ձայնատու պղընձոյն ընդ հետ
Զերկնից արքայն սընուցին 'ի քարայրին Դիկտէական։
Այսք ևեթ ընդծընունդս հասարակաց ունին և զտունս,
Միաժողով 'ի քաղաքս՝ մեծ օրինօք վարեալ կենցաղ.
Սոքա միայն գիտեն անդորրեալ յարկս և հայրենիս.
Հանդերձեալ ձըմերայնոյն յամարայնի յառաջաւանք
Ձեռն 'ի գործ արարեալ և 'ի մէջի գըխաւորն դընեն։
Քանզի կէսք բակեն ուտելեաց դաշանօքն ուխտից յանդորս ձըգնեալք,
Այլք 'ի յորմածըս դաւթիցն ածեալ զարտօսր ըղձառագեխի
Եւ սոսնձ թանձր 'ի կեղևոց՝ դընեն մեղրոց հիմն առաջին,
Եւ ընդ նմին կառուցանեն այնուհետև ըղմոմոյն մած.
Իզգարգացուն մանկութիւն՝ ընդ յոյս ազգին գայեկեն կէսք,
Այլք ըղմեղըրն սուրբ սերտեալ պարզեն բըջջաց լըցն օշարակ։
Են՝ և ոյց առ դրունս եհաս վիճակ պահապանութիւն.
Եւ դէտ կան փոխանակաւ ամպոց երկնից և անձրևաց,
Զեկաւորաց կամ ընդունին աւանուն, կամ զանդոք հըրամակ կազմեալ
Իզգուեխարգն ջըռկ անգործ հանեն վանեալք 'ի սըրահից.
Աստ ականն եռայ և բուրէ մեղր 'ի ծոթրոյ ամուշահոտ։
Որպ Կիկլոպայք երբ հապճեպ՝ շանթս 'ի հալուն զարդընեն ձուլից,
Կէսք 'ի փուքս արջառենեաց ընդերս օդոց առնուն և տան,
Իզպըղընձացն շառաչումս 'ի լիճ մըխեալ ջըրդեղեն այլք.
'Ի ներքոյ կանգնեալ սալիցն Էտնէ 'ի թօթ թընդեալ հեծէ,
Նոքա զբազուկս ընդ իրեար մեծաւ ուժով բառնան կարգաւ
Եւ ամրապնդող աքցանօք կալեալ զերկաթըն շըրջշըրջեն.
Ըէ ընդհատ, օրէն թէ զփոքր ընդ մեծ իցէ համեմատել,

Կիւրետէեայ եկեղն անուցին զմանուկն Արա-մազդ յանձաւի Դիկտէ լերին կամ 'ի Դիկ-տեա այրին Իդայ լերին կղզւոյն Կրետեայ, զոր անդր տարեալ եղեալ էր մայր նորա Հռե-աեքեայ 'ի ծախող որդեկեր ժամանակն Քրոնոսեայ կամ Կրոնոսի։ Եւ 'ի վարձ ծա-ռայութեանս աւրեն մեղուք յԱրամազդայ զմեծ և զզարմանալի հանճար իւրեանց և զիմաստութիւն։ փոխան այսմ հանդերձե-լոյ պարգևի, ասէ, մեղուք յառաջնոցոյն սնուցին զԱրամազդ. փոխանակ ասելոյ՝ թէ փոխարէն սնուցանելոյն աւրեն զպար-գևսն զայն։ Անուն Կուրետաց 'ի հելլէն ձայնէ ածանցեալ է, զոր պէսպէս ասեն։

160. Սոսնձ թանձր. տես 'ի տողն 40. 41։ Զայս սոսինձ կամ զակամանն՝ հիմն ար-կեալ մեղրոցն, ապա 'ի վերայ նորա շինեն զփողանն՝ վերուստ 'ի վայր գործելով։ Եւ յայս խօսք հայի թերևս Լատինն բառն suspen-dunt, որ զքինուածոց ատացեալն՝ նշանակէ ստէպաբարար կանգնել, ամբառնալ կամարա-կապ. բայց զի և կախելոյ միտս են 'ի բայդ, խորհրդով եդաք կառուցանել, որ յերկո-սին միտս անկանի։

169. Զկիկլոպայս և զԷտնէ տես տ. 489։

172. Օրինակք ինչ փոխանակ Եանէի ունին անձաւն կամ ժայռոյն։

Բնդաբոյս սէր համբարոց ընկերակրաբեան ճնշէ մեղուս
Ըզմէն մի յիւր բաժնաւորն. հինօրէից՝ 'ի խնամս աւանք,
Պահել ըզպահս խորըխոյց և տուն կազմել ամենարուեստ.
Իսկ մանկագոյնք յանապատ դառնան պահու վաստակաբեկք
Ծոթրընով բարձք հանեալ, կըծեն աստ անդ և ըզմանթաւղ,
Խաժագոյն զուռենիս, ըզշէկ քըրքում և ըզհացաղաս,
Ըզթըմէի պտղաբաստաբեր և ըզյակինթըն գերկնագոյն:
Մի՝ հանգիստ գործոց ընդ ամէնից, մի բոլորից աշխատութիւն.
Առաւօտուն դիմեալք ընդ դըրունս՝ այլ ոչ երբէք դուլ և դադար.
Յոր յաղթել երեկորոյ զարդն յարօտէ առնել մարզաց,
Յայնժամ 'ի տուն ըմթացեալք, յայնժամ մարմնոց տանին դարման.
Զայնք հընչեն, և առ սեմովք ամենաշատաւորք շըշընջեն շուրջ:
Իսկ ապա 'ի սըրահապատս իւրև մըտեալ պառըլապարեն,
Լռութիւն է գիշերոյն, և զխոնջ անդամսն՝ իւր քուն պատէ;
Բայց յոտնաձայն անձրևի չմեկնին 'ի սար 'ի գաւազաց
Կամ երկնից հաւատան 'ի մերձըկաց ասպատակել.
Այլ յանքոյթս ըզպարըսպօք տուականն շուրջ երթան ըզջուրս
Եւ հնարին սուղ աշխատանս, և զերդ մակոյկ մի յողողուն
Ծովուախիձն 'ի տատանել ալեաց՝ բառնան կոպիճս յանձինս,
Եւ ընդ օդ սին նաւօք ըզվեըրօտի կըշռեն անձինս:
Զարմանալիս և ընդ այս կարգս հաճոյական մեղուաց եղեալ,
Զի ոչ ամուսնութեանց խնչ պարապեն, ոչ յօդակք
Զմարմինսն 'ի խառնըս հեշտին կամ ծընանելն մանկանս երկանցք:
Այլ ինքնին 'ի տաղարթուց ւամոյշ բուսոց զիւրեանց սերունդ
Բերանովք հաւաքեալ՝ ինքնին զարքայն և զժողովուրդն

176. Կեկրոպեան է աթենական, 'ի Կեկրոպայ առաջին արքայէ աթենացւոց: Զի մեղք ատտիկէաստանի, մանաւանդ հիմետ լերին, անուանի էր, որպէս և մինչև ցայսօր:

182. Թըմէի հայր լինի մեղրածորան մատակարարէ մեղուաց 'ի ստորին պատկանաւոր:

183. Զայսպիսի իմա զնկատումն մեծատողով գործակցութեանց. այսպէս թէ ոչ, փոխանակեւ և հանդչին և վաստակեն, այլ և գիշերի ևս, ըստ այժմու ճշգրտագոյն քննութեանց:

189. Իւր քուն է իւրաքանչիւր առանձին յատուկ և սովորական, և ըստ օրինի և 'ի բնէ պարտուպատշաճ, և զոր ոչ ևս կարէ թօթափել:

194. Կարծիք էր ժամանակին և այս՝ 'ի վերիպակ տեսութենէ. զի զգործ այլոյ ուրուք ազգի մեղուաց, որ զբոյնն յորմս կառուցանեն աւազով և խճիւ մածուցեալս, մեղրագործ մեղուաց ընծայեալ են:

199. Նոյնպէս և այս կարծիք էին հնոց, թէ մեղուք 'ի ծաղկանց ժողովիցեն զսերմանս ծննդոցն. և վասն այսորիկ իսկ, ասէ, այնչափ էնոցա սէր ծաղկանց, մինչև զթեւսն խորտակել և մեռանել իսկ:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՉՈՐՐՈՐԴ ԳՐՈՑ

Յետ համառօտ իրացն առաջարկութեան, որ է մեղու և մեղուացն ճառք, ’ի փոքունս մեծամեծս խոստանալով հրաշակերտս և ցանկալիս՝ հեշտալուր և յօժարամիտ արարեալ զլսելիս Մեկենասայ, ձեռն ’ի գործ առնէ անդէն քանիցն խոստացելոց ’ի գիրս յայսմ, որոյ գտանին գլուխք ինն։

Ա. Յաղագս պատկանաւոր և վայելչական բնակարանի մեղուաց։

Բ. Յաղագս ճարակի նոցին և գնդաց և մարտից։

Գ. Յաղագս կրկին ազգաց նոցին։

Դ. Յաղագս թէ զինչ զգուշութիւն ’ի ցնորական թափառելն մեղուաց։

Ե. Յաղագս քաղաքական իմն իմաստութեան նոցա և հասարակաց իրաց տնտեսութեան։

Զ. Յաղագս ժամանակաց մեղերն հաւաքելոյ։

Է. Թէ զինչ ախտք մեղուաց, և զինչ նշանք այնոցիկ և դեղք։

Ը. Թէ ’ի բնաջինջ սատակելն զիարդ իցէ միւսանգամ վերստին հայթայթել։

Թ. Թէ ո առաջին հնարագէտ այսր հայթայթանաց. և ասել կամեցեալ թէ Արիստէոս, զնորա առասպելեալն խառն ընդ Եւրիդիկեայն և ընդ Որփէոսին յերկարագոյն նուագօք գեղգեղէ։

Այս հակիրճ վերջաբանիւ կնքէ զքերթածն ողջոյն։

ՊՕԲԼԻՈՍԻ

ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՆԻ

ՄՇԱԿԱԿԱՆՔ

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ԶՕԴԱՅԻՆ մեղու զպարգևսըն զերկնաւոր այսուհետև
Հասուցից, դու և 'ի սոյն մասն ակնարկեա ինձ Մեկենաս:
Զքանչելի քեզ տեսարանըս հանդիսից էից մանունց,
Զզօրաւորսըն մեծանձինս, ըզհամօրեալ ազգին կըրօնս,
Զհրահանգս, ըզժողովուրդս և զպատերազմունս ազգաց:
Աշխատ 'ի փոքու, բայց ոչ փոքր ինչ փառք պատմածնաց,
Դիք թէ ներեն ահեկինք և Ապոլոն լուէ կոչեալ:

Մեղուաց՝ տեղի նախ և բնակարան է խնդրելի
Ուր ոչ հողմոց իցէ մուտ, քանզի խափան լինին հողմունք

1. Օդային մեղրն երկնաւոր պարգև, վասն զի ըստ կարծեաց հնոցն 'ի ցօղոյ օդոյ և երկնից զծաղկամբք և զտերևովք իջեալ յօրինեն մեղուք զմեղրն: Թերևս և վասն անոյշ սեռն և վճիտ և երևելի Թափանցողն բնութեանն հանգոյն սուրբն օդոյ, և զի երկնածին աստուածատուր պարգևք են:

7. Ահեակ 'ի հմայս հեթանոսաց և այլոց ազգաց՝ ձախողակ, անյաջող և չարագուշակ նշանակէ, իսկ 'ի հռովմայեցւոցն՝ յաջող և բարենշան: Պատճառս ըստ աստուածաբանից համարեալ էին արևելք, և պատասխանատուաց՝ արևմուտք. և զի հեթանոսք 'ի հմայելն զերեսս 'ի հիւսիս կողմն դարձուցանէին և Հռովմէք 'ի հարաւ կոյս, նոցա ահեակն յարևմուտս կոյս անկեալ և յապախտաւորս համարէր, իսկ սոցայն յարևելս կողմն՝ և յախտաւորս հաշուէր: Բայց Հռովմայ քերթողք է զի հուրեանցն օրինօք վարին, և է զի հելլենականաւն: Զխարդ և աւցի աստանօր՝ իմաստոյն ինչ ոչ ամանէ. ըստ առաջին մտաց խմանի, եթէ չարահաւակ դիք կամ հմայք Թոյլ տացեն և ոչ ընդդէմ կայցեն. ըստ երկրորդին, եթէ բարերար աստուածոցն զօրութիւն յաջողեսցէ, որպէս սովոր է ներողամիտ լինել հայցողաց: Բայց ներելն աստ՝ Թուի Թէ առաւել յառաջին իմաստն հայեցուցանէ: — Եւ եթէ Ապոլոն դիք քերթութեան, այլ և հմաւութեան էր, յօգնութիւն կարդացեալ՝ լսիցէ:

Ի ճարակս 'ի տուն տանել, և ոչ ոչխարք և ուլք լըպկորչք
Կայտռեսցեն ըզծաղկանց, կամ Թափառոտ երինջ 'ի դաշտ
Թափեսցէ 'ի ցողոյն և կոխեսցէ զառողջ բուսոց ։
Եւ խայտաբղէտ մողիզաց 'ի բաց լէցին խուժոռ ազգերք
Յակաղձուն շտեմարանացն, երաշտահաւք ուայլ օդապարք,
Եւ Պրոկնէ' արիւնըռուշտ բըռամբքն 'ի լանջացն դրոշմաւոր.
Զի զբընաւն յաւեր դընեն շուրջ և զնոսին 'ի թըռչանի
Շոպեալ տանին կըտցօք' անգութ բունոցն համեղ ճաշակ ։
Այլ աղբիւրք ականակիտք ուղխիւրք լըցին անդ լուալէտք
Եւ ընդ մարգ դալարագեղ առու բարակ մեղմընթացիկ,
Պաւէթին արմաւ կամ վայրի հովանացի մեծ ձիթենին.
Զի երբ նոր արքայք հանցեն նախընծայ պարս յիւրեանց գարուն
Եւ սաւառնեալ 'ի գըրացըն խաղասցէ գունդ մանկըտւոյն,
'Ի տօթոյն խոյս առնուլ հրաւիրեսցէ գետեզրըն հուպ
Եւ յոստախիտ օթևանն առ ոստ անդ ծառն ընկալցի հիւր ։
'Ի միջի անդ անխառնաց և թէ զնայուն իցեն ալիք,
Արկ ուռխս խոտորնաձև և մեծամեծ վիմաց հատոր,
Զի ունիցին 'ի խութ առ խութ կամուրջս անդ կալ հալաթևել
Յարև ամառնային' զապականեալս եթէ յանկարծ
Թափ անկեալ ցըրուեսցէ հողմ և կամ 'ի ջուրսն ընկըղմեսցէ ։
Նարդոսք մըշտափթթիթք և շուրջ 'ի ափունս անուշահոտ
Ծաղկեսցեն անդ ծոթորք և սասակարդ թաւուտ կորդիւն,
Եւ հոյլ 'ի հոյլ մանուշակք առատանօղ արբցեն վըտակս ։
Իսկ Խըցեանք' 'ի զոգաձև թէ կեղևոց քերթ կարկատանք

15. Պրոկնէ ծիծառն է. որ ըստ առաս-պելըն դուստր էր Պանդիոնի աթենացւոց արքայի և կին Տերէոսի արքայի Թրակիոյ, յորմէ եղև նմա ուստր մի Իտիս անուն, զոր առ քինել ընդ առն իւրում' միաբանեալ ընդ քեռ իւրոյ Փիլոմելայ և սպանեալ զնա ջամբեաց հօրն 'ի կերակուր ։ Իսկ 'ի վերայ հասեալ Տերէոսի' սուր հանեալ զհետ որդւոյն կամէր առնուլ, ինքն փոխեցաւ 'ի յօպոպ, Իտիս 'ի փասիան, Փիլոմելա 'ի առ-խակ կամ առաղուճակ և Պրոկնէ 'ի ծիծառն. որ 'ի զիւղըն գալ և կոծել զկուրծսն ընդ առաւօտապարս հեծեծանօք որդւոյն անմեղի, արիւնոտ ձևացըն ներկեալ է զլանջսն, կամ թէ 'ի խողխողելն անդ' ցայտեալ է 'ի նա յարենէ որդւոյն. այսպիսապար առաս-պելով զարիւնեռանգ նկշ և խայտուցս կրծից հաւուն ։ Են որ զՓիլոմելա 'ի ծի-ծառն և զՊրոկնէ 'ի առխակ առեն դարձեալ. բայց առաւելինգ հաւաստի է ։

18. Լուալէտս իմա զքարինս աղբերացն կամ զեզերս եղանիւրացն ։

21. Այժմ յայտնի է ամենեցուն, զի մեղուաց ոչ արքայ է կամ թագաւոր, այլ թագուհի' զոր և պարարենայլին առեմք. բայց հինքն առոտ զնա գիտէին կամ չէզոք. վասն որոյ և ընդ արուեղս նոցա զարմանայ Վիրգ-գիլիոս 'ի տաղս (196) ։ Իսկ Իւրեանց գա-րուն իմա քաղցր և հաճոյական նոցա և պատ-շաճաւոր, կամ յորում ծնանին և սնանին և 'ի թռիչս մարգաց սկսանն թևածել ։

Այլ թէ գողտրիկ ուռկանաւ որորահիւսք իցեն փեթակք,
Մուտս անձուկս ունիցին, զի ձմեռն հատեալ սառամանեօք
Պնդէ զմեղր և տապ տօթոյն լուծեալ լքեալ հալէ 'ի ծոր։
Զօրութիւն երկաքանչիւր՝ մեղուաց 'ի զգոյշ երկիւղալի.
Այլ ոչ յունայնէ ինչ նոքա մոմով 'ի յարկսն ժիրաժիր
Ըզծերպսն նուրբ՝ ծեփեն, լնուն ծաղկունս յեզերսն և շրպար,
Այլ 'ի դոյն յայդոսիկ պէտս մըթերեալ պահեն սոսինձ
Քան զոստըդ թանձրամած և քան ըզձիւթ փռիւգեանն իդայ։
Այլ յաճախ որջս հատեալ, թէ հաւաստի համբաւքն իցեն,
Ընդ հողով տուն տածեցին, նա և գտան իսկ աւանիկ
Մինչ 'ի խոռոչս անդ քարանց և 'ի փտապար փտից ծառոց։
Դու սակայն կակուղ կաւով ըզծակոտկէն նոցին խըշտիս
Շուրջ օծ պաշտպանելով մանր 'ի վերայ տերևս արկեալ։
Մի թողուր ցեղդ առ յարկօքն, ըզկարմիրերփեան մի զխեցեփառս
'Ի հուր խորովեսցես, և խոր ճահճի մի հաւատար,
Կամ ուր հոտ մօրից է զարշ, և կամ ուր վէմք անձաւախիտք
Կանչիւն հանեն 'ի թընդմանց, ստուեր ձայնին դիպեալ պատկեր։

Բայց սակայն մինչ արևակն ոսկի զձմեռն հալածական
Ընդ երկրաւ տարամերժեալ բանայ զերկինս ցերեկն արփիւ,
Նոյն և իսկ ելեալ նոքա թևապարքն յարօտս, յանտառս,
Հընձել ծաղիկ ծիրանիս և ճաշակել թեթևակի
'Ի ծայրից հոսանաց, և քաղցրութեանն ոչ գիտեմ իւ

38. Մոմ իմա ղակնամոմն կամ գեղձն մոմ, որ չէ մոմ, այլ խիժ իմն մածուցիկ 'ի մեղուաց պատրաստեալ։

39. Շպարն մեղուաց է հիւթ ծաղկանց. և փոխաբանակ այսպէս ասելոյ՝ ծաղիկս և շպար առնէ։

41. Ձիւթ կամ կուպրաձիւթ Իդայ տես Գ. 450։ Եւ սոսինձն այն թանձրամած՝ է նոյն ինքն ակնամոմն։

43. Օրինակք ինչ՝ փոսն փորեցին։

45. Թէպէտ և մեղուք 'ի ներքուստ տանեայն զգուշութեամբ ամրափակեն, սակայն դու և արտաքուստ ծեփեա կաւով։

47. Զի հիւթ ցրդայն յոռի և գարշ մեղր առնէ, և հոտ խորովոյ խեցեփառին վնասէ մեղուաց։ Եւ զմեղուսդ մի հաւատար ճահճային ջուրց խորոց, զի ընկղմեալ մեռեալ են ջուրքն, և զի խորութեամբն չմարթեն կալ 'ի նմա վէմք իբր կամուրջք և ապաւէնք. և կարակումն մօրից ժահահոտութեամբն վնասէ. և ապառաժ քարինք զոգաւորք արձագանգօքն խռովեցեալ ահաբեկ առնեն և զանդգնող։ Այս ամենայն յաւէտ ըստ կարծեաց ժամանակին գալով։

52. Ընդ երկրաւ իմա 'ի կէսն սուզական և յանտարեան բոլորին հակադրջային բևեռին որ 'ի ներքոյ մեր. զի իբրև մեզ ամառն գայ, նոցա ձմեռն հասանէ։ Եւ արեգակն բանալ ասի զերկինս փարատելովն զամպս ըզապերս և զբալաձիւզս զձիգ և զմառախուղ։

54. Քաղել զաղնուագոյն մասունս գեղեցիկ և պայծառ գոյնագոյն ծաղկանց։

Ըզմայլեալք դառնան 'ի տած անոյշ բունոցն և սերընդոց
Մոմ՛ նորագործ արուեստել և յօրինել մեղըր մածեալ:
Իսկ ապա յորժամ յաստեղս երկնից ելեալ 'ի ներքնատանց
Եւ ընդ լոյծ օդս ամառային ըզգունդն 'ի լող զակնածիցես
Եւ հողմով պարզեալ նըսեմ ամպ ընդ երկինս զարմանալի,
Տես ուշիւ, քաղցըր վըտակս և սաղարթուն խընդրեն միշտ յարկ.
Սըփռեսջիր առ եռեղ զօրինաւոր ճաշակս համեղ
Պատրինջըս մանր աղացեալ և զանարգ բոյսըն կորընգան,
Եւ զարթո դու թըմբկին և շուրջ շարժեա զՄ՛օրըն ծընծղայս.
Նոյն ինքեանք 'ի հնարաւոր կայեանսն նըստեալ ակըմբեսցին,
Եւ յինքնին բուսոյ բարուց սաւառնեսցին յորրանսն 'ի ներքս:
Իսկ թէ 'ի վէճ ելանեն, զի խառամ ըստէպ բազմամբոխըրդով
Խայնձ առեալ ցոլանայ 'ի մէջ երկուց թագաւորաց,
Զամբոխին սըրտմըտութիւն և զըբազմութեանն լանջս 'ի կռիւ
Կայ գուշակել 'ի հեռուստ, զի զյոյլս կըռփեալ դըրդէ յորդոր
Արկերեալ պըղնձեոյն գոչիւն մարտի պատերազմի,
Եւ լսելի լինին ձայնք՝ տիպ բեկբեկեալ փողոց բարբառ:
Ընդ տագնապաւ խումբ առեալ ձախորեն շողան սաւառնաթև,
Սըրեն սըլաքս 'ի կընճիթս և ըղձըղեն մարզեն 'ի վեր,
Զարքային, զապարանօքըն եռան գեռան աշխարհակոյտ
Եւ յոխորտ խըռախուսանօք ընդ ոսոխն դէմ խիզախեն:
Արդ ըղտեալ ջերոտ գարուն և զերկնից դաշտոյն բացարձակ՝
Խուժեն 'ի դուրս, թաղմըն բախի, ձայնթէ բոմբիւն 'ի բարձանս,
Զերարեալք խառնեալք 'ի մի գումարտակըն գունդ ահագին,
Եւ անկանին դիթաւալ. ոչ թանձրախուռն ընդ օդ կարկուտ,
Ոչ այնչափ 'ի թօթափել սողցւոյ կաղնին տեղայ տարափ:

60. Զնոյն գունդն նորածին ձագուց, կամ 'ի պատճառէ իմիքէ հատուածելոց և գաղթելոց, սփռեալ իբրև ամպ ընդ երեսս երկնից:

62. Օրինաւոր ճաշակք են զորս օրէն է սփռել յայնպիսի դէպս և զորս ես պատուիրեմ, յոր և սովորեալ իսկ են մեղուք, և յայն յանկուցեալ մնան և ոչ ցրուին վատարանդի վարատեալ:

64. Որպէս յայտ է, մեղուք 'ի ձայն պղնձեաց բախելոց 'ի մի վայր եկեալ ժողովին առ հեշտութեանն, կամ առ երկիւղին՝ իբրու յորտամանէ փախուցեալք: Մօրն ծնծղայք են ծանօթ ծնծղայքն որ հարկանէին 'ի տօնս դիցամօրն Կիւբելեայ, որ և Մայր մեծ և Ռէա և Ոփս անուանի:

65. 'Ի հնարիւք գեղոց պատրաստեալ նոցա կայեանսն:

67. Այս պատերազմ լինի յորժամ 'ի ծնանել նորոց ձագուց բազում էգք պարսմանք գտանին 'ի նոսա, զորս սպանանեն և քան զմի ոչ ապրեցուցանեն: Բայց եւ սաստկագոյն հասանէ պատերազմ, յորժամ օտար ոք պարսմայր առեալ զգունդն իւր յանդգնաբար կամ խօլաբար անկանի յօտարին փեթակս:

'Ի խուռն բանակաց՝ անդ Թագաւորքըն պերճաթեւք
Մեծամեծ յուզեալ հոգիս յանձուկ 'ի սիրտսըն մրրրկեն,
Յամառեալ՝ մի տալ տեղի, չեւ ամեհի գուպարայաղթն
'Ի փախուստ զայս կամ զայն կողմըն վըտանգեալ շըրջել թիկունս ։
Այս մըրմըռեալ զայրացուկք եւ այս այնքան ճակատամարտք
'Ի ցանել չափ ինչ փոշւոյ զադարեսցեն լըռեալ 'ի սպառ ։

Իսկ իբրեւ զերկոսին պետս 'ի ճակատուցըն դարձուսցես,
Զնուազոյն թըւեցելըն, զի մի շռայլեալ արկցէ 'ի սայծ,
Հար զարկ, թո՛յլ տուր լաւին յանդորրաւէտ տիրել ապարանս ։
Մինն լիցի ոսկեհուռն ոսկեճաճանչ բոցանշոյլ,
Զի կըրկին ազգ են նոցա, սա լաւագոյն երեւեալ
Եւ կարմիր թեփովք պայծառ, միւսն այն պըղերգ անհամանակերպ
Եւ լայնափոր որովայն ընդ քարշ տանի անփառունակ ։
Որպէս կըրկին դէմն արքայից՝ նոյն եւ մարմինք բազմամբոխին ․
Զի կէսք տըգեղք սոսկալիք, զերդ ուղեւոր երիթացեալ
Ծարաւուտ թըքնու շըրթամբք ընդհող՝ եկեալ թանձր 'ի փոշւոյ ․
Այլք վառ 'ի վառ փողփողեալ ոսկեճաճանչ փայլատակեն
Ընդ իրանըն նոյնգունակ խայտախարիւ նըկարակերտ ։
Այս է զարմ ազնըւագոյն, աստի յանըշուշտ երկնից 'ի կէտ
Մեղր անոյշ մըզեսցես, եւ քան որչափ անուշաբար՝
Պարզել ծորածոյ եւ տըտպութեան գինւոյն յաղթօղ ։

Եւ իբրեւ պարք ընդ երկին զբօսեալ թեւեն թափառական
Զխորիսխ արհամարհեալ եւ ըզմարդակերտն թողեալ ցուրտ,
Զոգիսըն յողդողդունս արգելուցուս յունայն խաղոյն ․
Եւ չէ բանըդ մեծ ինչ իր, թագաւորաց թափեա դու զթեւս,

89 ․ Զի զեղխի յուտել եւ ծախել առանց գործելոյ ։

97 ․ Զխորթին տգեղութիւն յաւելուն նմանեցուցանէ փոշաթաթալ ուղեւորի, կամ փոշեխառն եւ չոր թքոյ պատեալ եւ պապակեալ ուղեւորի ։ Բայց ըստ տրամաց այս զանազանութիւն գունոյ 'ի հասակացն է, ոչ 'ի ցեղիցն ։

100 ․ 'Ի սահմանեալ ժամանակի քաղելոյ զմեղրն, որ է 'ի գարնան եւ յաշնան ։

102 ․ Ծորածոյ խմա՛յ յստակ եւ անխառն, ոչ աղտոտ եւ մրրախառն թանձրացեալ ․ եւ ոչ թէ լոյծ եւ հեղհեղուկ, որ ոչ ընդունի հասնելոյ ։ Իսկ գինւոյ անուշելի, վասն զի հինք մեղրախառն էն ըմպելին զգինին, մանաւանդ զխակն եւ զառերս ։

104 ․ Ցուրտ տուն, խմա՛յ անմարդի, անբնակ, հեռանալովն անտի եւ յօդս թափառելով ։

'Ի նոցին յամենայն՝ ոչ 'ի բարձանց որ ճանապարհ
Ջեռն յանձին հարցէ դիմել կամ ծն առնուլ բանակ 'ի ջուր։
Բուրաստանք քրքմնաւէտիկ ծաղկօք տացեն նոցա հրաւէր,
Եւ գողոց դէտն և հաւուց 'ի չըրտ ուռի գերանդաւորէն
Հելլեսպոնտեան Պրիապոսյ պահպանեսցէ թև հովանի։
Որում փոյթ են այսպիսիք՝ 'ի բարձրայօն եղևնեաւ լերանց
Տընկեսցէ շուրջանակի ծոնթոր զյարկօքըն և թեղօշ.
Ինքն ըզձեռսըն մաշելով կարծր 'ի վաստակ՝ ծիլսն 'ի հող
Մատուսցէ տունկ բարեբեր և զպանակալի ջուրս արբուսցէ։
Այսքէն աշխատութեանս եթէ ըզլման մերձեալ 'ի կէտ,
Առագաստ ամփոփեալ՝ չէր փոյթ շըրջել զնաւս 'ի ցամաք,
Եւ զյուռթի դրախտից թերևս զարդարելոյ խնամոց գարման
Երգէի և զերկաբեր ըզվարդենիսըն Պեստանի.
Թէ զիարդ ուրախասցին եղերդք յըմպելն անդր առուաց,
'Ի լախուր փըթթեալ ափունք, և ծամածուռ վարունգ ընդ բոյս
'Ի փոր մեծ աճիցէ, և զանազան վարսաւորեալն
Զնարգէս կամ ըզգառոտիկ ականթի ուռս ոչ լռէի,
Եւ ըզգունատ բաղեղունս և զմըրտենիսըն ծովասէր։
Զի յիշեմ ես զԻբալեայ բարձրապարիսպ աշտարակօք,
Ուր մըթինըն Գալէսոս առոգանէ զանդըրս խարտեաշ,
Զալևոր տեսեալ Կորիկ, որում սակաւ ինչ արտավար

107. Ճանապարհ բարձանց է օդն, երկինքն։

111. Պրիապոս որդի Աստղկան և Սպանդարամետին, 'ի Լամփսակ քաղաքի ծովեզերեայ փոքուն Միւսիոյ առ Հելլեսպոնտոսիւ ծնեալ և նախամեծար պատուեալ, գիք համարեալ էր պահապան պարտիզաց, յորս և խրտուիլ կանգնէին զպատկեր նորա անպարկեշտ և այլանդակ՝ անճոռնի և ահաւոր, գերանդի 'ի ձեռին՝ խրտու վանել զգողս և զթռչունս։

113. Ձի և Թեղօշ կամ շոճի ախորժելի համարեալ է մեղուաց։

117. Այլաբանութիւն մերձ 'ի կատար հասանելոյ ընթացից քերթուածոյս և գագարելոյ։

119. Պեստոն կամ Պոսիդոնիա քաղաք էր Լուկանիոյ կալաբրացւոց, ոչ ինչ կարի հեռի 'ի Սիլարեայ, վարդենեօք համբաւաւոր առ բանաստեղծս, որ երկիցս ծաղկէին յամին՝ 'ի մայիսի և 'ի սեպտեմբերի։

123. Ականթն աստ ոչ ծառն է, այլ գեղեցիկ խոտն վայրի. տես բ̃. 119։

125. Տպագիրք ինչ ունին՝ [illegible] բայց ամենայն գրչագիրք միաբան ունին որպէս եդաք։ Իբալիա է Տարենտոն քաղաք 'ի հարաւային խորշ մի Իտալիոյ՝ կառուցեալ յԻբալէոսէ որդւոյն Լակեդեմոնի, որոյ զաղութ մի ածեալ 'ի գաւառ անդր արդաւանդահող՝ շինեաց զՏարենտոն։ — Գալէսոս է գետ Կալաբրիոյ, որ հոսէ 'ի ծոցն Տարենտեան, ծառովք հովանացեալ և խոտութեամբն մթանեալ։ — Իսկ Կորիկ, կամ անվանական անունն է ծերոյս՝ զոր 'ի մէջ բերէ կամ սահմանէ Վիրգիլիոս, և կամ հայրենատեղեան յորջորջումն, իբրու 'ի Կորիկէ աւանէ և լեռնէ Կիլիկիոյ եղեալ, զոր 'ի հարկի ծառայութեան կացուցեալ Պոմպէի՝ աստ բնակեցուցանէ զոմանս 'ի Կալաբրիա և 'ի սահմանս Տարենտոնի։

Վայր 'ի խոպանին ագարակ, ոչ արգաւանդ եզանց անդու,
Ոչ խաշանց բարեպատեհ և ոչ 'ի տունկ այգեաց 'ի դէպ:
Նա սակայն ցիր անդ 'ի փուշս արկեալ բանջար և շուրջ 'ի ծիր
Սպիտակ շուշան, աղաւնիխոտ և ըզխաշխաշ մանրահատիկ,
'Ի սրտին զուգաւորեր ընդ արքունի փարթամութեան,
Եւ մտեալ տարաժամու՝ կուտէր անդէն խորտիկս սեղանոյն:
Նախ քան զնա 'ի գարնանն և աշնայնի քաղէր խնձորս,
Եւ մինչ դառնին դեռ ձմեռն ըզքարինս հերձոյր սառնամանեօք
Եւ 'ի պաղ ձուլեալ զընթացս ամբարձանէր ջուրց խոխոջից,
Նա զգեղդեղաւոր յակինթի հատէր յամառնայնոյ ըզխոտատուփս՝
Նըշկահեալ ըզհեղգ ամառն և զյապաղեալսն սէգ զեփիւռսն:
Սորին նոյն եղեն յոգնածնունդս և զանձնաղբերս մեղուաց պատրաստ
Նախ ընդառատ էր բարգաւաճ, նախ թորէր տատասկ շաճի,
Եւ 'ի ճնշել խորրսխաց մեղր կթէր նա փրփրագորիս:
Եւ որչափ 'ի նոր ծաղկին ծառըն բերկրի պտղանըշեր մրգովքն,
Նոյն և աշնայնի հասուն յանձին բարձեալ բերկրէր:
Ծերն և զառամ ծանձըմարիս տնկեաց 'ի շար գեղեցկակարգ,
Եւ ըզկարծըր տանձի, զաւալորեալս կոկոնեանս,
Եւ ըզսօսըն զհեշտըռնուաց զուարթացելոց հովանաւոր:
Այլ ես սակայն զայսոսիկ, առ յապառնի վարեալ սահման,
Զանց առնեմ՝ այլոց թողեալ առ 'ի յապայս յիշատակի:

Եկ արդ եկ ըզմեղուաց նորաստեղծը յՅուպիտերայ
Ըզբնութիւնս ասից ազեր, որում փոխան նոքա շնորհին

133. Ոչ գնածոյ կերակրովք, այլ որ անվարձ և անծախ 'ի պարտիզէն իւրմէ մատակարարեալ:

137. Կէս օրինակք փոխանակ յակինթի ունին ականթի. այլք ընդ հնագոյն օրինակի և զգուշագոյն տպագրիլք՝ որպէս երգաքս յակինթի:

138. Ուռնչս ընկեցեալ և քամահանօք աբարկեալ յամառն և 'ի մեղմ օդս գարնանայնոյ՝ իբրև 'ի գանգատելոյ. ասէ զի խնդոյ յառաջ քան զհասանելն նոցա՝ ծաղկիւք ժողովէր: Իսկ թէ որպէս, թերևս ջերոցս խնչ ունէր անկոցն, կամ թէ ջերմանոցիւ մեծանին էր:

140. Բաժինք և շաճիք օրինակք մեղուաց և 'ի գործ նոցին պիտանացուք: Եւ տատ խմա ըստ բազմութեանն, կամ ըստ յորդութեան խողովակացն և հուղոյ:

142. Ոչ ծաղկանկեց եղեալ պտղաբերոյս լինէր, զի 'ի ծաղիկն անդ է և պտուղն. այլ որչափ ծաղիկս երևեցուցանէր 'ի գարնան, նոյնչափ և պտուղս հասուցանէր յաշնան:

144. Զհինօրեայ և զըստուարամեայ ծառս փոխեաց և անկեաց 'ի նոր կարգ գեղեցիկ, իւրով երկրագործական հմտութեանն անխափան պահելով:

147. Յանձնառու 'ի հարկաւորագոյն սահմանն քերթածիս, որ չներէր ըստ արտաքոյ երկարել:

150. Մեղուաց հրաւիրեալք 'ի ձայն ծնծղայից կուրետեանց կամ կուրետաց քրմաց

Նուագաւոր հընչմանց Կուրետաց և ձայնաւոր պղընձոյն ըղձէտ
Զերկնից արքայն սընուցին 'ի քարայրին դիկտէական ։
Սոքա և եթ ընծընեալ հասարակաց ունին և զորդիս ,
Միաժողով 'ի քաղաք՝ մեծ օրինօք վարեալ կենցաղ .
Սոքա միայն գիտեն անդորր յարկս և հայրենիս .
Հանդերձեալ ձըմերայնոյն յամառայնի յառաջատեսք
Ջեռն 'ի գործ արարեալ և 'ի միջի զգիւտսըն դընեն ։
Քանզի կէսք բարեաց ռոճկաց դաշանցք ուխտից յանդըս ջըրջնեալք ,
Կէսք 'ի յորմածըրս դաւթիցն առեալ զարտօսր ըզնարկիսի
Եւ սոսնձ թանձր 'ի կեղևոց՝ դընեն մեղրոց հիմն առաջին ,
Եւ ըզկնի կառուցանեն այնուհետև ըզմոմըն մած .
Զզաւակըռուն մանկութիւն՝ ըզյոյս ազգին դայեկեն կէսք ,
Կէսք ըզմեղրըն սուրբ սերտեալ պարզեն բըջջաց լըծ օշարակ ։
Են՝ և որք առ դուռըն եհաս վիճակ պահապանութիւն .
Եւ դիտ կան փոխանակաւ ամպոց երկնից և անձրևաց ,
Զեկաւորաց կամ ըզբեռն առնուն , կամ գունդ հրոսակ կազմեալ
Ըզգոռեխուռն ջոկ անգործ հանեն փեթակաց 'ի սըրահից .
Սաստակին եռայ և բուրէ մեղր 'ի ծաթթար անուշահոտ ։
Որպէս Կիկլոպսք երբ հապճեպ՝ շանթս 'ի հալուն զանգըւածեն ձուլեն ,
Կէսք 'ի փուքս արջառենոյս ըզհողմս օդոց առնուն և տան ,
Ըզպըղընձածուրն շառաչուկս 'ի լիճ՝ մըխեալ ջըրդեղեն այլք .
'Ի ներքոյ կանգնեալ սալիցն Էտնէ 'ի թնդ թընդեալ հեծէ ,
Նոքա զբազուկս ընդ իրեար մեծաւ ուժով բառնան կարգաւ
Եւ աքցանօք ոլորուն կալեալ զերկաթըն շըրջըշըրջեն .
Ոչ ընդհատ , օրէն թէ զփոքր ընդ մեծ իցէ համեմատել ,

Կիւբելեայ եկին սնուցին զմանուկն Արամազդ. յանձնաւէ Դիկտէ լերին կամ 'ի Դիկտէս այրին Իդայ լերին կղզւոյն Կրետեայ , զոր անդր ապրեցուցեալ էր մայր նորա Կիւբելեայ 'ի ծախող որդեկեր Ժամանակէն Զրուանայ կամ Կռոնոսի ։ Եւ 'ի վարձ ծառայութեանս այսին մեղուք յԱրամազդայ զմեծ և զզարմանալի հանճար իմաստից և զիմաստութիւն ։ Փոխանակ այսմ հանդերձելոյ պարգևի , ասէ , մեղուք յառաջագոյն սնուցին զԱրամազդ . փոխանակ ասելոյ՝ թէ փոխարէն սնուցանելոյն այսին զպարգևեաց զայն ։ Անուն Կուրետաց 'ի հելլէն ձայնէ ածանցեալ է , զոր պատանեակս առնուն ։

160 . Սինձ թանձր . տես 'ի տողն 40, 41 ։ Զայս սոսինձ կամ զանկամանմոմ՝ հիմն արկեալ մեղուցն , ապա 'ի վերայ նորա շինեն զմոմեան՝ վերուստ 'ի վայր գործելով ։ Եւ այս իսկ հայի թերևս լատինն բառն suspendunt, որ զգինուածոց ասացեալ՝ նշանակէ առկաղապար կանգնել , ամբառնալ կամարակապ . բայց զի և կախեալք միայն են 'ի բարձ , խորհրդով եղանք կառուցանել , որ յերկակին միասն ածխնորհէ ։

169 . Զներկեղոյս և զերանէ տես տո . 489 ։

172 . Օրինակք ինչ փոխանակ Էտնէի առնին անուն կամ հրոյն ։

Ինքնաբոյս սէր հանճարոց ըզկեկրոպեան ճնշէ մեղուս
Ի զմէն մի յիւր բաժանումն. հինօրէից՝ 'ի խնամս աւանք,
Պահել ըզպանս խորըխաց և առնել կազմել ամենարուեստ.
Իսկ մանկագոյնք յանապատն դառնան պահու վաստակաբեկք
Ծոթըրմեալ բարձք հածեալ, կըծեն աստ անդ և ըզկնձնթուղ,
Կապտագոյն զուռենիս, ըզշէկ քըրքում և ըզկասիաս,
Ըզթըրմէի պարարտաւէր և ըզյակինթենի զերկնագոյն:
Մի հանգիստ գործոյ բնաւից, մի բոլորից աշխատութիւն.
Այգուն դիմեալք ընդ դըրունս՝ այլ ոչ երբէք դուլ և դադար.
Եւ յազդել երեկորոյ զարձ յարօտէ ածել մարգաց,
Յայնժամ 'ի տուն ընթացեալք, յայնժամ մարմնոց առնեն դարման.
Ձայնք հընչեն, և առ սեմովք ամենդատատուքք շըշընջեն շուրջ:
Իսկ ապա 'ի սըրբակայանս իբրև մըտեալ պառըկայարկն,
Լռութիւն է գիշերոյն, և զկանիջ անդամոց՝ խոր քուն պատէ:
Բայց յամպամածայն անձրևի չմեկնին 'ի տար 'ի դադարաց
Կամ երկնից հաւատան 'ի մըրրկաց ասպատակել.
Այլ յանքայթս ըզպարըսպաց տատանեալ շուրջ երթան ըզջրոյ
Եւ հնարեն առուգ աշխատանս, և զերթ մակոյկ մի յաղդողդուն
Ծովաւալեաց 'ի տատանել ալեաց՝ բառնան կոպիճս յանձինս,
Եւ ընդ օդ սին նաւէք ըզփոքրիկ կըշռեն անձինս:
Զարմասցիս և ընդ այս կարգս հանճարական մեղուաց եղեալ,
Զի ոչ ամուսնութեանց ինչ պարապեն, ոչ յօգանիք
Զմարմինս 'ի խառնուրս հեշտին կամ ծընանէին մանկունս երկանք:
Այլ ինքնին 'ի տաղարթուց ուանոյշ բուսոց զիւրեանց սերունդ
Բերանովք հաւաքեալ՝ ինքնին զարքայն և զժողովուրդն

176. Կեկրոպեան է ատտիկեցի, 'ի Կե. կրոպայ առաջին արքայէ ատտիկեցւոց: Զի մեղք ատտիկէաստանի, մանաւանդ Հիւմետ լերին, անուանի էր, որպէս և մինչև ցայսօր:

182. Թմբէի հոյլ լինի մեղրածորան մատակարարէ մեղուաց 'ի ատենձ պատականաւոր:

183. Զայսոսիկ խնա զնեսպան մերժողս գործակցութեանցն. ապա թէ ոչ, փոխանակաւ եւ հանդերձ և վաստակեն, այլ և գիշերն եւ, ըստ այժմու Հնգպատագոյն քննութեանց:

189. Իւր քուն է իւրաքանչիւր առանձին յատուկ և սովորական, և ըստ օրինի և 'ի բնէ պարտաւորական, և զոր ոչ եւ կարէ թօթափել:

194. Կարծիք էր ժամանակին և այս՝ 'ի վրիպակ տեսութենէ. զի զգործ այլոյ ուրուք ազգի մեղուաց, որ զբոյնս յորմս կառուցանեն աւազով և խճիւ մածուցեալս, մեղրագործ մեղուաց ընծայեալ են:

199. Նոյնպէս և այս կարծիք էին հնոց, թէ մեղուք 'ի ծաղկանց ժողովեցեն զսերմանս ծննդոցն. և վասն այսորիկ իսկ, ասէ, այնչափ է նոցա սէր ծաղկանց, մինչև զթևսն խորտակել և մեռանել իսկ:

Յարուցանեն, զաղբամոլան և զմամուկերս նորին զահինձս :
Նա ըստէպ յապաւած վէմնըն զեզերեալ զԹեւոյն փրշրեն,
Նա մրտառողինր ընդ բեռանդըն շընչասպառ փրշնն զոգիս.
Նախշափ սէր է ծաղկանց և փառք մեղերն ընծայելոյ :
Սանն որոյ Թէպէտ անձաւկ մնոյց նոցա կենաց սահման,
Զի և ոչ քան զեօԹնեւրորդն ինչ յերկարեալ տեւեն ամառն,
Նայն ազգն անմահ կայ յաւէժ և տանցն բազդ արձանանալոյ
Պարապայս բազում ամաց և հարք հաւուց զամ 'ի համար :
Ոչ զայդ, ոչ Եգիպտոս այնպէս և մեծըն Լիդիա,
Ոչ ազինք պարԹեւականք և կամ Հիւդասպ արեւելեան
Պաշտեն ըզԹագաւոր. անմնացուն մի են խորհուրդք
Մինչ ողջայն է արքայն, խոկ կորուսեալ՝ զուխտայն Ջըրեն,
Զմեղուն մըԹերս աւառուն աւար, քանդեն զպահանդըս պայծառ:
Նա գործոյն է տեսիչն, ըզնա ք'ի նոյն ակընկառոյց
Զնմլին զան կուռ մըռմընջմամբ և գունդագունդ խռնեալ պատեն,
Տանին ըստէպ 'ի շալակ, սան նահատակ զանձինս 'ի մարտ
Նա առ վէրս ղեխազգուռ խընդրեն վիրօք մահ գեղեցիկ :
Նըշանօքս այս և սոյին օրինակաց կըրԹեալ ըղձիւ
Սան ինչ միտաց աստուածեղէն և շունչս զոլ արփենեա
Ասէին ումանք 'ի մեղուս, զի 'նդ ամենայն շըրջի աստուած
Ընդ երկիր, ընդ ծովու հետս և ընդ երկին անդընդագնաց.
Անտի հօտք և անդեայքն՝ մարդիկ և բնաւ սեռք զազանաց

209. Մեծ աւել զԼիդիա կամ Լիւդիա դաւառա Ասիոյ, ոչ համեմատութեան ինչ է առ այլով. այլ վասն մեծափառութեան և համատարած Թագաւորութեանն 'ի ժամանակս Կրեսոսի :

210. Հիւդասպ գետ է Հնդկաց աշխարհին, զոր Վերգիլիոս Ասիոյ առէ կամ մարաստանեաց (Է. 136). Թերևս զի Ասիա յեւլից կողմէ Մարաց և Պարթեւաց՝ ձգեցին մինչև 'ի Հնդիկս, և զի Ասիոյ իշխանութիւնն ընդարձակեալ հասանէր երբեմն մինչև մեռ 'ի սահմանս այնր գետոյ Հընդկաց : Այնմիկ կրկին անուն զՀիւդասպ, մի հնդկային, և միւս 'ի խուժադուժ առ Շօշ քաղաքաւ Պարթեւաց. բայց կարծեմ անուն եհեթ առեալ, և ոչ յուշկալ աշխարհացս : Ես զեւտանք զաղցն կամի նշանակել, առ որս մեծ էր արքայից պատիւ սաստ իշխանականն և անձն աստուածանման պատուեալ :

211. Մինչդեռ ողջ կայ Թագաւորն, միաբանեալ կան ընդ նմա և միաբան առ իբեարս. խոկ Թէ կորուսանիցեն յանկարծ զԹագաւորն, քակի միաբանութիւնն, և աւարառեն զամենայն զգործն :

219. Ըստ Պիւթագորայ և Պղատոնի և ստոյիկեանցն վարդապետութեան, որք զմիտս խառն և հոգի անհունօրէն ընդ երկրական համաշխարհին զատուած՝ տարածեալ ընդ ամենայն արարածս, շարժել կամ կենդանացուցանել զամենայն՝ համարելով նոցա յիւրմէ մասն, և այն՝ անմահական, որ 'ի լուծանել մահկանացուացն՝ ըստ եթերային կամ հրեղէն բնութեանն 'ի վեր յերկինս դառնալով յառաջագոյն խառնէր և յանհուն հոգին : Զի և ըստ Պղատոնի կարծեացն՝ 'ի սահմանել տարրոցն զարարչութեան ըստ Թուոյ աստեղացն նոյնչափ և հոգիս բաշխեաց եդ 'ի նոսա մէն մի յիւրաքանչիւր աստեղ :

Իւրաքանչիւր 'ի ծնընդեան բերեն յմեղեանըս նուրբ ոգիս.
Եւ ապա 'ի նոյն անդրէն ամենայն ինչ լուծեալ երթայ,
Եւ չիք ուրեք մահու մուտ, այլ կենդանւոյն վերաթեւեալ
'Ի թիւս աստեղաց անցեալ ծրարին յերկնից խորան:

Թէ զվեհաւայր երբեմն ինչ բացցես և զմեղրուն գանձս 'ի շտեմարանս,
Ըմպ մի նախ ընդ բերան ցօղեալ ջուր զխոգ և սրըսկեսջիր,
Եւ 'ի ձեռն առեալ համադէպ կարկառեսցես ծուխ հալածիչ:
Երկիցս ըղբերոն աճեցուն քաղեն, կըրկին կըլթոց են ժամք.
Մին ինչ յերկիր Բազմաստեղք ըղգեղեցիկ դէմըն ցուցցեն
Եւ առ ոտն անկուշեալ հարկանիցեն զծովուն հոսանս,
Կամ մինչ յարփից փախուցեալ խոնաւայոյզ թօնուտ Ձըկան
Տըխրագին իջանիցեն 'ի ձմեռնական ալիս յերկնից:
Այն նոցա զայրոյցք 'ի վեր քան զօրինակ, և թէ խուիցին՝
Թոյն շընչեն չիթոցօք և յերակունսըն հարըստեալ
Ընդ ըղկոյր թողուն սուինսն և 'ի վէրս անդ զոգին հանեն:
Թէ ըրժպըհի ձմերայնոյն ահիւ զընդաս յառաջիկայն

227. Երկու հնագոյն գրչագիրք ընդ այլոց չորից ունին augustam sedem, վեհ-հաւայր երդն. իսկ այլք angustam sedem, զանձուկ երդն: Բայց առաջինն մակագիրն առաւել նշանական է, իսկ երկրորդ աւելորդ և վայրապար, վասն որոյ և ոչ վերգիլեան:

232. Որք 'ի վեր վազեն և տանեն, զոտն զգեղանի հարկանեն, և իբրև թէ ոտն 'ի վերայ արոփելով մերժեն զայն և 'ի վեր ըլանեն: Այսպէս իմն խմա ասասանօր յետ ծագելոյ Բազմաստեղաց զմերանալ նոցա և զբարձրանալ 'ի վերայ ջուրց ծովու՝ յորմէ երևանել թուին ամենայն աստեղք: Գեղեցիկ դէմս ասէ, զի և կոյսք ոմանք էին յաստեղս վերածեալք. տես ծ. 227:

233. Ոչ եթէ 'ի մտանել կամ սուզանել Բազմաստեղաց Ձուկն զկնի կայ նոցա կամ զկնի մտանէ, յորմէ փախչիցեն. այլ զի ըստ կարգի պատկերաց կենդանակամարին յերկնագունդն, ուր գաստաւորեալք են ըստ Ճշմարիտ ընթացից արեգական, յարևմտից յարևելս զդէմսն ունելով, Բազմաստեղք որ 'ի Ցուլն՝ իբր յառաջոյ գնան, և Ձկունք 'ի թիկանց գան նոցա: Եւ ամենայն որ ինչ ըստ տեսութեան իմիք զհետ ընթանալ թուի, հալածել ասի զյառաջընթացն, և սա փախչել: Ըստ այսմ տեսութեան փախուցեալք և զօղեալք ասին աստ Բազմաստեղք 'ի Ձկանէն: Իսկ արտամեալք՝ վասն զառնութեան ձմեռնային ժամանակին՝ յորում սուզանին: Բայց ոմանց անկիրթ թուեցեալ՝ ըստ այսր տեսութեան կարգի ընթացից կենդանակացն 'ի զուռնան խօսել Վիրգիլեայ, համարին թէ Ձկամբն ոչ եթէ զաստեղատունն, այլ զձմեռնային եղանակն իմանայցէ, յորմէ իբրև խոյս տուեալ և սուզեալ թաքչիցին Բազմաստեղք: Այլք այլազգ ևս իմանան կամ ուղղել կամին զբնագիրն. բայց զոր եդաքն ընտրելագոյն են կարծիք: Զինչ և իցէ, երկուք Բազմաստեղացն որ 'ի 231, և մերուքըն որ աստ, զերկուսին ժամանակս կթելոյ մեղուն յայտ առնէ. որոց առաջինն է 'ի սկիզբն մայիսի՝ առ որով ընդ արևուն ելանեն, և երկրորդն գրեթէ 'ի սկիզբն նոյեմբերի, առ որով 'ի ծագել արևու ինքեանք մտանեն:

235. Իմա յորժամ քաղցի մեղքն նոցա, յայնժամ անհնարին բարկութիւն է նոցա, և յայնժամ առաւել խայթեն: Եւ զխայթոցն կոչէ կոյր սուինս կամ փքինս, զի թաքունք են՝ նուրբք և աներևոյթք իմն և կուրաբար յետուստ վարեալք. և 'ի ձգելն զնոսին յետս՝ խզեալ մնան հանդերձ պատառմամբ որովայնիցն, որով և մեռանին:

238. Իսկ եթէ վասն առաջիկայ գառ-

Գութ ածեալ աւերածին և բեկելոց անձանց նոցա ,
Սակայն ո՞ ծխել ծոթոր և զընդունայն մոմն հատանել
Երկուասցի , զի ստէպ լափէ զխորիսխն անյայտ կովաղիաց ,
Եւ թոտոտք խաւարասէրք եռան կայտռեն խուռն 'ի սենեակս ,
Եւ բոռէտ ապախտաւոր առ օտարին նստեալ նըպար ,
Կամ պիծակ ժանտ և ժըպիրհ անհամեմատ խառնի զինուք ,
Կամ ցեց՝ազգ դըժընդակ , կամ գարշելին Աթենասայ
Սարդ 'ի դրունսն կախէ զթարակամանս ոստայնին ։
Ո՛ր և չափ կողոպտեսցին՝ նոյն միահոյլ փոյթ պընդութեան
Տարցին 'ի կանգնել զանկումն ազգին կործանելոյ ,
Լցցեն ըզխորշս 'ի ծաղկանց և հիւսեսցեն զամբարանոցս ։

Իսկ եթէ , որ զի կենցաղ ըզմեր վըտանգս ետ և մեղուաց ,
Ախտիւք դառնութեան ծորեալ մարմնոց թառամեսցին ,
Զոր անշուշտ ունիցիս նըշանակօք ծանօթս առնուլ ,
Առժամայն խօթիցըն գոյնք այլագունեալ՝ խամրին երեսք
Սոսկալի մաշարայիւ . անդ 'ի գաւթաց մարմինս յայնժամ
Հանեն զդիակնացեալս և յուղարկեն ողորմագին .
Կամ ոտն 'ի յոտն ըզմիմեամբք յեռեալ տողան կախին առ դուրս ,
Կամ 'ի ներքըս յորմարգել տանցըն շուշեն առհասարակ
Տարտամեալք առ քաղցի ու՚նդարմացեալք կարկամ ցըրտով .
Լու լինի անդ թաւ հընչիւն և մըրմընջեն յերկար նուագօք ,
Զոր օրինակ մըռմըռայ յանտառս երբեմըն ցուրտ հարաւ ,
Իբրև ծով ծըփեալ գուժէ 'ի յետադարձ սահել ալեացն ,

նութեան աւուրց ձմերայնոյն ոչ զամենայն խորիսխն քաղիցես , գթացեալ 'ի մեղուսն՝ զի մի սատակեսցին 'ի սովոյ , սակայն օր-բելի է քեզ զփեթակն ծխով , և զաւելորդ մոմն 'ի բաց հատանելի , զի մի 'ի բշխջսն անդ գարանեալ բունեսցին ազգի ազգի ճճիք և զեռունք ։ Մեղուք առաւել 'ի բարեխառն ձմերայնի երկնչին 'ի սովոյ . զի նոյնպէս գործել չկարեն , բայց ուտել ուտեն ։ Իսկ 'ի խստաշունչ ձմերայնի թըմբրեալ ընդարմացեալ ոչինչ ճաշակեն ։

243 . Գոռեխ կամ իշամեղու անգործ , յօտարին համբարոց կերակրեալ ։

244 . Անհամեմատ զէն պիծակին՝ է խայթոց նորա մեծ քան զմեղուացն ։

245 . Սարդն ըստ առասպելին էր Արաքնէ դուստր Իդմոնի , մեծնացի կամ լիւդացի . որոյ խրոխտացեալ ճարտար քան զԱթենաս գոլ ոստայնանկութեամբ , ցասուցեալ աստուածուհին և պատառեաց զոստայն նորա և զգործիսն խորտակեալ ցրուեաց ։ Ընդ որ խոժոռեալ Արաքնէ՝ խեղդեալ և կախեցաւ , և 'ի կախաղանի անդ փոխեցաւ 'ի սարդ 'ի նմին իսկ յԱթենասայ ։

247 . Որչափ և կթեսցես զմեղր նոցա , միայն թէ մի մինչև 'ի սովամահ առնել զնոսա կամ յանպատեհ ժամանակի , այնչափ անդադրյնս ջանան և նոքա գործն առնել մեծասուն և լնուլ զկորուստ խորիսխացն 'ի հիւթոյ և 'ի հուզոյ ծաղկանց , և կարկատել զբջիջս պատնեցն կամ մաղոցն ։

Որպէս հուր 'ի փակ հնոցի փայլակնացեալ շռնչէ մըրրիկ։
Աստանօր բուրմունս այրել զանգըժատի յորդորեցից
Եւ ըստ ցընցուղ եղեգնեայ ծորանս 'ի ներքս ածել մեղու,
Ախորժիւք ըզպարտաստեալըն յընտանի խիւս հրաւիրելով։
Յաւ լեցէ խառնել 'ի նոյն և զգըղթորոյ լեսեալ ճաշակ
Եւ վարդ չոր կամ քաղցու 'ի հուր բազում պարարտացեալ,
Կամ ողկոյզըս չամչի առ 'ի փսիթեան այգեստանէն,
Եւ զկեկրոպեանըն ծոթոր և զտերեփուկ բազմաբուրեան։
Է և ծաղիկ ինչ 'ի մարգս՝ առ երկրագործըն ցինկ անուն
Դիւրագիւտ բոյս և առ ձեռն ոյց միանգամ եղցեն 'ի խոյզ.
Զի անտառ մեծ ամբառնայ 'ի միոջէ և եթ փընջէ,
Ինքն ոսկի, այլ 'ի տերևսն որ խուռներամ զիւրև սըփռեալ՝
Կապուտակ մանիշակին ծիրաներփեան հարկանի փայլ։
Բազում ուրեք դից բագինք 'ի պըսակաց հիւս զարդարին,
Համն 'ի քիմըս դաժան, տաւարածականք յարօտս հովտաց
Եւ առ ափն ոլորտապտոյտ ուղխից Մելլայ ժողովեն զայն։
Զարմատըս սորա՝ յանուշահոտ եփեալ գինւոջ
Եւ լիով սակառօք մատո նոցա ճարակ առ դուրս։

Իսկ թէ ումեք յանկարծոյն 'ի սպառ 'ի սպուռ հատցի զաւակ,
Եւ չիցէ ուստի զսերունդ նորոյ զարմի յարուցանել,
Զարկադեան հօտապետին ժամ է յայտնել գիւտ անուանի,
Իբր ըստէպ 'ի սպանդ եզանց զարշ ապաժոյժն հանցէ մեղուս։

263. Անգժատ կամ քաղբան, տես Գ. 417։

267. Քաղցու եփեալ և 'ի ռուբ կամ 'ի մաթ փոխեալ։

268. Զփսիթեան այգիս կամ որթս տես Բ. 93։

269. Կեկրոպեան ասել զծոթոր, որպէս և զմեղուս 'ի 176, ատտիկեցի ասել է, վասն առատութեան տնկոյդ 'ի Հիւմետ լերին ատտիկեցւոց, որոց առաջին թագաւորեաց Կեկրոպս։

277. Մելլա կամ Մէլլա գետ է մերձ 'ի Պրիքսիա քաղաք Իտալիոյ։

282. Արկադեան հօտապետ է Արիստէոս հովիւ, որդի Ապողոնի և Կիւրենեայ յաւէրժահարսին դստեր Պենէոսի գետոյ։ Անի իշխող եղեալ Արկադիոյ, և զմեղուաց գործութիւն և զմակարդուածն մածնոյ ուսուցեալ կամ զխախաց պանրոյ։

283. Հասարակաց կարծիք էր երբեմն արևելից, և ոչ անտեղի ինչ, թէ ամենայն ազգի ազգի բզէզք և ժժմակք և ճճիք և զեռունք՝ 'ի գիճական փտութենէ, այսինքն 'ի խմորելոյ և եռալոյ և նեխեալ կամ այլայլեալ և ապականեալ նիւթոյն ծնանիցին։ Զայս և զմեղուաց կարծէին, յարջառոյ սպանելոյ և նեխելոյ՝ 'ի ծնունդ յառաջագայել պարուց նոցա. որ և եգիպտացւոց հնարագիտութեան գիւտ համբաւեալ էր։ Ըստ այսմ և զձիաստացն 'ի նեխեալ մարմնոց ձիոյ ծնանել առէ Խորենացին ('ի գիրս պիտ. պարապ. ձիոյ. ժէ), նոյն և Պլինիոս որ և զընգռուսն յիշոյն առէ (գիրք ժա. 20)։

Ընդըստին 'ի վերուստ առեալ ըղձեալ կարգի ճառիս
'Ի նախուստ անտի սկզբանց ըզզրոյցն ողջոյն արկից 'ի վէպ։
Զի ուր պէլլեան Կանոպեայ տոհմին բնակէ երջանկազարմ
Որ ուղխիցըն հոսանօք ծովածաւալըն՝ Նեղոսի,
Եւ նըկարէն նաւակներով շըրջագայի յիւր անդաստանս,
Եւ ուր պատի զսահմանօք կապարճեալց պարսկաստանեայց
Եւ պարարեալ 'ի թուխ աւազ զկանաչագեղն Եգիպտոս
Եւ յեօթն առաջս հատուածեալ գայ դարավէժ հոսէ 'ի ծով
Ընդուստ 'ի մրթագոյն Հընդկաց իջեալ գետն յորդաղէմ,
Բովանդակ 'ի սոյն արուեստ հաստէ աշխարհն յոյս անպատիր։
Սուղ իմն ընտրի նախ տեղի և առ 'ի նոյն պէտս ամփոփեալ.
Եւ պընդեալ զայն նեղ որմովք և կըղմինտրովք անձուկ յարկի՝
'Ի չորից հողմոց քառեակ տան լուսամուտս 'ի կողմանէ։
Խընդրեալ ապա յերկեմեան ճակատուն որթ կարակնեղջիւր,
Երկլին ծուծքն և հազագին դուռըն խըռնու քուլն ոգորմամբ
Եւ յանեղծ 'ի մորթն ընդերք զանխուք տոչկին կոշկոճանաւ։
Այդունակ յորմածի անդ արկեալ թողուն, և շուրջ արփաւեն
Բզկտելիք նորին ուղեշս հատեալ ծեթոր ուռոյգ նարդոս։
Գործի այս՝ մինչ մեղմ օդով սկըսանի դեռ ծով ծիծաղել,
Չև 'ի նոր երփնից նախօտ մարգագետինքըն շողացեալ,

286. Պէլլա քաղաք էր Մակեդոնիոյ. Կանոպայ կամ Կանոպոս քաղաք եգիպտացւոց առ երի Աղեքսանդրիոյ։ Որովհետև մակեդոնացիք տիրեցին երկրին եգիպտացւոց, յանուն նոցա մակեդոնական կոչէ զայն, և ևս յատկաբար պէլլեան, զի Աղեքսանդր մեծն՝ տիեզերակալ թագաւոր մակեդոնացւոց՝ 'ի Պէլլա քաղաքի ծնեալ էր, և զԱղեքսանդրիա նա շինեաց։

288. Զայս իմա յողողանել ջուրց Նեղոսի։

289. Իմա շրջան առեալ անցանէ զկողմամբք սահմանացն Պարսից, զկողմամբքն՝ յորս հաստանէր երբեմն տէրութիւն Կիւրոսի պարսկի և Կամբիւսեայ, որ և եգիպտացւոց տիրեաց։ Կամ մանաւանդ զՊարսս իմա առ Պարթևս. 'ի կողմանս՝ յորս թևակոխէին սահմանք ընդարձակ թագաւորութեանն Պարթևաց. զորս և կապարճաւորս կամ աղեղնաւորս իսկ ասէ, որ տիրապէս Պարթևաց է սեփականեալ։

292. Մթագոյն Հնդիկք են աստ եթովպացիք, զորս ասացեալ եմք ընդհանուր անուամբ հնդիկս կոչել նախնեաց։ Եւ արդարև, որպէս կարծի հաւանաբար, 'ի լերանց լուսնի որ 'ի խորս Եթովպիոյ՝ ելեալ խաղացեալ գայ Նիլոս, և ընդ եօթն բերան թափի 'ի ծով։ Ամենայն ասացեալքդ յայս գլխին, թէ բովանդակ երկիրն եգիպտացւոց, զոր ընթացիւք եգիպտական գետոյն Նիլոսի տեղագրէ՝ սկսեալ յարևմտեան կողմանցն, ուր Կանոպայ է հուպ Աղեքսանդրիոյ, մինչև յարևելեան կողմանս առ սահմանօք պարթևական տէրութեան, յայս հնարս ապաստան կան զկորուստ մեղուացն գտանելոյ։ Եւ թէ զինչ կարծեցեալ հնարքըն էին, տես աստ։

299. Անեղծ մնալով մորթոյն, ոչ ծակել և ոչ պատառել։

302. Այս է 'ի մուտս գարնայնոյ, զաւուրբք գարուն գրանցն բանալոյ, 'ի լռել տատրակաշունչ մրրկաց, և մինչև փթթեալ ծաղկանց։

Եւ շատախօս ծիծեռան չեւ կառուցեալ բոյն 'ի հեծանս ։
'Ի փափուկ ոսկերսն յայնժամ ջեռեալ աւիշք կան յեռանդման
Եւ զեռունք երեւոյթ կերպարանօք զարմանալիք
Նախ անոտունք եւ ապա սաւառնաթեւ յուզին անհոյլք ,
Եւ զամ քան ըզզամ ըմբռնուլ օդոյք թեւակոխեն .
Մինչեւ զօրէն տարափոյ յամառնայնոյն ցընդեալ ամպոց
Աղբանեան , եւ կամ որպէս նետք 'ի ձայթել լարին թռուցեալք
Իբր այն ինչ նախամարտիկ մըխին 'ի կռիւ երագ Պարթեւք ։

Ո՞վ 'ի դից մեզ , Մուսայք , ո՞ զայս արուեստ եհան 'ի վեր ,
Ո՞ւստ ուստեք ընկլըզան առեալ նորոգ մարդկանս եմուտ հանճար ։
Փախուցեալ 'ի պենէոսեան Տեմպեայ հովտէն Արիստէոս ,
Իբրեւ ախտիւ եւ սովով կորեան մեղուքն ըստ զըրուցաց ,
Եւ 'ի գլուխ գետոյն առ սուրբ աղբերականս կացեալ տըրտում
Բազում բողոք հարկանէր՝ ձայն առ ծընօղն արձակեալ զայս .
Մա՛յր իմ , Կիւրենէ , մայրիկ նըստեալ ուղխիցդ 'ի թախս ,
Ո՜վ զիս 'ի վեհափառ աստուածածանօթ դիցըն տոհմէ ,
Եթէ միայն զոր պատմեսն՝ հայր է Թիմբրեանն ինձ Ապողոն ,
Ատելի ծընար բաղդիցն , կամ յո՞ քո սէրն առ իս գընաց .
Ընդ իմ խոստանայիր երկնից անգամ ինձ ակն ունել .
Ահաւասիկ եւ զայս իսկ մահկանացու կենաց պատիւ ,
Զոր ինձ հազիւ հազ արդեանց եւ անասնոց արթուն խընամք
Ամենայն հնարիւքս ետուն , զքեզ ունելով մայր , կորուսի ։
Ո՞ւր կաս ծն , ինքնին ձեռօքդ ըզպարգաւանս խըլեա մայրիս ,
Հա՛ր 'ի բակս հուր ոխերիմ , կէզ սատակեա զհունձս արտորայս ,
Եւ արկ յարթատունկս այգւոյն հատու տապար 'ի գործ ,

312 . Այս հարցումն ոչ վասն Արիստէոսի թուի լինել՝ զոր ծանօթս կանխաւ արկաք հատուածի անուամբ 'ի 282 , այլ վասն Պրոտէոսի , կամ մանաւանդ Կիւրենեայ՝ մօր Արիստէոսի , յորմէ ուսաւ եւ ուսոյց ։ Եւ թէ որպէս , զայն սկսանի պատմել յառաջիկայդ , ուր եւ երեւի՝ գիպուածոյ գիւտ լեալ մանաւանդ ։

314 . Տեմպէ էր հովիտ գեղեցիկ 'ի Թեսաղիա , մինչեւ քերթողաց զամենայն զով եւ գեղեցիկ հովիտս կոչել Տեմպէ յանուն սորա . զոր հատանէր անցանէր գետն Պենէոս կամ Պենէոս , հայր համարեալ Կիւրենեայ մօր Արիստէոսի , որ եւ 'ի ներքին աղբերականս անդ գետոյն 'ի խորս բնակէր ։ Այսր երբեւ 'ի մայրենի տունն գայ Արիստէոս , թողեալ զափունս Պենէոսի առ աղբերաց սատակման մեղուացն իւրոց ։ Ըստ մտաց քերթողին Արիստէոս 'ի ժամանակին բնակէր 'ի Թեսաղիա , չեւ անցեալ 'ի Կեա . տես ա . 16 ։

320 . Թիմբրեան կոչի Ապողոն 'ի Թիմբրա գեղջէ Տրովադայ , ընդ որ հոսէր գետն Թիմբրիոս , եւ հռչակաւոր էր մեհենիւ եւ պաշտամամբք նորա ։

Թէ այդչափ իմ պարծանաց գարշանք ըզքեզ ըմբըռնեցին ։
Լըւաւ մայրն յառագաստէն ըզճիչն 'ի յատըս խոր գետոյն .
Յաւէրժհարսունք ըզնովաւ նիւթէին ասըր միլետեան
Ծովագոյն 'ի կապուտակ ներկեալ տոգորըս տարրապէս .
Ընդ Դրիմով և Քսանթով, Փիլոդոկէ և Լիգէա
Ըզփաղփուն ծամըն հոսեալ զշուշանափայլ փափուկ ուլամբք .
Նեսէէ և Սպիով և Թաղիա, Կիմոդոկէ .
Կիդիպպէ և ընդ նըմին խարտիշագեղ Լիկովրիաս ,
Մինն աղջիկ կոյս , միւսըն դեռ ընդ փորձ անցեալ նախկին երկանց .
Նա Կլիով և Բերոյէ քորք երկոքին ովկիածինք ,
Երկոքին յոսկի պաճոյճ , 'ի գոյնագոյն մաշկ երկոքեան .
Նա Եփիրէ և Ովպիս ասիական Դէոպէիայն ,
Նա թեթեւն Արեթուսա զնետս հուսկ ուրեմն եդեալ 'ի բաց ։
Յորոց մէջ կայր Կլիմենէ զրուցէր ըզգուր ջանս Հեփեստեայ
Նա ըզգաւն Արիսի և զանուշակ գաղտագողօնս ,
'Ի սկըզբնահայր 'ի Քըհէն տողեալ ըզդից յոլով տըռփանս ։
Որով տաղիւք ըզմայլեալ ըզատակ կակուղ մինչ յիլ պատէն ,

331. Զմիլետեան ասր տես Դ. 309 ։

335. 'Ի կէս գրչագիրս պակասէ սատ տողս, որ կայ իսկ յԷնիականին, Ե. 826 ։

338. Զսոսա երկոսին ծնունդս Ովկիանու ասելով յայտ առնէ թէ սոքա միայն դստերք էին Ովկիանոսու և Տեթեայ, իսկ այլքն դստերք Ներեւսայ և Դորիսայ, թոռնեայք Ովկիանոսու ։ Զի Ներեւս կամ Ներէոս և Դորիս՝ սոքա ևս էին զաւակք Ովկիանոսու, յորոց ծնեալ յաւէրժահարսունք ջուրց՝ կոչին ներեանք, թուով յիսուն. իսկ ովկիանեանքն՝ երեք հազար ։ Բայց երբեմն սոքա և նոքա առհասարակ ներեանք կամ ներէիդք կոչին ։ — Երկոքին ոսկեպաճոյճ մորթս զգեցեալք իբրև յաւէրժահարսունք որսորդք ։

340. Ասիական, յասիական ծովակէն. տես Ա. 397 ։

341. Արեթուսա յառաջին 'ի նաժշտաց Անահտայ կամ Արտեմեայ գոլով և որսորդ իբրև զնա, ապա թողեալ զորսորդութիւն՝ փոխեցաւ 'ի նմանէ յաղբիւր. իսկ աստ այժմ ընդ այլսն նստեալ կայ 'ի մանել, որ 'ի հնումն արուեստն էր պանծալի և ձեռագործ ազնուաց անգամ օրիորդաց ։

342. Հեփեստեայ կին էր Աստղիկ կամ Աֆրոդիտէ, որում որչափ և զգուշացաւ այլն պահել 'ի հոմանեայ նորա յԱրեսէ, անօգուտ եղև. զի ըստ որում բանկնարկեանն՝ հուսկ ուրեմն ըմբռնեաց զնա 'ի շնութեան հանդերձ սիրեխաւն յերկաթագործ վարմի ցանցեալ և նշաւակեալ ատենի դից. բայց և այսու ոչինչ այլ շահեցաւ՝ քան զի հրապարակագոյժ արար ինքնին զնախատինս իւր ։

344. Զայսպիսի քարուակսն կայր պատմէր Կլիմենէ 'ի ժողովս անդ քերցն, զդիւցն բիւր ազգի ազգի շամբշութիւնս անգըստին յառաջին Քհէ անտի, այն ինքն է աներևոյթ անկազմ և անպատրաստ անդունդքըն ոչինչութեան կամ խառնակութեան տիեզերաց, խոր և խաւար, թոխ և բոխ, համապարփակ մթութիւն աշխարհակալ միգի՝ որ յառաջ քան զլինել էիցս և 'ի յարգըս և 'ի կերպարանս գալ ։ Յորմէ եղեալ և 'ի ցուցակութիւն եկեալ կարծեցին հեթանոսք զաշխարհս, և աստուածացուցեալ զնա ընդ առաջին գիւն՝ հայր աստուածոց ասացին ։ Բայց ըստ ճշմարտութեան՝ 'ի սկըս գոյցն իմանալի է զպայպարանութիւն պէսպէս սերական համերոյից և ազատապատահուց սկզբնածին տարերց էիցս, և 'ի նախնի անհամբոյր ընդդիմամարտ բնութենէն 'ի մի միաբանութիւն սիրոյ գալ, և այնուհետև շաղաշաղութեամբք այլս իմն նորանորս 'ի գոյ ածել էութիւնս ։

Մերստին 'ի մայրենի ունկն անկանէր ողբ Արիստեայ.
Յապակեղէն գահոյիցն յապուշ դարձան ամենեքին,
Այն դէտակն Արեթուսա քաջ քան զայլ քորս 'ի բաց կալեալ՝
'Ի ծայրից ծփանացն առ ըզդեղձան գլուխն 'ի վեր.
Ո՜վ, ասէր, ոչ վայրապար ընդոստուցեալդ յայնմ հեծութեանց
Կիւրենէ քոյր, քեզ ինքնին ահա քոյին սիրասունդ
Արիստէոս ըղրտառուչ յալիս ծնողին Պենէոսի
Կայ հարեալ յարտասուս և անողորմ ըզքեզ ձայնէ:
Յանկարծակի երկիւղիւ մայրըն խռովեալ 'ի միտս յայնժամ,
Բեր ծն բեր առ մեզ, ասէ, դից նըմա սեամն օրէն կոխել.
Եւ անդէն տայր հրաման շուրջանակի մեկնել ուղխից
Ընդ որ ոտն առեալ 'ի ներքըս պատանեակըն խաղայցէ.
Եւ եկաց խորանաձև գնովաւ յորձանքն 'ի տիպ լերին,
Եւ 'ի ծոց իւր լայնատարր առեալ մատոյց յալուց գետոյն:
Զքանչացեալ ընդ տուն ծնողին, ընդ արքունիս խոնաւական,
Ընդ ծովակս անձաւածիրս և ընդ անտառսըն ձայնաւորս
Ընթանայր, և հիացեալ 'ի մեծամեծ ջուրցըն յուզմանց՝
Զամենեսեան նըկատէր գետս յահագին անդունդս երկրի
Յայլ և այլ սահեալ կողմանս, և ըզՓասիս և ըզԳայլ գետ,
Եւ զըստինոս ուստի խորինն Ենիպէոս ցայտեալ բըխէ,
Ուստի հայր Տիբերինոս, ուստի և ուխք Անիենեան,
Ընդ խարակս ահեղագոչըն Հիպանիս, միւսեան Կայիկ,
Եւ ցըլադէմն Էրիդանոս կըրկին եղջերբք ոսկեձաձանչ,

355. Օրէն է նմա մտանել 'ի տունս դիւցականս, զի դիւցազն է և ինքն՝ յաստուածոյ և 'ի յաւէրժահարսնէ ծնեալ:

360. Առասնօր ոչ զակամս եևեթ Պենէոսի նկարագրէ քերթողն, այլ անձաւ իմն անդնդախոր շտեմարան ջուրց, յորմէ ըստ Վիրգիլի իբրև 'ի հասարակաց իմն աղբերէ ելանեն գետք ընդ այլ և այլ կողմանս երկրի: Եւ անձաւն այն իբրև արքունիք իմն էն, յորում դիք գետոց և յաւէրժահարսունք աղբերաց ունին իւրեանց ապարանս, կամ սենեակս և սրահապատս, յորոց 'ի միումն կայր և Կիւրենէ իւրայովքն:

361. 'Ի բաժնել և գնալ ջուրցն՝ առ տեսս գտանեն դալարիս և Թփուտս և մացառս, ընդ որս խոխոջեն. և այսու իբրև Թէ անտառք իմն իցեն և հնչիցեն կամ ձայնաւորք լինիցին:

364. Փասիս գետ 'ի լերանցն Հայոց ելեալ ընդ Կոլքիս կամ ընդ Եգերացիս՝ Թափի 'ի ծով սեաւ. առ որով առատութիւն է փասիան Թռչնոց որ 'ի նմանէ զանուանս ունին: — Գայլ գետք բազում են, անուանի է պոնտոսեանն որ 'ի նոյն ծով գնայ: — Ենիպէոս կամ Ենիպեւս է 'ի Թեսաղիա. Տիբերինոս որ և Տիբերիս (տ. 314,) և Անիոն կամ Անիէն՝ յԻտալիա. Հիպանիս 'ի Սարմատիա, որ այժմ Բոգն կոչի. Կայիկոս 'ի Միւսիա. Էրիդանոս որ և Պադոս՝ յԻտալիա. որում իբրև ցլու դէմս և եղջիւրս ասէ, զի առ հասարակ դիք գետականք այսպէս նկարէին վասն գոչելոյ ալեացն և յառաջս բաժանելոյ: Իսկ ոսկի առնել զեղջերսն Էրիդանոսի՝ կամ վասն քաջաբերութեան անդոյն, զոր և ասէ իսկ, կամ զի ամենայն դից սեփական է ոսկին:

«Բան զոր ոչ այլ ոք ուրեք ընդ հարաւային արգասաւոր
Գիմէ 'ի ծով ծիրանի յորդահեղեղ գետ յորձանուտ։
Եւրեւ հաս նա յառագաստն 'ի սունկ քարանց գլխեթայրից,
Այս զորդւոյն 'ի միտ էառ զաւելորդ սուգըն Եփրեմէ,
Հարազատք կարգաւ նամէտ կայլակս 'ի ձեռան արկանեն քորք
«Եղբայրութ ղատտառակս ողորկաստառըս մատուցեալ։
Կեպք խորտկօք լռնուն սեղանս և պատարուն կանգնեն բաժակս.
Բագինք՝ պանքայեան խընկաբուրէր հրով բորբոքին.
Ո՛ն, ասէ մայրն, ընկալ զըսկիհ զանապակիդ մէոնեան,
«Նուիրեսցուք Ովկիանու, և ինքն համայն յաղօթըս կայր
Ո՛ն Ովկիան հայր էից և քոյրաթիւ յաւէրժհարսունս,
Որ հարիւր անտառաց որ կան հարիւր գետոց 'ի պահ։
Երիցս 'ի հրատ կայծականց ցօղեաց ծորան քաղցրածաւալ,
Երիցս 'ի ձեղըն յարկէն բոց ծառացեալ փայլատակեաց։
'Ի հմայից աստի խրախոյս առեալ սըրտին՝ սկըսաւ ասել.
'Ի կարպաթեան ծոց պըտուտից Պրոտէոսի այր մի է դիւթ,

370. Ամենայն գոյն կենդանեաց և պայծառ՝ ծիրանի ասի առ քերթողսն. իսկ ծով կրկին առասելութեամբ, զի և անուն ելանէ ազնուագոյն ծովու ծիրանեին։

374. Ընծեռօղս աստուծս, որոց թաւութիւն անկուածոյ երեսացն խուզեալ և հարթեալ, այնու իսկ ողորկ, լերկ և կակուղ են։

376. Պանքայեան. տես Բ. 139։

377. Մէոնեան է լիւդական, լիւդացի. զի Լիւդիա, 'ի հնումն Մէոնիա կոչեցեալ, համբաւաւոր էր այգեօք և գինեօք։

379. Ովկիանոս ոչ միայն հայր էր ամենայն գետոց, և նախահայր Դիցբանեաց, վասն որոյ և զաստեղս նորա՝ ասեն 'ի քուրս համարեալս. այլ և հայր ամենայն էից և գոյից անգամ։ Զի և ըստ Թալէսի միլեսացւոյ հնագոյն իմաստասիրաց բնախօսութեանն՝ ամենայն ինչ 'ի ջրոյ եղեալ առանգի։ Որում ոչ օտարաձայն ինչ է և մովսիսականն առեղծագործութեան աւանդութիւն, որ ընդ անձրևոյթ և անզարդարուառ անդնդոց ոչ այլ ինչ յիշատակէ, այլ միայն զջուրս։ Այսպիսի հոգւոյ մտացի կամ մեկնէ զայսոսիկ և արգասաւոր բնաբխութիւն, 'ի լոյծ և 'ի հոսանուտ օդակիրող ոլորտոց կամ շրջեաց ասել զնախագոյ բնութիւն կամ զառաջին հաստատութիւն երկնից։

380. Կան 'ի պահ, անդ դարեալ դադարեն իբրև շահապետք նոցին և պահապանք։

381. Ծորան իմա զգինին։ Իսկ երիցս հեղեալ նուէր, զի երրեակ թիւն մեծ էր և խորհրդական և աստուածային առ հինսն, մինչև ասել ամին իսկ Վիրգիլեայ 'ի հովուական տաղսն,

Աստուած իսկ ինքնին երրեակ թըւով է զուարճացեալ։

Յայս վայր հասեալն մեզ մարդկեղէնք, որպէս զի կարօղ եղեն առասնել, թէ աստուած՝ կամ զօրութիւն և կարողութիւն իմն է անսահման, կամ միտք և բան անբաւ, կամ հոգի և կենանք անհունն. և կամ լոյս և այլն, որպէս նշմարեցին իսկ ոմանք, երեքեան անշարժութիւնքդ միանգամայն բովանդակեալ 'ի մի լրութիւն կատարելութեան միոյ միայնոյ բնութեան։

382. Այս ցոլանալ բոցոյն և լեզուանել զգարանաւանդս կամ զձեղուն յարկին՝ բարենշան համարեալ էր 'ի հմայս։

384. Կարպաթեան կոչի ծովն որ ընդ Կրետէ և Հռոդոս առ Կարպաթ կղզեաւն։ Պռոտէոսն կամ Պրոտէոսն էր դիք ծովայեա, ընդ որոյ զաւազանաւ կային ամենայն ծովք. և ինքն իսկ բազում ուրեք պարզաբար փոխանակ ծովու առեալ է։

Կապոյտակն Պրոտէոս՝ այն որ զանդունդս համատարած
Ձիաձուկն երկոտանի նրհանգս 'ի կառս վարեալ ձեւէ:
Յեմաթեան ծովուցն 'ի գոգս 'ի Պալլենէ իւրըն դառնայ
Նայց յառնէ նա զարդիս, ըզնա պաշտեմք հարսունքս յաւէժ
Նըւ հինաւուրցն իսկ՝ Ներեւս, զի է ըմնաւից կիւս խելամուտ
Որ ինչ ենն, որ ինչ եղեն, որ առաջի կարգեալ նիւթին:
Սորա այն զի այսպէս Պոսիդոնի հաճոյ թուեցեալ,
Զոր ըզնախիրըն ամեհի եւ զգազիր փոկս հովուէ յանդունդս:
Ըզսա դու նախ 'ի սարիս արկեալ, որդեակ, կաշկանդեսցես,
Որ զախտին պատճառս ողջոյն յայտնեալ ցուցցէ եւ աղագս:
Զի պատգամ եւ ոչ մի տացէ երբէք անբռնադատ,
Նա ոչ յաղերս ածիցես. ձեռըն հըզօր եւ պարաւանդս
Արկեալ 'ի նա կալ եւ կապ, անդ 'ի դերեւ լուծցին պատիրքն:
Նա ինքն ըզքեզ, մինչ արեւն ըզմիջօրեայ բորբոքէ տապ,
Մինչ դալարիք ծարաւեն եւ հովանի քաղցր է հօտի,
'Ի զանխուլս ածից ծերոյն ուր խոնջ յալեաց մեկուսանայ.
Զի զքնով անկելում դիւրեաւ հասցես զօլ զամաւակ:
Այլ ձեռքակալ արարեալ երբ 'ի կապանս ըմբռնիցես,
Նոր պէսպէս խաղալցեն դէմք եւ կերպարանք գազանեղէնք.
Զի անդէն 'ի սոսկալի յեղցի վարազ, 'ի վագր 'ի ժանտ,
'Ի վիշապ թեփամորթ եւ 'ի յառիւծ շէկ պարանոց.
Կամ սաստիկ բոցոյ խօշիւն արձակելով 'ի կալանաց
Թափեսցի, կամ չէք 'ի ջուրսըն հոսանուտ վիժեալ լիցի:
Այլ որչափ ձեւ եւ տեսիլ նա փոխեսցէ ամենազան,
Այնչափ պընդեսջիր դու զուժգնապիրկ ստուանս, որդեակ,
Մինչեւ յայն դարձցի ըմնութիւն յորում տեսեր նախ զառաջին
Մինչ քընոյն անկանելոյ զաչըլս իւր դեռ կափուցանէր:
Զայս ասաց եւ անուշակ անմահութեան սրփռեալ բուրումն

388. Կապոյտ ասի Պրոտէոս կամ Պրոտեւս, զի էր որդի Ովկիանու եւ Տեթեայ կամ Պոսիդոնի եւ Փենիկեայ: Ըստ Հոմերոսի՝ Եգիպտացի էր. իսկ Վիրգիլիոս դաւառ հայրենի տայ նմա զՊալլենէ ցամաք կղզին Եմաթիոյ կամ Մակեդոնիոյ: Անուն զնա եւ հովիւ հօտին Պոսիդոնի, որ են նըհանգք ծովու առ հասարակ, ընդ որս առանձինն եւ փոկք՝ որթք ծովայինք. եւ այր մարգարէ, եւ զօրութիւն ունել փոխելոյ 'ի բիւր ազգի ազգի կերպարանս, եւ մինչեւ կապեալ՝ չգուշակել ինչ ումեք: Զի երեւ թէ այլ յայլմէ եղեալ եւ աստուածարեալ եւ բանդագուշեալ՝ վարէր մոլեգնէր եւ առատանէր զնա հոգի կամ աւելին մարգարէութեան, որպէս եւ զհարցուկն Պիթիա եւ զՍիբիլլայսն:

389. ԶՆերեւս տեսցես 'ի 338:

412. Այս անմահական անուշահոտութիւն սեփական էր ամենայն դից եւ դիցուհեաց՝ նշանակ աստուածութեան:

Ըզբոլոր զորդեկին շուրջ բակ արկեալ զհրանսըն օծ.
Եւ նորա յաստուածարեալ վարսից բըխեաց սիք քաղցրաշունչ,
Եւ ընդ անդամսն արութիւն յաջողուածոյ ծաւալեցաւ.
՚Ի փապ լերին խորափոր՝ է քարանձաւ մի մեծանիստ
Յոր ալեաց դէզք հողմավար վէտ վէտ ՚ի խորշըս փեռեկին,
Ապաստանգաւոր նաւորդաց երբեմն ամուր ապաւինի.
՚Ի ներքս անդ թաքչի Պրոտեւս՝ վէմ անհեդեդ նըգեալ առ դուրս.
Աստ յաւէրժհարսն ՚ի դարան զհամբակն եդեալ զերծ ՚ի լուսոյն,
Ինքըն կայր ՚ի բացէ պատեալ զիւրեւ ամպ քօղանիգ.
Հրաշունչ Շընիկն ըզՀընդիկսըն ծարաւուտ տոչորելով
Առէր յերկինս, ՚ի միջակ զընդլին ժամանն կայր բոց արփին.
Բոյսք խըռուեալք, և զխորանձոր վըտակսըն մինչ ՚ի յատակս
Ճառագայթք տապացուցեալ փաղաղէին եռաշտահար.
Եւ ահա յընտել քարայրըն յալեաց դիմեալ գայր Պրոտէոս,
Խոնաւուտ ազգ ըզնովաւ ծայրածաւալ ծովուն մեծի
Խայտալով ըզցօղըն աղիս շուրջանակի ցընդեալ ցանէր.
Փոկք յայս կոյս և յայն ՚ի նիրհ անկեալ յափին անդ գայթայլին.
Ինքն որպէս փարախապետ տեսուչ հօտից երբեմն ՚ի սարս,
Յարօտէ մինչդեռ զընձուղս ածէ ՚ի տուն Գիշերավարն
Եւ ՚ի հընչիւն բառաչմանց սըրեն գառինք զգայլոց վոհմակ,
՚Ի միջին բազմեալ ՚ի վէմ ունի զնոցա թիւ համարոյ.
Եւ զի շնորհեալ Արիստեայ իշխանութիւն էր ըզնովաւ,
Ծերունւոյն հազիւ ներեալ ըզխոնջ անդամսն ՚ի նինջ դընել,
Յարձակեալ ուժգին գոչմամբ զանկեալն աղխէր ՚ի ձեռակապս.
Այլ ածեալ նորա յուշ զարուեստըն իւր մեքենաւոր,
Յամենայն հրաշըս տարերց ըզկերպարանսըն փոփոխէր,
՚Ի հուր և ՚ի գազան զարհուրագին և յուխ զեռուն.
Իսկ ապա իբրև ոչ մի գըտին պատրանք ելս ՚ի փախուստ,
Պարտեալ յանձըն դառնայր և մարդկօրէն խօսէր ձայնիւ.
Եւ ո՞վ ետ քեզ զայդ օձան, ա՛յ պարմանեաց յանդըգնագոյն,
Հասանել ՚ի յարկըս մեր, և զի՞նչ աստուստ, ասէ, խընդրես.

418. Իմա կամ ՚ի մէջ ընդարձակ և ահագին անձաւին, կամ առաջի նորա ուր խաղաղական էր ծովն.

422. Շնիկն՝ աստղ օտթարէր տապախառն աւուրց խորին ամարայնոյ. Հնդիկս իմա զեթովպացիս կամ զամենայն բնակիչս տապայեռը աշխարհացն արեւելից և հարաւոյ.

427. Ազգ փոկաց որոց հօտքուէրն.

Իսկ նորա, Գիտես Պրոտեւս, ինքնին գիտես, չիք քեզ խաբկանք.
Նշէ դու կաց 'ի կամելոյդ, դից հրամանաւք եկաք այսրէն
Խնդրել պատգամ յընկէց տուգանս. այսչափ և եթ բարբառեալ:
Նը այս՝ կիւսահրաժոյն այնուհետեւ 'ի մեծ տագնապ,
Ըզհրացայտ աչսն շրջեալ յակնարկելն իւր 'ի ծաւիս,
Սաստիկ կըրճըտմամբ ատամանց բերան բախտիցն 'ի բաշխս:
Ըպաքէն դից ինձ, ասէ, զքեզ հալածեն ցասման վըրէժք,
Մեծամեծ տաս զպատուհասս. եթէ չկայցէին հրամանքն ըզդէմ,
Պատուհաս զայդ ածէ քեզ՝ հէքն Որփէոս անպարտակիր,
փոխանակ առեւանգին իւր ամուսնոյն մեռեալ դըժնեայ:
Այր 'ի քէն մինչ փախուցեալ սուրայր ընդ գետըս զարահոս,
Զանարի վիշապ առ ոտսըն զարմանեալ առ զարափամբ
Ձեռես 'ի բոյս Թաւամօր՝ կոյս մնացեալ 'ի մահ նուիրեալ:
Սակայն պարք հասակակից անտառամնունդ յաւէրժհարսանց
Ձայն առին բարձր 'ի լերինս, կականս բարձին սարք Ռոդոպեան
Եւ բարձունք պանգէականք և արիական Ռեսեայ երկիր
Եւ գետացիք և Հեբրոս ակտեականն Որիթիա:

444. Ոչ խաբիս, և ոչ ծածկի ինչ 'ի քէն պատրանօք: Այլ դու դադարեա 'ի կամելոյ այդմ փորձելոյ 'ի պատիր կերպարանս և խաբել զիս:

446. Վասն վնասու կորստեան ընչիցս, մեղուացս:

449. Ոչ առ սրամտութեան, այլ 'ի հաղորդ մարգարէութեան կոկոզացեալ: Եւ բանայ զբերան առ 'ի գուշակել և բարբառել զբաշխս բախտիցն:

451. Այսինքն մնասցես 'ի պատուհասից, եթէ ոչ բաղդ.քօ և ճակատագիր ընդդէմ կացեալ ցուցանիցեն քեզ հնարս քաւելոյ զմեղս և զերծանելոյ 'ի պատուհասից:

452. Ոչ Որփէոս կենդանի, այլ ուրուն նորա, ստուերն ուրուական կամ հոգին Որփէի մեռելոյ: Եւ էր Որփէոս կամ Որփեւս Թրակացի, որդի Ապողոնի և Կալլիոպէ Մուսայի, կամ ըստ այլոց՝ Իագրեայ արքայի կամ գետոյ Թրակիոյ և Պոլիմնիա Մուսայի. այր մարգարէ և բանաստեղծ և երաժիշտ անուանի ընդ աւաշխարհն, ժամանակակից Մովսիսի մարգարէին:

453. Փոխանակ զի առեւանգել կամեցար դու երբեմն զկին նորա Եւրիդիկէ. որոյ 'ի փախչելն 'ի քէն ընդ գետեզերս Պենէոսի կամ Հեբրոսի՝ օձահար եղեալ յոտիցն մեռաւ:

458. Ռոդոպէ, Պանգէոս լերինք են Թրակիոյ, որ և արիական երկիր ասի, զի անդ ծնաւ Արէս, և նմա նուիրական էր երկիրն: Իսկ Ռեսեայ եա ասի երկիր, զի ասա ուրեմն առ տրովական մարտիւն Ռեսոս կամ Հռեսոս ոմն անուանի թագաւոր եկաց անդ:

460. Գետացիք ազգ Թրակիոյ կամ Սկիւթիոյ էին, որպէս ասացեալ եմք կանխաւ: Հեբրոս գետ Թրակիոյ՝ որ այժմ կոչի Մարիցա կամ Մէրիճ 'ի Ռոդոպէ լերանց խաղացեալ: Որիթիա դուստր Երեքթեայ արքայի աթենացւոց, 'ի Բորեասայ կամ Վոռեասայ և կամ ըստ առասպելին 'ի Հիւսիսոյ հափշտակեալ և յափշտակեալ 'ի Թրակիա. զոր իբրև յաւէրժահարսն այնր աշխարհի յիշատակէ, յորջորջեալ զնա ակտէական, այսինքն է ատտիկեցի. զի հինք Ակտի կամ Ակտէ կոչէին զԱտտիկէ, որ է աստ ծովեզր. և անտի ապա մեղմով իմն և քաղցրացուցանելով ածանցեալ է Ատտիկէ: Այլք ասեն յԱկտեայ դստերէ Կրանաւսի աթենացւոյ կոչեցեալ:

Ինքն առեալ վին գոգաւոր՝ բազմատըխուր սիրոյ սփոփանք,
Ըզքեզ, քաղցր ամուսին, ըզքեզ միայն յափն ամայի,
Ըզքեզ յելս արուսեկին, ըզքեզ 'ի մուտսըն նըւագէր:
Եւ 'ի կիրճսըն տենարեան յանդընդախոր դրունըս մահու
Եւ յանտառըն թափ անցեալ սեաւ արհաւրօք մառախլապատ,
Սանդարամետս էջ 'ի վիհ, մատեաւ առ պետըն սոսկալի
Եւ առ այն որ 'ի մարդկան պաղատանաց սիրտք անողոք:
Այլ երգովքըն վըրդովեալ յանդընդական խոր կայենից
Նուրբ ըստուերք և ուրուականք լուսատենչիկք ընթանային,
Որք տարմատարմ 'ի մայրիս թիւրք թիւրուց հաւք անկեալ դիմեն
Երեկոյն կամ բըքաբեր մինչ 'ի լերանց վարէ տարափ.
Բազմութիւն արանց՝ կանանց և կենազրաւ հրանք քաջաց
Մեծահոգի դիւցազանց, պատանեկիկք, կոյս օրիորդք,
Եւ հանդէպ աչաց ծնողաց հուրբ խարուկեալ երիտասարդք.
Զորովք շուրջ մըրրատեսակ գայռ և գըձուձ խարձ Կոկիտեայ
Եւ ալեօք ծանրադանդաղ լիճ պաշարէ ժանտատեսիլ,
Եւ Ստիքս ինընպատիկ պատ անդ առեալ պարուճակէ:
Պակեաւ տունն իսկ, տարտարոսք ներքինք մահու և կորստեան,
Եւ օձիւք կապուտակօք գիսախըռիւքըն Կատաղիք.
Կերբեր բերանաբաց սինկըղ սանձեաց զերրեակ ոռկոյն
Եւ եկաց հողմոյն անիւ շըրջանակին Իքսիոնեան:
Եւ ահա 'ի վտանգաց քաւեալ բնաւից դառնայր ընդ կրունկ,
Եւ շնորհեալ Եւրիդիկէ գայր ելանէր յօդ արփենի՝

464. 'Ի Տենար սարաւանդին Լակոնիոյ էր քարայր մի, զոր գուշն կամ բերան դժոխոց առասպելեցին Հելլենք: Եւ յեզրն անդ ընդ այն, որպէս և 'ի դժոխսն իսկ կամ 'ի սանդարամետս էին անտառք նսեմաստուերք և ծմակախիտք: Գնայ Որփէոս իջանէ 'ի դժոխս քաղցր նուագովն 'ի գութ շարժել զսանդարապետսն և հանել անտի զԵւրիդիկէ:

469. Լուսատենչիկք իմա զզրկեալս 'ի լուսոյ և կարօտք լուսոյ, որպիսի են սանդարամետականքն մեռելոց ոգիք, որպիսի իսկ ասէ զնոսա Վիրգիլիոս յԵնէականին Զ. 721: Ընթանային առ Որփէոս 'ի ձայն նըւագաց նորա:

470. 'Ի մայրիս. ոմանք 'ի գրչագրաց ունին 'ի փէրիս. բայց հնագոյնք և ստուգագոյնք 'Ի մայրիս:

474. Զի զմեռելոց մարմինս 'ի փայտակոյտս խարուկի այրէին բազումք յազգաց առաջնոց:

478. Կոկիտոս և Ստիքս կամ Ստիւգս գետք էին 'ի դժոխս հելլենացւոց և հռովմայեցւոց: Օձախառնիւ գիսովք կատաղիքն՝ դահիճք կամ տանջիչք դժոխայինք: Կերբեր՝ շուն եռագլխի կամ եռանդ, բարապան դժոխոց և պահակ մահու և կորստեան, որպէս անուանէ իսկ զնա Վիրգիլիոս 'ի Զ. գիրս Ենէականին:

481. Այսինքն հանդերձ հողմանիւ որ պտտուտակէր զնա: Ոմանք իմանան՝ անիւ հողմոյ շըջանակելոյն, և այսպէս՝ եկաց 'ի հողմոյ անշարժ: Տես զանիւն 'ի Գ. 37:

Աղհետովք, քանզի օրհնս էր զայս տուեալ Պերսեփոնէ.
Անդէն յանկարծ ափշութիւն ընդ խօլ կալաւ ըղձիրելին,
Ներելի արդարև՝ թէ գիտէին ներել դըժոխք։
Ըզտեղի առ և առ դուրս անդ լուսոյն յիւրն Եւրիդիկէ
Յանըզգաստըս, եղուկ, յոգւոյն պարտեալ արկ զաչըս իւր։
Անդ՝ հոսեալ ճիգքն բոլոր, և անողորմ բըռնաւորին
Դաշինք ցըրեալ, և երիցս հընչեալ բոմբիւն յանդընդոց լըճ։
Ո՞վ և զիս, ճըչեաց նա, զթըշուառս և զքեզ կորոյս, Որփեւս.
Օ՜ինչ այս մոլորութիւն, ահա կըրկին անգութ հըրամանք
Անդրէն կոչեն և փակէ զնըւաղ ծըփեալ աչս իմ թըմբիր։
Ողջ մընա, վարիմ ահա մեծ գիշերաւ պարածածուկ
Օ՜ապիկար բազուկս առ քեզ ձըգելով, ո՜հ, ոչ եւս քոյին։
Ասաց, և յաչացն անդէն զօրէն ծուխ ՚ի նուրբ օդ
Խառնեալ կորեաւ տարադէմ, և ոչ եւս այլ ետես ըզնա,
Որ զըստուերս ըմբռնէր զուր, և բան բազում կամէր ասել.
Եւ նաւապետ դըժոխոցն ոչ եւս անցքէն այնուհետև
Թոյլ տայր անցանել ընդ անջըրպետն հեղեղավայր։
Օ՜ինչ առնել էր, յո՞ դիմել կըրկին կապտեալ ՚ի յամուսնոյն,
Որ կոծով զամենդարածտս՝ որո՞վ ձայնիւ զդիսըն շարժէր.
՚Ի ստիգեանն ՚ի մակոյկ լիւղէր յայնժամ նա սառուցեալ։

484. Զկնի հետոց առնն՝ Որփէի. զի այսպէս պատուէր տուեալ էր Պերսեփոնէ դշխոյ սանդարամետաց և կին անդնդեհպետին, զի մի տեսցէ զերեսս Եւրիդիկեայ մինչև զերծցի ՚ի լոյս արեգական։

488. Այսինքն ՚ի խանդից և ՚ի թափոյ յարձակման ոգւոյն, ընդ որում ժուժկալեացն ցայն վայր, յաղթահարեալ՝ դարձաւ և հայեցաւ յԵւրիդիկէ։ Ոմանք զՂովտայ և զկնոջ նորա դէպս կամին տեսանել յառասպելի աստ։

489. Բովանդակ վաստակն և ջան Որփէի ՚ի դերև ել, և լուծան պայմանք ուխտի սանդարապետին. և երիցս թնդիւնք հնչեցին ՚ի գետս դժոխոց ՚ի նշան մանչելոյ սրտմտութեան բարկութեան նորա ընդ յանդգնութիւն ու խստադըժութեանն Որփէի։

492. Մոլորութիւն խենթ զմոլութիւն անժոյժ սիրոյն Որփէի, որ պատճառ եղև կրկին կորստեան. կամ զթափ բռնութեանն, որով յափշտակեալ վարէր Եւրիդիկէ անդրէն ՚ի սանդարամետս։

497. ՚Ի տար կոյս անհետացաւ Եւրիդիկէ, այսինքն յետս ընդդէմ ընթացիցն Որփէի, որ և միայն մնացեալ և կամեցեալ ունել արգելուլ զնա, փոխանակ զստուերս ըմբռնէր կամ զնոսա։

499. Նաւապետ և նաւավար դժոխոց էր Քարոն, որ նաւակաւ անցուցանէր զուրուականս կամ զհոգիս մեռելոց յայնկոյս Աքերոն և Ստիքս գետոյ. և մի անգամ նաւելոյն մահուամբ յայնկոյս՝ անհնար էր միւսանգամ դառնալ այսրէն, կամ առաջ ումեք անդր անցանել, բայց եթէ զքանչելեօք և յառանձին իմն շնորհէ դիցն անդնդականաց։ Զքարոնն բաւական մարթի եւս յեղուլ ՚ի մեզ Կըրօղն դըժոխոց, ըստ որում թերևս և յանէծս ռամկաց մերոց լսի Կրող տարցի զքեզ. թէ արդեօք դրելի իցէ այդ Գրող տարցի զքեզ, որպէս մերոց ծերունեաց թուեցաւ։

503. Անցանէր ընդ Ստիքս նաւակաւն Քարոնի Եւրիդիկէ սառուցեալ, հարեալ

Զեօթն ամիս ողջոյն 'ի քուն ասեն ընդ նա յողըս համակեալ
Ընդ բարձու քարաժայռիւ, յափս անշէջն ըՍտրիմոնեայ,
Եւ ընդ ցուրտ անձաւօք զայս ամենայն յեղյեղելով
Ըզվագերս յողոք ածեալ և ըզկաղնիս երգովքն 'ի ձեռն։
Որպէս սոխակ անձկաբեկ ընդ հովանեաւ կաղամախին
Զորդեկացն ողբայ կորուստ, զոր վայրենին արօրադիր
'Ի բունէն նըկատեալ չև թևաբուսիկ՝ առ և տարաւ.
Իսկ նա լայ զգիշերն 'ի գլուխ, նըւագ նըւագս ողբերգական
Յոստ մի նըստեալ գեղգեղէ, շուրջ լընու զվայրն յողորմ մըրմընջ։
Ոչ մի սէր, ոչ հարսանիք ինչ այլ ըզմիտսըն հաճեցին.
'Ի սառոյցըս հիւսիսոյ, 'ի ձիւնեղէնըն Տանայիս
Եւ ընդ վայրս եղեմնապատ յաւէրժացեալս 'ի պաղ Ռիփեան
Շըրջէր մենացեալ՝ զյափշտակեալըն Եւրիդիկէ
Եւ զանվաւեր ըզպարգևսըն դժոխոց աշխարհելով։
Յանձկալի մեծարանացն անարգեալ կոյսք Կիկոնուհիք,
'Ի դից տօնս և 'ի խընձոյս ցայգապաշտօն Սպանդարամետին
Ըզպատանին գիշատեալ արկին 'ի դաշտըս լայնաձիգս։
Եւ անդ իսկ 'ի ձիւնափայլ պարանոցէն խըզեալ կառափն
Զէագրեանն Հեբրոսի վարեալ ուղխիցըն թաւալգլոր,
՝Նոյն ինքըն ձայնն և լեզուն ցըրտասառոյց զԵւրիդիկէ

'ի ցուրտ սառուցեալ մահու զոր վերստին ճաշակեաց։

504. Ասեն զնա՝ զՈրփէոս։

505. Ստրիմոն գետ է Մակեդոնիոյ առ սահմանօքն Թրակիոյ, որպէս ասացեալ եմք և յառաջագոյն։

507. Զճարտարութիւն և զքաղցրութիւն երաժշտական նուագաւոր մատանցն Որփէի հրաշացուցանել կամելով նախնի առասպելաբանուաց՝ ասացին թէ գետք աննակառէին 'ի ձայն քնարին. և ոչ գազանք եւեթ թովեալք զկնի ընթանային զհետոց նորա, այլ և մայրիք անգամ. և գետքն եւս դանդաղեցուցանէր։

514. Տանայիս կամ Տանաիս գետ է Սարմատիոյ, որ իջեալ 'ի Ռիփեան սառնապատ լերանց աշխարհին և բաժանեալ զԵւրոպէ յԱսիոյ՝ գայ մտանէ 'ի Մէոտեան ծովակ։ Բայց բանաստեղծօրէն կուսական բանիւք ածեցուցանէ զընթացս Որփէի 'ի Հեբրոս գետոյն Թրակիոյ մինչև 'ի հիւսիսական աշխարհն յայնս, առաւելացուցանել իմն այսու զմոլեգնութիւն սիրոյ նորա։

518. 'Ի մեծարանաց ասէ անձկալի զթոցն Որփէի առ Եւրիդիկէ՝ մինչև ոչ եւս այլ ընդ ումեք ամուսնանալ կամելոյ, անարգեալս համարելով զանձինս կանայք ազգին Կիկոնաց որ առ դրամբքն Հեբրոսի և առ Խամար լերամբն, 'ի գիշերային պաշտաման ուրեք տօնի Սպանդարամետին՝ յորում իբրև աստուածարեալք ամենք 'ի պարս և կոկողացեալ բանդագուշեալ մոլէին, սպանին զնա և յօշատեալ ցրուեցին, զգլուխն արկեալ 'ի Հեբրոս՝ որ Էագրեան ասի առ 'ի յԷագրոսէ հօրէն Որփէի յարքայէն Թրակիոյ, կամ յԷագրոս գետոյ՝ յորմէ Հեբրոսն խաղայ ելանէ։ Փոխանակ կանայք ասելոյ՝ լատին լեզու մարս ասէ երգիչն, որպէս և առ զԿիկոնուհեացս. զոր մարթի կարծել հաւասարի ըզմարց՝ որք ցանկանային փեսայացուցանել զՈրփէոս 'ի դստերս իւրեանց. բայց կերպ արհամարհանացն առաւել զանձնաց նոցա տայ իմանալ։

'Ի պարզել ոգւոցն, աւաղ, զԵւրիդիկէ կարդայր ըղձէք,
Զեւրիդիկէ գետեզերք բոլոր ընդդէմ կըրկնէին վանգ։
Զայսոսիկ Պրոտէոս, և վազեալ արկ զինքն 'ի խոր ծով
Յորձնեւանդըլն զալիս մըրըրկելով փըրփրատեսակ։
Սակայն ոչ և Կիւրենէ, զի ձայն յերկչոտն եհար խրախոյս.
Փարատել, ոգեակ, 'ի դէպ է զտըրտմութեան հոգս 'ի մըտաց.
Այդ եւեթ ախտին պատճառք, այտի հարսունքն յաւերժականք,
Ընդ որս նա 'ի մայրիս անտառախիտ՝ պարս յօրինէր,
Մեղուացդ ողորմ արկին մահ. դու պատարագս աղերս հանեալ՝
Մաղթեսջիր 'ի հաշտութիւն, պատուեա զմայրեացն ներող հարսունս,
Զի քաւութիւն շնորհեալ ուխտիւք ըղձէքն վըրիժուց ցածուսցեն։
Իսկ զաղօթիցդ օրինակ պատմեցից քեզ յառաջ կարգաւ։
Ընտրական զուարակըս չորս բարետեսիլս և հաստամանդամս,
Որ արդ քեզ զզալարագեղ Լիկեայ դիտակըլն ճարակին,
Սըրբեսջիր, և երինջըս զուգաթիւ անմուղ ուլամբ։
Սեղանըս քառաթիւ առ դիցուհեաց բարձըր մեհեանսն
Սըզգեալ սոցա և ընդ փողսն հեղեալ զարիւնըն նուիրական,
Ըզմարմինս արջառոցն ընկեա յանտառըն հովանաւէտ։
Իսկ ապա իբրև ցուցցէ իններորդ այգ ըղծագումն իւր,
Մեռելոցն Որփէի ձօնեալ խաշխաշըս մահաքուն
Եւ երինջ զենեալ մատաղ յԵւրիդիկեայ 'ի հաշտ պաշտօն
Եւ զոհեալ սեաւ մի մաքի՝ յայց անտառին եկեսցես անդրէն։
Իսկ և նա այնուհետև փութայ 'ի մօրըն նա պատուէրս.
Գայ հասանէ 'ի տաճարս, զուսեալ բագինսն յարուցանէ.
Ընտրական զուարակըս չորս բարետեսիլս և հաստամանդամս
Առեալ ածէ և երինջըս զուգաթիւ անմուղ ուլամբ։

528. Բայց ոչ և Կիւրենէ իբրև զնա անձնատուր անկեալ թողեալ զորդին անօգնական և 'ի վարանս տարակուսանաց. զի ոչ բացայայտ ինչ իմացաւ 'ի Պրոտէոսէ 'ի հնարս հայթայթանաց իրացն իւրոց. զոր յառաջիկայդ ասասցանէ նմա մայրն խելամուտ զօրութեան բանիցն Պրոտէոսի։

537. Առ ժամանակօք իրացս Արիստէոս թեսալեայ 'ի Թեսալիա բնակէր, բայց համարելի է թէ գոյին նորա և այլ արօտք, հօտք և անդեայք յԱրկադիա գաւառի, ուր է լեառն Լիկէոս. կամ թէ յայնմ ուրուք լերին անուանեալ զի և է լեառն կամ ասել զանտառախիտ և զալարաբուսօք, որպէս և այլ բազում ուրեք։

539. Առաջի մեհենիցն սովորութիւն էր կանգնել զսեղանս կամ զբագինս։

543. Մեռելոյթք էին պատարագք, նուէրք և զոհամունք գիլն սանդարամետականաց վասն ոգւոց հրաժարելոցն։

544. Բողոքել զԵւրիդիկէ, որով հաշտեսցի։

Եւ ապա իբրև յայտնեաց իններորդ այգ ըղձագուշն իւր,
Մեռելոյթս Որփէի ձօնեալ դիմէ յայց անտառին։
Զքանչելիս անդ տեսանեն անակընկալ հրաշապատում,
Ի զտորոտեալ ընդերօքն ընդ ամենայն փորս արջառոց
Բզզել տըզզալ պարս մեղուաց, 'ի հերձ կողիցն եռալ 'ի դուրս,
Ամբաւից սըփռել ամպոց, երթալ գընդել 'ի ծայր ծառոյն
Եւ 'ի ճօճան ըստեղանցն ողկուզօրէն կախել 'ի վայր։

Զայգոսիկ 'ի պէտս անդոց ծառոց հօտից նըւագէի
Մինչ մարտիւ զխոր Եփրատաւ փայլատակէր մեծըն Կեսար,
Եւ յաղթօղ ընդ մըտադիւր ազինս օրէնս տայր իրաւանց,
Եւ դէմ եդեալ ընթանայր 'ի տենչալին կէտ յՈլիմպոս։
Անուշակ Պարթենոպէ գըրգէր յայնժամ զիս ըզՎիրգիլս
Ի զծաղկեալս 'ի կիրթ վարժից անփառասէր պարապութեան,

555. Խուռն բազմութիւն մեղուաց տարածեալ իբրև զամպս։

556. Զի պարք մեղուաց խառնեալ զմարբըն և զմիմեամբք և իբրև ողկոյզ մի խաղողոյ եղեալ կախին յոստս ծառոց։

557. Ընդ հօտսն կամ ընդ անասունսն իմա և զմեղուսն։

558. Մշակութեան քերթածիս վախճան արարեալ Թուի Վիրգիլեայ հասարակաց կարծեօք՝ յամին յորում յօրինեալ կայսեր զիւրս աշխարհին եգիպտացւոց, յետ պարտութեան Անտոնի և Կղէոպատրայ, խաղաց գնաց նա յԱսիա ընդ Ասորիս, և անդ ձմերեալ, և համբաւովք տիեզերակալ յաղթանակացն ահաբեկ զամենեսեան արարեալ, զհնազանդեալսն և զնուաճեալս 'ի հռովմէական պետութիւնն՝ յանձանձեաց և բարեկարգեաց, 'ի կողմանց 'ի կողմանց ընկալեալ զհրեշտակութիւնս պատգամաւորացն նոցա, որ ինքնակամ մտադիւր գային և օրէնս առնուին 'ի նմանէ յուղղութիւն իրաց իւրեանց. և զաղմուկ շփոթի աշխարհին Պարթևաց խաղաղացուցեալ հանդարտեցոյց։ Բայց քանզի այս եւթ փոքր ինչ Թուի առ մեծամեծ բառիւքն [illegible], ոմանք հաւանեցուցանեն թէ քերթողաբար ստուարացուցանէ զիրսն Վիրգիլիոս, որպէս և զամենայն ինչ զԱւգոստեայ սեղծաբանիւք ժամանակին։ Իսկ այլք 'ի կարծիս եղեն՝ զկնի ոչ սակաւ ամաց մտօ 'ի կատարած կենացն Վիրգիլեայ 'ի կատարումն գալ գրոցս, 'ի խաղալ Կայսեր ընդդէմ Պարթևաց և թափել հանել 'ի նոցանէ զնշանսն հռովմէականս և զգերին և զաւարն տարեալ 'ի պարտութեան Կրասոսի։ Եւ կէսք յետոյ ասեն յաւելուած լինել ութեցունց տողիցս 'ի Վիրգիլեայ, կամ թէ արդեօք և յայլմէ ումեքէ։

560. ՅՈլիմպոս ընթանալն է յանմահութիւն բերել յաւէրժայիշատակ անուանբ բարեփառութեան, և զաստուածութեան թեկն առնել. որպէս և կենդանւոյն իսկ աստուածացուցեալ էին զնա քաղաքք և գիւղք կողմանց կողմանց։ Այսպէս այնուհետև 'ի նորին իսկ հաւանութենէ տաճարք եւս կանգնեցան նմա, նախ 'ի Նիկոմիդիա և 'ի Պերգամոն, մինչդեռ տակաւին 'ի կողմանսն յայնոսիկ գեգերէր. և հուսկ ապա հրովարտակաւ իսկ ծերակուտին յաստուածական պաշտօն առաւ հրապարակաւ 'ի Հռովմ, յաւուրս կատարելոյ Վիրգիլեայ զքերթուածս կամ ամաւ յետոյ։

561. Պարթենոպէ Նէապոլիս քաղաք է, ուր աւարտեալ է Վիրգիլեայ գէթ զյետին մասն եօթնամեայ երկոց քերթածոյս։ Եւ էր քաղաքն այն 'ի ժամանակին իբրու ճեմարան իմն և ուսանելոց արանց նշանաւորաց և գիտնաւորաց, ուր խաղաղաւէտ կենօք պարապէին 'ի հրահանգս իւրեանց։ Եւ յայս սակս անփառասէր կոչէ զպարապմունս իւր, այսինքն օտար 'ի փառասիրութենէ աւագութեան բարձի և պատուոյ կամ ամբոխից հրապարակին և պատերազմաց։

*Որ զբօսայ 'ի տաղս հովուաց և մանկութեամբ դիմագրաւեալ
Զքեզ, Տիտիրէ, արկի յերգ ընդ լայնասփիւռ փիճոյն յարկաւ:*

563. Վերջին տողիւքդ զանդէորդական կամ զտուարածական տաղսն իւր յիշեցուցանէ, որ են երգք հովուականք յառաջ քան զՄշակականքս երգեալք, որոց առաջինն ըստ կարգի դասաւորութեան՝ սկսանի, Տիտիրէ, դու բազմեալ ընդ լայնանիստ փիճոյդ յարկաւ: Եւ զբօսանս կամ խաղս կոչէ զբազմամեայ զբազմավաստակ և զհրաշալի գծածն, և գործ յանդուգն մանկութեան զձեռնարկելն իսկ 'ի քերթողութիւն և 'ի տաղս 'ի լոյս հանել. որպէս և 'ի սկզբան քերթածիս կոչեաց և զսա. Ա. 43:

ՅԱՆԿ ԱՆՁԱՆՑ

Աթենաս, Ա 21 · Դ 245 ։
Աթովս, Ա 343 ։
Ալաւսունք (աստեղք), Ա 142 ։
Ալբուռն կամ Ալբուռնոս, Գ 148 ։
Ալկինոյեան, Բ 87 ։
Ալպեք կամ Ալպեանք, Ա 489 · Գ 476 ։
Ալփեւս, Ալփէոս, Գ 19 · 181 ։
Ակերրեայք, Բ 226 ։
Ակտիական, Դ 460 ։
Ամերեան, Ա 272 ։
Ամիթաւնեան կամ ամիթաւոնեան, Գ 552 ։
Ամիկլեան, Գ 91 · 347 ։
Ամինեցի, Բ 97 ։
Ամփրիս կամ Ամփրիսոս, Գ 1 ։
Այգ, Ա 255 · Դ 542 · 550 · տես և Առաւօտ ։
Անիենեան, Դ 366 ։
Ապոլոն, Դ 7 · 320 ։
Առաւօտ, Ա 359 · Գ 327 · տես և Այգ ։
Ասիածին, ասիական (լճին). Ա 397 · Դ 340 ։
Ասիական (աշխարհին), Բ 172 · Գ 30 ։
Ասկան կամ Ասկանիոս, Գ 272 ։
Ասկրին կամ ասկրացի, Բ 177 ։
Ասորնական, Բ 468 ։
Ասորնեայ, Բ 88 ։
Ասսարակեան, Գ 35 ։
Աստղիկ, Գ 211 · 270 ։
Ատլանդուհիք (աստեղք), Ա 227 ։
Արամազդ, Ա 129 · 433 · Բ 16 · 422 · Գ 35 · 182 · 334 · Դ 149 ։
Արգենի կամ արգիացի, Բ 99 ։
Արեթուսա, Դ 341 · 348 ։
Արէս, Ա 526 · Բ 285 · Գ 93 · Դ 343 ։
Արիական, Դ 210 ։
Արիսեան, Դ 459 ։
Արիստէոս, Դ 314 · 346 · 352 · 434 ։
Արկք, Բ 136 ։
Արկադական, Գ 394 ։
Արկադեան, Դ 282 ։
Արուայիկք, Բ 105 ։
Արուսեակ, Ա 256 · Գ 49 · 326 · Դ 463 ։
Արջ (աստեղք), Ա 142 · 251 · 252 ։
Արջապան (աստեղք), Ա 72 · 210 ։
Աւեռնեան, Բ 165 ։
Աւոնեան, Գ 11 ։
Աւսոնեան, Բ 388 ։
Աֆրիկեցի, Գ 346 ։
Աքելովեան, Ա 10 ։
Աքիլլէս, Գ 93 ։
Բազմաստեղք, բոյլք, Ա 231 · Դ 231 ։
Բալէարեան, Ա 318 ։
Բակտրիացիք, Բ 139 ։
Բելգացի, Գ 205 ։
Բենակ, Բ 161 ։
Բերոյէ, Դ 338 ։
Բիսալտայք, Գ 463 ։
Բոյլք, բազմաստեղք, Ա 142 ։
Բուսիրիս, Գ 5 ։
Բրիտանք կամ բրիտանացիք, Գ 25 ։
Գալեսոս, Դ 126 ։
Գայլ (գետ), Դ 364 ։
Գանգարեանք, Գ 26 ։
Գանգէս, Բ 137 ։
Գարգար, Գ 272 ։
Գարգարունեք, Ա 107 ։
Գելոն, Գելոնք, Բ 105 · Գ 463 ։
Գետացիք կամ Գէտք, Գ 464 · Դ 460 ։
Գերմանիա, Ա 488 · 524 ։
Գիշերավար, Ա 257 · 474 · Գ 338 · Դ 434 ։
Գլաւկոս, Ա 450 ։
Գլաւկոս (այլ), Գ 271 ։
Գնոսեան, Ա 228 ։
Դակեան կամ Դակ, Բ 509 ։
Դելոս, Գ 6 ։
Դեկոսք, Բ 170 ։
Դեմետր, Դեմետրէ, Ա 7 · 100 · 151 · 350 · 354 · 358 · 360 · Բ 230 ։
Դեմետրեան, Ա 218 · Բ 520 ։
Դեւկալիոն, Ա 65 ։
Դէոպիա, Դ 340 ։
Դիկտէական, Բ 439 · Դ 152 ։
Դիոնիսեան, Բ 457 ։
Դոդոնէ, Ա 153 ։
Դրիմով, Դ 333 ։
Եգիպտոս, Դ 209 · 290 ։

Եզող, Արճաշան (աստեղք), Ա 235։
Եթեր, Բ 328։
Եթովպացիք, Բ 120։
Եղեան, Գ 203։
Եղեւսեան, Ա 167։
Եղիսեան դաշտ, Ա 41։
Եղիսուհի մատանք, Ա 62։
Եմաթեան, Դ 387։
Եմաթիա, Ա 507։
Ենիպէոս կամ Ենիպեւս, Դ 365։
Եպիդաւրոս, Գ 45։
Եպիռոս կամ Եպիրոս, Ա 62. Գ. 123։
Եռնէ, Ա 485. Դ 172։
Ետրուրէ կամ Ետրուրիա, Բ 436։
Երիդանոս, Ա 496. Դ 368. տես և Պա-
դոս։
Երկէթոն, Գ 115։
Եւրիդիկէ, Դ 483. 487. 516. 523. 524.
525. 544։
Եւրիսթէոս, Գ 4։
Եփիրէ, Դ 340։
Եփիւրացի, Բ 467։
Եփրատ, Ա 524. Դ 558։
Զեփիւռ, Գ 136. 276։
Զրուան, Կռոնոս, Սատուռնոս, Բ 541.
Գ 95։
Զրուանեան, Բ 409։
Թալիա, Դ 335։
Թասուն, Բ 91։
Թեսեանք, Բ 385։
Թետիս, Ա 412։
Թիմբրեան, Դ 320։
Թուլէ, Ա 33։
Իագրեան, Դ 522։
Իբալիա, Դ 125։
Իբերուհի, Գ 410։
Իդա, Դ 41։
Իդական, Գ 452։
Իդայազարմ, Բ 84։
Իդումեական, Գ 12։
Ինաքեան, Գ 154։
Ինոզեան, Ա 450։
Իսմար, Բ 37։
Իտալոս, Բ 500. Գ 352։
Իտալիա, Բ 138։
Իտիւրացի կամ Իտուրացի, Բ 451։
Իքսիոնեան, Գ 39. Դ 481։
Լադոն, Բ 93։
Լակոնուհիք, Բ 491։
Լապիթեայք, Բ 460. Գ 117։
Լարիսա, Բ 160։
Լաւմեդոնեան, կամ Լաւոմեդոնեան, Ա
517։
Լեսբոս, Բ 90։
Լետեան, Գ 6։
Լիբեական, լիբէական, լիբիական, Ա 247.
Բ 106. Գ 250. 341։
Լիգէա, Դ 333։
Լիգուր, Բ 169։
Լիդիա կամ Լիւդիա, Դ 209։
Լիկայոնեան, Ա 142։
Լիկէական, Ա 18։
Լիկէոս, Գ 2. 316. Դ 537։
Լիկոմեդիաս, Դ 336։
Լուկրինոս, Բ 162։
Լուսնեակ, Գ 394։
Խազարք, Ա 61։
Ծուրացի, տիւրացի, Բ 509։
Կալաբրացիք, Գ 427։
Կամիլլոս, Բ 170։
Կայիկ կամ Կայիկոս, Դ 367։
Կայիստր կամ Կայիստրոս, Ա 398։
Կայսր, Կեսար (Յուլիոս), Ա 480։
Կայսր, Կեսար (Հոկտաւիանոս Աւգոս-
տոս), Ա 26. 518. Բ 171. Գ 16. 47.
49. Դ 558։
Կանոպ կամ Կանոպոս, Դ 286։
Կապուա, Բ 225։
Կաստաղ կամ Կաստաղիա, Գ 293։
Կատաղիք, մոլիք, Ճիւաղք դժոխոց ժամուց,
Ա 287. Գ 37. Դ 479։
Կարիճ (աստեղատուն), Ա 36։
Կարկաջուն, տես Կոկիտոս։
Կարպաթեան, Դ 384։
Կաւկասեան, Բ 442։
Կեղեան, Ա 169։
Կեկրոպեան, Դ 176. 269։
Կեսար, տես Կայսր։
Կերաւնեանք, տես Շանթայլին։
Կերբեր կամ Կերբերոս, Դ 480։
Կէա, Ա 17։
Կիդիպպէ, Դ 336։
Կիթերոն, Գ 44։
Կիլլարոս, Գ 92։
Կիլլենեան, Ա 348։
Կիկլոպայք, Ա 485. Դ 169։
Կիկոնուհիք, Դ 518։
Կիմոթոկէ, Դ 335։
Կինիփեան, Գ 313։
Կիոս, Ա 288։
Կիւնթեան, Գ 36։
Կիւտորոն կամ Կիւտորոս, Բ 440։
Կիւրենէ, Դ 318. 351. 372. 528։
Կլանիոս, Բ 226։
Կլիմենէ, Դ 342։
Կլիոլ, Դ 338։
Կլիտումնոս, Բ 148։
Կշիռ (աստեղատուն), Ա 214։
Կոկիտոս կամ Կոկիւտոս, կարկաջուն կա-
կանաւոր (գետ), Գ 38. Դ 478։
Կոյս (աստեղատուն), Ա 36։
Կորիկ կամ Կորիկոս, Դ 127։
Կուիրինոս, Գ 27։
Կուրետեանք կամ Կուրետք, Դ 151։
Կռոնեան աստղ, Ա 347. երկիր, Բ 173։
Կռոնոս, Սատուռնոս, տես Զրուան։

Կրետեան, Գ. 347։
Կրոստոմեայլին, Բ. 88։
Հերրոս, Դ. 460. 522։
Հէլլէնաստան, Ա. 41. Գ. 20։
Հէլլէնապոնտեան, Դ. 111։
Հէլլէն, Բ. 16. Գ. 92. տես և Յոյնք։
Հեմոս, Ա. 507. Բ. 491։
Հերա, Գ. 154. 534։
Հերակլեան, Բ. 66։
Հերմոս, Բ. 137։
Հեփեստոս, Դ. 342։
Հիլաս, Գ. 6։
Հիպանիս, Դ. 367։
Հիպպոդամէ կամ Հիպպոդամիա, Գ. 6։
Հիւդասպ, Դ. 210։
Հիւլէս կամ Հիւլէոս, Բ. 460։
Հնդիկ Հնդիկք, Ա. 60. Բ. 106. 139. 173.
Դ. 292. 422։
Հնդկաստանեայք, Բ. 122։
Հնծանեան, Բ. 4. 7։
Հռեմոս, Բ. 456։
Հռիտ կամ Հռիտոս, Բ. 459։
Հռոգայլին, Բ. 102։
Հռոմեական, Հռովմեական, տես Հռովմէական։
Հռոմուլոս, Ա. 513։
Հռովմ, Բ. 437։
Հռովմայեցի, Գ. 348։
Հռովմէական, Ա. 504. 514. Բ. 149. 173.
177. 501։
Ձուկն (ատեղատուն), Դ. 233։
Մայրն (դից կամ դիցամայր), Դ. 64։
Մանտուա, Բ. 199. Գ. 12։
Մասիկեան, Բ. 144. Գ. 528։
Մարէոլեան, Բ. 91։
Մարիոսք, Բ. 170։
Մարսիկք, Բ. 169։
Մարք, Բ. 126. 134։
Մեգեան (առուայտ), Ա. 221։
Մեթիմնեան, Բ. 90։
Մելամպոս կամ Մելամպուս, Գ. 552։
Մելիկերտ կամ Մելիկերտէս, Ա. 450։
Մելլա կամ Մելա, Դ. 277։
Մեկենաս, Ա. 1. Բ. 41. Գ. 42. Դ. 2։
Մենալ կամ Մենալոս, Ա. 19։
Մէոնեան, Դ. 377։
Միլետեան, Գ. 309. Դ. 331։
Միկէնք, Գ. 123։
Մինկիոս, Բ. 200. Գ. 14։
Միտլենական, Գ. 351։
Միւսեան, Դ. 367։
Միւսիա, Ա. 106։
Մոլոսեան, Գ. 407։
Մոլորքոս, Գ. 19։
Մուսայք, Բ. 478. Գ. 11. Դ. 312։
Յաքինեան, Գ. 477։
Յաքիւդեան ծոց, Ա. 213։
Յապետ, Ա. 288։
Յաւէրժահարսունք, Ա. 12. Բ. 497. Գ. 41.
Դ. 331. 379. 388. 457. 530. 533։
Յոյնք, Գ. 149. տես և Հէլլէն։
Յոնիական, Բ. 108։
Յուլեան, Բ. 164։
Յուշկապարիկ, Բ. 459։
Նարիկեան, Բ. 441։
Նաւապետ դժոխոց, Դ. 499։
Նեսէէ, Դ. 335։
Ներեւս կամ Ներէոս, Դ. 389։
Նիլոս, Նիլ, Գ. 28. Դ. 287։
Նորիկեան, Գ. 477։
Նպատ, Գ. 30։
Շահապետք վայրաց, Ա. 11։
Շահարունի, Շահարիկ, Ա. 22. Բ. 497։
Շանթայինք կամ Կերաւնեանք, Ա. 344։
Շնիկ, Շուն, Սկունդ (աստղ), Ա. 224.
Բ. 356. Դ. 422։
Ոլիմպոս, Ա. 291. Գ. 224. Դ. 560։
Ոլոմպական, Գ. 50։
Ոսսա, Ա. 290. 291։
Ովկիան, Ովկիանոս, Ա. 252. Դ. 338. 378.
379։
Ովպիս, Դ. 340։
Ովրիթիա, Դ. 460։
Որփեւս, Որփէոս, Դ. 452. 491. 543. 552։
Ուլք (աստեղք), Ա. 211։
Պադոս, Բ. 454. տես և Երիդանոս։
Պալլինէ, Դ. 387։
Պալէս, Գ. 1. 297։
Պալլասեան, Բ. 182։
Պայք, Ա. 12։
Պան, Ա. 19. Բ. 497. Գ. 394։
Պանգէական, Դ. 459։
Պանոպէ, Ա. 450։
Պանքայեան, Դ. 376։
Պանքայիա կամ Պանքէա, Բ. 139։
Պառնասեան, Բ. 18. Գ. 294։
Պարթենոպէ, Դ. 561։
Պարթեւ, Պարթեւք, Գ. 31. Դ. 311։
Պարթեւական, Դ. 210։
Պարիկք, Ա. 12։
Պարոսեան, Գ. 34։
Պարսկաստանեայք, Դ. 289։
Պափոսեան, Բ. 64։
Պելէան, Դ. 286։
Պելեթրոնեան, Գ. 117։
Պելիոն, Ա. 290. Գ. 96։
Պելուսեան, Ա. 234։
Պելոփս, Գ. 7։
Պենեւս, Պենէոս կամ Պենիոս, Դ. 352։
Պենեւսեան, Դ. 314։
Պեստոն, Դ. 119։
Պերսեփոնէ, Ա. 42. Դ. 484։
Պիսա, Գ. 181։
Պիսիդոն կամ Պոսիդոն, Ա. 16. Դ. 384.
391։
Պիսիդոնեան, Գ. 124։

Պօլիդեւկիս, Գ. 91։
Պոնտոս, Ա. 61։
Պատնեան, Գ. 270։
Պսակ (աստեղք), Ա. 228։
Պրիապոս, Դ. 111։
Պրոկնէ, Դ. 15։
Պրոտեւս, Պրոտէոս, Դ. 385. 419. 426. 444. 526։
Ջրհոս (աստեղատուն), Գ. 307։
Ռեսոս կամ Հռեսոս, Դ. 459։
Ռեատեան, Բ. 96։
Ռիպեան, Ա. 246. Գ. 384. Դ. 515։
Ռոդոպեան, Դ. 458։
Ռոդոպէ կամ Հռոդոպէ, Ա. 343. Գ. 353. 464։
Սաբայինք, սաբայեցիք, Ա. 60. Բ. 107։
Սաբեան կամ սաբինեցի, Բ. 168։
Սաբելլացի կամ սաբինացի, Գ. 256։
Սաբինեցիք, Բ. 535։
Սայլ (աստեղք), Գ. 383։
Սանդարապետ, Ա. 286. Դ. 466։
Սատուռնոս, տես Զրուան կամ Կռոնոս։
Սերք, Բ. 121։
Սիլարոս, Գ. 148։
Սիկիոնեան, Բ. 522։
Սկիպիոնեանք, Բ. 171։
Սկիւթ կամ Սկիւթիա, Ա. 246։
Սկիւթական, Գ. 198։
Սկիւթացիք, Գ. 351։
Սկունդ, տես Շնիկ աստղ։
Սպանդարամետ, Ա. 7. 170. Բ. 2. 144. 230. 383. 391. 396. 458. 532. Գ. 266. 511. 528. Դ. 419։
Սպարտա, Դ. 407։
Սպերք կամ Սպերքէոս, Բ. 490։
Սպիոլ, Դ. 338։
Ստիգեան կամ ստիւգեան, Դ. 503։
Ստիքս կամ Ստիւքս, Դ. 477։
Ստրիմոն, Դ. 505։
Ստրիմոնեան, Ա. 124։
Վեսուբ, Բ. 225։
Վեստա, Ա. 513։
Վիհ, Դ. 344։
Վիշապ օձ (աստեղք), Ա. 211. 250։
Վիրգիլ կամ Վիրգիլիոս, Դ. 561։
Վոլսկեայք, Բ. 169։
Տարքուինոն կամ Տարքուինոս, Բ. 38։
Տայիգետ կամ Տայգետ, Բ. 490. Գ. 45։
Տանագրոս, Գ. 152։
Տանայիս, Դ. 514։
Տարենտոն, Բ. 98։
Տարտարոս, Բ. 495. Դ. 478։
Տեգեացի կամ տեգէացի, Ա. 19։
Տեթիս, Ա. 34։
Տեմպէ, Դ. 314։
Տենարեան, Դ. 464։
Տիբերինոս, Դ. 366։
Տիբերիս, Ա. 514։
Տիթոն, Ա. 460։
Տիմաւոս, Գ. 477։
Տիսիփոնէ, Գ. 554։
Տիտիրոս, Դ. 564։
Տիւռենական, Բ. 165։
Տիւռենացի, Բ. 194։
Տիւրացի, Գ. 17. 309. տես և Ծուրացի։
Տիւփոն, Ա. 288։
Տմոլոս, Ա. 59. Բ. 98։
Տոսկեան, Ա. 514։
Տրովադա, Ա. 517. Բ. 388. Գ. 36։
Տրովս, Գ. 36։
Ցուլ (աստեղատուն), Ա. 223։
Փալեռնեան, Բ. 96։
Փանէոս, Բ. 98։
Փասիս, Դ. 364։
Փիլիպպէք, Ա. 505։
Փիլիրեան, Գ. 552։
Փիլոդոկէ, Դ. 333։
Փոիթեան, Բ. 33. Գ. 268։
Փոլ կամ Փոլոս, Բ. 459։
Փռիւգեան, Դ. 41։
Քաւոնեան, Ա. 8. Բ. 67։
Քիրոն, Գ. 552։
Քսանթոյ, Դ. 333։

ՑԱՆԿ

ԲՈՒՍՈՑ ԾՆԿՈՑ ԵՒ ԿԵՆԴԱՆԵԱՑ

Ագռաւ, Ա 396 · 424 · 436 ։
Ալեորուկ կամ ժոխուր, Բ 102 ։
Ականթ (ծառ), Բ 119 · (խոտ), Դ 123 ։
Աղաւնիճ, Դ 131 ։
Ամիկք, Բ 528 ։
Այգեկութք, Բ 6 · 89 · 525 ։
Այգեստան · Բ 91 · 264 · 300 · 360 · Դ 268 ։
Այգի, Ա 2 · 293 · Բ 113 · 191 · 222 · 235 · 275 · 301 · 322 · 393 · 400 · 406 · 409 · 412 · Դ 129 · 328 ։
Այծեամն, Ա 317 · Գ 541 ։
Այծք, այծիք, Բ 197 · 377 · Գ 290 · 304 ։
Անասունք, Ա 436 · 457 · Բ 234 · 374 · Գ 473 · 482 · Դ 324 ։
Անգժատ, Դ 263 · տես և Բանջարան ։
Անգեղ, Ա 3 · 366 · 497 · Բ 145 · 196 · 202 · 372 · 472 · Գ 65 · 212 · 289 · 421 · 556 · Դ 222 ։
Անտառք, Ա 16 · 144 · 163 · 291 · 490 · Բ 17 · 122 · 198 · 208 · 311 · 345 · 432 · 523 · Գ 2 · 41 · 152 · 223 · 248 · 295 · 479 · Դ 53 · 260 · 380 · 545 · 551 ։
Աշխալ կամ ձաւար, Ա 225 · Գ 206 ։
Ապրասամ, Բ 119 ։
Առիւծ, Բ 152 · Գ 246 · Դ 405 ։
Առուոյտ, Ա 221 ։
Արագիլ (հաւ թշնամի օձից), Բ 323 ։
Արմաւենի, Արմաւ, Բ 67 · Գ 12 · Դ 20 ։
Արմտիք, Ա 1 · 200 · Բ 174 ։
Արջ, Գ 248 ։
Արջառ, Ա 336 · Բ 238 · 360 · Դ 541 · 553 ։
Արտուտ կամ արտոյտ, Ա 419 ։
Արքայկաղնի, Բ 65 · 301 ։
Բազէ, Ա 418 · 422 ։
Բալ, Բ 18 ։
Բալուտ, Ա 314 · Բ 72 ։
Բաղեղն, Բ 260 · Դ 124 ։
Բանջար, Գ 397 · Դ 130 ։
Բարակ, Գ 45 · 407 · տես և Պառակեան ։
Բարտի, Ա 140 · Բ 110 · 454 ։
Բէշկ մշկոյ, Ա 61 ։
Բոյսք, Ա 1 · 94 · 116 · 138 · 184 · 356 · Բ 335 · Գ 328 · 467 · Դ 12 · 121 · 199 · 424 · 456 ։
Բու, Գ 149 ։
Բոտոտ, Դ 242 ։
Բրէա, Դ 243 ։
Գաղ, Ա 157 ։
Գազանք, Բ 345 · Գ 243 · 482 · Դ 222 ։
Գաղձն, Բ 414 ։
Գամփռ, Գ 407 ։
Գայլ, Ա 134 · 501 · Գ 267 · 409 · 539 · Դ 432 ։
Գառն, Դ 432 · տես և Որոջ ։
Գաւարս, Բ 34, տես և Հոյն ։
Գարի, Ա 216 · 326 ։
Գեղազատ, Բ 146 ։
Գերմաստ, Ա 80 ։
Գղթոր, Դ 266 ։
Գոմէշ, Բ 377 · Գ 535 ։
Գուեխ, Դ 167 ։
Գորտ, Ա 391 · Գ 433 ։
Դալարիք, Ա 17 · 94 · 350 · Բ 201 · 220 · Գ 146 · 175 · 217 · 496 · Դ 399 ։
Դժնիկ, Ա 157 ։
Դկուղ, Ա 233 ։
Դուար, Գ 556 ։
Դոդոշ, Ա 188 ։
Եղն, Գ 51 · 370 · Դ 128 · 283 ։

Եղնամոլք, Ա 68։
Եղեգնոյ պտուղ, Ա 315։
Եղերդ, Դ 120։
Եղևին, Բ 68 · Գ 416։
Եղէգ, Ա 125։
Եղէգն, Բ 360 · 417։
Եղի, Ա 274։
Եղջերու, Ա 316 · Գ 268 · 371 · 415 · 541։
Երաշտահաւ, Դ 14։
Երէ, էրէ, Ա 143 · 492 · Բ 343 · 474 · Գ 385։
Երինջ, Ա 388 · Բ 378 · 528 · Գ 154 · 220 · 531 · Դ 11 · 538 · 544 · 549։
Երիվար, Ա 529 · Գ 77 · 93 · 117 · 465 · 500։
Զամբիկ, Գ 270 · տես և Ճայրիկ, Ձի մատակ։
Զուարակ, Ա 17 · Բ 141 · 147 · 207 · 518 · 540 · Գ 170 · 517 · Դ 536 · 548։
Ընգոյզ, Բ 69։
Ընձուղ, Գ 165 · Դ 431։
Թաւաթուփք, Բ 2 · 331 · Գ 331։
Թիղօշ, Բ 392 · Դ 113։
Թմբի, Ա 177 · Բ 452 · Դ 140 · 182։
Թուփք, Բ 21 · 419 · Գ 316 · 322։
Թռչունք, Ա 484 · Բ 433 · տես և Հաւք, օդապարք։
Իժ, Գ 418 · 546։
Լախուր, Դ 121։
Լուսղոկք, Գ 244 · 543։
Լոռ, Բ 110 · 200 · Գ 176 · Դ 18։
Խաղող, տես Ողկոյզ։
Խայթահար, Գ 446։
Խաշխաշ, Ա 82 · 218 · Դ 131 · 543։
Խաշն, Ա 279 · Բ 520 · Գ 344 · 447 · Դ 129։
Խարձ, Դ 475 · տես և Ղամբ։
Խեչեփառ, Դ 47։
Խլուրդ, Ա 187։
Խնգամոլի, Բ 153։
Խնկաբեր (ծառք), Բ 117։
Խնձոր, Բ 33 · 70 · 87 · 433 · Դ 134։
Խոզ, Ա 413 · Բ 72 · 523 · Գ 499։
Խոզան, Ա 89։
Խոթ, Գ 340 · տես և Ձկնկուլ։
Խոյ, Գ 389 · 448։
Խոտ, Բ 186 · Գ 128 · 355 · 501 · 530։
Խորդք, Ա 124 · 388 · տես և Կռունկ։
Ծաղիկ, Ա 193 · Բ 71 · 133 · Դ 11 · 39 · 54 · 109 · 142 · 204 · 249 · 270։
Ծառք, Ա 58 · 269 · 457 · Բ 26 · 57 · 73 · 80 · 124 · 151 · Գ 233 · 355 · Դ 44 · 557։
Ծիծեռն կամ ծիծառն, Ա 390 · Դ 304։
Ծոթոր, ծոթրին, Դ 31 · 113 · 168 · 180 · 240 · 269 · 301։
Կաղամախ, Բ 13 · 66 · Դ 508։
Կաղին, Ա 8 · 152 · 314 · Բ 523 · Դ 81։
Կաղնի, Ա 163 · 314 · 360 · Բ 16 · 67 · 399 · Գ 334 · 379 · Դ 507։
Կասիա, Բ 469։
Կակկամ կամ հաւապտուղ, Ա 486։
Կասկենի, Բ 71։
Կարապ, Բ 200։
Կինձ, Գ 256 · 413 · տես և Վարազ։
Կնդրկաբեր (ծառք), Բ 140։
Կնդրուկ, Ա 60։
Կնիւն, Գ 232։
Կնձնի, Բ 18 · 370 · տես և Նշդարի, Ճըշդար։
Կոկոնենի, Դ 145։
Կով, Գ 53։
Կովագեաց, Դ 241։
Կորդիւն, Դ 31։
Կորեակ, Ա 222։
Կորնգան, Դ 63։
Կուենի, Բ 259 · 441։
Կռունկ, Ա 316 · տես և Խորդք։
Կտաւ, Ա 81 · 218։
Կրմուղ, Ա 281։
Հասկ, Ա 9 · 115 · 226 · 232 · 323 · 359 · Բ 255 · 520։
Հաւք ականթի, Բ 119 · ձիթենւոյ, Բ 522։
Հացի, Բ 65 · 362 · ազատ, վայրի, Բ 71 · 111։
Հաւք, Ա 161 · 278 · 397 · 435 · Բ 60 · 210 · 331 · Գ 244 · 548 · Դ 110 · 470 · տես և Թռչունք։
Հիգրայ, Գ 547։
Հողամաղ, Ա 373։
Հոյն, Բ 450 · տես և Գաւկարս։
Հօտ, Ա 3 · 270 · 366 · Բ · 147 · 151 · 201 · 438 · Գ 66 · 161 · 290 · 301 · 325 · 388 · 421 · 443 · 489 · 475 · 540 · Դ 222 · 399 · 430 · 557։
Ձէթ, Ա 199 · 282 · 315 · 405 · Բ 86։
Ձի, Ա 15 · Գ 7 · 45 · 51 · 74 · 94 · 180 · 212 · 251։
Ձի (մատակ), Ա 62 · տես և Զամբիկ, Ճայրիկ։
Ձիաձուկն (նշանք), Դ 386։
Ձիթաստան, Բ 38 · 145 · 182 · 223 · 423։
Ձիթենի, Ա 20 · Բ 3 · 30 · 63 85 · 428 · Գ 21։
Ձիթենի վայրի, Բ 183 · 305 · 317 · Դ 20։
Ձկնկուլ, Ա 412 · տես և Խոթ։
Ձուկն, Գ 483։
Ճայ, Ա 376։
Ճայրիկ · Գ 269 · տես և Զամբիկ։
Ճիպուռն, կամ Ճպուռն, Գ 330։
Ճշդար, Բ 83 · 364 · տես և Կնձնի, Նշդարի։
Մաթղենի, մաթղի, Ա 170 · Բ 69։
Մաթուղ, Ա 152 · Բ 523 · Գ 303 · Դ 180։
Մամուռ, Դ 146։
Մայր, Բ 446։
Մայրիք, Ա 11 · 173 · Բ 15 · 21 · 120 · 209 · 313 · 407 · 434 · 441 · 443 · 489 · Գ 19 · 46 · 151 · 201 · 220 · 335 · 339 · 386 · 438 · 522 · Դ 326 · 531 · 533։
Մանիշակ, Դ 32 · 274։

Մատակ (անասնոց), Գ 131:
Մարգագետին, Ա 298 · Բ 386 · 529 · Դ 303:
Մարխ, Բ 434:
Մայրա, Ա 156 · Բ 181 · 413 · Գ 317 · 386 · 413:
Մաքի, Դ 545:
Մեղու, Ա 4 · Բ 210 · Դ 8 · 37 · 139 · 149 · 176 · 196 · 219 · 250 · 283 · 315 · 532 · 554:
Միրգք, Ա 30 · Բ 429 · 519 · Դ 142:
Մկնասոխ, Գ 453:
Մնիճայ, Ա 190:
Մոլախոտք, Ա 73 · Բ 413:
Մողէզ, Դ 13:
Մոշի, Բ 12:
Մորենի, Ա 273 · Գ 317:
Մուկն, Ա 186:
Մուրտ, Ա 315 · Բ 450 · տես և Մրտենի:
Մուրտաստան · Բ 112:
Մտրուկ, Գ 77:
Մրջիւն, Ա 191 · 392:
Մրտենի, Ա 31 · Բ 64 · Դ 124 · տես և Մուրտ:
Յակինթ (ծաղիկ), Դ 137 · 182:
Յակրի, Բ 259 · 451 · տես և Ցիրդ:
Յամոյր, Գ 412:
Նախիր, Բ 518 · Գ 73 · Դ 392:
Նապաստակ, Ա 317 · Գ 412:
Նարգէս, Դ 123 · 159:
Նարդոս, Բ 214 · Դ 30 · 181 · 301:
Նարինջ կամ Թուրինջ, Բ 127:
Ներգիւն, Բ 84 · Գ 396:
Նհանգ, Դ 386:
Նշգարի, նշգարենի, Ա 2 · 174 · Բ 72 · 222 · 449 · 533 · Գ 379 · Դ 144 · տես և կնձնի, ճշգար:
Նշի, Ա 192:
Նոխազ, Բ 384 · Գ 313 · տես և Քօշ:
Նոճ, Ա 22 · 174 · Բ 84 · 446:
Շագանակ, Բ 15:
Շամբ, Բ 417 · Գ 15:
Շլոր, Բ 34:
Շոճ, շօճ, շոճի, Բ 16 · 292 · Դ 140 · տես և Սոճ:
Շուն, Ա 484 · Գ 267 · 347 · 406 · 412 · 498 · 542:
Շուշան, Դ 131:
Ոլեռն կամ ոլոռն, Ա 221:
Ողկոյզ կամ խաղող, Ա 10 · 57 · 461 · Բ 60 · 192 · 422 · Դ 268:
Ոչխար, Դ 10 · տես և Օդիք:
Ոչխարակ, Գ 370:
Ոպնիազ, Բ 116:
Ոսպն, Ա 234:
Որթ (կովու), Բ 196 · Գ 158 · 178 · 496 · Դ 297:
Որթ, որթատունկ, Ա 272 · Բ 60 · 63 · 97 · 277 · 291 · 336 · 413 · 449 · Դ 328:
Որոմն, Ա 157:
Որոջ, Ա 352 · տես և Գառն:
Որոր, Ա 375:
Ուլ, Գ 400 · Դ 40 · տես և Այծիկ:
Ուռ, Ա 461 · Բ 5 · 37 · 336 · 373:
Ուռենի, ուռի, Բ 18 · 84 · 110 · 247 · 437 · 449 · Գ 176 · Դ 26 · 34 · 110 · 181:
Ուռենաստան, Բ 13 · 418:
Ուքող, Ա 155:
Չամիչ, Բ 93 · Դ 268:
Չիչխան, Բ 416:
Պաճար, Բ 224 · Գ 74 · 244 · 328:
Պառակեան, Ա 144 · Գ 373 · տես և Բարակ:
Պատրինջ, Դ 63:
Պիծակ, Դ 244:
Պուրակք, պրակք, Ա 496 · Բ 20 · 136 · Գ 148 · 217 · 421:
Պտուղք, Բ 242 · 427 · 432 · 524 · տես և Միրգք:
Սագ, Ա 124:
Սակռ, Ա 402:
Սարդ, Դ 246:
Սարդենի, սարդի, Բ 18 · 131 · 133:
Սարոյ, Բ 446:
Սէզ, Ա 58 · Բ 190 · Գ 300 · 327:
Սին, Գ 381:
Սինձ (բոյս), Բ 434 · Գ 396:
Սղոցի, Բ 456 · Գ 148 · 332 · 336 · Դ 81:
Սոխակ, Դ 508:
Սոճ, Ա 262 · տես և Շոճ:
Սօս, Բ 70 · Դ 146:
Վագր, Բ 152 · Գ 249 · Դ 404 · 507:
Վարազ, Գ 249 · Դ 404 · տես և Կինճ:
Վարդ, Դ 134 · 267:
Վարդենիք, Դ 119:
Վարունգ, Դ 121:
Վարսակ, Ա 81 · 158:
Վիգն, Ա 79 · 233:
Վիթ, Գ 412:
Վիշապ, Բ 142 · 215 · Գ 39 · 417 · 427 · Դ 405 · 455 · տես և Օձ:
Վրացի կոճ, Գ 453:
Տանձ, Բ 88:
Տանձի, Բ 33 · 71 · Դ 145:
Տատասկ, Ա 157 · Գ 386:
Տերեփուկ, Դ 269:
Տունկք, Բ 9 · 89 · 116 · 268 · 428 · Դ 113:
Տօսախ, Բ 440 · 452:
Ցախ սարեկ, Գ 340:
Ցարասի, Բ 12 · 437:
Ցեց, Դ 245:
Ցինկ, Դ 270:
Ցիրդ, Բ 113 · Դ 47 · տես և Յակրի:
Ցիռ, Գ 411:
Ցորեան, Ա 57 · 77 · 105 · 138 · 154 · 190 · 194 · 225 · 306 · 324 · Բ 206 · 229 · Գ 128 · 177:

Ցուլ, Ա 48 · 294 · Գ 23 · 60 · 213 ։
Փայտք, Բ 280 ։
Փիղ, Ա 60 ։
Փիճի, Ա 177 · Բ 71 · Դ 564 ։
Փոկ, Գ 545 · Դ 392 · 429 ։
Փուշ, Ա 279 · Գ 386 ։
Քաղրան, Գ 417 · տես և Անգժատ ։
Քաւթար, Գ 266 ։
Քրքում, Ա 59 · Դ 181 ։
Քօշ, Բ 398 · տես և Նոխազ ։
Օդապարիք, Դ 14 · տես և Թռչունք, Հաւք ։
Օդիք, Բ 197 · 378 · Գ 298 · տես և Ոչխար ։
Օձ, Ա 133 · Բ 142 · 155 · 217 · 223 · Գ 420 · Դ 479 · տես և Վիշապ ։

ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐԻՆ

ԷՋ		ՏՈՂ	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
7		22	*ըղբեշկ*	*ըղբէշկ*
38	ծան.	97	*Գլխոս*	*Քլխոս*
69	ծան.	87	*կէս օրինակին*	*կէս օրինակք*
76	ծան.	272	*Խոսայ լերկին*	*Իգայ լերկին*
86	ծան.	—	500	503
95		8	*իգայ*	*Իգայ*
105	ծան.	283	*նաւալքայ և Նևրխեւռալ*	*նաւալքայ Նևրխեւռալ*
118	ծան.	558	*'ի կողմանց 'ի կողմանց*	*'ի կողմանց կողմանց*

[illegible] ՔԵՐ-ԹՈՂԱԿԱՆ [illegible] ՚ի լեզու հայկական [illegible], Հայ-աստանեայց և [illegible] Թարգմանութեանն արժանի տպագրութեան համարեցաք :

ՔՆՆԻՉՔ ԳՐՈՑ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻ

ԿՈՒԻՆՏՈՍԻ

ՈՐԱՏԵԱՅ ՓԼԱԿԿՈՍԻ

ԱՐՈՒԵՍՏ ՔԵՐԹՈՂԱԿԱՆ

ԿՈՒԻՆՏՈՍԻ

ՈՐԱՏԵԱՑ ՓԼԱԿԿՈՍԻ

ԱՐՈՒԵՍՏ ՔԵՐԹՈՂԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ՉԱՓՍ ՀԱՅԿԱԿԱՆՍ ԵՒ ՀԱՄԱՌՕՏ

ՄԵԿՆՈՒԹԵԱՄԲՔ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ

Ի Հ. ԱՐՍԵՆԻ ԿՈՄԻՏԱՍԱՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՑ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1847

ԱՌ

ՎԵՀԱԶՆ ՀԱՆՃԱՐԵՂ

ՅԱԿՈԲ ՏԻԻԶ

ՅՈՍԿԻ քնարն Որոտեայ կրտեալ մտօք հայեցի
Ըզգեղեցիկ Մուսայից ասս յԱյրարատ ձայնեցի,
Երեւ նոքա Ծաղկեցոյց ընդ Երասխայ չարարին
Նուրբ 'ի փոփոխմանցն նրբագոյս հնչել յերկիր օտարին.
Ի քոյդ անուն հրաւիրեալք՝ գան աւադիկ գեղապար,
Ըսկիզբն 'ի Վերէն ամենեցեն անմահ երգոց հեշտաբար.
Ընդ աւանեան սարսենեայն՝ ուռք 'ի Մասեաց սուրբ ընդ հիւս
Վարդ անթառամ 'ի ճակատ բոլորեսցին, ՅԱԿՈԲ ՏԻԻԶ:

ԹԱՐԳՄԱՆԻՉՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Եթէ բաղդ փափաքելի իցէ ամենայն ուսմանց, զի 'ի վեհագոյն վարժապետէ աւանդեսցին սկզբունք նոցին, որ և ինքնին իսկ ձարտարն քաջ իցէ 'ի գիտութեան անդ կամ յարուեստի, ոչ ոք յուսատ լինել մարթասցէ՝ եթէ այդմ բարեբաստութեան հասեալ է Արուեստն քերթողական: Զի ահա ոչ այլ ոք, բայց Արիստոտէս հանձարեղն իմաստասէր քննաբան, և միանգամայն մեծն և սքանչելին 'ի քերթողս հռովմայեցւոց է մեզ աստանօր, որ զայս տարերս բանաստեղծութեան աւանդէ սուղ և համառօտ չափեալ բանիւ, իբրև վճռական լուսաւոր և աներկեան պատգամ՝ ոչ միայն այսր արուեստի, այլ ընդ նմին գրեթէ և ամենայն դպրութեանց և գեղեցիկ արուեստից և կիրթ ախորժակաց առ հասարակ, 'ի գլխաւոր և յընդհանուր գիտելեաց դեգերեալ եւեթ, և ոչ 'ի մանր մանր մասունսն աղամողեալ, ուշիմ ընթերցանելեաց թողեալ զայն 'ի միտ առնուլ ըստ իւրաքանչիւր պատշաճի:

Եւ զի ամենայն քերթուածիւն յերկուս ընդհանուր տեսակս որոշի, 'ի վիպական՝ ուր քերթողն ինքն խօսի և վիպէ ինչ, և 'ի գործական կամ թատերական՝ ուր դուսանաց տայ խօսել և գործել, զառաջնոյն զկարևորսն եւեթ կարճառօտ հատեալ՝ փոքր մի առաւել 'ի թատերականն ձոխանայ: Նբրու զի գլխաւոր օրէնք հան-

գամանաց սորայս և նորայն գրեթէ նոյն են ըստ կարևոր մասանց. և զի Թատերականն աւելի ինն պերճագոյն և սուր հանճարոյ և դժուարութեան գործ համարեալ է առ բազումս, և առ Արիստո-տէլ ինքնին, որ և այսց երկուց պատճառաց աղագաւ ոչ այլ ինչ ոճ կալեալ է և ինքն յիւրում ամենարուեստ քերթողականին, որ աւանդ զի կրծեալ է յամենածախ ժանեաց ժամանակին:

Վասն այսպիսի և այսքանոյ պատգամախօս համառօտութեանն՝ այնքան հոծ է և խիտ Թաքուն խնամոտիւք այս քերթուած որա-տեան, մինչ զի 'ի վերայ միոյ միոյ բանից նորա մարթի յօրինել գլուխ մի ճառից, եթէ մեկնութեամբ ընդարձակել ոք կամիցի: 'Ի խրատական քերթուածս նախնեաց, յետ Մշակականացն Վիրգի-լեայ, չիք ինչ այլ ճարտարարուեստ և շահեկանագոյն. եթէ այն օգտախառն զուարճութեան մասամբ առաւել է քան զսա, սա ըստ զուարճախառն օգտակարութեանն գլէ զայն: Այլ չիք քերթուած պիտանի որ այնչափ ընթերցեալ և յիշատակեալ և 'ի վկայութիւն առեալ իցէ իբրև զսա. մինչև բազմաց 'ի քաջակիրթ և 'ի բանի-բուն գիտնոց և ճարտարաց 'ի բերան գիտել և առնել զսա, և ցայ-օր ևս կոչել զսա Յաւիտենական գրեանք բանի և ախորժակի: Որ գրեթէ վկայել ինն է, որպէս մեզ իսկ թուի, թէ յամենայն քեր-թողական արուեստից՝ որ յետ սորա երևեալ 'ի բանաստեղծական աշխարհի, չիք և ոչ մի՛ որ ամենայն կարգաւորութեամբ և գեղեց-կութեամբ իւրով հասեալ իցէ 'ի ճշգրիտ վայելչութիւն և 'ի հա-մառօտ կատարելութիւն սորա:

Յուսով ապաքէն մեծ առնելոյ օգտի՝ թարգմանեցաք և զսա նո-ւիրել հայազգի չափականք ոտից ոտով և զՄշակականս Վիրգիլեայ. զի և սա նովին հաւասարեալ չափովք է գրեալ: Բայց 'ի մեկնութիւնս բանաստեղծին չափ ևեթ ընտրեցաք մեք, որ կարևորն միայն էր 'ի բա-ռից խելամտութիւն իմաստիցն. զայն բառականն համարեալ ընդ Որատեայ մտացի քննողաց և հանճարեղ ցանկացելոց մեծամեծ ա-րանց և սկզբանց արուեստիս. որ քաջքն առանձ ընկալցին մասանց ի-րեանց, մանաւանդ եթէ յառաջագոյն փոքր մի պարապեալ և հմուտ տացեալ իցեն 'ի պարզ տարերս ուսմանս այսորիկ: Ուր ոյր հան-ճար և իմաստուն հասողութիւն մերձ ոչ իցէ, և բազում տառա-պակարկաւ մատենաւք ոչինչ վճարեսցեն: Հանճարեղաց 'ի բնէ՝ ա-ւելորդ են, իսկ անհանճարիցն՝ անօգուտ:

Գրէ զայս Որատիոս 'ի ձե նամակի առ Պիսոնեանս երկուս եղբարս ազնուականս, որդիս Լ. Կալպուռնիոսի Պիսոնի 'ի հիւպատոսական տոհմէ այր, որ նախահաւ ճանաչէր իւր զԿալպուռն զորդին Նումայ Պոմպիլիոսի, որ յետ Հռոմուլեայ պայազատեաց յընտրութենէ ժողովրդեանն զարքայութիւնն հռովմէական։ Բայց զի երկոքին եղբարքս ընդ դաստիարակութեամբ հօրն 'ի քերթութիւն պարապէին, և մանաւանդ երէցն, Որատիոս մտերիմ նոցա և բարեկամ՝ 'ի խրատ և 'ի զգուշութիւն նոցին գրէ զայս. բայց նովին իսկ և առ յապա եկելոցս մեզ աւանդէ զամենայն կարևոր օրէնս արուեստիս։

Իսկ որ ինչ աշխատասիրութիւն եղեալ ընդ ժամանակս ժամանակս 'ի վերայ քերթածիս յարանց իմաստնոց և գիտնականաց 'ի քըննել, թարգմանել և մեկնել, զայն և համառօտ իսկ ասել յանհնարին է՝ առանց յանչափութիւն կրթելոյ հասակի մատենիս։ Բայց զերկուս զայս ևեթ կարևոր համարիմք ասել աստանօր։

Առաջին այն, զի վէճ է առ հմուտ քննիչս՝ թէ արդեօք Որատեայ ինքնին մակագրեալ իցէ զսա արհեստ քերթողական կամ յաղագս քերթողական արուեստի, որպէս յիշատակի իսկ ուրեք ուրեք առ հինսն 'ի Կուինտիլիանոսէ հետէ և այսր, եթէ լոկ թուղթ միայն առ Պիսոնեանս. զոր առաւել հաւանելի դատին բազումք գյետնոց, և զմիւս մակագրութիւնն սոսկ ինքնահնար գիւտ քերականաց։ Այլ սակայն հաճոյ թուեցաւ և մեզ ընդ բազմաց պահել զայն։

Երկրորդ այն, զի որպէս ամենայն քերթող՝ նոյն և առաւել ևս Որատիոս 'ի քերթածի աստ ոչ զձիգ և զերկիւղած արուեստակեալ կարգ և շաւիղ ուսումնական ոճոյ ունի անստերիւր. մանաւանդ զի և ոչ յատուկ և կատարեալ զքերթողականն առեալ է աւանդել, այլ 'ի կերպարանս մտերմական նամակի զգլխաւոր օրէնս ևեթ արուեստին իբրև առածս և պատգամս երգէ։ Սակայն և յայսր ամենայնի վերայ՝ կարգ ունի յոյժ վայելուչ և զարմանալի ըստ քերթողական պայմանի. որպէս և իւրովի իսկ ակն յայտնի երևեցի որոց մանր միտ եդեալ ընթացից բանիցն քննիցեն։

Վասն որոյ և յաչս ողջամտաց յոյժ մոլորեալ համարին գրագէտք ոմանք եւրոպէականք, որպէս Յուլիոս Կեսար Սկալիգէր, Անտոն Ռիկոբոն, Դանիէլ Հէյնսիոս, և այլք ոմանք, որ անկարգ և խառ-

նախսօս զքերթածն ղառեցան երբեմն . որպէս թէ Արատոս որ ըղ-կարգն այնպէս խնամով ուսուցանէ և պատուիրէ 'ի սմին իսկ յայսմ քերթածի (տող 43), մինչ չիցէ պահեալ զնոյն 'ի սմա . և կամ 'ի գաղափարողաց այլայլեալ և այլանդակեալ առելով զայն՝ Ջանացան այլով իմն նորով կարգաւ դասաւորել զառաջին ըստ միոս և ըստ քիմս, և վեր 'ի վայր հարեալ վրդովել զամենայն ։ Արդ ոչ այլ ինչ արարին, քան թէ 'ի զուր վատնել զժամանակ իւրեանց . և երանի թէ 'ի զուր միայն, և ոչ 'ի ծաղր ողջախոհից, որոց սիրելի է ընդ Արատեայ անզգայ երևել՝ քան ընդ Հեփեստիոնի իմաստուն, որ զանզգայութեան դատակնիք արձակէ առ որս ոչ միաբանեալ հաւանեցին ընդ կարգն իւր ։

ԳԼՈՒԽՔ ՔԵՐԹՈՒԱԾՈՅՍ

ԱՄԵՆԱՅՆ *մտացի ընթերցող ինքնին տեսանէ՝ զի որատեանս քերթուած բովանդակէ քսան և եօթն գլուխս կամ գլխաւոր պատուէրս քերթութեան բանի ։ Բայց առ յանդիման ածել զայն միով տեսութեամբ աչաց՝ կարգեմք յառաջիկայդ համառօտեալ զիմաստս նոցին, ակնարկելով զտաղսն թէ ուստի ուր ։*

Ա. 1-8. *Ամենայն մասունք իւրն զոր ստեղծանէ քերթողն՝ համեմատ լիցին և յարմար մէն մի իւրաքանչիւր ընդ միմեանս և ընդ բոլոր իւրն ։*

Բ. 9-23. *Մի զանմիաբանս յօդել ընդ իրեարս, և մի արձակ համարձակ թափառել, և աստի անտի զօտարոտիս կցկցել 'ի քերթածն, մինչև եղծանել և կորուսանել զպարզութիւն և զմիութիւն իւրն . այսինքն է զարտուղի անկեալ օտարանալ 'ի բնութենէ իւրն առաջարկելոյ ։*

Գ. 24-32. *Զգոյշ լինել՝ մի 'ի փախչելն 'ի մոլորակէ իմեքէ՝ յայլ իմն անկանել հակառակ մոլորութիւն . այլ քաջ հասու լինել հանգամանաց կատարմանն զոր խնդրէ ։*

Դ. 33-38. *Ոչ 'ի մասունս ինչ ևեթ քերթողութեան և քերթածոյ խնդրելի է զկատարելութիւն, այլ և 'ի բոլորեան իսկ համանգամայն ։*

Ե. 39-46. *Ըստ տանելոյ կարողութեանն ընտրել զնիւթն, զի կարօղ լիցի լուսաւոր ոճով ճոխաբանել զտաղսն ։*

Զ. 47-73. *'Ի բառս և 'ի բանս՝ սովորութեան հպատակել, և*

մի՛ նորաձևել՝ բայց եթէ առ հարկէ պիտոյից։ Զի թէպէտ բառք չեն անմահականք, ծնանին և մեռանին ՚ի ժամանակս ժամանակս ըստ այլոց ապականացու փոփոխելեաց, սակայն պէտքն կամ սովորութիւնն է նոցին իշխան և դատաւոր։

Է. 74-86. Իւրաքանչիւր ազգ քերթածաց ըստ իւրում բնութեան և զտաղիցն օրինակ պահանջէ, վիպասանականն, եղերականն, երգիծականն, թատերականն և քնարականն, իւրաքանչիւր զիւրն։

Ը. 87-99. Քերթող անուան արժանաւորն պահեսցէ զկարգ և զսահման յիւրաքանչիւր ազգի քերթուածոց՝ միում միում զիւրն տալով կերպարան և պայման. մի՛ ՚ի վսեմն նուաստանալ կամ ՚ի նուաստն վսեմանալ. մի՛ զողբերգականն և զկատակերգականն խառնել ընդ միմեանս։

Թ. 100-118. Ոչ հերիք համարի քերթածաց գեղեցկակարգ յօրինուածն միայն, այլ պարտ է շարժել յոյզ և այլ կիրս. և ըստ կրից բանին և դէմքն և կերպարանք խօսելեացն յարմարելի են։ Նոյն պարտ է քերթողին զկիրս և զխօսան պատշաճել և ըստ իւրաքանչիւր անձին։

Ժ. 119-135. Զընկալեալն իրս ըստ աւանդութեանն նկարագրել, իսկ զյօրինեալն՝ յար և նման պահել մինչև ՚ի վախճան։ Զի ինքնահնարքն դժուարին են, ՚ի նախնեաց աւանդից առնուլ, բայց ազատօրէն յօրինել։

ԺԱ. 136-152. Մի՛ մեծամեծս խոստանալ և փոքունս վճարել. մի՛ ՚ի կարի հեռուստ սկսանել. զսկիզբն՝ զմէջն և զկատարածն միմեանց համեմատ գործել։

ԺԲ. 153-177. Խնամով մտադիր լինել բնաւորութեանց իւրաքանչիւր հասակի, մանկութեան, երիտասարդութեան, արութեան և ծերութեան. և իւրաքանչիւր զիւրն տալ։

ԺԳ. 178-187. Թէպէտ առաւել շարժեն իրք ինքնադիտմամբ տեսեալք, սակայն մի՛ զսոսկալին և զանհաւատալիս յանդիման առնել աչաց ՚ի թատերս. այլ միայն պատմել տալ։

ԺԴ. 188-200. Մի՛ քան զհինգ հանդէս երկայնել զթատրն. մի՛ ՚ի ձեռն յանկարծերևեաց դից ուրուք հատանել զկնճիռն, այս ինքն հրաշիւք. մի՛ աւելի քան զերիս ՚ի միասին հանել ՚ի խօսել. և պարուն՝ մի՛ անճահս երգել։

ԺԵ. 201-218. Համառօտ համեմատութիւն նուագարանաց և երաժշտութեան և հանդերձանաց թատեր իւրոյ շռայլեալ ժամանակին ընդ հնոյն պարզութեան։

ԺԶ. 219-249. Քանզի խեղկատակութիւն այծամարդաց ընդունելի եղեալ է յողբերգութեան, օրէն լինի վարել հանդերձ վայելչութեամբ անձանց իւրաքանչիւր։ Ոչ հասարակաց իրն բանիւ պաճուճեալ պճնեսցի։ Այլ մի խօսս զազրութեան և թշնամանաց հեղուլ։

ԺԷ. 250-273. Բարեյարմար և քաղցրանուագ դաշնակութիւն տաղից կարևոր պիտոյ է 'ի թիւս և 'ի չափս ոտից, որուն ընտրելագոյն օրինակ են հելլէն տաղաչափք, և ոչ նախնիքն հռովմայեցիք, որ անպատեհ ազատութեամբ վարեցեալք են։

ԺԸ. 274-292. Ի հելլենացւոց սկիզբն առեալ թատերգութիւնք անցին առ Հռոմ. բայց սոցա պղերգութիւն և անհոգութիւն ողորկելոյ զտաղսն՝ վնասեաց։ Իսկ որոց քաջ անուն քերթողի ցանկալի իցէ, ամենայն խնամով յղկելի և կոկելի է զտաղսն։

ԺԹ. 293-306. Քերթողութիւն ոչ կարծեալ հանճարոյ և մոլութեան ևեթ գործ է ըստ կարծեաց անմտաց, այլ և գիտութեան և արուեստի։ Վասն որոյ ուսուցանելի է՝ թէ որով պատրաստութեամբ արժան իցէ յայն ձեռնարկել. և զինչ անտի օգուտ, և զինչ 'ի հակառակէն վնաս։

Ի. 307-331. Ուղէ իմաստութիւն է հիմն քերթութեան, գիտել զինչ մարդն իցէ, և զինչ իւրաքանչիւր կարգի և տեղւոյ և պայմանի վայելչական։ Այլ յայսմ իսկ Հելլէնք են արժանի օրինակ լինելոյ, որ անյագ տենչմամբ և ագահութեամբ գովութեան յառաջացեալ են քան զհռովմայեցիս 'ի փոյթ ճարտարութեան։

ԻԱ. 332-345. Ի վարդապետական քերթածս զհամառօտութիւն պատուել, 'ի զուարճականս՝ զհաւանականութիւն. և առ 'ի հաճոյակատար ամենեցուն լինելոյ՝ 'ի խրատականսն խառնել զզուարճալին, և 'ի հեշտականսն՝ զօգտակարն խոհականութեամբ։

ԻԲ. 346-364. Ընտրութիւն քերթածաց յորս առաւել իցեն ուղղութիւնք քան զթերութիւնսն անխորշելիս 'ի մարդկային սխալոտ բնութենէ՝ մանաւանդ յերկայն տաղս. և թէ պարսաւելի՝ բազմասխալքն միայն են։ Այս համեմատութիւն քերթուածոց ընդ նկարուց։

ԻԳ. 365-388. Թէ 'ի քերթուածեան անտանելի է միջակութիւն կամ չափաւորութիւն: Այլ պատճառ միջակութեան բազմաց այն է, զի կարօղն և անկարօղ 'ի քերթութիւն ձեռնարկէ. յորմէ զգուշանալի է, և մի 'ի զլանալ հանճարոյ՝ բռնի քերթողանալ կամել: Զքերթեալսն 'ի դատումն հմուտ քննաբանի տանել ապաստան և մի փութալ 'ի լոյս հանել:

ԻԴ. 389-405. Գովեստ քերթողութեան, և օգուտ նորին առ նախնեօքն և որ զկնի 'ի տիրապէտն քերթողաց, 'ի քաջալերս վհատելոց յերեսաց դժուարութեանց արուեստին:

ԻԵ. 406-416. Ոչ հանճարով միայն, այլ համարերձ այնու՝ արուեստիւ և աշխատութեամբ լինեցի ստանալ զպարծանս այսպիսի գովելի քերթութեան, 'ի մատաղ տիոց 'ի նոյն վարժեալ:

ԻԶ. 417-450. Մեծատանց վտանգ յերեսաց մարդահաճոյ ունկնդրաց, և նկարագիր սուտակասպաս չնթողի քերթածաց նոցին. և օրինակ ուղղադատ և արդարակորով քննաբանի 'ի դէմս Կուինտիլեայ:

ԻԷ. 451-475. Նկարագիր ինքնահաւան քերթողի. որոյ քերթածացն չէ արժան իմաստնոց դատիչ լինել, և ոչ ջանալ փրկել զնա յարժանահաս պատուհասէ կորստեան իւրոյ:

ԿՈՒԻՆՏՈՍԻ

ՈՐԱՏԵԱՅ ՓԼԱԿԿՈՍԻ

ԱՐՈՒԵՍՏ ՔԵՐԹՈՂԱԿԱՆ

ԱՌ ՊԻՍՈՆԵԱՆՍ

ԸՋՁԻՈՑ պարանոց 'ի մարդկեղէն զօդել գլուխ
Նկարիչ թէ կամիցի, և արկանել պէսպէս փետուրս
Յամենուստ յօդեալ անդամս, որ զի վերոյն կին գեղեցիկ
'Ի տգեղ աւարտեսցի սևաթորմի ձուկըն զազիր,
Ունիցի՞ք ժոյժ 'ի ծաղուէ մուծեալք 'ի տեսն, ո՜վ սիրելիք:
Հաւատացէք, Պիսոնեանք, յար և նման գոլ տախտակիդ

Նախ քան զամենայն առ տեղեաւս հարկ համարիմ ասել 'ի հարևանցի, զի անուն այսր բազմահաւաք քերթողիս Թարգմանեալ գտանի ուրեք ուրեք 'ի մեզ Ովրատիոս. բայց վրիպակաւ եղեալ է ով առաջին վանկին, որ սուղ է 'ի լատինն, վասն որոյ և փոքր ոյիւ գրելի 'ի յոյնն և ոչ երկար մեծ ովիւ, և անուն 'ի մեզ փոխելի Որատիոս, կամ Հորատիոս՝ ըստ որում և լատինն հագագային ունի զառաջին վանկն:

1. Թէ զինչ գլուխ մարդոյ իմանայցէ՝ փոքր մի զկնի յայտ առնէ կնոջ լինել:

3. Յամենուստ յօդեալ անդամս, իմա յամենայն ազգի ազգի կենդանեաց. և 'ի վերոյ կողմանէն կին՝ իմա ըստ գլխոյ մասին:

6. Պիսոնեանք, ըստ որում ասացաք 'ի յառաջաբանին, էին երկու եղբարք ազնուականք, որդիք Կալպուռնիոսի Պիսոնի, առ որս գրէ զայս Որատիոս:

Ըզմատեան՝ ոյր իբր անուրջք խօթի սնոտի նըկարին տիպք ,
Ուր ոչ ոտք և ոչ գըլուխ 'ի մի մարմին պատկանաւորք ։

Նըկարչաց և քերթողաց յոր ինչ և գամ մի կամ իցէ
Եղև միշտ հաւասարակ համարձակել իշխանութիւն ։ —
Գիտեմք իսկ , և ըզդոյն հայցեմք և տամք միմեանց օճան .
Բայց ոչ թէ անհամբոյրք զի խառնեսցին ընդ համբուրից ,
Ոչ զի 'նդ հաւս օձք զուգեսցին և ոչ գառինք ընդ վագերաց ։
Վեհից ինչ ըսկըզբանց և մեծամեծս յանձն առելոց
Մի և միւս ծըւէնք կըցի ստէպ ծիրանի մեծապայծառ
Մինչ անտառն և բագին նըկարագրի անահտական
Եւ ընդ մարգ ծաղկազըւարճ ոլորտապտոյտ զեռուն վըտակ ,
Կամ թէ գետըն Հռենոս և կամ աղեղն անձրևածին ։
Բայց արդ չէր դոցա տեղի . նոճ մի թերևս հանել գիտես ,

7 . Զմատեան , իմա նախ զբանաստեղծական ինչ յօրինուած , և ապա զայլ ամենայն որ և է գրուած . զի օրինակ առ ամենայն պատշաճի , և 'ի համառօտ քերթածի աստ , մանաւանդ 'ի սկզբանս , ոչ զքերթողութեան միայն , այլ և գրեթէ զամենայն մատենագրութեան և ճարտարութեան և զբարւոք ախորժակի սկզբունս աւանդէ Որատիոս ։ — Սնոտի տիպք կամ պատկերք են ուրուատիպ ստեղծուածք մտացն իմաստից , կամ խառն 'ի խուռն կցկցեալք իբրև զերազ և զառանցանս ցնորից հիւանդի , և իբրև հրէշ իմն անկերպարանք՝ որ 'ի բնութեան իրաց չունին հաստատութիւն . ուր ոչ սկիզբն և ոչ կատարածըն 'ի մի բովանդակութիւն կերպարանաց գան պատշաճին։

9 . Ընդդիմագրութիւն է այս յերեսաց ուրումն , որ նկարչաց և բանաստեղծից հաւասար իշխանութիւն համարիցի կապակոտոր լինել և զամենայն օրինօք վազել անցանել ։ Որում և տայ իսկ պատասխանի , թէ գիտեմք զայդ , և շնորհեմք և առնումք իսկ զայդպիսի համարձակութիւն , այլ չափով . և ոչ թէ զի 'ի բնէ հակառակ իրք և անմիաբանք ընդ միմեանս յօդեսցին , կատաղի գազանք ընդ հեզս զուգաւորեսցին , օրինակ իմն օձք ընդ հաւս , գառինք ընդ վագերս ։

14 . Ոչինչ ընդհատ է յայդմանէ և այն՝ զի բազում անգամ 'ի ծանր և 'ի վսեմ սկըզբնաւորութիւն քերթուածոյ իրիք , որ մեծամեծս յանձն առեալ խոստանալ թուի , կցի յանկարծ մի և երկու կապերտ ծիրանի լայնածաւալ փողփողեալ ։ Եւ թէ երբ լինիցի այդ , հարցանիցես . յայնժամ , յորժամ յանդէպս բանադրօսեալ և ընդ քարշ ածեալ նկարագրի ճոխաբար անտառն և բագինն անահտական , 'ի բազմաց անտի մին , որ և իցէ , և գնացք ջուրց վտակաց ընդ մարգս զուարճալիս . կամ Հռենոս գետն մեծ՝ որ ընդ մէջ գաղղիացւոց և գերմանացւոց , ուր բազում նահատակութիւնք եղեն Օգոստեայ և հռովմայեցւոց . կամ ծիածանն՝ որ յանձրևաց գոյանայ ընդ ամպս երկնից , այլովք բազմօք այսպիսեօք հանդերձ , յորոց տաղտկացեալ թուի Որատիոս 'ի լսելոյ 'ի քերթածս իւրոյ ժամանակին , և զնոսա կծանէ ։

19 . Այդպիսիք բարի իցեն , այլ չէր աստ դոցա տեղին . որպէս եթէ նաւաբեկեալ ոք վարձեսցէ զքեզ՝ աղետալի և կենդանի նկարել զիւր նաւակոծութիւնն , և քո թողեալ զյանձնառեալ պարտադ և վեր 'ի վերոյ ինչ հարևանցիկ զայն արարեալ՝ զարմանալի իմն նոճի նկարեսցես յերևելի տեղւոջ տապանակին ։ Զի՞ կայ նոճւոյ և նաւաբեկութեան . հասկացաք որ ճարտար ես 'ի նոճ նկարել . և զինչ այսր , առիցէ քեզ որ վարձեացն , զինչ շահ ինձ 'ի նոճւոյդ ։ Եւ զայդ յիրաւի առիցէ . մի , զի զոր առաջին եդ՝ այնմ ոչ եհաս կենդանագրութեան աղետիցն նաւաբեկութեան . և միւս եւս , զի զայնպիսի տախտակ նաւակոծեալքն

Այլ զինչ այդ, որ նկարեալս ընդ սրբութեան փառաց 'ի քէն
Խաւարեալ 'ի յանդգնութեան անյուսութեան հայց ձգտեցաւ։
Մատուցի սկիզբն եղաւ, զի կուռ գործեալ եղեւ 'ի շուրջ։
Լիցի աղէ զոր կամիս՝ եթէ միայն պարզ ինչ և մի։

Հայր, և դուք մանկունք այդպիսում հօր աշակերտք,
Ճարտարն կերպարանօք պատուիրեք բաղումք 'ի քերթողաց.
'Ի հանկերծմն ներկայացեալ լինիմ մերթ խրթնամածութ.
Որ 'ի նուրբս ղընէ դէմ՝ ջիլք և ոգիքն լքանին,
Մեծահագունից զառածեալն այտնու փքչմամբ փքացուցայց.
Մոլի 'նդ երկիր յոյժ անզգոյշն և երկիւղածն 'ի մրրկէ։
Որ հրաշիւքն ընձանայ փոփոխել զիրն միաքուն,
Դլփին 'ի մայրիս կենդանագրէ՝ յալիս վարազ.
Խուսափելոյ փախուստ մեղաց յայլ իմն ածէ մոլորութիւն.

Ա Եմիլեան Ճարտարաց առ Եմիլեանն Հանդիսարան.

այսր անդր շրջեցուցեալ շարժեսն զորրորս տեսանելեացն, և օգնութիւն 'ի վերջոս խորհանց խնդրէին. զոր ապաքէն ոչ ոք տացէ 'ի տեսիլ նմանւոյ միոյ՝ թէ և դեռանգելոյ:

22. Այլում օրինակաւ յայտնի առնէ զանպատեհութիւն կամ զանարուեստութիւն իւրացն: Որպէս եթէ բրուտ ոք սափոր մեծ և գեղեցիկ կամ թակոյկ խոստասցի և սկսցի ստեղծանել, և ապա 'ի շրջել դրգանն եղիցէ կուժ մի փոքր, այսմ նման է զոր սանմաթէ մեծ ինչ սկսեալ ուրուք՝ և փոքրունս յառաջ բերիցէ, կամ այլ ինչ խոստացեալ՝ և այլ ինչ կատարիցէ:

23. Լիցի քերթուածդ որ զինչ և կամիցիս, միայն թէ լիցէ պարզ ինչ և միաքուն, մի ինչ բնութիւն, մի մարմին, 'ի պատկանաւոր անդամոց յօդեալ, և ոչ յաննման և յանհամեմատ մասանց խառնեալ 'ի խուռն եղջերուաքաղ, ուղտաքաղ և փղաքաղ, ըստ նախանշանակեալ օրինակիս նկարուն յանդգնութեան:

24. Դարձուցանէ զդէմս բանին անդրէն առ հայրն Պիսոնեանց և առ որդիսն, յորոց երէցն մանաւանդ զանկատեալ էր 'ի քերթութիւն:

25. Կարծեցեալ երեւոյթիւ պատրանքն խաբիմք, զի կարծեմք 'ի լաւութիւն ինչ դիմել, և հասանեմք 'ի յոռութիւն: Զոր օրինակ, 'ի համառօտութիւն ջանամ ես, և լինիմ մթին և խրթին. որ 'ի նրբութիւն կամ յողորկութիւն յղեալ է, և ճախրակեալ բանից կորովից, այն շռայլ նուաղէ կամ մաչէ, զի չլինի զկորովութիւն բանին. որ 'ի մեծամեծս և 'ի վսեմս առաջ զանձն, փքնու և ուռնու. որ զյաղագահօսութիւն խնդրէ՝ երկուցեալ 'ի հողմոց, չմարթէ 'ի բարձունս վերանալ, ընդ երկիր քարշի, կամ զաղքամբք քերի 'ի ծանծաղս, և ոչ 'ի խորս անդնդոց ելանել: Իսկ որ զպարզ միութիւն իրին զանազան փոփոխմամբք զարդարել ցանկայ, որ առանց հրաշից չմարթէ լինել, օրինակ իմն՝ յանտառն նկարէ դլփին և 'ի ծովու վարազ, այս է՝ զանհնարս 'ի մի խառնէ: Այսպէս անարուեստաբար փախչելն 'ի մեղաց՝ յայլ իմն յոռութիւն և 'ի վատթարութիւն տանի:

33. Վերջին խմանօն մեկնիչք յետին ըստ արուեստի, կամ ըստ կայից գործարանին՝ որ 'ի կրկէսին կամ 'ի խաղատեղն սուսերամարտից, տասցեալ Եմիլեան յանուն Եմիլիոսի Լեպիդոսի, որ առաջնորդն եկաց հանդիսից խաղուցն սուսերամարտկաց: Արդ այն Ճարտար, ասէ, թերևս դրոշմասցէ և զխաւարտք հերս և զեղունգունս կարիցէ կենդանեաւ քանդակել 'ի պղնձի. սակայն զինչ օգուտ՝ յորժամ 'ի բովանդակ կատարմանէ անհնարին մասանց գոր-

Զեղնգունս և ըզգիրգ հերս 'ի պղընձին ճըշգըրտեսցէ,
'Ի կատար գործոյն յետնեալ՝ թէ չգիտիցէ զամբողջն ածել:
Այսպիսի լինել զիս՝ թէ յօրինել ինչ հնարիցիմ,
Ոչ կամիմ, որպէս և ոչ կեալ անհեթեթ տըգեղ քըթաւ,
Սևաթոյր թէ և աչօք և թուխ գիսօք երևելի։

Առէք, բանահիւսք, ուժոյ ձերում նիւթ 'ի կշիռ,
Ընտրելով 'ի ձիրս ձեր ուսոց իւրեանց բերել՝ ձեր հետս ըմբռնելով։
Ում ըստ կարի իւր 'ի դէպ՝ իւր ընտրեսցի ուղի ուշով,
Ոչ բանից յորդ աղբիւր՝ ոչ կարգ յըստակ պակասեսցէ:
Կարգին, եթէ չխաբիմ, այս ընտրութիւն է և շնորհ,
Զի զոր աստ այժմ է ասել՝ այժմ ասասցէ զայն աստանօր,
Բազում ինչ յամեցուցեալ՝ յառաջիկայն թողցէ պատեհ.
Զայս սիրեալ՝ զայն հերքեսցէ աւետաւոր տաղից քերթող:

Նա 'ւանիկ 'ի նորաստեղծ բառից անգամ ուշով և ըղձով,
Ընտրականըս խօսեսցիս՝ թէ խորագէտ յեռեալ յօդուած
Ըզծանօթ ձայնին բառքս 'ի նորաձևս փոխեսցէ:
Իսկ թէ նոր նըշանակօք թաքուցս ինչ հարկ յայտնել լիցի,

ծոյն վերջացեալ գոանիցի: 'Ի յօրինելն ինչ՝ չկամիմ լինել նման զայն արուեստաւոր. որպէս և ոչ, թէ և այլով մասամբք մարմնոյ գեղեցիկ իցեմ, կամիմ ունել քիթ անձոռնի և այլանդակ. զի թէպէտ և փոքր ինչ մասն եւեթ է մարմնոյ, սակայն տգեղութիւն է: Այս է, յորս ինչ գովելի լինել և յորս ինչ պարսաւելի ոչ կամիմ:

39. Ահա և աստ ոչ առ բանաստեղծս միայն խօսի Որատ, այլ և առ ամենայն մատենագիրս. և պատուիրէ 'ի ձեռս առնուլ նիւթ համեմատ ուժոյ իւրեանց, քննելով յերկար՝ զինչ կարող իցեն բառնալ ուսք իւրեանց, և զինչ չառնուցուն յանձն և զընկենուցուն:

44. Քերթողական կարգաւորութիւն մասանց ոչ բնականին և պատմականին հետեւի կարգի, այլ լաւագոյն իմն արուեստաւ ինքն քերթողն հնարի իւր կարգ՝ զօրութեան բանին և յուշ նպատակին յաւէտ յանկաւոր. որ է ոչ լոկ բնականին՝ այլ գեղեցիկ բնութեան նմանողութիւն, և խառնել զպիտանին ընդ անոյշ 'ի հրաշանալ և 'ի զուարճացուցանել միանգամայն:

46. Ընտրութիւն արասցէ կարգելի իրացն բանաստեղծ՝ որ խոստանայ կամ յուսով ակնկալութեամբ աւետաւորէ մեծ ինչ և նշանաւոր քերթուած: Զի 'ի մանր ինչ տաղս չիք այնչափ ընտրութեան տեղի կամ այնր դժուարութիւն:

47. Զգուշացուցանէ 'ի նորահնար բառից զամենայն բանարար. և ընտիր ևս է, ասէ, այնպէս խօսել, զի ճարտարութեամբ հիւսեալ և առ իրեարս պատշաճեալ բառք՝ սովորական և յայտնի բառին նոր իմն առնուն և իմաստ տացեն, քան թէ նորս ստեղծանել: Ոմանք ըստ փոքր մի երկխօսութեան բնագրին իմանան թէ ճարտար յաւելուածն ծանօթ գործեսցէ զնորահնար բառն: Բայց ոչ կիրթ թուի այդ անընդմիջաբար զկնի զգուշացուցանելոյն. որ զի և չև է ասացեալ զհրաման նոր բառս ստեղծանելոյ, և զկնի յարէ՝ թէ սակայն եթէ հարկ լինիցի համարձակել ինչ այնպիսի վասն նորագիւտ իրաց, օրէն է և զայն առնել: Զգոյն ուսուցանէ և Արիստոտէլ 'ի քերթողականին իւրում:

Անլուրս հանգուցն հանդերձներոց ըստեղծանել Կեթեգեանց
Իցէ դէպ, և տացի չափով առեալ ազատութիւն։
Այլ նորք և գեղածինք վաւերական լինիցին բառք,
'Ի հելլէն թէ յաղբերէ գոյզն 'ի խոտոր անկանիցին։
Զի՞նչ իցէ զոր Պղաւտոսի և Կեկիլեայ շնորհէ Հռոմն
Այլ արգել կարծեաց երբեք 'ի Վիրգիլիէ և 'ի Վարեայ։
Սակաւուց ինչ թէ 'ի գիւտ է ինձ լինել՝ ե՞ր յաչաղիմ,
Մեր Կատոնին և Էննեայ լեզուն ըզխօսսըն հայրենի
Ճոխացոյց և նորանոր անուանս իրաց մատոյց 'ի մէջ։
Այր օրէն է միշտ լիցի ձայն նորաթէք բերել 'ի լոյս։
Որպէս անտառաց փոփոխին տերևք ընդ ամս դիւրասահ,
Հինք թափին, այսպէս բառից մեռեալ դիմայ զառամ հասակ,
Այլ զօրէն պատանեկաց ծաղկեն առոյգ արդի ծընեալք։
Նուիրեալ կամք 'ի մահ՝ մեք և մերքս ինչ 'ի միասին.
Թէ առեալ ծովն 'ի ցամաք առ 'ի նաւաց պահէ զհիւսիս,
Գործ արքունի, և յերկար ամուլ ճահիճ թիոց 'ի դէպ

51. Ըստ այնմիկ հարկի 'ի դէպ իցէ ստեղծանել նոր ձայնս անլուրս Կեթեգեանց վաղնջական աշխատողմբ, որ առանձինն իմն զօրութեամբ առին ունել և հանդերձանս պատմուճան։ Իսկ բառս անծանօթս նախնի հռովմայեցւոց։ Եւ այսպիսի բառք առաւել ընդունելի լինիցին, եթէ 'ի յոյն լեզուէ առցին՝ փոքր մի խոտորելով և յարմարելով յատկութեան և օրինաց հռովմէական բարբառոյ։ Զի յոյն լեզու գրեթէ հասարակաց ծանօթ էր հռովմայեցւոց, մանաւանդ գիտնոց, և ընտանի լաւին բարբառոյ և ազգախառնեալ 'ի նա։ Այսու ուսուցանէ Որատիոս և այլոց լեզուաց թէ զինչ արժան իցէ առնել յայնպիսի դէպս կարևորս։

55. Ընդէր իցէ հռովմայեցւոյն շնորհել Կեկիլիոսի և Պղաւտոսի հին քերթողաց զազատութիւն ստեղծանելոյ նոր բառս 'ի նոր դէպս, և զլանալ տալ զայն այժմուցս Վիրգիլեայ և Վարիոսի։ Եթէ կարեմ և ես սակաւ ինչ նոր ստացուած գտանել, ընդէր նախանձու բամբասիմ, մինչդեռ նախնիքն՝ Կատոն և Էննիոս քերթող՝ կարացին նորանոր բառիւք ճոխացուցանել զլեզուն հայրենի։ Ըստ որպէս յայնժամ, նոյն և այժմ միշտ օրէն է նորահնար բառս ստեղծանել առ հարկի իրացն։

62. Թող զայդ, նոյն իսկ առօրական և ծանօթ բառք յետ երկայն ժամանակաց փոփոխին. առաջինքն հնանան և խափանին և այլք 'ի տեղին յաջորդեն. և լինի այս յամենայն կենդանի լեզուս։

65. Զաւեռնեան լիճն իմանայ, զոր խառնեալ ընդ Լուկրինեան նաւահանգըստին և ընդ ծովուն և ամբարտակաւ ամրացուցեալ՝ նաւահանգիստ մեծ կազմեաց Օգոստոս կայսր, և նմին իրի գործ արքունի կոչէ։ — Ամուլ ճահիճն էր լճակ մի նաւարկելի երբեմն, պոնտեան կամ պոմպտեան ասացեալ. որում լիր արկեալ դաշտացոյց Կեթեգոս ոմն անուն, և այնուհետև արօրադիր եղեալ տայր արդիւնս։ — Իսկ գետ վնասակար երբեմն անդաստանաց էր Տիբերիս, որոյ յառաջն ընդ այլ ճանապարհ անցեալ ողողանէր և աւերէր զդաշտս. և ապա Օգոստեայ հրամանաւ փոխեցաւ յայլ յատակ՝ ընդ որ անվնաս անցանիցէ, յորում և կայ մնայ մինչև ցայսօր։ Այսպիսի հաստատուն և յաւիտենական իսկ կարծեալ գործք մարդկան յաւուր միում կործանելոց են, թող թէ փոփոխական յողդողդուն և թեթև ընդ օդս ցնդելի բարբառքս, որ ըստ դէպս դէպս անկանելոց են և յառնելոց։

Կրելով զծանր արօր ըղմնասաւոր կերակրէ շէնս,
Յաւագոյն ուսեալ շաւիղ թէ գետ զընթացըս իւր փոխեաց
Ծարարոցն եղեռնաւոր, կորիցեն գործք մահկանացուք,
Ոչ թէ պատիւ բարբառոց և շնորհ կացցէ յաստիս յաւժի ։
Որ անկեալքն են շատք անդրէն կենդանասցին, և շատք անկցին
Որ արդ կան 'ի պատուի բառք, թէ այնպէս ինչ հաճեսցին պէտք,
Նր որում են դատաստան՝ օրէնք խօսից և իրաւունք ։

Արքայից զօրավարաց գործք քաջութեան և մարտք ահեղք
Թէ որով չափովք ոտից եղցեն 'ի վէպ՝ եցոյց Հոմեր ։
'Ի տաղից անհաւասար զուգելոց նախ եղերք երգոց
Յետ ապա բերկրապատար սըրտից իմաստք պարածըրեցան ։
Իսկ ո՛ հայր և առաջնորդ եղերերգուաց մըրմնջոց ձայնից,

74. Թէ որով ոտիւք տաղից գրելի իցէ գիւցազնական վիպասանութիւնն, յորում վիպել առնու քերթողն զգործս քաջութեան և զահեղ մարտս գիւցազինն ուրուք, եցոյց Հոմերոս՝ անզուգական և գրեթէ միայն կատարեալ գիւցազներգակ որ գրեաց զԻլիական և զՈդիսական քերթածս իւր վեցոտանի չափովքն հելլենացւոց ։ Զնոյն արարին և այլք որ զկնի եկին քերթողք, ոչ միայն հելլէնք, այլ և հռոմայեցիք, որ յամենայնի նմանողք գտան Յունաց. զոր օրինակ Վիրգիլիոս յիւրում Էնիականին, որ միայն արժանին է 'ի նախնիս զկնի Հոմերի թուելոյ ։ Այսու յայտ առնէ Որատիոս, թէ գիւցազնական քերթածն մեծագոյն և վեհ չափովք է գրելի, զոր և ընկալան իսկ ամենայն լեզուք, որպէս և բնութիւնն ինքնին ուսուցանէ ։ 'Ի մերումս պատշաճագոյն թուի 'ի վիպասանութիւն ազատօրէն քառանդամն նախնեաց 'ի քառավանկ աւարտեալ անյանգ վերջիւք, զորմէ լիով խօսեալ եմք 'ի յառաջաբանի Մշակականայն Վիրգիլեայ ։ Եթէ և զձայնայանգ յաւելուլ ոք յայն կամիցի, ոչինչ հակառակիմք որոց սիրեն զգեղութեան կապանս, միայն զի թէ հնար ինչ իցէ՝ ըստ արժանի յանգք իցեն ընդարոյս բառիւք իմաստից, և ոչ աղքատական նմանաձայնութիւնք կամ օտարոտի բանադրութիւնք ։ — Սոյն մեծագոյն չափովք գրեցին Հելլէնք և Հռոմք և զվարդապետական քերթուածս, որպէս զՄշակականն Վիրգիլեայ և զքերթողականս Որատեայ, և զամենայն քերթած փոքր մի ընդարձակագոյն ։ Իսկ 'ի մանունս՝ զհովուերգութիւնս, յորում գերազանց քան զամենեսին է Թէոկրիտոս յոյն և հետևող նմին Վիրգիլիոս ։

76. Եղերերգական տաղն, որով նախ զաշխարանս իւր երգեցին և տաղս զուրախականս եւս, առ Յոյնս և հռոմայեցիս 'ի տունս տունս բովանդակի երկատողս, որոց առաջինն է վեցոտանի, երկրորդն հնգոտանի. այս է ասելն՝ անհաւասար զուգեալ տաղս ։ Յեղերերգակ քերթողս որ կան 'ի նախնեաց՝ գերազանց քան զամենայն է Տիբուլլոս հռոմայեցի, զի հելլենականքն չեն 'ի միջի ։ Առ այս տաղս և առ այսպիսիս ազատ են մերքն 'ի կիր առնուլ զոր և է պարզ և խառն աղցս չափոց ։ Իսկ ձայնայանգք աւելորդ արուեստակութիւն թուին 'ի տաղս արտամալից և ողբանուագ սրտի ։ Սակայն ընտրեսցէ ոք որպէս և ախորժէ 'ի համառօտ քերթածսդ ։

78. Եղերերգուաց մրմնջոց ձայնս՝ զնոյն նախասացեալ եղերերգութեանն առէ, որոյ ոտից գտօղն կամ հանդիսացուցիչ չէ յայտ հաւաստեաւ, որպէս գիւցազնականին Հոմերոս, թէպէտ և ոմանք զՄիմներմոս կողոփոնացի առեն լինել ։ Եւ մեղմ կամ մանրանուրբ առէ զեղերերգութիւնն վասն անատութեան իմաստիցն և կարճութեան բոլոր տաղիցն, և վասն երկրորդ տողիցն կարճութեան, որ որպէս ասացաք՝ չեն վեցոտանիք իբրև զառաջինսն, այլ հնգոտանիք ։

Մաքառին քերականք, և տակաւին վէճն 'ի դատ կայ։
'Ի յիւրն 'ի Մեծամերձ զԱրքիլոքոս զինեաց զայրոյթ.
Զնոյն ոտն ընկալան կատակերգակք և ողբերգակք,
Որ 'ի դէպ զրուցատրութեան և յարմարուած իրաց ծնեալ,
Եւ յաղթական շշնջմանց բազմաժողով հրապարակին։
'Ի քնար և 'ի տաւիղ ետ Մուսա զդիս և զդիւցազունս
Եւ զյաղթօղ բռնամարտիկն և զերիվար դուպարայաղթ
Եւ ըղձութեան պատանեաց և զհամարձակ նուագել գինիս։

Զպայմանեալ յեղանակս և զգեղեցկածոյ պահել զերանգս
Թէ չկարեմ կամ թէ չգիտեմ՝ ընդէ՞ր քերթող եւս ողջունիմ.
Ընդէ՞ր ընտրեմ թիւր ամօթով անգիտանալ քան ուսանել։
Կատակաց իրք չառնուն յանձն ողել տաղիւք ողբերգականս.

80. Մեծամերձ ոտն է երկավանկ, առաջինն սուղ՝ երկրորդն երկար. զոր հնարեցաւ, ասեն, Արքիլոքոս հնաւուրց քերթող, և նովին գրեաց զերգիծաբանութիւնս իւր առ զայրացմանն ընդդէմ կնոջ իւրոյ և աներոյն Լիկամբեայ։ Բայց կէսք առաւել հաւանեցուցանեն զի-ըն ոչ վասն հնարելոյն իմանալ, այլ վասն յինքն սեփականելոյն զոյն ոտն և յաճախել և քաջ 'ի կիր արկանելոյն, որպէս հոմեր զվեցոտանեան. զի ասեն թէ կային մեծամերձականն չափքն և յառաջ քան զԱրքիլոքեայ բարեկութիւնն։ Զնոյն ոտն ընկալան և ողբերգակք և կատակերգակք, իբրև յարմար 'ի խօսակցութիւնս թատերաց և 'ի գործողութիւն, և ուժգնութեամբ ձայնին բաւական 'ի յաղթել շշնջմանց բազմութեան ժողովելոցն 'ի տեսիլ խաղուցն։ Իսկ թէ այս մրցէս, գժուարաթարգմանելի է մեզ այժմ։ 'Ի մեզ պատեհագոյն թուի 'ի թատրոն և նմանագոյն աշխուժից մեծամերձին՝ ազատորէն քառանդամն նախնեաց եռավանկ ատարտեալ վերջիւք, զորմէ անկար կեալ եմք 'ի ծանօթութեան (7) յառաջաբանի Մշակականացն Վիրգիլեայ. թէ առ խորժէ ոք՝ յաւելցէ և 'ի սոյն զձայնս յանգս. թէպէտ և ոչ յոյժ 'ի դէպ ինչ թուի մեզ այդ 'ի բնական զրուցատրութիւն կերպ թատերաց, մանաւանդ կատակերգութեան։

84. Քնարական քերթութեան նիւթ ետ երգոց Մուսա աստուածուհի տայցէ՝ զգովեստս դից, դիւցազանց, բռնամարտաց և երիվարաց յաղթողաց յասպարէս մրցանաց. որպիսի են տաղք Պինդարոսի և ոմանք Որատեայ՝ գերագոյն քնարերգականց. և զսէր տարփից պատանեաց և զզուարթութեան և զազատագէմ գինեբրբուս. և զայլ ևս այսպիսի մանր նիւթս զուարճալիս և սիրականս. որպէս են, օրինակ իմն, տաղք Անակրէոնի և Կատուղլոսի և ոմանք Որատեայ, որ և երկքեան իսկ անզուգականն են յայսմ կարգի։ Քնարական քերթութեան ոտք և չափք զանազան են առ Յոյնս և Հռովմայեցիս և առ ամենայն ազգս. այլ և խառն իսկ վարին 'ի տունս տունս։ Նոյն ազատութիւն է և առ մեզ, որում և օրինակք բազում են 'ի նախնեաց և յարդեաց՝ անյանգ և յանգիւ որ յայս ազգ քերթութեան առաւել 'ի դէպ թուի։

87. Վասն զի պայմանաւոր եղանակք և իբրև նկարուց երանգք են և կերպարանք իւրաքանչիւր ազգի քերթածոց, և անձնիւր իրաց յազգի անդ, և միոյ միոյ մասանց իրաց, և բնաւ իսկ ամենայն իմաստից և ասացուածոց ըստ տեղեաց տեղեաց և ըստ դիմաց խօսելեաց. որում պարտի միտ դնել քերթողն և ըստ այնմ յարմարել զազգ՝ ոտանաւորին և զօրինակ ոճոյն և զհանգամանս. ապա թէ ոչ՝ չէ արժանի անուան քերթողի։

90. Զառնուն յանձն, թէ ըստ փոքր մի զանազանութեան ոտիցն, և թէ ըստ վսեմական ոճոյն։ Զի թէպէտ և կատակերգութիւն և ողբերգութիւն մեծամերձիւք չափէին, որպէս ասացաք յառաջն, սակայն գոյր խտիր. զի էր ինչ ոտն՝ որով ա-

Սոսկական և արժանի կատակերգակ ոտից նուագք
Ի չարին թէ վկայեսցին Թիեստական կոչնոց ընթերցք :
Պահեսցեն իւրաքանչիւր ըզվիճակեալ կարգ վայելուչ .
Բայց սակայն ամբառնայ և կատակերգ երբեմն ըզձայն
Եւ ուռուցեալ բերանով կագի Քրեմէս ծանրացասութեամբ ,
Եւ հետեւակ միշտ բանիւ բազում անգամ ողբերգակ ;
Պեղէոս և Տելեփոս վտարանդիքն և տառապեալ
Մերժեն երկոքեան ըմպուլս և զբառս կանգնաւորս ,
Թէ փոյթ վայրիւքն առնիցեն շարժել բողոքիւ լսողականին :

Բերթուածաց չէ բաւական գեղեցկութիւն , լիցին քաղցունք ,
Եւ զոգի ունկնդրողին յոր և կամին տանել ածցեն :
Ծերդ խնդացան ընդ խնդացողս՝ նոյն ընդ լացող լան դէմք մարդկան .
Արտօսր յինէն թէ խնդրես՝ նախ քեզ վայել է սուգ ունել .
Յայնժամ քոյդ աղէտք հարցեն զիս Պեղէեւ դու կամ Տելեփէ .
Զանկարգ անճահ թէ խօսիս՝ ծիծաղեցայց կամ նիրհեցից :
Թախծադիմին դէպ են տխուր , սրտմտելոյ՝ սպառնալից ձայնք ,
Խայտացելում՝ ցընծալի , ծանրաբանին՝ լուրջ և ըզգօն :
Զի բնութիւն նախ ընդդէմ առ ամենայն բախտի պայման

ռատել վարէր աղաստօրէն կատակերգակն 'ի մեծամեծերջական չափս իւր քան զողբերգակն . և զի 'ի նմին չափին իսկ հանգամանօք դարձուածոյ ոճոյն զանազանէին :

92 . Թիեստէս էր եղբայր Ատրէոսի . և անկեալ ընդ կնոջ նորա Երոպեայ՝ ծնաւ երկուս կամ երիս որդիս , զորս առաջին մերժուցն սպանեալ Ատրէոսի՝ ետ 'ի կերակուր Թիեստեայ , և զարիւն նոցա խառնեալ ընդ գինւոյ՝ ետ ըմպել նմա . յորմէ սոսկացեալ , ասեն ; արեգական յայնպիսի մերժագործութենէ՝ դարձաւ յետս , զի մի տեսցէ զեղեալսն : Արդ , օրինակ իմն , այս նիւթ ողբերգական ոչ ների՝ թէ կատակերգակ ընդելական ոտիւք և ոճով ճառեսցի :

94 . Սակայն է ուրեք՝ զի և կատակերգութիւնն բարձր և վսեմ ոճով խօսի ըստ տեղւոյն . որպէս Քրեմէս կարի սրտմտեալ առ Տերենտիոսի նատին կատակերգակի : Եւ ողբերգակն երբեմն միջակ և ընդելական խօսի ոճով . օրինակ իմն , Պեղէոս յաղքատս և Տելեփոս աղքատացեալ՝ զմեծամեծ և զուռուցեալ բառս մերժեն , եթէ ողբովքն կամին շարժել զսիրտս ունկնդրաց : Պեղէեւս՝ կամ Պեղէոս Եակեայ որդին և հայր Աքիլլեայ՝ սպանեալ զեղբայրն զՓոկոս , արտաքսաման եղեալ էր 'ի հայրենի աշխարհէն յԵգինեայ , և 'ի Թեսալիա ինքնահալած շրջէր : Տելեփոս որդին Հերակլի արքայ Միւսացւոց՝ վիրաւորեալ յԱքիլլեայ , և 'ի պատգամաց լուեալ թէ չիք այլ դարման վիրացն , բայց եթէ նովին տիգաւն Աքիլլեայ շփեսցի , յաղքատի և յողաշաւորի կերպարանս մատեաւ առ Աքիլլէս 'ի բանակն խնդրել բժշկութիւն :

100 . Յայս վայր աւանդեալքն 'ի գեղեցկութիւն քերթածաց հայէին , այլ չէ շատ՝ գեղեցիկ միայն լինել վայելուչ կարգաւ և յօրինուածով . լիցին և քաղցր , այսինքն շարժողական , հոգեշարժ , սրտահաճոյ , բարացուցական , գործական և խանդաղատելի , որ զսիրտ և զոգիս լսողին շարժիցեն յոր կողմն և կամիցին՝ թէ 'ի յօրինուածի անդ քերթածին , և թէ յարտասանութեանն 'ի թատեր , որպէս և բացայայտէ զնի :

Յերիւրեալ ըղձիւք ախորժէ, կամ թէ դրդէ 'ի բարկութիւն,
Կամ յերկիր ծանրաթախիծ սըգով հալէ տառապագին,
Ապա լեզուին թարգմանաւ ըղկէս հոգւոյն անէ 'ի դուրս:
Եթէ բանք խօսողին չիցեն բախտին իւր համեմատ,
Սեպուհք հռովմայեցիք և ամբոխքն բարձցեն քրքիջ:
Խտիր մեծ է թէ աստուած և թէ դիւցազն ոք խօսիցի,
Ծեր հասուն, թէ ծաղկափթիթ տիօք աշխոյժ երիտասարդ,
Կին տիկին տիրաւհի, եթէ դայեակ ոք ժըրագլուխ,
Թանգար վաճառական, թէ բուսաբեր անդոյ մշակ,
Կողքի, եգեւրացի, յԱրգոս սնեալ թէ 'ի Թեբէ:

Կամ համբաւոյն հետևեա կամ թէ պատշաճ յօրէա, քերթող.
ԶԱքիլլէսըն փառացի եթէ յատեան բերցես հանես,
Անվեհեր, բարկաբիրտ և ամեհի և անողոք՝
Ու օրէնս իւր գիտիցէ, յոյս զամենայն դիցէ յիւր զէն:
Մեդէ լիցի անողորմ և անընկճելի, Ինով ողբալի,
Անհաւատ Իքսիոն, Յով թափառոտ, տրտում Որեստ:
Թէ անփորձ և անսովոր ինչ ընծայես 'ի տեսարան,

118. Եգեւրացին 'է կոլքիսեցի, որպէս յայտ է: Արգոս էր գաւառ և քաղաք Պելոպոնիսոյ. Թեբէ մայրաքաղաք Բիովտիոյ: Թէ և 'ի Նմին ազգէ իցեն խօսելիքն, որպէս հելլէնացի, սակայն և այն ևս խտրելի է՝ թէ յորմէ գաւառէ կամ քաղաքէ. զի ըստ այնմ ևս փոփոխումն բարուց և ոճոյ երևի:

119. Եթէ յաւանդութենէ հին վիպասանից առեալ ինչ է զոր քերթեսն, կամ ընկալեալ համբաւոյն հետևեցիր, կամ յարմարականս ինչ իւրն ստեղծցիր: 'Ի համբաւուց աւանդութեան օրինակ տայ զհետագայ անուանսդ: — Աքիլլէս յայտնի է 'ի հոմերական քերթածոցն, ըստ որում համառօտէ իսկ աստ զնկարագիրն: — Մեդէ կամ Մեդիա էր կին Յասոնի առարգիական նաւորդօք, որ 'ի փախչելն 'ի հօրէն սպան զԱբսիրտոս զեղբայր իւր կրտսեր, և ապա յարհամարհիլն 'ի Յասոնէ՝ սպան առաջի նորա զամենայն որդիսն իւր: — Ինով էր դուստր Կադմեայ, որոյ փախուցեալ 'ի ժանտութենէ առնն իւրոյ Աթամանտեայ արքայի Թեբացւոց՝ առ ցաւոցն արկ զինքն և զորդին իւր Մելիկերտ 'ի ծով, և փոխեցաւ ինքն 'ի Լեւկոթէէ կամ Մատուտա աստուածուհի, և որդին 'ի Պալեմոն դիս ծովու, որ և Պորտումնոս կամ Պորտունոս ասի: — Իքսիոն էր արքայ Թեսալիոյ, որ նենգաւ ընկեց զԴէիոն զաներ իւր 'ի գուբ հրեղէն և կորոյս, ապա յանդգնեցաւ խարդաւանել 'ի սէր իւր և զհերա աստուածուհի՝ զկին Արամազդայ: — Յով դուստր էր Ինաքայ արքայի արգոսացւոց կամ արգիացւոց, սիրեցեալ յԱրամազդայ, և առ քինայն հերայ փոխեալ յերինջ. և 'ի բռնոյ չիթեալ և մոլեգնեալ՝ թափառական շրջեցաւ մինչև յԵգիպտոս, ուր ամուսնացեալ ապա ընդ Ոսիրիսի՝ փոխեցաւ և եղև Իսիս աստուածուհի: — Որեստ էր ուստր Ագամեմնոնի և Կլիտեմնեստրայ, որ 'ի վրէժ անարգանաց և մահու հօրն՝ սպան զմայրն և զհոմանի նորա զԵգիսթոս, բայց 'ի խղճէ մտացն, կամ ըստ առասպելին՝ 'ի դժոխական դահճացն 'ի կատաղեաց տանջեալ՝ տրտում և սգաւոր էր, և մոլեգնեալ իսկ 'ի թատերս ձևանայր: Այգորիկ վիպասանութեան աւանդից օրինակք:

125. Իսկ թէ անծանօթ ինչ և նոր գուստեղծանիցես, ծագէ 'ի ծագ քերթածիդ միօրինակ պահեսցի դրոշմ և արժանք նը-

Այլ դժուար լինի նորագիւտ կերպարանել հանրածանօթս,
Այն նըման պահեսցի միշտ՝ 'ի սկըզբանէ ցըկատարած :
Դըժուարին զհասարակացն է սեփականս ստեղծանել .
Լաւ իցէ զԻլիականն արկանել քեզ տաղս 'ի հանդէս,
Քան անլուրս 'ի մէջ բերել և անծանօթս յառաջագոյն :
Որ ինչ նիւթ աշխարհական՝ քեզ սեփական լինել եղիցի,
Յարհամարհ 'ի բացերև զու սահմանեն թէ կացցես ոչ,
Եւ թարգմանն հաւատարիմ բառ ընդ բառի փոխել տացես,
Եւ 'ի կիրթ նըմանութեան վարեալ անկցիս յանձուկ ուրեք,
Ուստի ելս ոչ ներեսցեն ամօթ և կամ գործոյն օրէնք :

Մի՝ որպէս պատմերական քերթողն երգեսցէ ըսկըսանել .

կարագրեալ՝ զոր՝ միանգամ 'ի սկզբան առժանեցեր 'ի նմա :

128 . Ցերիս միտս առնուն մեկնիչք զասացեալ հասարակացն : Մի՝ զընդհանուր ինչ և տարտամ նկարագիրս, ամենեցուն կամ ազգի մարդկան առ հասարակ պատշաճեալս : Երկրորդ՝ զառ 'ի յայլոց ստեղծեալս և զյառաջագոյն ասացեալս : Երրորդ՝ զոչ ուրուք տակաւին քերթեալս և ինքնահնարս : Ըստ միտս և առցի հասարակացն, զերեսին օրինակաւ ևս դժուարին է սեփականս քերթողաբանել, այսինքն իբրև յատուկ և սեփական ինչ քերթեալ անձինն կամ քերթողին : Բայց յորոց զինին յարէ՝ թուի թէ առաւել ըստ երրորդ մտաց առեալ է յՈրատեայ հասարակացն, ըստ որում ասէ իսկ, թէ լաւագոյն է ըղծանօթ Իլիական վէպսն հոմերականս առնուլ քեզ ողբերգել, քան նորս ինչ և անծանօթս ամենեին յառաջ բերել. և թէ՝ յայլոց ասացեալ ծանօթ իրն քեզ սեփական ինչ եղիցի, եթէ ոչ 'ի կանխաւ ասացելոցն սահմանի բևեռեալ կայցես կամ թարգմանիչ լինիցիս, այլ նորս ինչ 'ի վերայ ծանօթական իրացն ստեղծանիցես :

134 . Տես ևս՝ մի առ երկիւղած և հաւատարիմ նմանութեան և անխոտոր մտաց յընկալեալ աւանդիցդ սահմանի, որ չվայելէ քերթողի, անկցիս ևս 'ի նեղ ուրեք, ուստի ելս ոչ տացեն քեզ ամօթ և կամ օրէնք գործոյն : Իմա՝ ոչ կարասցես ոչ յառաջ երթալ յարարեալսդ առ անճողոպրելի անձուկ տագնապին և ընդդէմ ելանելոյ օրինաց և բնութեան ձեռնարկեալ գործոյդ, և ոչ յետս դառնալ առ ամօթոյ տկարութեանդ մասն և առուր և գուշակ լինելոյ : Եւ եթէ բուռն տարեալ զկարգ և է օրինակաւ ելս ինչ գտանել մարթասցես ըստ քո խելացդ, սակայն և այնպէս ծաղրու կացցես նշաւակ :

136 . Զպատմերական կամ ներբողական քերթողս ըստ երիս յեղանակս իմանան մեկնիչք : Առաջին՝ որ զպատմութիւն ինչ 'ի սկզբանէ մինչև ցկատարած իւր կարգաւ իբրև ծայրէ 'ի ծայր շղթան առեալ պատմէին 'ի շարս իւր մանր մանր քերթուածոց՝ որում և անուն կարգայքն պար կամ շղթան վիպասան 'ի մի քերթուած գումարեալ : Երկրորդ՝ որ ըստ օրինակին Հոմերի զիւր տրոյական պատերազմին, կամ զոր փոքր մի յառաջ և զկնի, 'ի չափաւոր իմն շղթանի կամ սահմանի պարագրեալ երգէին : Երրորդ՝ որ շղթաբերական քերթածս նուագէին 'ի պարս տօնից : Թերևս մարթ էր յաւելուլ և չորրորդ մի, որ երգէին զիւրս բովանդակեալս 'ի խառնագիր մատեանս անգ, որոյ վիպասանական շղթան կոչէր անուն նորա, և ունէր զամենայն հնոցն առասպելախառն աւանդութիւնս : Մի 'ի սոցանէ, և հաւանօրէն յառաջնոյ կարգէն է և յիշատակեալդ աստանօր, որ զխորոտապատանծ սկիզբն գնէ : Բարթեղեմի, յՈւղևորութեան կրտսերոյն Անաքարսեայ (գլուխ Զ), Լեսքես քերթողի համարի զայդ, այլք Անտիմաքոսի ուրումն շըրջաբերականի. զոր և ծաղր առնէ Որատ հաշուակաւոր առակաւ երկանց լերին և ծննդեան մկան֊ծաղրականի, որ առ նոսա ամենեւին պատշաճի՝ որոց մեծամեծս փքացեալ խոստանան, և ոչինչ կամ չնչին ինչ վճարեն : Ուր գիտելի է և այս, զի առաւօտ գուշումն 'ի լատին բնագրին թէ ըստ

« Ըզ Պրիամեան երգեցից բախտ եւ զմեծապանծ ճակատամարտս ։ »
Զինչ պարծօղդ այդ արժանի այսքան պատառ բերցէ զոչման.
Ծնցեսցեն լերինք յերկունս եւ ծնցի մուկն ծաղրալից ։
140 Բանիբուն վայելուչ եւս՝ այն որ ոչ ինչ նիւթեալ անդէպ.
« Զայրն ասա, Մուսա, ինձ՝ որ յետ աւուրց առման Տրովայ
Բազմազգեան ոգւոց տեսեր ըզբարս եւ ըզքաղաքս ։ »
Ոչ ծուխ ՚ի փայլականց, այլ ՚ի ծխոյ հնարէ տալ լոյս.
Զի սքանչելիս զարմանազան բերցէ ՚ի վեր այնուհետեւ,
ԶԱնտիփատն եւ զՍկիւղլայն ընդ Կիկլոպայ եւ զԽարիբդիս ։
Ոչ ըզդարձ Դիոմեդեայ ՚ի մահուանէն Մելէագրի,
Ոչ ըզմարտըն տրովական ՚ի յերկուորեակ ձուոց հինու ։
Միշտ ՚ի կէտն իւր փութացեալ եւ զունկնդիրն յափշտակէ

գոչման մեծախօս ձայնիւքն իմանի. եւ թէ ըստ հագագայքն հատածին cantabo et. զոր չէր մարթ եւ ոչ հարկ ինչ նոյնպէս առնել եւ ՚ի հայումն. այլ փոխանակեցաք ընդ այնր զպատճառութիւն բերանաբաց այլ տառին ։

140. Այն որ ոչինչ նիւթէ անճահ՝ Հոմերոս է, որոյ Ոդիսականին սկիզբն են երկտղքին տողքդ թարգմանեալք յՈրատեայ համառօտելով եւ զերիս տողսն Հոմերի յերկուս ամփոփելով ։

143. Գոռոզախօս սկզբունք որ յետոյ յոչինչ լուծանին, նման իմն են բոցոյ յարդի՝ որ տայ ծուխ միայն հանէ. իսկ հանդարտ եւ անպաճոյճ սկսուածք իբրեւ մեղմով իմն ծխին նախ, եւ ապա բոց մեծ արձակեն ՚ի լուսաւորել եւ ՚ի ջեռուցանել ։ Այսպիսի են մեղմական եւ զգօնական սկզբնաւորութիւնն Հոմերի, որ եւ հանէ իսկ ապա ՚ի լոյս զյիշատակեալ սքանչելիսդ. օրինակի աղագաւ, զԱնտիփատ արքայ Լեստրիգոնաց զմարդակեր, որ լափեաց զմի յընկերացն Ոդիսեայ, զՍկիւղլա եւ զՔարիբդիս՝ զերկոսին քարաժայռս ՚ի սիկիլեան նեղուցին, զառասպելեալսն ՚ի կին մարդ կամ ՚ի խառնակերպ հրէշ. զՊոլիփեմոս Կիկլոպեան՝ զհսկայն միականի եւ զահաւոր, որ ծախեաց զվեցեսին ընկերս Ոդիսեայ յայրի անդ իւրում, ուստի հազիւ ճողոպրեցան այլքն խորագէտ հնարիմացութեամբ. եւ այլս յոլովս զորոց չէ աւելորդ երկարել ։

146. Դիոմեդէս մի ՚ի դիւցազանց տրովական մարտին, էր որդի Տիդեայ եւ թոռն Ինէոսի արքայի Ետոլիոյ. իսկ Մելէագր կամ Մելէագրոս էր հօրեղբայր Դիոմեդեայ, եւ սպանեալ ՚ի կուրետեանց կամ կուրետաց ՚ի պատճառս կալիդոնեան վարազին ։ Արդ ասէ Որատ, թէ ճարտար քերթողն առ ՚ի սկսանել օրինակ իմն զդարձն Դիոմեդեայ ՚ի տրովական պատերազմէն ՚ի տունն՝ ոչ սկսանի ՚ի մահուանէն Մելէագրի հօրեղբօր նորա, ՚ի կարի իմն վերուստ եւ հեռուստ, որպէս կարծի արարեալ Անտիմաքոսի քերթողի ։

147. Լեդա դուստր Թեստիոսի արքայի Ետոլիոյ յղացեալ յԱրամազդայ, որպէս առասպելեն, ծնաւ ըստ ոմանց ձու մի, յորմէ ելին երկուորեակք Հեղինէ կամ Հեղինէ եւ Պոլիդեւկէս. ըստ այլոց երկուս ձուս, յորոց ՚ի միոյն ելին Կաստոր եւ Պոլիդեւկէս, ՚ի միւսմէն Հեղինէ միայն կամ Հեղինէ եւ Կլիտեմնեստրա ։ Այս Հեղինէ որպէս յայտ է, առեւանգեալ ՚ի Պարիսէ տրովացւոյ պատճառ եղեւ տրովական պատերազմին ։ Արդ երկրորդ օրինակաւս ասէ Որատ, թէ ճարտար քերթողն իբրեւ զՀոմերոս՝ զտրովական պատերազմն ոչ սկսանի ՚ի ձուոց անտի երկուորեկաց, կամ որ նոյն է՝ ՚ի ծննդենէն Հեղինեայ, այսինքն կարի իմն ՚ի վերուստ եւ ՚ի հեռուստ ։

148. Վիպասանն քերթող, նոյն եւ թատերականն, ոչ ՚ի ծայրէ կարգի սահմանեալ վիպացն սկսանի զքերթուածն իւրեւ պատմական օրինօք, այլ ՚ի նպատակին իւր արագելով անդէն եւ անդ առնու արկանէ զլսօղն ՚ի մէջ յոգնախուռն անկուածոյ իրացն վիպելեաց իբրեւ ՚ի յայտնի ինչ լսօղին թէ ցայն վայր հասեալ իցեն իրքն ըստ յառաջագոյն անցիցն անցելոց, զոր լռեալն է եւ զոր յետոյ ապա յետու վայել-

Ի խառն անդ խրացն 'ի մէջ ոչինչ ընդհատ իբր 'ի յայանիս ։
Զոր չյուսայն յօրինուածով գեղեցկանալ թողու 'ի բաց ·
Ու այնպէս խմին սրտէ՝ պատիրս 'ի ստոյգըն խառնելով,
Զի ոչ մէջն ըսկըզբան՝ ոչ միջոյն վերջն օտար գըտցի ։

Զոր ինչ ես և ժողովուրդն ընդ իս խընդրէ, աղէ դու լուր ։
Թէ ցանկաս ծափահարի վարագուրացն ակն ունելոյ
Բազմելով ակըմբահոյլ մինչև երգիչ ծափ տուք ասէ,
Զհասակաց իւրաքանչիւր նըկատելի է քեզ ըզբարս,
Յեղյեղուկ բնութեանց անձնիւր և տիոց տալ զիւր վայելուչն ։
Որ ըղձայնս հընչել գիտէ և հաստատուն հետս հարկանել
Ընդ իւրում համատիոց կայտռէ մանուկ խաղալ խայտալ ·
Սայրապար ցասնու լըռէ և փոփոխի ժամէ 'ի ժամ ։
Ընծրուս պատանին՝ զերծ հուսկ ուրեմն 'ի դայեկէն՝
Ձիովք, ասպականեօք և յարեգջեր զուարձանայ դաշտ ·
Իբր ըզմոմ յախտըս կակուղ, առ խրատատուս ողընդըրժնեայ,
Պիտանեաց պըղերգ 'ի փոյթ, դահեկանաց վատնիչ շըռայլ,
Բարձրայօն, ցանկասէր և սիրելոյն շըյտ անտեսօղ ։
Ի դառնալ յօժարութեանց՝ հասակ և սիրտըն այրական
Բարեկամս և գոյս խընդրէ, պատուոյ պատկառ կայ և փառաց,
Զգոյշ լինի չգործել ինչ՝ որ ստըրջասցի ապա փոխել ։
Տառապանք բազմադիմի շուրջ տագնապեն ըզծերունին ·
Զի գանձեալ՝ ժուժկալէ հէքն 'ի մըթերից, վարել զընդայ,
Կամ զի բնաւին է իրաց երկչոտ և ցուրտ մատակարար,

չապէս 'ի պատշաճ տեղւոջ · զոր օրինակ Հոմերոս յՈդիսականին՝ Ոդիսեայ տալով պատմել զառաջինսն, և Վիրգիլիոս յԷնէականին Էնիայ ։ Եւ զոր մասն ստոյգ պատմութեանն չյուսայ թէ գեղեցկասցի արուեստիւ և հանճարով, 'ի բաց թողու զայն, և փոխանակ այնր զկեղծիսն այնպէս յօդէ ընդ ճշմարիտն, զի ամենայն մասանքն 'ի սկզբանէ ցվախճան համեմատ և պատկանաւոր գտցի քերթածն ։

153 · Համուռք քերթութեան արուեստի խըրկն զիս, և ռամիկն՝ որ հասարակաց միտք և բնութեամբ դատի անխաղ ։

154 · Եթէ ցանկաս զի որ ծափս հարկանելոյն են 'ի նշան հաճութեան և գովութեան, նստեալ մնասցեն և սպասեսցեն առ հեշտութեանն ամենայն փոփոխմանց վարագուրացն, մինչև 'ի վերջին փակումն արահակի թատերին՝ որ զվախճան հանդիսիցն նշանակէր, և մի 'ի գուսանացն կամ պարն երգեցողաց ազդ առնէր զայն ասելով ցհանդիսատեսսն Ծափս հարէք կամ Ողջ մնացէք և ծափս հարէք ։ Եթէ ախորժակից ունկնդրութեան քերթածիդ ձեսս, խնամով ճշգրտեսջիր զնկարագիր բարուց իւրաքանչիւր հասակի · զորս և համառօտէ ըզանչելի ճարտարութեամբ և մանր զննութեամբ յայն ինչ 'ի լեզու և յոտս ելեալ մանկանէն մինչև ցծերն ։

Զյապաղկոտ, երկայնամիտ, յոյժ և անձկոտ համբերելոյն,
Զերժուարահաճ, տրտմադէմ, գովիչ աւուրցն տղայութեան,
Զմարտաւորեալ և զանհոգ պատահօղ մանկագունից:
Զհիւր բաղում բերեն տանէին եկեալ անցեալ առք ընդ խուռեանս.
Մ'ի գուցէ զարժան ծերոյն տաս պատասխանոյ, զառնչըն մանկան.
Որ ինչ յանուն և որ պատշաճ ահոյն խորհն՝ յայն կացցուք միշտ:

Կամ գործեն իրք 'ի Թատերս և կամ եղեալք վիպասանելին:
Խուռնագոյն շարժեն զոգիս որ ընդ ականջսըն անցանեն
Քան որ դնին ինքնատեղ հաւատարիմ աչաց հանդէպ,
Եւ անձամբ հանդիսատեսն անձին իւրում աւանդէ զայն:
Սակայն մի զարժանն 'ի ներքս անդ գործելոյ՝ տար 'ի տեսիլ.
Եւ բարձեալ շատ ինչ յաչաց՝ պերճ ապա բան պատմեսցէ յայտ:
Մ'ի զմանկունս առն յանդիման ժողովրդեան սպանցէ Մ'եդէ,

172. Երկայնամիտ խնա որ երկայն յուսով տարակ ակնկալութեան խորամ. յոյլ, գանգատ, պերճ և տաղտուկ. իսկ անշխոյժ տաղտկայի, գիտելոյ զինչ վասնգեան ծնանիցի, կամ չանհկացող այլ եւ տղայոյ կենաց:

175. Սակ եկեալք մինչև 'ի հասարակաց կենացն՝ զայլով գան և բերեն բաղում բարիս և գիտութիւնս զարգան և անձնական հասակին. իսկ յետ այնորիկ անցեալ զընացեալ առք՝ եւ թալով երթան և տանին ընդ խորհանս զամենայն զոր ինչեանք բերին և զոր մարդս ջանիւ և աշխատութեամբ ստացաւ, և թողուն զծերութեան արուեստ, զօս և տառապեալ: Մինչև 'ի կես տիոցն՝ գալ և բերել տարին առք, զի յաւելուած բարեաց առնէ. իսկ անտի և անդր՝ գնալ անցանել և 'ի բաց տանել, զի կորուստ և նուազութիւն բարեաց լինի: Առաջնոցն բարեաւ եկիր առք, իսկ երկրորդացն ոչ նոյնպէս:

177. Որ ինչ յանուն և հարկաւ կից է ընդ բնութեան ամենայն հասակին, կամ որ թէ և չիցէ հարկաւ կապեալ ընդ հասարակաց բնութեան հասակին, սակայն պատշաճիցի նմա, յայնս կացցուք, 'ի նոսին դեգերեսցուք:

178. Եթէ 'ի կերպն բաժանմանց զերկրորդ կին ընդհանուր բաժանումն բովանդակ քերթութեան խմացուք, 'ի դէպ է և այն. զի ամենայն քերթութիւն կամ գործական է՝ որպէսամենք զկրան 'ի տեսիլ ածեալ 'ի Թատեր, կամ վիպասանական՝ բանիւ եւթ նկարագրեալ: Բայց յանձկագոյն մասն Թուի խօսել աստ Որատեայ՝ զԹատերական քերթածոց միայն, յորս է զի յայտ յանդիման ձեւանան իրքն, և է զի յաղեբերեալթս ուրեք խրագործեալքն պատմին:

182. Թէպէտ և ազդողագոյն է տեսիլ աչաց քան լսուր ականջաց, սակայն գոն մի որ ինչ չէ արժան արտաքս 'ի հրապարակ Թատերն ցուցանելոյ՝ հանել 'ի տեսարան անդր, այլ Թողուլ յաչաց, և ապա վայելչապէս ուրեք յետ զպատմութեան նորա 'ի բերանոյ ումուք խօսելոցն առաջի հանդիսին: Որ ինչ ոչն է 'ի հրապարակ անդր Թատերն կամ խաղերգեալ եղեալ՝ 'ի ներքս ինչ ուրեք լինել համարի: Գործեցէ յայտ բնագիրն առէ անդ տեառջինկաց. առհասարակ խմանան յայտ յանդիման առաջի ժողովրդեանն. սանք խմանան եւ իրք որ անդ 'ի լինել իրացն՝ առաջինկայ ականատես լեալ իցէ անցիցն անցելոց: Բայց պատմելոյն ինքնին խմանի ականատես լեալ. Թողզի և մարթի ևս ուրեք զհաւատարիմ լուեալսն պատմել: Իսկ թէ զորալիսն ինչ իրս անարժան գտանիցէ արտաքս երևեցուցանելոյ, յարէ զինի զաղետալիս և զանհաւատալիս:

184. ԶՄեդեայ տես 'ի 119. զԱտրէոս կամ Ատրէոս 'ի 92: Իսկ Պրոկնէ կին Տերեոսի 'ի խնդրել զվրէժ անարգանաց իւրոց և զաղծութեան քեռն իւրոյ Փիլոմելայ. մատուցանեալ ընդ նոյն քեռն՝ սպան զորդի իւր և զՏերեոսի զԻտիս, և ջամբեաց

Յայտնապէս Ատրեւս ժպիրհ մարդկան ընդերս եփեսցէ մի,
Կամ դարձցի Պրոգնէ 'ի հաւ կամ թէ Կադմոս 'ի վիշապ օձ.
Զոր այսպէսն ինչ ցուցանես՝ անհաւատեալ և ատեամ իսկ:

Նա որ կամի ցանկալի լինել և գալ կրկին յատեան,
Մի՛ քան զհինգ հանդէս նուազ և մի երկար ինչ լիցի վէպ:
Մի՛ դիք միջնորդեսցեն, բայց թէ կնճիռն արժան բազկի
Նկցէ 'նդ առաջ, և մի դէմք խօսել չորրորդ լիցին աշխատ:
Պարն ըստ դուսանի և այրական հարցէ պաշտօն,

'ի կերակուր առն իւրում. և 'ի փախչելն 'ի սրամտութենէ նորա՝ ինքն փոխեցաւ 'ի ծիծառն, Փիլոմելա 'ի սոխակ, Տերէոս 'ի յոպոպ, Խտիս 'ի փասիան: Ըստ ոմանց առասպելաբանուաց Պրոկնէ 'ի սոխակ, և Փիլոմելա 'ի ծիծառն. բայց ըստ առաջնում օրինակին ունի և Ովիդիոս յԱյլակերպութիւնսն, ուր հաւաստի քննութեամբ զառասպելդ դնէ և ոչ հարևանցի յիշատակաւ: — Կադմոս որդի Ագենորայ սպանեալ զվիշապ մի 'նուիրական Արէսի, ապա իբրև ամենայն տունն 'ի բազում վիշտս տառապանաց մատնեալ լինէր, 'ի քաւութիւն վիշապասպանութեան մեղացն աղաչեաց զդիս փոխել զինքն յօձ. և լսելի լեալ՝ դարձաւ 'ի վիշապ: Այսպիսի զարմանագործ պատմութիւնք մարթեն մասն ունել 'ի վիպասանութեան, բայց ոչ և արդեամբք ձևանալ 'ի թատերս:

189. Զի մի կարճութեամբ 'ի նեղ անկանիցի և կարի երկարութեամբն տաղտուկ լինիցի ունկնդրաց ողբերգութիւն կամ կատակերգութիւն, չափ իմն դնէ նոցա Որատիոս, մի երկարել և մի կարճել քան զհինգ հանդէս կամ արարուած. որ են բաժանմունք և ընդհատութիւնք խաղոյն փակմամբ և բացմամբ վարագուրին, զոր և ռամկօրէն վարագոյրս կոչեմք: Այս բաժանումն հինգ թուոյն իբրև օրէնս պահեցաւ սովորաբար առ հինսն. բայց յետին դարուց քերթողք ապախտ արարին իբրև զոչ կարևոր ինչ, և արդարանան: Զի մեծութիւն և բաժանումն հանդիսից 'ի ճոխութիւն նիւթոյն հայի, և ոչ յայլ ինչ: Վասն որոյ և Որատեայ պատուէրն ոչ ըստ թուոյն առնլի է, այլ մանաւանդ ըստ քանակի նիւթոյն որ 'ի հնգամասն բաժանման անդ բովանդակէր առ իւրով ժամանակաւն: Զայս այսպէս արժան է իմանալ. և ոչ թէ զի անհիմն ինչ և մտացի ուսուցանիցէ Որատիոս զդատն:

190. Դիք 'ի թատերս կրկին օրինակաւ է երևել: Մի՝ իբրև զմի 'ի դուսանաց անտի խօսելեաց և գործելեաց խաղուն. զայս ոչ արգելու Որատիոս: Իսկ միւս ևս 'ի մէջ գալ է դից՝ աստուածական զօրութեամբ յանկարծակի երևեալ 'ի լուծանել զհանգոյց ինչ կամ զկնճիռն իրաց. յոր ըմբռնեալ քերթողին և յանհնարս մտեալ բնութեան կարգաց լուծանելոյ՝ զդիս առնու 'ի թիկունս աջակցութեան հանճարոյ իւրոյ: Արդ մի յամենայն դուզնաքեայս այսպիսիս՝ զդիս կամ զաստուածեղէն գերագոյական կարողութիւնն առնուր, ասէ, միջնորդ, այլ դուն ուրեք՝ ուր կնճիռն ինչ մեծ և արժանի մատին նոցա պատահիցէ:

191. Առ խորշելոյ 'ի խառնակութենէ և դիւրահաս առնելոյ զդէմս և զկերպս խօսելեացն՝ աւելորդ հրամայէ խօսել 'ի թատերն չորից դուսանաց ընդ միմեանս 'ի միում տեսլեան. այլ երեք բաւական են յաշխոյժ զրուցատրութիւն: Իսկ թէ առանց չորրորդ մարթիցի, չէ ինչ ընդդէմ: Բայց մարթի երևել ևս բազմութեան 'ի պէսս պէսս առանց խօսակից լինելոյ ընդ երիսն:

192. Պարն 'ի թատերս հնոյն խումբ մի էր դուսանաց յամենայն կարգէ մարդկան կամ դից ըստ պէտս իրացն, որք ետեղակալք կային անդէն 'ի թատերն իբրև ականատեսք և վկայք իրացն. և երբեք երբեք խօսակից լինէին ընդ երից բուն խաղացողացն, բայց 'ի բերանոյ միոյն որ պարագլուխ կամ դասապետն կոչէր: Իսկ գլխաւոր գործ նոցա էր նուագել տաղս ինչ յընդմիջել արարուածոց հանդիսիցն: Արդ [illegible] դուսանի և այրական պաշտօն՝ միոյ դիմի, միոյ խաղացողի գործ իմանի, միոյ առն լսուի: Այսինքն է, 'ի խօսելն մի խառն 'ի

Եւ մի՛նչ մէջ հանգիստին արարուածոց երգեսցէ նոյն
Որ ոչ կըշիռ դէպ և դէպ հասուցէ յուշ նըպատակին :
Նա բարեաց Թիկունք լիցի և սիրաբար խորհրդական ,
Համ գիցէ զայրացելոց և զմեղաւորացըն սիրեսցէ .
Պողեսցէ զսուղ սեղանոյ նա լինքն ըղձաշըս , նոյն զօրէնս ,
Զարդարութիւն փըրկութեան և զըլրնացաց խաղաղութիւն .
Նա զխորհուրդըս պահեսցէ , գիցըն մաղթանս հանցէ ուղղերս
Զի դարձցի առ հիքացեալս և գնասցէ բախտ 'ի զօռողաց :

Եւ երբ այժմ յարոյր կապեալ սըրինգ փողոյ նախանձաւոր
Մայլ նուրբ նըւագ պարզական երգեմն 'ի ծակ սակաւութիւ՝
Մ՚ըրմընջել և օժանդակ պարուն լինել էր օգտակար ,
Ընչածին ըղձև յոգնախուռամբ լըցեալ ակուամբ բազմականին ,
Որ Թըւով ապաքէն սակաւաւոր յայնժամ ամբոխ
Եւ ցածուն և պարկեշտ և պատկառոտ գայր ժողովէր :
Իսկ ըսկիզբն երբև առատ զանազըս լայնել նա յաղթական ,
Եւ պարիսպ ընդարձակ շուրջ զստամնիւըն բոլորել ,
Եւ 'ի տօնս անապատուհաս երեկամեալ զըւարթ գինեօք ,

խուռն գնդովքն խօսիցի , այլ 'ի գիտնոց միայ-
ուոն՝ պարագայիւրն . և յերգելն ընդ մէջ
հանգիստիցն՝ մի ստորոտի ինչ նուաղեսցէ
որպէս առ կարի վաղեմական երգեմն .
այլ զխրատուորս իրացն և զխոստովանութեան
հանդիսին , որպիսի Սոփոկլեայքն են : Եւ
երբև այր բարի և իմաստուն խրատս օգ-
տակարս հնեսցէ 'ի տաղսն , բարեաց 'ի
Թերէ կացցէ և խորհրդական , և այլն . զդո-
րովք զանց արարեալ քերթողքն 'ի կարգի
խաղուն , գնէր առաս 'ի բերան պարուն
վսեմական ոճով քնարերգականաւ : Տես
զոր ինչ աստանօր զուղղութեան և զբա-
րոյից խնամս առ նախնիսն :

198 . Դանարաց առն խաղաղութիւն ,
զի ուր 'ի ժամանակս պատերազմի կամ
խռովութեան ամենայն գրոցնք փակին
ընդդէմ հինի կամ Թշնամեաց , խաղաղու-
Թեան եկեալ բանայ , և ամենեքին յան-
հոգս և յապահովս կեան զգամնքս բացե-
լովք :

199 . Խրատեսցէ խորհրդապահ լինել
զաղտնեաց . և խնդրեսցէ 'ի դից , զի բա-
րեբաստութիւն և յաջողուած դարձցի ե-
կեսցէ առ տառապեալսն , և ելեալ գնասցէ
'ի բաց յամբարտաւանից 'ի բռնաւորաց :

201 . 'Ի հնագունիցն Թատերս սրինգն
միակ էր , և պարզ՝ չև յերկուց 'ի մի զօ-
դեալ արուրով , կամ 'ի յոդուածոցն ա-
զոյցս լամբեալ և կամ յայլ ինչ մասունս
առ 'ի զարդ : Եւ սակաւ ծակամբ միայն
սուլէր , և ոչ երբև 'ի նախանձընդդէմ ե-
կեալ փողոյ՝ ուժգին և խրոխտ հնչէր .
և բաւական էր 'ի լնուլ զփողս և զպատ
ժողովարանն : Իսկ երբև մեծացան Թա-
տերքն և յաւելաւ ժողովուրդն , ընդ նմին
և Թիւք և չափք երաժշտականք սաստկա-
ցան , երկու սրինգք արուրով զօդեցան ,
ամենն սակաւս ունելով ծակս և քաղցր
աւաչ , իսկ ձախայն բազում ծակօք և գո-
չումն խրոխտահնչական : Զի և տգէտ շի-
նականք ընդ ազնուականս խառնեցան
խառնեցան 'ի լուր , որոց բնիկ լսելիք ուժ-
գնագոյն ձայնից և եղանակաց կարօտանան
'ի շարժել :

203 . ζάθεον . ըստ այլ օրինակաց՝
ἠγάθεον . Իմացեալ ոչ զհռովմէից եւեթ ,
այլ և զայլոց քաղաքաց հռովմէական տէ-
րութեանն , յորս և կային իսկ Թատերք :

210 Մինչ 'ի Թիւս և 'ի չափս յանդըրդմութիւն մեծ եկն անկար։
Զի որխմորն և 'ի յերկաց այն ինչ մնացեալ զինչ գիտակէ
Ընակամն 'ի վեհ խառնեալ քաղաքացի, չարն ընդ բարին։
Որպէս շարժումն և զեղխումն ած որընդահար 'ի հեռն տառեալ,
Այլ զպատմուածսն 'ի Թատերս ընդ քարշ եարկ յերթևեկս.
Որպէս իսկ անձկեալն ձայնք 'ի քընարն ըղգձնական,
Այլ բարբառ օտար հընչեալ լեզուն ձայնս և պերճաբար՝
Պիտանեաց բան հանճարեղ և ընեթեաց նախապաշար
Եւ ընդհատ երևեցաւ 'ի դեղփաղութ խոր պատգամաց։

Եր ընդ անարգ նախաղէն ողբերգական տաղիւ մարտեաւ,

213. 'Ի հին 'ի պարզ արուեստն յաւել զշարժումն, զաշխոյժս նուագացն և զեռանդուն շարժուածս ձեռաց և զկայթս և զկաքաւս ոտից. և զզեղխութիւն, զշռայլութիւն ծակուց սրնգին և յորդեալ խըրախտական ձայնից նորա, և զհանդերձանաց համօրէն Թատերին, և առանձինն զպաճուճանաց զգեստուցն. բաց որում և յարէ իսկ, Թէ՝ և զպատմուածսն երկայն վերջաւորք քղանցաւորք 'ի քարշ տարեալ 'ի Թատերին յերթևեկելն յաջ կոյս և յահեակ, որ օրէնն իսկ էր պարուն 'ի կալն և 'ի նուագել յանդիմանաշրջեալ հանդիսիցն։

218. 'Ի նմին ժամանակի յորում այդ փոփոխումն լինէր 'ի սրինգն, յայնժամ և 'ի քնարն զգձնական՝ 'ի մեծարոյ և 'ի խոհական, որոյ նախնեաց երեք միայն էին աղիք, յաւելան այլ ևս ձայնք՝ լարք ձայնատուք մինչև 'ի չորս և տասն յեօթն։ Եւ լեզու քնարերգակին տաղաչափից օտարացեալ 'ի նախնի պարզական փկեմախոսութենէն, սկսաւ զգաստանս և սրամտօրս ճառատել՝ բարձրախօս լինել կարծելով. մինչև բանն հանճարեղաց, փոխանակ պիտանի և հանդերձելոցն կանխագէտ խրատուք խնամատարապն լինելոյ, պատ 'ի պատ փնփնուածոյ օձնաձև նմանեցաւ խորաբան և անիմանալի հրամանաց պատասխանւոյ և ըղձութեանց դեղփական պատգամախօսին, որ 'ի Դելփիս յապոլոնեան տաճարին յեռոտանւոյն բարբառէր գիւթական հարցուկն Պիւթիա։

219. Ողբերգակ քերթողաց մրցանակ յաղթութեան և հանճարական լինելոյ քան զնոկերան էր նոխազ, իբրև նուիրական Ցաղանդաւորանաւին՝ յորոյ 'ի տօնսն սկսան խաղք աշխարհիկք, յորս և զոհէին նմա նոխազ, յորմէ և նոխազերգութիւն ևս տաղաւ ողբերգութեանն։ Այդ ողբերգակ քերթողքն առաջինք, 'ի զուարճութիւն և 'ի զբօսանս ժողովրդեան, 'ի խաղս անդ կամ 'ի միջոցս արարուածոցն ածէին ևս 'ի տեսարան զերբայապանս այծամարդոց կամ մարդայծից, որ եկն հրեշք ինչ խառնակք 'ի մարդոյ և յայծէ կամ 'ի պայէ, նախագրոտուածք. և մերկ երևէին ընդ կերպարանօքն՝ խայտեալ միայն ածեալ 'ի ծածկոյթ երեսացն։ Եւ առանց ինչ ամենևին ծանրութեան իւրում, ողբերգութիւն կամ ողբերգական անձն խաղացող՝ խաղատնէր ընդ նմա և նա ընդ սմա զաւեշտաբար և աղու բանիւք, մանաւանդ 'ի կծանել զայս ոք և զայն, և հեշտացուցեալ ըղբօսեցուցանէր զժողովուրդն, որ առձեռաբար յետ զոհից տօնական աւուրց գայր խմբէր 'ի Թատրն կերել և արբել և յամենայն կարգս օրինաց արձակ։ Այսպէս անոն սկիզբն առեալ և երգիծարան քերթողաց, որպէս և անունն իսկ յայտ առնէ 'ի յունին լեզու։ Բայց պատուական Հորատիոս մայելապէս առնել և զայս խեղկատակութիւն, և մի նուաստացուցանել զդրաւոջագոյն հանդիսացեալ մեծափառ գիւցազունս իբրու զաշխարհաւանդիկս ռամիկս. և մի գարշեալ փոխանակ կամելով զհողն և զամպս ընթանել, անոսր փըքովք ուռնուլ կամ օգաքանս և սրամտօրս ճառաբանել։ Այլ այնպէս խառնել 'ի խեղկատակութեանն, որպէս մեծարոյ ոք տիկին զի պարելով երևէ 'ի խաղալ 'ի տօնս գիցամարդն. քանզի և ողբերգութեան անվայելուչ է թեթևութիւն ցոփութեան։ Արիստոփանեաց հեղինակ կատակերգակի իջուցեալ այր մի յերկնից, և հարցեալ թէ զինչ ասէր, այդ պատասխանէր. Քերթողս անյոգս ազանդաղարածանական առողջ.

Հոլանեաց ըղձիւ ուրեմն և զարմանազարդն վերջերնիս ,
Այլ անվըրդով ծանրութեանըն խըստակեցանն եառ խաղալ .
Զի յախորժ նորութեան զբաղեցուցէ և 'ի հանդէսս
Զհանդիսատեսն յետ զոհից ըզգլխերջն զարբեցեալն ։
Այլ պէտն ըզնահապատարայն սպասեցուս և զծաղրածուն
Ընծայել այնպէս եղէ , այնպէս ըզարբըշխնս 'ի խաղ շըրջել ,
Զի որ աստուած որ 'ի մէջ և որ դիւցազն որ մատուցի
Յատաշն յանկի պայծառ ու 'ի ծիրանիս պըճուճանաց ,
Յաշխարհանանեաց 'ի նըսեմ մի զբաղեցցի նըւաստ բանիւ ,
Կամ յերկրէ 'ի բաց անցեալ՝ զհողմըս և զամպս ըմբռնեսցէ ։
Անթեւութեան վիժել տաղս ողբերգութեան լեալ անպատեհ ,
Իբր յաւուրըս տօնական հարկաւորեալ բանաստեղծ 'ի խաղ՝
Այնպէս զոյգն ընդ ամօթխած 'ի խեղկատակըսն խառնեսցի ։
Զանպաճոյճ և զտեխական բըռնել անուանս և զբայս եթէ
Զաւեշտաբար բանահիւս ոչ սիրեցից ես , Պիսոնեանք ։
Յերանգոյն ողբերգական ոչ ջըգնեցից ցայն դառնալ ,
Մինչ ոչինչ դընել խտրիր՝ Դաւոս իցէ որ խօսիցին ,
Այէ յանդուգըն Պիւթիաս կըթեալ քանքար 'ի Սիմոնէ ,
Այէ սանական զեց Սիլենի զաստիարակ և սպասաւոր ։
'Ի յայտնեաց տաղ քաղեղծից՝ զոր ամենայն որ յուսասցի ,

որ ընդ հողմս և ընդ ամպս վարգէին՝ ժողովել մէգ և փոսք 'ի պէտս տաղիցն ։

234 . Վարգապետս քաղ տասցեալն 'ի գիրս ուրեք , վերջակէ թուի զըշխադրոյ՝ փոխանակ մարգարտոյ գրելոյ , ըստ որում խառնակ ինչ կենդանի 'ի մարգոյ և 'ի պայծ . վարգն ոչինչ թուի նշանակել ։

233 . Զբառս և զբայս ոչ պաճուճեալս պըլստացիկ յորջորջմանց , այլ յատուկ և բնիկ ձայնիւք ըստ հասարակաց սովորութեան , զամենայն ինչ իւրով անուամբն կոչելով , թէ զանհեթեթն իցէն և թէ անհամեստ , զայսպիսիս խօսեցից ես 'ի զուարճաբանելս և 'ի խեղկատակել յողբերգութեան . կամ թէ բարեքեցից պարկեշտ և վայելուչ պըլստացութեամբ ։

238 . Եւ ոչ ըմնացայց այնչափ խոտորել յողբերգական ոճոյն՝ պարզութեան ուշ կալեալ , մինչև չզնել ինչ ընաւ խըտրոց ընդ խօսս խաղարկուացն , եթէ Դաւոս առարուկ իցէ որ խօսիցին . կամ Պիթիաս աղախին՝ որ ճարտար խորամանկութեամբ հանէ 'ի Սիմոնէ ծերոյ տաղանդ մի արծաթոյ 'ի կատակերգութեան Լուկիլեայ լատին քերթողի , զոր 'ի կթել այլաբանէ և բնագիրն Որատեայ , եթէ Սիլենոս ազնուական դայեակ և սպասաւոր Բագոսի Սապանդապետութեան գեց՝ իւրում սանուն ։ Ցայնպիսի ծաղրածու խաղս այծամարդաց զաստաղեա պարու կայր մեշտ կերպարանեալ ոճն Սիլենոս ։

239 . 'Ի ծանօթ և 'ի սովորական իրաց առից նիւթ կերծեաց այսպիսեաց տաղից , և 'ի հասարակաց բնական խօսից զկերպարանս ոճոյն , որ այնպիսի դիւրին և հեշտին երևեսցի . մինչև կարծել ամենայն ումեք՝ թէ և ինքն կարող իցէ տանել զնոյն նովին վայելչութեամբ . և սակայն սաստիկ 'ի քիրտն հարեալ և 'ի զուր աշխատեսցի ։ Եւ այսմ պատճառք այն են , զի մեծ և զարմանալի զօրութիւն բնակէ 'ի շարս և 'ի յօդաւորութիւնս բանից , և մարթի յաւելուլ վայելչութիւն մեծ յիրս հասարակաց , եթէ միայն գործել գիտիցէ ճարտարն . և նմին իրի ոչ ամենեցուն է դիւ-

Այս սակայն ձեռն արկեալ տաժանեսցի զբաղման քրքրանօք.
Այնչափ է զօրութիւն կարգի բանից և հիւսուածոյ,
Այնչափ յիրս հասարակաց յանկչին շնորհք վայելչութեան։
՚Ի մայրեաց եկեալ պայք ըղձոյչ կայցեն յիմ դատաւորելոք,
Ոչ իբր գռեհկաց իմն հանգոյն և գող մանկանց հրապարակի
Կամ կարի գողտրիկ տաղիւք ըղձեալ երգեք խանձչացին,
Կամ զազիրս ժայթքեսցեն և լուտանաց խօսք խայտառակ։
Որոց հայր և ստացուած և երիվար է՝ զայրանան,
Ոչ յոր իմն սիսեռան մրրկի կամ ընկուզին հանձի գնօղ՝
Ընդունին մտադիւր և ոչ պըսակս տան պարգև։

Վանկ երկար ՚ի սուղն յարեալ՝ անուն կոչի իւր մեծավերջ։
Սոյն երագ, վասն որոյ և եռաչափ յորջորջանաց
Այս հրամանն մեծավերջեանց՝ իբրև վեցեակ հանէր ոտիւքն.
Յառաջնոյն մինչ ՚ի վերջին նոյն և նման առ հասարակ։

րագիտս։ Զայս գեղ ուղիղ զմարգարայլեյն խաղուց առէ Որատիոս. բայց ճշմարտեալ է և յայլ ամենայն ազգս քերթուածաց։

243. ՚Զպայս զխաղարկուսն առեալ զքերթողն այնց խաղուց կամի ասել։ Ասէ, ըստ իմում դատաստանի, քանզի ՚ի բնէ անտառաբնակ պայքն և ՚ի թատերին անգամ ՚ի մայրեաց եկեալ գան ՚ի դուրս ՚ի հրապարակ անդր, չպարտին իբրև զգիւցազունս ոմանս հանճարաբանել, սակայն և ըղձոյչ լիցին չխօսել գռեհիկս իմն, և մի ըկանենալ հռողիտ և մեղկ բանիւք ողոքականօք, կամ զազրաբանել թշնամանալից բարբառով։ Զի ընդ այնպիսիս զչարին բարեծնունդքն և բարեկեցիկք, որ գոյաւորքն են, և տեարք ձիոյ կամ տարերաց, և սեպուհք կամ պատրիկք՝ որք ունէին հայր ՚ի ծերակուտին, որոց աւագանին հարքն կոչէին. և չհաճին ընդ որ բերանաբաց պակշոտ ռամիկն որ ՚ի հրապարակս գնէ և ուտէ սիսեռն կամ նուշ մըրկեալ։

250. Զոճոյն տաղաչափեալ ցայս վայր, այժմ ասէ զչափոյ ոտիցն թատերական քերթածաց Յունաց և Հռոմոց, այլ միանգամայն միտս տայ և այլոց լեզուաց խրատու իմաստութեան յիւրաքանչիւր չափս տաղից։ Տես և 80։ Երկավանկ ոտն՝ յորում առաջին վանկն է սուղ և երկրորդն երկար, մեծավերջ կոչի. և երկաչափ առ տաղն՝ յորում չորք մեծավերջ կան, եռաչափ՝ յորում վեց։ Նա զի երագոտն է, վասն սուղ վանկին յերկարն թաւալելոյ առհեալ անկանելոյ, և վասն կիսով չափ յաճախութեան ազիցն և խիտ առ խիտ յաջորդելոյ, նմին իրի թէ և վեցեակ բախումն ունիցի վեցիւք ոտիւք, սակայն եռաչափ կոչի մեծավերջեան, զերկու ոտսն ՚ի մի չափ առեալ։ Այս է, թէ և վեց ոտն ունիցի, չափին համարի երեք. ուր ՚ի գիւցազնականն վեցոտանին հաշուին չափք երկոտասան։ Զոր քերթողքն պատուիրեցին կամ օրինադրեցին, զնոյն մեծավերջ ոտին ընծայէ զիմաստաբար. որպէս և զինի՝ զոր քերթողքն ընկալան կամ մերժեցին կամ սոփոփին, զամենայն ՚ի գէմս մեծավերջ ոտին առնու։

253. ՚Ի սկզբան անդ մեծավերջական տաղն յամենայն ոտս իւր ծայրէ ՚ի ծայր անխառն մեծավերջիւք յօդէր. այլ որպէս զի փոքր մի ծանրաքայլ լիցի, ապա ուրեմն ՚ի յետոյն ժամանակս ընկալաւ ՚ի սեփական կայանս իւր զծանր և զգանդաղ համբոյր ոտնն երկավանկ, որոյ երկոքին վանկքն ևս երկար են։ Բայց այսմ ներողամիտ եղև միայն յառաջին և յերրորդ անդրոյք տեղիսն. իսկ ՚ի զուգացն՝ յերկրորդէն և ՚ի չորրորդէն ոչ ետ տեղի մեծավերջն, այլ անխախտ կալաւ զայնոսիկ

Ո՛չ զի խառն ի յամբաքայլ և ծանրագոյն ազդիցի յունկն,
'Ի սահմանսըն Հայրենի զկայուն Համբոյրս առ 'ի մօտոյ,
Ներող ասպընջական, սակայն և ոչ յերկրորդ դաՀէն
Կամ տայր նա տեղի երբէք 'ի չորրորդէն ընկերաբար:
Որ յակկեան սակաւ լըսի պերճ եռաչափս, և 'ի յԷննեանս
Մ՝եծաբերըն ծանրութեամբն 'ի տեսարան արձակեալ տաղս՝
Ի՛զգործոյն շութափելոյ 'ի զգուշաւոր խնամոց անբաժ
Կամ զարուեստին խամութեան բերէ կորանս ամօթապարտ:
Ոչ ամենայն դատաւոր խըռպոտ տաղից լինի Հասու,
Այլ Հռոմ քերթողաց շնորՀեալ ներումն է տարադէպ:
Իսկ արդ յայդ ինչ ապատառն մոլորեցիմ ըստ քիմս 'ի գիր,
Կամ թէ զմեղս ակընյայտնի Համարեցայց ամենեցուն՝
Յուսով թողութեան աներկևան և յապաՀովս.
'Ի ստգիւտից ազատ գըտայ, իսկ գովութեան ոչ արժանի:
Դուք զՀելլէն տիպարս 'ի ձեռս ածէք ըզտիւ ածէք զգիշեր:
Սակայն ձեր գովեցին Հարք ըզպլաւտեան չափս և ըզկատակս,
Յաւէտ իմն ընդ երկոսին ներողաբար ըզբանչացեալք,
Զասեմ յիմարաբար, թէ միայն ես և եթէ դուք
Ըզգեղջուկն և զուարձախօս գիտեմք ըմտրել բան 'ի միմեանց,
Այլ եմք մատամբք և ունկամբ օրինաւոր ձայնից Հըմուտ:

յերկաչափ տաղս: Զնոյն խոս գրեթէ և զդուգից եռաչափին, զորս Հազիւ երբեք ներէ այլում ոտին: Եւ այս մեծամերջ, ասէ, կարևոր և անխախտուտ 'ի զոյգ տեղւոջն ըստ այժմու Ճշգագոյն օրինաց, ոչ պատՀի յեռաչափսն Ակկիոսի քերթողի. և նոյն մեծամերջ կարևոր՝ պատկառեալ 'ի տաղսն Էննիոսի, որ ծանր Համարուբիւքն առաքեալ են 'ի տեսարան անդր, ստգիւտ առնէ քերթողին տագնապափոյթ արագելոյ անՀոգութեամբ 'ի վՃար գործոյն, կամ յարուեստին խակ լինելոյ:

262. Ոչ ամենայն ունկն քաջ խելամուտ լինի անյարմարութեան չափոց ոտից և դաշանց տաղից: Եւ յայսմ մասին, ասէ, անարժան ներողութիւն շնորՀեալ է Հռովմայեցի քերթողաց ըստ քիմս վարելոյ: Զայս ստգտեալ, ապա Հարցանէ՝ թէ յայս ներողութիւն յուսացեալ ըստ կամս անձին զինչ պիտութեան վարեցից 'ի գրելն ինչ, կամ թէ և ամենեցուն յայտնի Համարեցայց զախտալանս՝ անՀոգ և անկասկած գովով յուսով թողութեան անփոյթ ապարէց: Եթէ զայդ առնիցեմ, 'ի մեղադրութենէ միայն զերծ գտանիցիմ կամ առ ներողամտութեան այլոց կամ առ տգիտութեանն, այլ ոչ եթէ գովեստի արժանաւոր եղէց յանաշառ և 'ի բանիբուն կորովեաց: Արդ օրինակ առ յընտրելական տաղից զՀելլէն քերթողսն այնպիսի գովութեամբ, որ չգիտեմ զինչ չարժիցէ յայնպիսի բերանոյ. և սաստիկս բամբասէ զՊլաւտոս լատին կատակերգակն, և զՀինսն՝ որ ընդ նա յոյժ էին զարմանացեալ: Կատակքն, ասէ, գեղջկականք են, և չափք ոտիցն ոչ գեղայարմարք, խառն ունելով յաճախս ոչ միայն զՀամբոյր՝ այլ և զստեղն ոտնն, եթէ ունկն մեր նուրբ ընտրող է օրինաց տաղից, և մատունք մեր ճարտարք 'ի չափել և թուել զոտս բարեյարմարս տաղից:

Զանծանօթ զողբերգական նուագաց ազգ հնարաւորեալ
Աւ սայլիւք շուրջ ըղքերթածս 'ի ձեռն ածեալ ասի Թեսպիս,
Զոր մրրրով զերեսս օծեալք նուագէին և խաղային:
Այելուչ պարեգօտի և դիմակին գտօղ Էսքիլ
Յետ նորա չափաւոր մածոյց ըղբեմըն գերանօք,
Աւ վըսեմս ուսոյց խօսել և հաստատել զոտս 'ի կօշիկ:
Զհետ սոցա հին կատակերգք յաջողեցին մեծ գովութեամբ.
Այլ յեղեան ազատութիւնըն զառածաւ և 'ի վըտանգ
Օրինաց սաստից կարօտ, և լռեալ օրէնքն ընդունելի՝

274. Առաջին սկիզբն Թատերական խաղուց այսպէս աւանդի եղեալ: Ան կարի հնագոյնսն Հելլենացւոց 'ի սպանդարամետական տօնսն նուագէին զԲաքոս կամ Դիոնիսոս, և զոհէին նմա նոխազ, յորմէ այն երգք նոխազերգութիւն աստացան: Եւ ոչ միայն 'ի տաճարս և 'ի քաղաքս տանէին զայդ, այլ և 'ի սայլս կամ 'ի հնձանս այգեկութոց եղեալ, և մրրով կամ ըստ Տիբուլլոսի քերթողին (Եղեր. գիրք Ա. տ. 55) նօթիւ զերեսս օծեալ առ 'ի կերպարանափոխ լինելոյ, այնպէս շուրջ յածեալ երգէին և խաղուք և շարժմամբք ձևացուցանէին զսպանդարամետական վէպսն և զառասպելս, երբեմն և զայլոց դիւցազանցն: Այսմ նախագտող ասէ Որատիոս զԹեսպիս աթենացի. զոր պարտ է իմանալ ըզսայլիցն և զմրրոցն, և զի զոմն 'ի գուսանացն կարգեաց վիպել կամ խաղալ զբաքոսական վէպսն և զայլոց ինչ դիւցազանց. զի միայն սպանդարամետական երգքն՝ երիցագոյն են քան զԹեսպիս ժամանակաւ:

277. Զհետ Թեսպեայ Եսքիլոս համարեաց փոխանակ մրրոյն զդիմակ, և զերկայն պաճուճաւոր պարեգօտ և զկօշիկ կամ զմոյկ ոտից 'ի վայելչութիւն և 'ի բարձրահասակ երևել: Եւ փոխանակ սայլին կառոյց բեմ բարձր՝ խօսարան խաղալեացն, և փոխանակ միոյն երկուս կացուցեալ գուսանս 'ի խօսակցութիւն, ուսոյց վսեմս բարձրաբանել, 'ի բաց ընկեցեալ ըզխեղկատակութիւն: Զկնի Եսքիլեայ ծաղկեցին երկոքին մեծ ողբերգակքն Հելլենացւոց՝ Սոփոկլէս և Եւրիպիդէս. որոց առաջինն մանաւանդ 'ի ծայր կատարման հասեալ է, մինչև Կիկերոնի կոչել զնա աստուածային՝ իբրև զՀոմերոսն և զՊինդարոս: Նոյն եղև և առաջինն որ երիս դէմս 'ի զրուցատրել եհան, աճեցոյց և զթիւ պարուն: Իսկ 'ի Հռոմայոց չիք ոք առ մեզ հասեալ մեծանուն ողբերգակ յիշատակի արժանի:

280. 'Ի զարգանալ ողբերգութեան եկն եհ 'ի վեր երևեցաւ և կատակերգութիւնն առանձինն, որ յառաջն խառն էր ընդ նմա, որպէս ասացաք 'ի 219: Եւ հին ասի նորագիւտն այն, յորում յականէ յանուանէ խաղ առնէին զարս նշանաւորս և հռչակաւորս 'ի ժամանակս ընկերահասակացն աթենացւոց: Եւ իբրև այս յանդգնութիւն 'ի յոռութիւն և 'ի վնաս յոյժ էր կրթեալ, եկն տիրեաց Աղեքսանդր քաղաքին աթենացւոց. և ժողովրդեանն նուաճեալ ընդ սաստիւ թագաւորական իշխանութեան, դադարեցին փոքր մի 'ի չար սովորութենէն: Եւ խելամուտ լեալ այնուհետև ապիրատութեան գործոյն, արժան դատեցան օրինօք ևս արգելուլ 'ի սպառ՝ չառնուլ զուրուք 'ի կենդանեաց զանուն 'ի բերան. որ և եղև իսկ հրովարտակաւ Լամաքոսի: Եւ այսպէս 'ի բառնալ ապերասան համարձակութեանն, պարքն գուսանաց և խաղալկաց՝ որում էր առաւել կըծանել զայլս, կողոպտեալ յիշխանութենէն և յամօթ լեալ՝ լռեցին այնուհետև յանպարտաւան չփացութենէ անտի: Այս յայնմ հետէ սկիզբն առ միջին կատակերգութիւն, յորում առանց անուան յայտնի առնէին և խաղ զդէմսն: Այս և այսմ խափանեալ, եկն եհաս կատակերգութիւն 'ի կատարեալ չափ խոհականութեան՝ յորում և է իսկ ցայսօր: Հնոյ կատակերգութեան օրինակագիր քաջ կայ և այսօր Արիստոփանէս յոյն. միջինոյն և ոչ մի. իսկ նորոյն՝ քաջանուն էր 'ի Յունաց Մենանդր, այլ չիք այժմ 'ի միջի, և կայ նախանձաւոր հետեւող և երկիւզած նմանող նորա կամ թարգմանիչ Տերենտիոս Հռովմայեցի՝ ընտիր և քաղցրաբան:

Կարկեցաւ պարն ամօթով, բարձեալ փառուցն իշխանութեան։
Ոչ թողին ինչ անփորձ և մերասեր բստեղծաբանք.
Եւ ոչ փոքր առին պարծանս հարկանելով ձեռըն յանձին
Ի բռնել զհելլէն շաւիղս և զատտընին իւս հռչակել,
Եւ զլօգկեանս որ ուսուցին և որ զամ մի զպատմուճանեալս։
Ոչ պերճ զինուք ուարութեամբ վեհ քան լեզուաւ գոյր Լատին,
Թէ դեգեր և խարտոցի ձիգըն սատան չէր քերթողաց։
Ով արիւն պոմպիլեան, լերուք տաղից դուք պարսաւիչ
Զոր ոչ աւուրք յոլովք և ոչ քերուածն ընկճեաց երկար,
Եւ ոչ տասնիցս եղընգամբք յըղկեալ կոկեաց յամբոկ գործոյն։

Զի զհանճար քան զհէք արուեստ գերերջանիկ յոյժ վարկուցեալ
Եւ զըզգաստ հանէ քերթողս յՀելիկոնէ Դիմոկրիտոս,

284. Եւ հռովմայեցի բանաստեղծք զամենայնի փորձ փորձեցին և նոքա։ Բայց նախ թարգմանել սկսան զյունականսն. և ապա առ սակաւ սակաւ համարձակեցան թողուլ զհետս նոցա, և յանձանց յօրինել թատերգութիւնս զազգային իրաց։ Եթէ բնիկ հռովմէական վէպն ողբերգական և կատակերգական յաւագորերոյն և յազնուականաց առեալ էր, կոչէր լօգկեան, զի լօգիկս զգենուին նոքա, ժապաւինեալս ծիրանեաւ. իսկ թէ 'ի սոսկականաց էր նիւթ թատերգութեանն, կոչէր պատմուճանեալ, զի հանդերձ էր նոցա պարզ և անպաճոյճ պատմուճանն։ Իսկ 'ի հելլենացի վիպաց առեալ խաղք՝ կոչէին պարեգօտեալք։ Եւ ուսուցանել առին թատերական քերթողք զի ինքեանք ուսուցանէին և կրթէին զդուսանսն և բոլոր թատերն առաջնորդք կային։

289. Դեգեր է երկայն պարապումն մտադիւրութեամբ արուեստին, և խարտոց՝ քերուածն և քերթուածն և յղկուածն տաղիցն մինչև քաջ ողորկեսցին։ Զայդ ահա պակաս գտանէ 'ի լատին թատերգողսն։

290. Արիւն կամ ազգ և սերունդ պոմպիլեան կոչէ զնոյն ինքն Պիսոնեանս առ որս խօսի. զի զարմ նոցա 'ի Նումայ Պոմպիլեայ սերեալ խաղացեալ գայր 'ի յաջորդէն Հռոմուլոսի կամ Ռոմիլոսի նախահօրն հռովմայեցի անուան և կառուցողի Հռովմ քաղաքի։

292. Եղնգամբք յղկել օրինակ առեալ է 'ի ճարտարաց արձանաց կամ փայտի, որ ծայրիւք մատանցն և հարթեալ եղնգանց զննեն զողորկութիւն գործոյն. և թէ խոշորութիւն և անհարթութիւն ինչ կամ գեղութիւն ուրեք գտանիցեն, յղկեն և կոկեն։ Այսպէս 'ի կատարել իսկ գործոյն հանճարոյ ամենայն մասամբք՝ տակաւին մանր քննելի և ողորկելի է մինչև ցինն ամ, որպէս զկնին ասէ 'ի 387։ Բայց հանդերձ այսու չէ պարտ մոռանալ և զխրատն՝ զոր վերագոյն ասանգեաց, թէ՝ որ կարի իմն նրբութեան և ողորկութեան տաղիցն ջան տանի, ջլատէ և կթոտէ զնոսա (27)։

294. Դիմոկրիտեայ փիլիսոփայի ասացեալ էր ուրեք, թէ առանց մեծի հանճարոյ և մոլութեան չմարթի արուեստիւ լոկով քերթող քաջ եղանել, իմանալով զգեղեցիկ մոլութիւն և զհոգեխաղաց հիացումն մտացն՝ որով աստուածարեալ և շնչումն իմն կրեալ իբր 'ի վերուստ և այլ յայլմէ լինեալ, վսեմախօսէ զզարմանալիսն լսողաց և զազդեցականս։ Վկայէ նմին և Պղատոն և Արիստոտէլ։ Այս է տարագիր հանել յՀելիկոնէ կամ 'ի Հելիկոնէ, որ էր լեառն Բիովտիոյ բնակարան Մուսայից։ Ցայս հայեցեալ, ասէ, ոմանք անմտաց և յաչս անձանց քերթողաց՝ գիսախռիւ և անյարգար և վայրենի շրջին իբրև զմոլիս. զի համարին այնու արտաքին կերպարանօք քերթող երևել, եթէ օրինակ իմն զգլուխս իւրեանց չտայցեն սափրել Լիկինոս վարսավիրայի, զգլուխս՝ որոց ոչ եթէ միով, այլ և երիւք Անտիկիւրօք չըմարթի բժշկել։ Եւ է Անտիկիւր կղզի մի յեգէական ծովուն, ուր առատ բուսանի

Եւ զեղընգունըս սըրբել՝ ոչ ըզմօրուս հոգան բազումք,
Ի զանխուլ վայրս ընթանան, 'ի բաղանեաց առնուն հրաժեշտ։
Զի զանուն ժառանգեսցեն ըզքերթողի և ըզպատիւ,
Թէ զերիւք Անտիկիւրօք անբուժելի խելապատակս
Եւ երբէք հաւատասցեն 'ի Լիկինոս վարսավիրայ։
Ո՛վ պանդըղըր եմ որ առ դուրըս գարնայնոյն ըզմաղձ թափեմ.
Եւ ոչ այլ ուրեք քան զիս ըստոյր քերթուածըս յօրինէր։
Այլ չէ ինչ, արդ ես ըսպաս հարից ուրեմն ըզյեսանի
Որ զերկաթ գիտէ սըրել՝ ինքըն նիւաղ հատանելոյ։
Ըզպաշտօնն և ըզգործ, իմ ոչ գըրեալ ինչ, ուսուցից.
Ուստի զանձք մըթերիցին, զինչ քերթողին սընունդ և կեանք,
Զի դէպ, զի ոչ, քաջութիւն մոլորութիւն յո տարցին յում։

Ըսկիզըն ուղիղ քերթութեան է և աղբիւր իմաստութիւն.
Սոկրատեան մատեանքըն իցեն քեզ բաւական նիւթ ընծայել,
Եւ իրին հիւթելոյ՝ բառքըն ինքնակամ գայցեն ըզհետ։
Որ ուսաւ զինչ հայրենեաց՝ բարեկամաց զինչ իցէ պարտ,
Ո՛ր սիրով ծընօղին իցէ՝ որով եղբայր, հիւր սիրելի,
Զինչ ատենակալ, զինչ դատաւորըն ունիցին գործ,
Զինչ պայմանք զօրավարին առաքելոյ 'ի պատերազմ,
Նա գիտէ իւրաքանչիւր ումեք զարժանըն տալ անշուշտ։

վրայի կոչին մաղձագեղ և գարմանիչ խելաց։ Իսկ Լիկինոս էր անուանի վարսավիրայ ոմն 'ի Հռովմ քաղաքի։

300. Եթէ այդ այգայես իցէ և ըստ նոցա կարծեացն պարտ իցէ գալ, վա՜յ եղուկ զիս զանմիտս, ասէ Որատիոս, որ յամենայն մուտս գարնայնոյն մաղձագեղ առեալ սըրբիմ։ Զի եթէ մաղձ պատանութեան, յորմէ և խելաց իսկ առնի խանգար, կարէոր կամ պիտանի ինչ էր 'ի քերթութիւն, ոչ ոք անցուցանէր զինև քերթութեամբ։ Զի մաղձաւոր իսկ աւանդի լեալ Որատիոս։ Այլ չէ ինչ, ասէ. այս է, չէ ինչ մեծ եթէ կորուսանեմ զանուն մեծի քերթողի, և տանեմ զխմաստնոյ։ Այդր ուրեմն, քանզի ես չեմ մեծ բանաստեղծ, գործ յեսանի միայն կատարեցից՝ զայլս սրել. ուսուցից զպաշտօն և զգործ քերթողին, ոչինչ ունելով իմ գրեալ։ Այսինքն զի Որատեայ չէք ինչ բնաւ գրեալ զիւցազնական տաղ կամ ողբերգական և կատակերգական որ բուն գլխաւոր հանգէսքն են քերթութեան։ Բայց զայդ և առ չափաւորութեան և պարկեշտութեան իմա. զի ոչ եթէ չիցեն քերթութիւն և քնարերգութիւնն և խրատական քերթուածն, յորս իշխան է ամենայն նշանին քերթողաց Որատիոս։

308. Սոկրատեայ իմաստասիրի անուամբն իմա զամենայն իմաստասիրաց մատեանն։ Զի որովհետև սոսոյ իսկ, թէ իմաստութիւնն է սկիզբըն և արմատ ամենայն ուղիղ քերթութեան, ըստ կարգի առաջ առնէ 'ի գիրս իմաստասիրաց, անտի լինել պատարել զմիտսն աղցի աղցի հիւթոցն, որոց ինքնին ըզհետ գայցեն բանքն և բառքն 'ի խօսել՝ 'ի պաճուճել և 'ի կենդանացուցանել քերթողաբար, և ոչ թէ փիլիսոփայօրէն անզարդ և ոճս ճշմարտաբանել եւեթ։

Հրամուս նորաձնողին ըղձալոյս և զզարդս տաց պատուէր
Կըրկըտել, և անդուստ 'ի դուրս բերել ճըշգրիտ բարբառ ։
Ի՛ զի աստ անդ զօշոտիչ վէպ և բարուց նրբմնահան ,
Ոչ շընորհ ինչ ունելով ոչ մէտ կըշռոյ և ոչ արուեստ ,
Բնաղցր 'ի քիմս է մեծապէս ժողովըրդեան և զբօսուցիկ ,
Քան թէ տաղք անհիւթաւորք և նուագաւոր մտաց հընչմունք ։
Օ հանճար Յունաց եւ Մուսա՝ Յունաց ողորկ լեզուով խօսել ,
Այն որ ոչ յայլ ինչ ըղձաւ քան 'ի գովեստ էին ագահ ։
Մանկտին հռովմէական կըրթի յուսումն երկայն հաշուիւ
Իզգըրամն 'ի մասունըս կոտորել հարիւրաւոր ։

316 · Նմանող ասի ամենայն բանաստեղծ, որ զկերպարանս բնութեան և զհանգամանս նկարագրել պարտի՝ նմանող նմին լինելով յամենայնի ըստ ընտրական գեղեցկի ճշգրտութեանն ։ Արդ այսպիսումն պատուէր տայ՝ քաջ նկատող գիտող և զննող լինել ամենայն ազգի ազգի բարուց և վարուց, և ըստ այնմ կենդանագրել զնոսա ճշգրիտ կամ կենդանի ձայնիւք, որպէս թէ արգեամբք և կենդանեաւ 'ի միջի կայցեն նոքա կամ խօսիցին, զորոց զկերպարանսն առնու ։

317 · 'Ի ցուցանել թէ քանի մեծ է զօրութիւն կենդանի նկարագրութեան բարուց՝ օրինակ տայ, զի երբեմն վիպասանութիւն ինչ՝ թէ և ոչ այլ ինչ շնորհ ունիցի, ոչ ծանրութիւն ինչ իմաստից և ոչ արուեստ, այլ միայն 'ի տեղիս 'ի տեղիս պայծառ և երևելի իցէ, բայց ճշգրտագործ բարոյացուցական նկարագիր, այն յափշտակէ զժողովուրդն, զաղդն, քան թէ ոտանաւորք անիմաստք կամ անիրք, և լոկ անօտիք քաղցրահնչականք ։ Փոխանակ տաղ անդ կամ ուրէ+ ուրէ+ ասելոյն՝ կէս օրինակք ընթեռնուն խաղ-+ կամ կատակք և զուարճաբանութեամբք · միով տառիւ զանազանելով 'ի լատինն locis և jocis ։

321 · Մուսա, որպէս յայտ է, էր աստուածուհի գպրութեանց, գիտութեանց, երաժշտութեան և ամենայն ազգի ազգի հանճարոյ, և ատանձինն բանաստեղծութեան ։ Ինն քորք էին դստերք Արամազդայ, միով հասարակաց անուամբ Մուսայք կոչեցեալք ։ Ողորկ լեզուն է ճախարակեալ յղկեալ և կոկ բարբառ, որ պարզաբանն կատարումն և ըմբռնմութիւն յայտ առնէ ։ Իսկ ագահն՝ եթէ զանենչացօղն գովութեան և եթէ զճշգրօղն նշանակէ ։ Զի էին իսկ Յոյնք սաստիկ փառասէրք և ցանկացօղք գովեստի, և միանգամայն ուշողք և ժլատք 'ի գովել վարկպարազի զայլս · որով և ինքեանք 'ի փոյթ լաւութեան և քաղցութեան սնգէին զանձինս, և զպարծանս ներբողի տային միայն արժանաւորաց · և երկոքումք այդու 'ի կատարումն ամենայնի խրախուսէին ։ Այս ևս հաշակ գրուառելի յունական հանճարոյն և ողորկութեան տաղից յՈրատեան դրշէն՝ զինչ պարծանք չիցեն հեղլէն քերթութեանց, որոց բաղումք՝ աւաղ՝ չեն այժմ 'ի միջի ։ Զայս Որատիոս յիւրում ժամանակին առներան · բայց մեզ ընդ հեղլենացիսն վայելլէ դասել և զմանս 'ի հռովմայեցւոց, ըզՏերենտ, զԿատուլ, զՎիրգիլ, զնոյն ինքն զՈրատ և զՏիբուլ, որ ոչինչ ընդհատ են 'ի նոցանէ հանճարով և ողորկութեամբ տաղից ըստ ատենիւ լատին լեզուի ։

324 · Դրամն է վեց դանգ, դանգն երկոտասան գարի · չորրորդ մի դանգին կամ երեք գարին տասն ևս թասու · և վեց գարին է կէս դանգ, որպէս ինքնին իսկ յայտ է ։ Արդ առ Յունաց ճարտարութեամբն զհռովմայեցւոցն եգեալ հենգնօրէն, ասէ՝ 'ի հաշիւս ընչից և մեծութեան պարապէին, և քաջք իսկ են · փորձով ցուցից · ասասիկ որդին Ալբինոսի վաշխառուի կամ փոխատուի · ասասջիր դու Ճարտար ես 'ի գիտութեանս ։ 'Ի հինգ գարեաց հանեալ զերկումն՝ զինչ մնայ, ասէ առա ։ Եւ ինքն թէ մանուկն ասասցեալ իցէ առաւ կօրէն երեք, կամ թէ ըստ օրէնս ուսուցողին մանկանց՝ Որատիոս թելադիր լինի զձայն արուեստին քաջալերելով միանգամայն մարզատիրութեամբ, թէ կարէիր ասել թասու ։ Եւ ապա ընդ հենգն կամ 'ի գիմաց լսելեացն ձայն արձակէ գովութեան, թէ հզօր ես դու և կարող 'ի պահպանել և յաճեցուցանել զստացուածս ։

Ի հընգից եթէ գարեաց բարձցին երկուքըն՝ զինչ մնայ.
Գոգցէ որդին Մշլենի. — կարող էիր ասել՝ Թասու.
Մաշ քաջիդ, դու զօրաւոր լիցիս պահել ըզմեծութիւնդ:
Մայլ անդրէն դառնայ գայ մի գարին, արդ զինչ լինի. — կէս դանգ:
Սուր միանգամ ժանգ և հոգ ըստացուածոց յայս 'ի տոգորս
Զոգիսն արբուսցեն, իցէ՞ տաղից յոյս քերթածաց
Որ օծմամբ եղևնիւ կընքեալ սահեստ փայլուն նոճւոյ:

Կամ օգտել կամին քերթողք կամ հեշտութիւն մատուցանել,
Կամ զօգուտ խօսել կենաց և զախորժակ միանգամայն:
Որ զինչ պատուիրեսցես՝ հակիրճ խօսիւք լեր համառօտ,
Զի փոյթ առցեն միտք հըլուք և անկորուստ կալցին ըզբանն.
Ամենայն աւելորդ 'ի թաթաղուն սրտէ զեղու:
Պաճուճեալքն 'ի զուարճութեան պէտըս՝ լիցին հուպ ճըշմարտին,
Մի զորպէս պահանջեսցէ գոլ առասպելդ հաւատարիմ,
Մի զկերեալ վըհուկ ճուաղանն ողջ 'ի պորտոյն հանցէ մանուկ:
Ծերախանք աւագ՝ զտաղս հալածեն անշահեկանս,

Եւ կրկին հարցանէ ցմանուկն, թէ յերկուց գարեաց անտի բարձելոց մին գայ յաւելլու, ոչ 'ի մնացեալ երկոսն, այլ 'ի նոյն յառաջին հինգ թիւն, զինչ լինի: Եւ գտնէ զպատասխանին՝ թէ կէս դանգ, որ է վեց գարի՝ որպէս ասացաք:

329. Ագահութիւն իբրև ժանգ երկաթոյ կամ պղնձոյ մածնու 'ի հոգիս և գըժուարաքինջելի է: Արդ, ասէ, ուր այսպիսի ագահութեամբ առգորիցին ոգիքն, կայցէ՞ անդ յոյս այնպիսի տաղից՝ որ խըղով եղևնեաւ օծեալ պահպանեսցին իբրև գանձ պատուական 'ի նոճեայ սրբատաշ արկեղ: Զի եղևնի խըղով օծանէին 'ի հնումն զմեծարգի գրեանն, և պահէին յողորկ և 'ի պայծառ արկղ նոճի՝ առ անապական մնալոյ 'ի ցեցոյ և 'ի փտութենէ:

331. Ամենայն քերթուած կամ առաւել յուսուցանել ինչ է, կամ առաւել 'ի զուարճացուցանել, կամ զերկոսին միանգամայն խառն գործէ: Արդ եթէ խրատ ինչ աւանդես, լեր համառօտախօս և վճռաբան. զոր սքանչելի օրինակաւ իսկ իւրով ուսուցանէ Որատիոս 'ի բոլոր քերթողականն աստ: Զի ամենայն առաւելադանցն և աւելորդն հոսէ և թափի յուշոյ մտաց իբրև 'ի թաթաղուն և զեղուն ամանոյ, ուր աւելին քան զչափ իւր ոչ մնայ, այլ արտաքս հեղու: Իսկ եթէ առ 'ի զուարճութիւն ինչ առեղծանես, մերձաւորք ճշմարտին լինիցին և հաւանականք. և մի զոր ինչ և կամի առասպելդ պահանջեսցէ հաւատալի լինել, մի յանդգնեսցի իբրև արժանահաւատ ինչ յառաջ բերել. մի, օրինակ իմն, զկերեալ և զկլեալ տղայն 'ի ճիւաղէ կամ 'ի մարդադայլոյ՝ հանցէ կենդանի 'ի փորոյ նորա:

340. Հասունք հասակաւ և ծերունիք անգոսնեն խոտեն և մերժեն զանպտուղ և զանօգուտ քերթածս. իսկ երիտասարդք խրոխտք և բարձրավիզք կամ բարձրամիտք քամահարար անտես առնեն զխստակրօնսն և զխրատականսն: Վասն որոյ զամենեցուն վճիռ հաճութեան հաւանութեան առնու՝ որ զօգուտն ընդ հեշտութեան խառնէ 'ի քերթածսն իւրում: Այնպիսի մատեանն, առ յաճախութեան գնողացն, շահ բազում արծաթոյ բերէ Սոսեանց, գրավաճառաց Հռովմայ. փափագելի եղեալ ինքն յասար աշխարհաց, և անդր ընդ ծովս անցանէ. և հռչակաւոր մատենագրին երկարայաւէտ կեանս յաւելու՝ կենդանի պահելով և յետ մահու զհամբաւ և զանուն նորա յազգս յաւիտենից:

Նըպատակք վըսեմմտական՝ զողոտպատեառակս յընչայց քերթեն.
Զամենայն լընու զհաձոյս որ զակիտանեն խառնէ 'նդ անոյշ,
Ընթերցողին 'ի հեշտանս ընդ նըմին զոյգ և առ 'ի խրատ.
Նայն մատեան շահի Սոսեանց արծաթ, ընդ ծով այն անցանէ,
Եւ երկայն յաւիտեանս հըռչակելով նօթձէ գըրչին.

Սակայն են և յանցանք որոց հաձոյ թըւի ներել.
Զի և ոչ լար զոր կամի ձեռնըն և միտք՝ արձակէ ձայն,
Եւ ըղձթաւ պահանջողին ըղսոսկըն տայ բազում անգամ.
Եւ ոչ աղեղն հարցէ միշտ՝ ուր միանգամ ըսպառնացի.
Բայց ուր բազում լինի փայլէ 'ի քերթածի՝ չստորայց ընդ միտ
Բծաւկաւ ինչ արատ զոր կամ եհեղ անհոգութիւն,
Կամ թէ բնութիւն մարդկային ըստ արժանի չըզգուշացաւ.
Զինչ ապա. զոր օրինակ գըրագէտ դըպիր՝ թէպէտ խրատեալ,
Եթէ զնոյն մեղիցէ ցանգ՝ ոչ արժանի է թողութեան,
Եւ ծաղըր կայ քնարահար՝ որ միշտ 'ի նոյն լար սըխալէ,
Նոյնպէս ինձ գըլթեալըն յաձախ լինի վըխպակըն այն Քիրիլոս
Զոր լաւութիւն երկից ուերիցս հանդերձ ծաղու զարմանամ,
Եւ նոյն ինքնըս ցասնում յորժամ նիրհէ քաջըն Հոմեր.

351. Ակամայ և թեթև թերութեանց ինչ արժան է համբերել և ներողամիտ լինել. զոր և օրինակօք լարի քնարին և աղեղան յայտ առնէ : Զի ակամայն չէ եկեալ 'ի գիտութիւն հօր բանին և ոչ 'ի ձեռս իւր է, իսկ թեթևն՝ իբրև գոյզն ինչ անփոյթ արարեալ է կամաւ, կամ սխալմամբ և անզգուշութեամբ բնութիւն մարդկային ոչ է կարացեալ ըստ արժան բաւականին զգուշանալ 'ի մանունց անտի՝ յաւելեալ ուշն ուղղել 'ի մեծամեծ գեղեցկութիւնսն և յաջողեալ 'ի նոցանէն : Զոյգ ամին բարբառի և Լոնգինոս յայն 'ի ձառի Վսեմին. գլ. լէ :

353. Իսկ զինչ ապա. ուրեմն արդարև մեղնութեամբք արդարացուցանել և անբասիր առնել պարտ իցէ զամենայն սխալումն քերթողաց : Ոչ, ասէ. այլ որպէս դպիր եթէ ցանգ զգուշացուցեալ և ցանգ սխալիցի 'ի նոյն տառս, անարժան հանդիպի ներողութեան, և ծաղր լինի քնարահար՝ որ յար և հանապազ 'ի մի և 'ի նոյն լարի կամ 'ի մատին վրիպեսցի, այսպէս առէպ առէպ սխալեալ և անկեալ քերթողըն, յորում յաձախագոյն են մեղանք և ադեղութիւնք քան զաւղութիւնս և գեղեցկութիւնս, համարեսցի ինձ իբրև զԳիրիլոսն զայն յոյն բանաստեղծ անարուեստ և անհանձար առ Աղեքսանդրիւ մակեդոնացւով. ընդ որոյ եթէ ընդ գովելիս ինչ զարմանայցեմ ուրեք երբեք, սակայն ծաղրիմ ևս ընդ քեմս 'ի վերայ յոռութեանցն, և թէ զկնի ընդ այնքան և այնպիսի անպիտանութիւնս գտանիցին և զարմանալիս ինչ արժանիք : Այս քերթող աւանդի յոմանց այն լինել, առ որ ասացն Աղեքսանդրոս՝ թէ ըղձալի է ինձ 'ի հոմերանի մէպան Թերսիտէս գոլ քան 'ի քումդ Աքիլլէս : Եւ Եւսեբիոս ևս յիշատակէ 'ի Քրոնիկոնին Քիրիլոս զամն անուն, բայց ձնդեամբ յառաջ քան զժամանակն Աղեքսանդրի մեծի, առ առաջնով Աղեքսանդրի մակեդոնացւոց արքայի : Ոմանք զնորին բառն oberrat զքնարահարէն՝ իմացեալ են որ միշտ 'ի նոյն լար գեղերի, որ հարկանէ միշտ զնոյն լար. բայց ուղիղ ոչ է ըստ ամենայն հաւատարիմ մեկնչաց. զի բանն զսխալեալս է միշտ 'ի նոյնս, և ոչ զատաղութիւն յարաձայնութենէ :

358. Իսկ ընդ հակառակն զժգտիմ խոժոռիմ և իբրու ընդ անձին ողորիմ յորժամ

Սակայն յերկար 'ի վաստակ մարթի թէ քուն սպրդեսցի ։
Քերթուած, որպէս նկար, է ինչ՝ որ մօտ եթէ կայցես,
Այլ է՝ որ քաջ 'ի բաց կացեալ ըզքեզ յինքն յանգուցէ.
Սիրէ այս ինչ ըզմութ, լուսով կամի գալ այն 'ի տես
Որ 'ի նուրբըն սրութենէ դատաւորին երկընչի ոչ ։
Գամ մի եղև սա հաճոյ, նա տասն անգամ լիցի՝ կրկնեալ ։

Ով երէցըդ պատանեաց, թէ և ձայնիւ հայրականաւ
Ուղիղ անդըր թեքիս և դու քեզէն ես իմաստուն,
Զայս քեզ առջիր ասացեալ՝ յեռեալ 'ի միտսըդ անմոռաց.
Այն են ինչ՝ որոց ուղիղ շնորհի միջակն և տանելին.
Չափաւոր իրաւագէտ և դատաւոր ոք ատենէն
'Ի պերճախօս Մեսսալայն հեռի դընի քաջութենէ,
Այլ չէ գիտուն յԱւլոսի Կասկելեայ չափ, սակայն յարգի.
Քերթողաց՝ ոչ մարդ ոչ դիք ոչ սիւնք ներեն լինել միջակ ։

ներհէ երբեք ուրեք քաջն Հոմերոս, զայն թեթև աղաւաղութեան անգամ անվայելուչ համարեալ այնքանոյ քաջի և սիրելւոյ քերթողահօր ։ Եւ սակայն 'ի գործս երկայնս իբրև զնորայն՝ չէ ինչ դիւրին յամենայնի ամենայն ուրեք արթուն և զգաստ գտանել և ոչ ներհ առնուլ բնաւ ։ Են որ զբնագրին quandoque իմանալով առս ԵՐԲԵՄՆ, այսպէս յարմարեն զմտաւորն. Ընդ Քերիլոս երկիցս և երիցս հանդերձ ծաղու զարմանամ, բայց և ցասնում իսկ. երբեմն ներհէ և քաջն Հոմերոս, սակայն յերկար վաստակ որպէս 'ի նորայն դիւրին է քնոյ սողոսկել ։

360. Որպէս և Սիմոնիդէս ասէր քերթողն, բանաստեղծութիւնն՝ է խօսուն նկարչութիւն, և նկարչութիւնն՝ լուռ բանաստեղծութիւն ։ Նա բանիւք նկարէ, սա երանգովք խօսի. երկոքեան այլ և այլ միջնորդօք զմի և զնոյն գործ վճարեն զերան կենդանագրել, ուսուցանել, շարժել և հեշտացուցանել ։ Է ինչ որ 'ի մօտոյ բարւոք երևի 'ի քերթածս՝ որպէս 'ի նկարս, և է որ 'ի հեռուստ ։ Իմա զայս թէ զամբողջ քերթածէ, և թէ զմասանց քերթածի ։ Է ինչ որ խնամով յօրինեալ չերկնչի 'ի լուսոյ և 'ի մտադիւր նկատողութենէ, և միշտ սիրելի լինի. և է որ իբր հեռաւոր տարերս ուրուագրեալ միայն հեռի կամ աղօտ տեսութիւն պահանջէ, և ընդ այլ դիտաւոր և կատարեալ մասունս գեղեցկութիւն գործէ, և չակնոտ յինքեանս ևեթ ստանձինն նկատել զայնս. կամ միանգամ ևեթ տեսեալ վեր 'ի վերոյ և 'ի հարևանցի՝ չլինի անհաճոյ, բայց յերկար և մանր զննութեան ոչ ժուժկալէ ։ Այսու ակամբ կամ մտօք հայելի է յամենայն քերթածս, և մի զամենայն միով կշռով կշռել և միով դատաստանաւ դատել ։

365. Դարձուցանէ զդեմս բանին առ երէցն յերկուց անտի եղբարց պիսոնեանց, զորմէ ասէ՝ 'ի քերթութիւն զակատեալ և ոտաքերդութիւնս ինչ յօրինեալ ։ Թէպէտ, ասէ, և բանիւք հօրդ խրատիս յուղղութիւն և 'ի լաւութիւն քերթածոց, սակայն առ 'ի չփութալ քերթող երևել՝ զայս զմտ խրատ քեզ համարեալ յուշ պահեա. զի թէ այլոց գիտնոց կամ ճարտարաց շնորհեալ է չափաւոր, միջակ և տանելի լինել, սակայն քերթողաց ամենևին ոչ ։

370. Վալերիոս Կորուինոս Մեսալա էր ճարտարախօս անուանի ժամանակին, և Աւլոս Կասկելլիոս՝ հզօր իրաւագէտ ։

372. Դիք իմանին Ապոլոն և Մուսայք դիք բանաստեղծութեան ։ Իսկ սիւնք՝ էին 'ի գաւթի ուրեք Հռոմայ, ուր գրավաճառք վաճառէին գիրս, կամ կախէին զնոցանէ զվաճառելի գրեանն և զյայտարարութիւնս նոցին ։ Զմիջակային և զհեռևակ քերթողաց գիրս մերժէին գրավաճառք, և ոչ հանէին յերևան. զի ոչ ոք կայր նոցին առգնող ։ Ըստ այլոց իմանին սիւնք պա-

Որք 'ի հեշտ խրնջոյս փնասեն անմիաբան արուեստականք
Այլ թանձր օծանելիք և ընդ սարդիկ մեղու խաշխաշ,
Զի էր և առանց սոցին յընթրիսըն խրախանալ.
Որպէս տաղք 'ի հեշտութիւն ոգւոց ծընեալք և ճարտարեալք
Եթէ դուն ինչ 'ի բարձուէն ընկըրկեսցին՝ գըլին 'ի ստոր։
Որ խաղուց չիցէն տեղեակ՝ յասպարիսին խորշի զինուց,
Անհըմուտն անուոյ՝ գընդի և շաընչանման նըստի հանդարտ,
Զի մի քըրքիջ աներկիւղ բարձցեն ակումբք կուռ բոլորեալք.
Որ անգէտն իցէ տաղից՝ ժըտի սակայն ըստեղծանել։
Ընդէ՞ր ոչ. ազատ՝ ազնիւ և մանաւանդ դրամից գըլխով
Սակեալ թիւ ասպետական և անարատ ամենևին։
Դու մի խօսիր կամ առներ ինչ յակամայս Աթենասայ.
Այն քո խելք և այն է միտք. իսկ եթէ ինչ հարցես 'ի գրի,
Մըջէ յունկըն դատողին Մետեայ՝ 'ի հօր քոյ և 'ի մերս,

լատեան տաճարին Ապողոնի և մատենադարանին՝ չինելոց Աւգոստեայ հրամանաւ յապարանս իւր, ուր ընթերցեալ լինէին ընտիր ընտիր քերթողացն մատեանք հրմտից քննութեամբ, և տալ գանձեալ անդէն 'ի պահեստ։

373. Օրինակ իմն, որպէս 'ի հեշտալի խրախուռնս կոչնոց՝ փոխանակ օգտի վնասեն անմիաբան անյարմար նուագածութիւնք, և թանձրամած արտաքսնեալ իւղ օծանելի, և խաշխաշն ընդ մեղուն Սարդիա կամ Սարդինիա կղզւոյ, ուր առ դառնութեան բուսոցն դառն է և մեղրն. զի չէր ինչ կարևոր պէտք այդոցիկ, այլ 'ի հեշտութիւն միայն լինելոց էին՝ թէ լինէին ըստ պատշաճի. այսպէս իմա և զքերթուածս։ Սպիտակ խաշխաշի սերմն, ըստ Պլինիոսի, աղանձեալ՝ 'ի սեղան աղանդերոց նախնեացն մատչէր հանդերձ մեղու։

378. Իմա զխաղս մարմնոյ հրահանգաց 'ի կրթարանս արիսեան ասպարիսին, ուր մանկունքն հռովմէական ընդ կիրթ ելանէր։

382. Զայս իմա հեգնօրէն 'ի դիմաց կամ ըստ կարծեաց անհանճար և անարուեստ քերթողի ուրուք։ Զիա՞ ոչ քերթիցեմ, ասէ, տաղս. ո՞չ ապաքէն ազատազգի եմ և ազնուական, և որ մեծն է՝ ըստ հաշուի գլխոց արծաթոյ համարեալ եմ 'ի դաս ասպետաց կամ սեպհաց, որ էր քառասուն բիւր դրամից. և յամենայն սխալէ զերծ, որպէս թէ անմեղութիւն վարուց միայն բաւական իցէ կամ նպաստ ինչ 'ի քաջ քերթողութիւն։

384. Աթենաս էր աստուածուհի իմաստութեան և հանճարոյ և ամենայն ճարտարութեան։ Քո, ասէ, իմաստութիւն և ուղիղ ընտրութիւն այն լիցի, զի հակառակ հանճարոյ քում և բնաւորութեան կամ ախորժակի յակամայ կամս մի ինչ խօսեսցիս իբրև ճարտասան, և մի ինչ արասցես կամ ստեղծցես իբրև քերթող կամ ճարտար։ Եւ գիտեմ թէ այդպէս առնիցես. զի այնպիսի իսկ կամ այնչափ է քո խելքդ և միտքդ։ Իսկ եթէ գրեսցես ինչ, մատիցէ այն յունկն 'ի լսել Սպուրիոսի Մեծիոսի Տարպեայ՝ լաւագոյն քննողի և դատողի քերթուածոց և քերթողաց 'ի նախատեսակալ պալատեան տաճարին Ապողոնի և Մուսայից և 'ի մատենադարանին, այլ և յունկն հօր քոյ և 'ի մերս՝ յանաչառ դատաստանս։ Եւ յետ այնորիկ եւս՝ մատեանքդ 'ի ներքս 'ի տան կամ յարկեղդ պահեսցին զամս ինն, այս ինքն է բազում, առ ուղղել և յղկել եւս քան զեւս։ Զի մարթի ջնջել և կորուսանել զոր չեն է 'ի լոյս ելեալ. իսկ միանգամ 'ի դուրս ելեալ բարբառ կամ մատեան, ոչ եւս այնուհետև գիտասցէ դառնալ յետս։ Զինն թիւն, որպէս եգաք, փոխանակ բազմի առնուն. այլ ընդէ՞ր ինն, և ոչ եօթն կամ տասն։ Թերևս վասն ինուեց եղելոց Մուսայիցն, գից քերթութեան, դստերց Մընեմոսինեայ, որ է յիշողութեան. զի մի ըստ միոջէ յուշ արասցեն նմա զուղղելիսն եղյարմարելիս։

Եւ զինն ամ, մանգաղաթիւղ 'ի ներքս արկեալ, կացցէ 'ի պահ.
Պոյ ջընջել զանուեան 'ի լոյս, ձայն արձակեալ չանձի դառնալ:

Զվայրագ մարդիկ սուրբն Որփէւս և աստուածոց պատգամաւոր
Յարեանց ու 'ի շաղղակեր վարուց կենաց դարձոյց 'ի բաց,
Նստի զվագերս համբաւեալ և զամեհիս կակղել առիւծս:
Եւ Ամփիոն՝ ոստանին պատմի կերտօղըն Թեբայեաց
Ըզքարինս 'ի ձայն փանդռան ղաընչեցուցեալ ոստուցանել
Եւ ամոք ողոքանօք տանել բերել յուպէտ յակամ:
Այս երբեմն իմաստութիւն եղեալ՝ ընտրել բղձանաւոր
Ըզսուրբսըն 'ի պղծոց և զաշխարհին յիրաց անձնիւր,
'Ի մոլար կարձել խառնից, դընել դաշինքս կանոնաձեւաց,
Նման կառուցանել, գրծել օրէնս 'ի տախտակի.
Այսպէս եկն 'ի դիւցական ձայնարարս ու 'ի տաղս անուն և փառք:
Յետ սոցա մեծըն Հոմեր և Տիրտէոս 'ի նուագս երգոց
Զոգիս արիականս յարիական վառեցին զօռ:

389. Զի մի այսպէս խրատուք զդուշութեան ահաբեկ արարեալ լքուսցէ ինչ զԴետոնեանն կամ ատրտուսցէ 'ի քերթողութենէ, սկսանի այժմ զգովութիւն և զպարծանս քերթութեան և քերթողաց համառօտիւք 'ի համար արկանել: Որփէւս կամ Որփէոս վաղնջական քերթող ոմն էր և երաժիշտ Թրակացի. և իբրև աստուածարեալ անձն, և գլխ պատգամախօս՝ իբրև հրեշտակ 'ի գիմաց նոցա եկեալ առ մարդիկ, որդի ասացեալ Ապողոնի և Կալիոպէ Մուսայի: Քաղաքաւորութեամբ և խնամութեամբ ասացին զգօնացոյց զառաջին զվայրենի մարդիկն՝ հրաժարեցուցեալ յարբեցհեղութենէ միմեանց կամ յանդգնելոյ զմարմինս և յուտելոյ զհում միս որպէս վայրի: Լատին բնագիրն ունի 'ի գործն՝ Նէրոնեայ. զոր ամանք խոստոռեալ խոստաձարակ անասնակենցաղ կեանս իմանան: Իսկ այլք գիշակեր կամ շաղղակեր, որ նման ևս է. զի աչս անգէն իսկ առ նմին 'ի վայրենա և յառաջնումն օրինակին:

392. Ամփիոն նմանապէս էր մի 'ի հին երաժշտաց և քերթողաց, որդի համբաւեալ Արամազդայ և Անտիոպայ. զորմէ զրուցեն առասպելք՝ թէ ձայնարարութեամբ ստեանց քնարին և քաղցր նուագաւ շարժէր տանէր ըստ կամս և ըստ պէտս զքարինս, և նորօք զԹեբայեցւոց քաղաքն կանգնէր: Որ է ասել, թէ զգիրս և զխօսս որսարն 'ի չինութիւն և քաղաքական կեանս յորդորեալ յանկուցանէր: Ոչ Որփէի և ոչ Ամփիոնի տայք ինչ կան առ մեզ. այլ փէսակամք ինչ որ երեքն՝ անվաւերականք են:

398. Նախնի քերթողացն գործ այն էր, ասէ, որոշել զսուրբն 'ի պղծոց, այս ինքն ուսուցանել զինչ սուրբ իցէ և բարի, զինչ պիղծ և չար. զատանել զհասարակացն յառանձնականաց, առ հասարակութեան տաւուել պատուական կայ քան անձնականաց. արգելուլ 'ի մոլորական և 'ի Թափառական խառնից ամուսնութեան, և արանց օրէնս հարսանեաց կարգել. քաղաքս շինել, օրէնս գնել, և այլ այսպիսի կենցաղօգուտ իրք: Եւ այսպէս անուն և փառս ժառանգեցին աստուածայինն քերթողք և քերթուածք:

400. Հոմերոս յայտնի է ամենեցուն: Իսկ Տիրտէոս կրտսեր առաւելաբար քան զՀոմերոս՝ էր անուանի քերթող աթենացի, որոյ կան ցայժմ չորք տաղք խրախուսիչք մանկանց 'ի մարտ և 'ի մահ զեղեցիկ 'ի վերայ հայրենեաց: Արիական ասել է պատերազմական. զի Արէս էր գիք պատերազմի:

Տաղիւք պատգամք խօսեցեալք և ճանապարհ կենաց ցուցեալ,
Պիերեան եղանակօք թագաւորաց խընդրեալ շընորհք,
Նոյն խաղուց եկեալ 'ի գլուխ՝ երկայն երկոց դուլ և հանգիստ։
Մ՛ի կիրթն 'ի վէն Մ՛ուսա ներգիչն ամօթ թուեսցի քեզ Ապօլոն։

Խընդիր է, բնութեամբ լիցին թէ արուեստիւ տաղք գովելիք։
Ոչ ուսումն կըրթութեան առանց առատ ճոխ երակաց
Նոյն ոչ թէ զինչ բնիւ հանճար օգուտ լիցէ՝ անսանձեմ ես..
Նայպէս սիրով դաշնաւոր զմիմեանց նըպաստ հայցեն դոքա։
Արկըրտեալն 'ի ցանկալի ասպարիսին ժամանել կէտ
Աստակեաց յոյժ 'ի տղայ տիս՝ 'ի քիրտն 'ի ցուրտ համբերատար,
Ժուժկալեալ հրաժարեաց յՄ՛ըստղկանէ և 'ի գինւոյ.
Որ զպըթեանս երգէ փողար՝ ուսաւ սաստիւ նախ վարժողին։
Զարդիս շատ է ասել՝ ես հրաշալի տաղս յօրինեմ.
Ի զյետնեալն քոս առցէ, ամօթ է ինձ յետոյս մնալ՝
Եւ ուզիւ յոր ոչ ուսայ զանգիտութիւն լեալ խոստովան։

Զոր օրինակ վաճառաց զանձատին 'ի գլին խըմբէ քարոզ,

402. Ոտանաւոր և չափական բանիւ խօսեցան պատգամք դից և խրատք վարուց ուանդեցան. պիերեան եղանակօք, այս ինքն երաժշտաց և Մուսայից նուագօք որ 'ի Պիերիա լերին Բիովտիոյ օթագեալք և պիերեանքն կոչէին, որ է ասել գործեալ տաղից երգովք խնդրեցան շնորհք կամ հովանաւորութիւն արքայից. և խաղք թատերականք հնարեցան 'ի գիւղ և 'ի հանգիստ պարապոյ և տօնական աւուրց աշխատելոցն երկայն վաստակովք։ Այս ամենայն բարիք 'ի քերթութենէ յառաջ եկին, ասէ. վասն որոյ մի ամօթ լինիցի համարիցիս զՄուսայ՝ զճարտարն 'ի քնար, և մի զնուագօղն Ապոլոն, այս ինքն է զքերթողութիւն. որ թէ չիցէ ճարտար և նուագաւոր, յայնժամ արդ յիրաւի յամօթ համարեսցի։

407. Առատ և ճոխ երակ որպէս աղբերց և բռնուց՝ է յորդութիւն բազմանց և ծննդոց բնատուր հանճարոյն, որ հիմն է ամենայնի. բայց արուեստն ուղղէ և կատարէ զայն։ Համգոյն Որատեայ խօսի և Լոնգինոս յոյն յաղագս այսր խնդրոյ 'ի Ճառի Վսեմին. գլ. Բ. Է։

410. Որ ցանկայ ընթանալ զնպատակն և զմրցանակն յասպարիսական մրցութեան, 'ի մանուկ տիոց յայն կրթի. ընդ քիրտն գայ և ընդ աղաժոյժ, և 'ի ցրտոյ բրտանայ և ամենայնի համբերէ, ժուժկալէ յաստղկեան հեշտութեանց և 'ի պահպանել զարութիւն մարմնոյն, նա և 'ի գինւոյ ևս։

413. Փողահարն որ նուագէ 'ի հանդէս պիթեան խաղուց ապոլոնեան տօնին, յառաջագոյն ուսանի երկիւղածութեամբ 'ի վարժապետէն։ Իսկ այժմ 'ի դժուարագոյն արուեստիս բաւական է ասել միայն անձնապանծ խրոխտանօք, թէ ես զարմանալի քերթածս հիւսեմ. և անէծս կարդալ, թէ քոս հասցէ այնմ որ երկուցեալ յետս մնասցէ. ինձ ամօթ է այդ, և ճըշմարտիւ խոստովանել թէ չգիտեմ զայն ինչ յոր չեմն կրթեալ։ Քոս առցէ ասելն առակաւոր անէծք են, առեալ 'ի խաղուց մանկտւոյն, որ այնպէս անիծանէին որոց կասեալ յետս մնային յարշաւս։

417. Սկսանի այսուհետև զգուշացուցանել 'ի շողոմարար և 'ի շնթող գովաւորաց և գովաբանից։ Որպէս հրապարակին կոչէ, ասէ, զժողովուրդն 'ի գին վաճառուց կամ յաճուրդս՝ յուսով շահից, այս

Հրաւիրէ զմարդահաճոյս զընթալ 'ի շահ և բանաստեղծ
Մեծատուն ագարակօք, դահեկանօք վաշխից փարթամ։
Իսկ թէ իցէ ոք առակ կոչնականին տալ բարձ 'ի դէպ,
Մըտանել երաշխաւոր կալ փոքրոգի չըքաւորին,
Եւ թափել ըզպաշարեալն 'ի միգապատ դատից փուրսից,
Զարմացայց թէ գիտիցէ 'ի բազմերանին արբեցութեան
Ընտրել ըզճըշմարիտն 'ի նենգաւոր բարեկամէն։
Դու թէ ումեք շնորհիցես կամ թէ շնորհել ինչ կամիցիս,
Մի առ քո քերթեալ տաղս ըզզուարճալիցն առեալ տանիր.
Զի անդէն գոչիցէ՝ վա՜շ, գեղեցիկ, բարւոք, ազնիւ.
Թալկասցի առ սոքօք, աչքըն սիրունք քամեսցեն ցօղ,
Վազեսցէ 'ի վեր ընդոստ և կայթս ոտիւքըն դոփեսցէ։
Զերդ վարձուորք 'ի դիահանս որ կոծ ջայլեն եղերամարք
Առաւել ասեն առնեն անդ քան ըզգուն սերտ սըգաւորս,
Այսպէս կատակն այպանօղ քան զհաւատարին շարժի գովիչ։
Ասեն զարքայս յորդ գինեաց նուագօք նեղել և խոշտանգել
Ում ջանան զօլ խելամուտ թէ արժանի սիրոյ իցէ։
Տաղս հիւսեալ քո՝ քեզ մի ընաւ պատեսցեն միտք աղուեսակերպք։

պէս և մեծատուն բանաստեղծն զսուտակասպասս։

420. Իսկ եթէ իցէ ոք, որ մեծութեամբն կամ առատութեամբն բաւական եւս գտցի մեծամեծար պատիւ տալ հրաւիրելոյն, յերաշխի առնուլ զթեթեւամիտ և զյողդողդ և նենգաւոր կամ զանփոյթ և զգօս աղքատն, և ազատել 'ի խաւարային դատից զվտրանկեալն, զարմանք իցեն եթէ կարասցէ այնպիսին 'ի կարծեալ երանութեան անդ ընտրութիւն առնել ճշմարիտ և սուտ բարեկամին։ Զի չթողացուսցեն զայն նմա շողոքորթութիւնք երախտաւորելոցն, որ բարեմարդիկն կամին լինել պաշտօն առնելով։

426. Զլցեալն զուարճութեամբ ընկալեալ շնորհացն առ 'ի քէն կամ յուսով ակընկալութեան ընդունելոցն։ Զի ընդ լըսելն զքոյսդ, 'ի գովեստ արձակեսցէ զլեզուն։ 'Ի վերայ այսոցիկ՝ ձեւասցի եւս, թէ առ թնդալ սրտին և ոգւոցն խռովել՝ իբրև թալուկ իմն զարտևն գայցէ, և այլ յայլմէ լեալ հիասցի 'ի զմայլիցն, և առ գորովանացն արտասուեսցէ 'ի սիրայորդոր աչացն, և այլն։ Ամենայն առ երեսս և սատութեամբ, որպէս լալականքն առնեն առ մեռեալս այլոց, որ քան զբուն տերս գնացելոյն առաւել զկոծն սաստկացուցանեն և զգովասանութիւնս հրաժարելոյն։

433. Մխոս ուսիր յարքայից. 'ի հարուստ տերանց. որք իբրև կամին փորձել զոք՝ թէ իցէ բարեկամութեան իւրեանց արժանի, բազում գինեաւ առգնապեն, և իբրև թէ 'ի հարց փորձ արկանեն. զի յորոց 'ի զըւարթութեան անդ համարձակ գործիցէ, անտուստ 'ի միտ առցեն զարժանիս նորա։ Այսպէս և դու 'ի ցնծութեան անդ մարդահաճոյից ծանիցես զնոսա։ Զգինին ճշմարտախօս ասէր և հին առակն. զոր և Թէոկրիտեայ յիշեալ 'ի ԻԹ, Եւ մեզ արբեալոցս պարտ է, ասէ, արդարաբան լինել։ Բայց առաս ոչ ըստ անխարդախ սոուգութեան է համեմատութիւն ընդ սուտակասպասաց, այլ ըստ զուարթամիտ առատութեան և համարձակ ճոխաբանութեան։ Եւ 'ի քերթել քո տաղս՝ մի խաբեսցեն զքեզ նմանեալքն աղուեսու կեղծաւոր նենգամիտք. որ ակնարկէ յառակ աղուեսուն, զի շողոմարար գովութեամբք հան զպանիրն յագռաւէն։

Կուխնոտի՛լեայ եթէ ինչ ընթեռնուլիր, տեսեր ուղղեա
Փոքր ինչ աղէ զայս և զայս. թէ զուր ճըգնեալ զանձն ասէիր
'Ի կըրկին փորձ ու երեքկին լաւագունին անձեռընհաս,
Տայր ջընջել զանկազմըն տաղս և վերըստին ածել 'ի տաղ:
Թէ ջատագով վընասուդ ընտրէիր կալ քան փոփոխել,
Ոչ ես այլ ընդունայն քան ինչ կամ ջան 'ի գործ առնէր,
Զի առանց նախանձորդի քոյովքդ և քև զմայլեսցիս լոկ:
Այլ բարի և խոհական կըշտամբեսցէ զտաղս անարուեստ,
Խըրատիցըն մեղ դիցէ, և ըղձըրիցըն դարձուցեալ
Անարդիցն արկցէ սեաւ նիշ, ըզպերճանացըն հատցէ զարդ.
Լոյս պահանջեսցէ աղօտ աղօտ ծագել տեղեաց,
Ցուցցէ զերկխօսութիւնն և զփոխելիան արասցէ յայտ.
Լծղիցի Արիստարքոս և մի բարուրս յօդեսցէ ինչ,
Թէ առ իմ ես 'ի խաղս ըզմըտերիմ տըրտմեցուցից:
Խաղքըրդ 'ի վնասուց ծանր արկցեն զամ մի պատրեալ թէ ծանակ կայ:

Որպէս ոք զի չարակեղ բոր կամ դալուկըն տանջիցէ

436. Այժմ տայ օրինակ և զհանգամանս ուղիղ և անաչառ քննարան դատողի 'ի դէմս Կուինտիլիոսի Վարոսի համանայեցւոյ՝ խրատու մտերմի. որ անկեղծաւոր և արդարակորով դատաւորն էր քերթածոց 'ի ժամանակին, և ինքն իսկ քերթող ականաւոր:

439. Իբրև 'ի սալ դարբնաց յաւակ օրինակի, 'ի կռել կոփել և վերստին տաշածանել և կերպարանել զոր կամքն էին:

442. Ցիմարաբար քև և քոյովքդ քերթածովք դու միայն զուարճասցիս՝ առանց զըք քեզ նախանձորդ ունելոյ: Զի որ զոչ ուրուք նախանձելիան առնէ, չունի զըք ինքեան նախանձաւոր:

443. Կարճառօտիւք ցուցանէ զգործս բարւոյ և անմնենդ դատողի: Ցանդիմանեսցէ, ասէ, զանարուեստ և զանհարթ տողս տաղիցն. ստորասցէ զփխատն իմաստիւք կամ բառիւք. զանշուքն նշանակեսցէ ձգելով սեաւ գիծ կամ այլ ինչ նիշ արկանելով կողմանկի և առ 'ի չեղ ջնջեալ զեղեգնն կամ զգրիչն: Զի այնպէս առնէին հինքն առ ակնարկելոյ՝ թէ քերելի և ջնջելի են այն տողք: Զաւելորդ շռայլանացն զարդս յապաւեսցէ, և այլն:

448. Արիստարքոս էր մեծանուն գրագէտ և գաղիր յաղէքսանդրեան ճեմարանէ, աշխարհաւ սամոթրակեցի, վարժապետ Պտղոմեայ Փիլոմետորի արքայի եգիպտացւոց: Գրեաց յոլով մեկնեանս 'ի քննել դատել և ընտրել զքերթածսն Հոմերոսի և այլոց քերթողաց յեկամուտ խորթութեանց և 'ի վրիպակաց գրչաց. որովք ժառանգեաց զփառս քաջի և ողջախոհ քննարան դատաւորի, մինչև կոչել տառատածայրն և մարդարէ. և արժանի օրինակ կալ յապա եկելոց քննարանից: Այսպիսի ոմն եղեալ քաջի դատողին, ոչ պատճառեսցի՝ թէ զի՞ է ինձ 'ի մնոտի և 'ի դուզնաքեայս վշտացուցանել զբարեկամս: Դուզնաքեայքդ չարիս մեծամեծս հասուսցեն նմա, եթէ երբեք խաբեալ միանգամ 'ի մարդահաճութենէ՝ ծաղր և քրքիջ կացցէ բազմութեան:

451. Ճարտար նկարագրել առնու զնախանձաւոր քերթողն և զանմտատող դատաւորի քննութեան հմուտ տեղեկաց. և խրատէ թէ ընդ այնպիսում պարզ պարտ իցէ վարել: Որպէս եթէ ոք, ասէ, փոփոխելի ախտիւ վարակեալ իցէ, կամ կատաղութեամբ մոլեգնեալ, կամ յԱնահտայ՝ այսինքն 'ի լուսնոյ հարեալ և լուսնոտ, այսպէս սոցին նման խորշեն մերժին իմաստունք 'ի մոլի քերթողէն, և հուպ երթալ երկնչին. անմիտ մանկտին միայն

Կամ շամբուշ բանադադուշանք և զայրացեալն Դիանա,
'Ի մոլին հրպել քերթող խիթան ուշիմք փախչին 'ի բաց,
Խուճապէ մանկըտին և անըզգոյշք պընդին ըզհետ։
Բարձրաւլիզ սա յորժամ տաղս ըզգայաելով շըրջի թափառ,
Զերդ հաւորս պիշ 'ի կեռնեխս եթէ 'ի գուբ անկցի կամ հոր,
Թէպէտ յերկար գոչիցէ՝ ձեռըն տուք ով քաղաքացիք,
Մի՛ ի գըտցի ոք ըղձաւ՝ որ զնա հանել արասցէ փոյթ։
Թէ հոգ ոք տարցի օգնել և արձակել պարան 'ի խորս,
Զի՞ գիտես, ասեր դու, թէ ոչ կամաւ անկեալ չկամի փըրկել,
Ասացից, և զսիկիլեան բանաստեղծին պատմեցից մահ.
Տենչացեալ Եմպեդոկլէս յանմահից դիցն անցանել կարգ,
Ի սառն առեալ ցըրտագին ատեան յԷտնէ 'ի հրաբորբոք։
Արժան լիցի և օրէն բանաստեղծաց երթ 'ի կորուստ.
Որ բռնի զոք փըրկեսցէ՝ չէ ինչ ընդհատ 'ի սպանողէն։
Ոչ մի անգամ արար զայդ, և ոչ թափեալ թէ մարդ լիցի,
Եւ 'ի բաց թողուցու զհամբաւատենչ մահուն տարփանս։
Եւ չէ յայտ ամենևին՝ ըղտաղս առ ինչ կարկատիցէ,

առ 'ի խաղ՝ և անզգոյշք տանին առ հետապնդութեան անկանելն ընդ նմա քննելով և գտանելով զքերթածս նորա։

455. Բարձրաւլիզ. կէս օրինակք և մեկնիչք զմերապ... 'ի վերայ տաղիցն առեալ՝ իմանան ընդ հենդն, Սա յորժամ տաղս վերձո ըզգայաելով, և այլն։ Այլաբէն sublimis բառ is յանդգին թէպէտ և յոգնակի հայցական եա իմանի 'ի հին գրութիւնս հաւաքեալ լեզուի, բայց սա չիք ինչ պատճառ փոխելոյ 'ի sublimes յառական հայցականն, որպէս յայլ բազում տեղիս գրոց փոխեալ են զայսպիսիս յետին տպագիրք։ Արդ յորժամ մոլորեալ թափառեալ կայ, ասէ, անբարեհաւաճ կարծեօք մտացն, և անկանի հոգւով 'ի գուբ խայտառակութեան, կամ թէ և մարմնով եւս ուրեք՝ 'ի զմայլական տատանգեսն, մի ոք հանցէ, մի աշխատ լիցի խրատել աղաղել զնա. զի ո՞ գիտէ կամաւ և գիտութեամբ արկեալ է զինքն և չկամի զերծանել, կարծելով առնել ինչ անուն։ Որպէս երբեմն Եմպեդոկլէսն սիկիլիացի, յախտաբարականց իմաստասէր և քերթող, որոյ յօրինեալ էր քերթուած մի բնաբանական, կամելով կարծիս առնել զանձնէ 'ի դիսն փոխելոյ, ըստ որում պատմի, արկ զինքն զաղտ 'ի հրահոս լեռան Սիկիլիոյ յԷտնէ, մաղձիւն կամ յերկրոց մահուն ցրտացեալ, և կամ անկարեկիր անխառն անձամբ։ Արիստոտէլ չկամի տալ Եմպեդոկլեայ զարարծանս բանաստեղծութեան. զի ոչ որ ինչ և միանգամ տասնաւոր բանիւ է, առեղծագործութիւն իցէ։

464. Թող կորիցեն բանաստեղծք այդպիսիք՝ խելագարք՝ անձնահաճք. այսինքն կարասցեն զանուն իւրեանց՝ այր վասն այնպէս անմտաբար վտանգելեն, որ և արդէն իսկ ինքնակամ զինագրաւ 'ի կորուստ ընթացեալ են, և ոչ կամին լսել։ 'Ի սպանողի համար մտանէ՝ որ յակամայ կամս նորին ապրեցուցանէ զնա 'ի վտանգելի և անուանի մահուանէն։ Նա զի և ոչ առաջին անգամ է այդ՝ քերթողից այդպէս զայդ առնելոյ. և ոչ՝ եթէ և զայս նուագ եւս փրկեսցի 'ի գբոյն կամ յանդր անկանելոյն, զգաստասցեալ յինքն դայցէ, մարդ լինիցի, ըստ որում ուղիղ և ի՛ւրովն բնագիրն. զի անմիտն և մոլին՝ մարդ ոչ է։ Եւ ոչ հրաժարեսցէ 'ի ցանկութենէն հռչակաւոր լինելոյ, թէպէտ և մահուամբ լինիցի. այլ որ փրկեալ, վաղիւ դարձեալ 'ի նոյն խորխորատ հոսեսցէ զանձն։

468. Նա զի և չէ իսկ յայտ բնաւ, թէ առ ի՞մ և առ ինչ բախեալ կայ 'ի դմա այդ

'Ի հայրենի ոսկերացն լինէ յանձինս միզեալ արդեօք,
Թէ յանամօթս որոգայթիւն մրմնջելիւ մերձեալ անձամբ։
Արշաւել մոլի նա, և օրինակ լինի կայր արջոյ
Զվանդակացն թէ խորտակեալ ընդդիմակաց զօրեաց խաղխամս,
Զգիտնականս և զանգէտս փախուցանէ ժամու տաղաւաց։
Նոյն կալեալ զոք՝ սպանէ ուժի և ընթերցմամբ լռութեանն,
Տզրուկ անթափ 'ի մորթոյ մինչև արեամբ յագուրդ առեալ։

զէ և ոսկի և մաղաղահոգին քերթողութեանն։ Քերթեալ 'ի զինչ ինչ արժանահաւատ պատուհաս լինի, ուստի և հարկ իսկ լինի կարենալ նմա 'ի վերայ անօրէնութեան կրկին մեծի։ Զի թերևս միզեալ լինի 'ի գերեզմանն հօր իւրոյ, կամ պղծեալ զբերանն ինչ ահաւոր։ Որ զինչ և լինի յառաջելոյ ցայս վայր, այս ճշմարիտ է՝ զի մոլի այրն. և իբրև արջ 'ի վանդակաց փախուցեալ՝ հալածէ զամենեսեան։ Իսկ եթէ ընթեռնիցէ զոք յանկարծ 'ի բարեմիտ լսողաց, իբրև զաղբիւր ոչ թողու մինչև կշտանալին ամենայն արեանցն ցայգ, պատառելոցն զուարճացն ընթերցմանը տաղից իւրոց։ Եւ ոգեշունչ կորուսանէ, հանէ թափէ զոգիս լսողին կարդացմամբն այնուիկ. և ընթեռնու՝ ոչ 'ի լռել դադարանան այլոց և ուզել ինչ, այլ առ որսալ զբուատիս միայն։

ՑՈՒՑԱԿ ԱՆՈՒԱՆՑ

ՈՐ Ի ՔԵՐԹՈՒԱԾԻՍ

Աթենաս, 384։
Ալբինոս, 326։
Ակկեան, 258։
Ամփիոն, 393։
Անահիտ, 452։
Անահտական, 16։
Անտիկիւր կամ Անտիկիւրա, 298։
Անտիփատէս, 145։
Ապոլոն, 405։
Ասորի, 118։
Ասոփիկ, 412։
Ատրեւս կամ Ատրէոս, 185։
Արգոս, 118։
Արիստական, 401։
Արիստարքոս, 448։
Արքիլոքոս, 80։
Աւլոս Կասկելլիոս, 371։
Աքիլլէս, 120։
Դաւոս, 236։
Դելփիական պատգամք, 218։
Դիմոկրիտոս կամ Դեմոկրիտոս, 294։
Դիոմեդէս, 146։
Եգերացի, 118։
Ելիկոն կամ Հելիկոն, 294։
Եմիլեան, 33։
Եմպեդոկլէս, 462։
Ենեան, 258։
Ենիոս, 58։
Եսքիլ կամ Եսքիլոս, 277։
Եթնէ, 463։
Թեբացիք, 392։
Թեբէ, 118։
Թեսպիս, 275։
Թիեստական, 92։
Իլիական, 129։
Ինով, 123։
Իքսիոն, 124։
Լատիոն, 288։
Լիկինոս, 299։
Կադմոս, 186։
Կասկելլիոս Աւլոս, 371։
Կատոն, 58։
Կեթեգեանք, 51։
Կեկիլիոս, 55։
Կիկլոպս կամ Կիկլոպ, 145։
Կուինտիլիոս, 436։
Հելլէն, 54 · 268 · 286 · տես և Յոյնք։
Հոմեր կամ Հոմերոս, 75 · 358 · 400։
Հռովմ, 55 · 263 · տես և Հռովմայեցի։
Հռենոս, 18։
Հռովմայեցի, 113 · տես և Հռովմ։
Հռովմէական, 323։
Մեդէ կամ Մեդիա, 123 · 184։
Մելէագր կամ Մելէագրոս, 146։
Մեսալլա, 370։
Մետիոս, 386։
Մուսա, 84 · 141 · 321 · 405։
Յոյնք, 321 · տես և Հելլէն։
Յով, 124։
Որեստ կամ Որեստէս, 124։
Որփեւս կամ Որփէոս, 389։
Պելեւս, Պելէոս, 97 · 104։
Պիերեան, 403։
Պիթեան, 413։
Պիսոնեանք, 6 · 234։
Պիւթիաս, 237։
Պլաւտական, 269։
Պլաւտոս, 55։
Պոմպիլեան, 290։
Պրիամոս, 137։
Պրոկնէ, 186։
Սարդիկ կամ սարդիկացի, սարդինիացի, 374։
Սիլէն կամ Սիլենոս, 238։
Սիկիլեան, 461։
Սիմոն, 237։
Սկիլլա, 145։
Սոկրատեան, 308։
Սոսեանք, 344։
Վարիոս, 56։
Վիրգիլ կամ Վիրգիլիոս, 56։
Տելեփոս, 97 · 104։
Տիրտէոս, 400։
Տրովա, 141։
Տրովական, 147։
Քարիբդիս, 145։
Քերիլոս, 356։
Քրեմէս, 95։

ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐԻՆ

ԷՋ	ՏՈՂ	ՎՐԻՊԱԿ	ՈՒՂԻՂ
26	ծան. 143	սկզբնաւորութիւնն	սկզբնաւորութիւնք
33	ծան. 250	չորք մեծավէրջ	չորք մեծավէրջք
37	ծան. 317	՚ի տեղիս ՚ի տեղիս	՚ի տեղիս տեղիս
42	ծան. 392	՚ի շինութիւն և քաղաքական կեանս	՚ի շինութիւն և ՚ի քաղաքական կեանս

HDI
HW 8RZE 4

THE BORROWER WILL BE CHARGED AN OVERDUE FEE IF THIS BOOK IS NOT RETURNED TO THE LIBRARY ON OR BEFORE THE LAST DATE STAMPED BELOW. NON-RECEIPT OF OVERDUE NOTICES DOES NOT EXEMPT THE BORROWER FROM OVERDUE FEES.

WIDENER
SEP 10 1995
BOOK DUE